Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Սովետական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
1959









Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мравяна
Ա. Մռավյանի անվ.



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թ. ՀԱԿՈԲՅԱՆ, ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, Ա. ՍԵԿՈՅԱՆ

Б
1978

# Սովետական Հայաստանի տեսարժան վայրերը



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1959

Հրատարակվում է
Երևանի Պետական համալսարանի
խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
27506-59

ТАТЕВОС ХАЧАТУРОВИЧ АКОПЯН
СТЕПАН ТИГРАНОВИЧ МЕЛИК-БАХШЯН
АРА АКОПДЖАНОВИЧ СЕКОЯН

ДОСТОПРИМЕЧАТЕЛЬНЫЕ
МЕСТА СОВЕТСКОЙ АРМЕНИИ

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван – 1959

## ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն աշխատությունը իրենից ներկայացնում է համառոտ ուղեցույց Սովետական Միության այլ ռեսպուբլիկաներից և արտասահմանյան երկրներից Սովետական Հայաստան այցելող տուրիստների համար: Նա հավասար չափով կարող է օգտավետ լինել նաև ընթերցող հասարակության լայն մասսաների համար մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում:

Ռեսպուբլիկայի տեսարժան վայրերը նկարագրված են ըստ երթուղիների, հանգրվան ու հիմնական ելման կետ ընդունելով նրա մայրաքաղաք Երևանը:

Նրանում, իբրև նախնական ծանոթություն, շատ ընդհանուր գծերով տեղեկություններ են տրված ռեսպուբլիկայի բնության, հայ ժողովրդի պատմական անցյալի և Սովետական Հայաստանի ժամանակակից տնտեսական ու կուլտուրական կյանքի մասին: Տեսարժան վայրերի տակ հասկացվել են և՛ ժամանակակից զանազան կարգի բնակավայրերը (քաղաքներ, ավաններ, գյուղեր, առողջարաններ և այլն), և՛ տնտեսական օբյեկտները (գործարաններ, ֆաբրիկաներ, կոլտնտեսություններ, էլեկտրակայաններ, պլանտացիաներ, ջրանցքներ և այլն), և՛ անցյալի ու ներկայի ճարտարապետական կոթողները (վանքեր, տաճարներ, բերդեր, քարավանատներ, հուշարձաններ, թատրոններ, կինոթատրոններ, գրադարաններ, կամուրջներ, վարչական ու բնակելի շենքեր և այլն), և՛ բնական ամբողջական շրջաններն ու ֆիզիկական-աշխարհագրա-

կան առանձին օբյեկտները (դաշտեր, լիճներ, ձորեր, լճեր, գետեր, ջրվեժներ և այլն)։ Շարադրված նյութին ավելի պատկերավոր դարձնելու նպատակով աշխատության մեջ զետեղված են ռեսպուբլիկայի տեսարժան վայրերի քարտեզը և բազմաթիվ նկարներ։

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## ԲԱՐՁՐԱԲԵՐՁ ԼԵՌՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԻ ԵՐԿԻՐԸ

Սովետական Միության հարավում ընկած Սովետական Հայաստանը գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասը։ Նրա տերիտորիան 29,8 հազ. քառ. կմ է և հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ ձգվում է 360 կմ երկարությամբ, մինչդեռ ամենալայն մասը չի անցնում 200 կմ-ից։ Նա սահմանակից է Սովետական Վրաստանին, Սովետական Ադրբեջանին, ինչպես և Թուրքիային ու Իրանին։

Երկրաբանական անցյալով, մակերևույթի կառուցվածքով, հողա-կլիմայական պայմաններով, ֆիզիկա-աշխարհագրական երևույթներով, բուսական ու կենդանական աշխարհով Սովետական Հայաստանն իրենից ներկայացնում է մի ուրույն երկիր, ֆիզիկա-աշխարհագրական մի շրջան, իր բնական պայմաններով միանգամայն հարազատ մնալով Հայկական լեռնաշխարհին։ Նա բնական երևույթների սուր հակադրությունների երկիր է, բնական մի հսկայական թանգարան։

Սովետական Հայաստանը լեռնային է։ Նրա ամենացածր կետը (Լամբալու) ծովի մակերևույթից ունի 450 մետր բարձրություն, իսկ ամենաբարձր կետը հասնում է 4095 մետրի (Արագած)։ Նրա տերիտորիայի մեծ մասը գրավում է Փոքր Կովկաս լեռնասիստեմն իր բազմաթիվ լեռնաճյուղերով (Վիրահայոց, Բազումի, Փամբակի, Սևանի, Զանգեզուրի և այլն), որոնք, տարբեր ուղղու-

թյամբ ձգվելով, առաջացրել են գետահովիտների և անդնդախոր ձորերի մի բարդ հյուսվածք, մի հսկայական լաբիրինթոս: Փոքր Կովկաս լեռնասիստեմին հարակցված են հրաբխային մի շարք սարահարթեր (Լոռի, Շիրակ, Ապարան և այլն), որոնց կազմավորումն ամբողջապես կապված է բովանդակ Հայկական լեռնաշխարհին հատուկ ինտենսիվ հրաբխականության հետ: Երկրի ամենաընդարձակ հարթությունը Արարատյան կամ Մերձարաքսյան դաշտն է, որը եռանկյունաձև է և տարածվում է Արաքսի երկու ափերին: Հնագույն ժամանակներից ի վեր հայ ժողովուրդը Արարատյան դաշտի հետ կապել է մի շարք ավանդություններ, իսկ հայ և օտար պատմիչներն ու աշխարհագրագետները գովերգել են նրա արգավանդությունը և այն համարել «երկրային դրախտ»: Արարատյան դաշտի հյուսիսային կողմում բարձրանում են Գեղամա գագաթներն ու Սովետական Հայաստանի բարձրագույն լեռը՝ վեհափառ Արագածը (4095 մ), որի հեքիաթային աղբյուրները, մերձալպյան փարթամ բուսականությունը՝ ալպյան գորգերը, լազուր լճակները և ձյունե բծերը, որպես փոքրիկ պսակներ, նրան տալիս են հանդիսավոր տեսք: Դաշտի հարավային կողմում՝ Արաքսից հարավ, ձգվում է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնաշղթան, նրա ողնաշարը՝ Հայկական Պարը, որի լայնական ուղղությամբ մեկ գծով դասավորված գագաթները կարծեք թե հեքիաթային հսկաների խմբական պար են բռնել երկրի լեռների արքայի՝ աստվածաշնչային Մեծ Մասիսի (5156 մ) գլխավորությամբ: Հոյակապ է Մեծ Մասիսը Արարատյան գաշտից և իզուր չէ, որ հայ ժողովուրդը այն համարել է նվիրական սար, իր ազատության խորհրդանիշը և գրեր շարումակ ավանդություններ հյուսել նրա շուրջը:

Ծովի մակերևույթի նկատմամբ ունեցած բարձր դիրքի, լեռնային բարդ ռելիեֆի, ինչպես և Կասպից ու Սև ծովերի, Անատոլական բարձրավանդակի ու Իրանական սարահարթի թողած աղդեցությունների և մթնոլորտի յուրահատուկ շրջանառության շնորհիվ՝ Սովետական Հայաստանի տարբեր մասերում առաջացել են կլիմայական տարբեր պայմաններ, չնայած երկիրը իր տերիտորիայով շատ փոքր է և գրեթե ամբողջովին ընկած է բարեխառն գոտում: Այնտեղ, ընդամենը կտրել-անցնելով 30—40 կմ ճանապարհ՝ կարելի է հանդիպել կիսաանապատներից մինչև լեռնային տունդրաների գոտիներին, որոնք իրար հաջորդում են ըստ տեղի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրության: Արևոտ է Սովետական Հայաստանը, և այդ է պատճառը, որ արհեստական ոռոգման առկա-



յության պայմաններում այստեղ աճում են գյուղատնտեսական թանկարժեք շատ կուլտուրաներ (խաղող, բամբակ, դեղձ, ծխախոտ և այլն): Սովետական Հայաստանը ցամաքային երկիր է՝ աղքատ մթնոլորտային տեղումներով և ամառվա ու ձմեռվա, ցերեկվա ու գիշերվա ջերմաստիճանների մեծ տարբերությամբ: Առավելագույն ջերմությունը հասնում է 41°-ի (Երևան), իսկ նվազագույն ջերմությունը՝ –41°-ի (Շուրարատ): Մթնոլորտային տեղումները, որ հիմնականում թափվում են գարնանն ու աշնանը, մեծ մասամբ տատանվում են 210—800 մմ սահմաններում: Հայաստանում սովորական են տեղատարափ անձրևները ու հեղեղները, որոնք երբեմն զգալի վնաս են հասցնում որոշ շրջաններին: Բարձրաբերձ լեռների և համեմատաբար ցածր դիրք ունեցող փակ գոգավորությունների, դաշտերի ու հովիտների զուգակցությունը, որ այնքան հատուկ է Սովետական Հայաստանին, պատճառ է դառնում ձմռանը՝ ջերմության փոխատեղման (ինվերսիա), իսկ ամռանը՝ լեռնահովտային քամիների, որոնք, ցերեկը փչելով լեռներից, զովացնում են ցածրադիր դաշտերի օդը: Քամիները բավական մեծ արագության են հասնում լեռնանցքներում: Նախատեսվում է ռեսպուբլիկայի մի շարք լեռնանցքներում կառուցել հողմաշարժիչներ՝ մըշտապես փչող քամիների ուժը տնտեսությանը ի սպաս դնելու համար:

Սովետական Հայաստանի բոլոր գետերը, ներառյալ նաև Սևանա լիճը թափվողները, պատկանում են Արաքսի և Քուռի ավազաններին: Արաքսի ավազանին են պատկանում Ախուրյանը, Սև ջուրը, Հրազդանը, Ազատը, Վեդին, Արփան, Մեղրին, Ողջին և Որոտանը: Դրանք բոլորն էլ լեռնային գետեր են՝ արագահոս և փրփրալից: Լեռնային բնույթ ունի նաև մայր գետը՝ Արաքսը, որն իր տղմոտությամբ աշխարհում գրավում է առաջին տեղը, ունի խիստ արտահայտված ռեժիմ և պատմական ժամանակաշրջանում մի քանի անգամ փոփոխել է իր հունը: Վարարումների և հունը փոխելու հետևանքով՝ Արաքսի վրա կառուցված կամուրջները հաճախակի կամ քանդվել են և կամ լքվել կատաղած գետի կողմից: Այնպես որ բոլորովին տեղին է հռոմեական բանաստեղծ Վիրգիլիոսի (70—19 թթ. մ. թ. ա.)՝ «Կամուրջներ չհանդուրժող Արաքս» թևավոր դարձվածքը, որը փոխաբերական իմաստ ունի և գործ է ածված Հռոմի ստրկացնող լծի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը արտահայտելու համար: Քուռի ավա-

զանին են պատկանում Գեղեգը, Աղստևը և այլն, որոնք մեծ մասամբ հոսում են անտառապատ շրջաններով։

Մեծ է Սովետական Հայաստանի գետերի տնտեսական նշանակությունը։ Դրանք ծառայում են իբրև էներգիայի աղբյուր և արհեստական ոռոգման միջոց։ Ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում նրանց վրա կառուցված են (և կառուցվում են) մեծ ու փոքր բազմաթիվ հիդրոէլեկտրակայաններ, որոնք էներգիա են մատակարարում երկրի ծաղկող արդյունաբերությանն ու կոլտնտեսային գյուղատնտեսությանը։

Սովետական Հայաստանում ծփում են բազմաթիվ լճեր ու լճակներ, որոնք բոլորն էլ ունեն քաղցրահամ ջրեր։ Լճերից ամենանշանավորը Սևանն է՝ աշխարհի լեռնային ամենամեծ ու ամենաբարձր լճերից մեկը։ Նա ծովի մակերևույթից ունի 1916 մ բարձրություն, իսկ մակերեսը հասնում է 1416 քառ. կմ-ի[1]։ Անուշահամ են նրա ջրերը և վճիտ, նրանում բազմանում է իշխան ձուկը։ Սևանի ջուրը Հրազդան գետի արհեստական հունով դուրս բերելով՝ Սևանից մինչև Երևան ընկած տարածության վրա կառուցել են մի շարք խոշոր հիդրոկայաններ, որոնք էլեկտրաէներգիա են մատակարարում ռեսպուբլիկայի մայրաքաղաքի արդյունաբերությանը, ինչպես և Հորդացած Հրազդանից անց են կացրել ոռոգման առուներ։ Երկրի մյուս լճերից են՝ Մեծամորը, Արփին և այլն։

Սովետական Հայաստանը իրավամբ հպարտանում է իր զանգակ-աղբյուրներով և հանքային ջրերով, որոնք հանդիպում են ռեսպուբլիկայի բազմաթիվ կետերում։ Հանքային աղբյուրներից առանձնապես մեծ համբավ ունեն Արզնիի, Ջերմուկի, Դիլիջանի և Հանքավանի ջրերը։ Դրանց բուժիչ հատկությունները հայտնի են եղել հին դարերից և դրանց բազայի վրա ռեսպուբլիկայում կառուցվել են մի քանի առողջարաններ, այդ թվում և Միության մեջ հանրահայտ Արզնիի և Ջերմուկի առողջարանները։

Կլիմայական պայմաններին, բարդ ռելիեֆին ու երկրաբանական կառուցվածքին համապատասխան՝ բազմազան են նաև Սովետական Հայաստանի հողերը, բույսերն ու կենդանիները։ Որպես լեռնային երկիր՝ նրա հողերը, բուսականությունը և կենդանիները ենթարկված են ուղղաձիգ գոտիականության օրենքին։ Ցածրադիր շրջաններում (Արարատյան դաշտ) տարածված են կիսաանա-

[1] Լճի մակարդակի իջեցման պատճառով այժմ դրալի չափով կրճատվել է նրա մակերեսը։



պատները, որոնց հաջորդում են չոր տափաստանները (1100—1500 մ բարձրությունների վրա), ապա լեռնային տափաստանները, անտառները, որոնք գոտի են կազմում երկրի միայն առանձին շրջաններում, մերձալպյան գոտին, ալպյան գորգերի շրջանը և, ավելի վեր ընկած, լեռնային տունդրան, որն իբրև առանձին կրզիներ հանդես է գալիս միայն առավել բարձրադիր լեռնային շրջաններում։ Գյուղատնտեսական առումով տարբեր գոտիներն ունեն տարբեր նշանակություն։ Ամենացածրադիր գոտում և չոր տափաստաններում մշակվում են առավել ինտենսիվ կուլտուրաներ (բամբակ, խաղող և այլն), իսկ նրանցից վեր՝ լեռնային տափաստաններում հիմնական մշակույթները կազմում են հացահատիկները։ Մեծ համբավ և մշակման հնագույն պատմություն ունեն խաղողը, դեղձը, ծիրանը, նուռը, բամբակը և այլն։ Անտառներով աղքատ է Սովետական Հայաստանը։ Նրա անտառապատ տարածությունները հիմնականում գտնվում են հյուսիսային, հյուսիսարևելյան և հարավային մասերում։ Մնացած շրջաններում եղած անտառները առանձին կղզիներ են և գրավում են աննշան տարածություն։ Դրան հակառակ ընդարձակ տարածության վրա փռված են մերձալպյան և ալպյան գոտիները (Գեղամա, Զանգեզուրի, Խոնավ լեռներում, Արագածի վրա և այլուր), որոնք ամառօթևի են ոչ միայն Սովետական Հայաստանի, այլ նաև հարևան Ադրբեջանական ՍՍՌ-ի անասնապահների համար։ Ամռանը հայ և ադրբեջանցի կոլտնտեսականներն իրենց ոչխարի հոտերով, տավարի նախիրներով ու ձիերի երամակներով մի քանի ամիս անց են կացնում Հայաստանի հովասուն յայլաններում։

Երկրում հաշվառված կենդանատեսակները հասնում են 2500-ի։ Հանդիպում են այծյամ, վայրի ոչխար, քարայծ, արջ, ամենուրեք տարածված են՝ գայլը, աղվեսը, նապաստակը, կաքավը, լորը, լճերում և լճակներում՝ բազմատեսակ ձկներ և այլն։ Որսակենդանիների առատության շնորհիվ՝ ռեսպուբլիկայում որսորդությունը սոսկ սպորտային զբաղմունք լինելուց բացի ունի նաև տնտեսական զգալի նշանակություն։

Սովետական Հայաստանը, որպես լեռնային ռելիեֆ և հիմնականում հրաբխային կառուցվածք ունեցող երկիր, հայտնի է իր հանքային և ոչ հանքային հարստություններով, որոնց մեծագույն մասը հետազոտվել և ժողովրդական տնտեսությանը ի սպաս է

դրվել միայն սովետական ժամանակաշրջանում։ Հանքային հանածոներից ռեսպուբլիկայում հայտնի են պղինձը, ցինկը, մոլիբդենը և այլն։ Իր պղնձի պաշարներով Սովետական Հայաստանը, Ղազախական ՍՍՌ-ի և ՌՍՖՍՌ-ի հետ միասին, ՍՍՌՄ-ում բռնում է նշանակալից տեղերից մեկը։ Երկրի շատ շրջաններում հանդիպում են երկաթի հանքեր, կան նաև քրոմ, ծծումբ և այլն։ Սովետական Հայաստանը իրավամբ հպարտանում է իր բազմատեսակ շինանյութերով՝ տարբեր գույնի ու որակի մարմարներով, տուֆերով, ֆիլզիտներով, գրանիտներով, բազալտներով, գիպսով, պեմզայով, իսկ կավերը, ավազները, կրաքարերը տարածված են ամենուրեք։ Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում այդ շինանյութերի օգտագործմամբ պատմական անցյալում և ներկայումս կերտել է բազմաթիվ ճարտարապետական այնպիսի գլուխ-գործոցներ, որոնց համբավը հայտնի է ամբողջ աշխարհում։ Սովետական Հայաստանի պահանջները բավարարելուց բացի՝ նրա մի քանի բարձրարժեք շինանյութերը տարվում են նաև Միության տարբեր քաղաքները (Թբիլիսի, Մոսկվա, Բաքու, Սոչի, Ստալինգրադ և այլն) և նույնիսկ արտահանվում են այլ երկրներ։ Առանձնապես մեծ համբավ ունեն մարմարներն ու տուֆերը։

Բազմալեզու է Սովետական Հայաստանի բնակչությունը։ Ռեսպուբլիկայի բնակչության ճնշող մեծամասնությունը (մոտ 83%) կազմող հայերից բացի, բարեկամական մի ընտանիքում, կողք-կողքի բնակվում են նաև ադրբեջանցիներ, ռուսներ, ուկրաինացիներ, քրդեր, հույներ և այլք։ 1939 թ. մարդահամարի տվյալներով՝ Սովետական Հայաստանի բնակչության թիվը կազմում էր 1 282,4 հազ., իսկ խտությունը՝ 43 մարդ մեկ քառ. կմ-ի վրա։ 1939 թ. համեմատությամբ ներկայումս ռեսպուբլիկայի բնակչությունը զգալի չափով ավելացել է։ 1956 թ. նրա բնակչության թիվը հասել է 1,6 միլիոնի։ Այդ ավելացումը արդյունք է ներպաղթի և բնական բարձր աճի, որով Սովետական Հայաստանը ՍՍՌՄ-ում գրավում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն Կիրգիզական ՍՍՌ-ին։ Սովետական Հայաստանը պարբերաբար իր գիրկն է ընդունել արտասահմանից հայրենիք վերադարձող բազմահազար հայերի։ Միայն Հայրենական պատերազմից հետո Սովետական Հայաստան են վերադարձել մոտ 100 հազար հայեր։ Նրանք եկել են տարբեր երկրներից՝ Սիրիայից, Եգիպտոսից, Բուլղարիայից, Ռումինիայից, Իրանից, Հունաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից և այլ



երկրներից։ Հայրենադարձ հայերը Մայր Հայրենիքում շինարարական աշխատանքի են լծվել ամենատարբեր բնագավառներում։ Նրանք բոլորի հետ միասին մասնակցում են ռեսպուբլիկայի տնտեսության, կուլտուրայի և գիտության զարգացման մեծ գործին։



## ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ



այ ժողովուրդը ձևավորվել ու իր բազմադարյան պատմությունը կերտել է Հայկական լեռնաշխարհում, որը հայտնի է նաև Հայկական բարձրավանդակ անունով։ Լեռնային այդ երկրամասը հնուց ի վեր ընդգրկել է Հայկական Տավրոսի շրջանն ու Տիգրիսի վերին, Արաքսի, Քուռի, Արածանիի, Արևմտյան Եփրատի ու Ճորոխի հոսանքներն ու Վանա, Ուրմիայի, Սևանա լճերի ավազանները։

Հայերն իրենց հայրենիքը կոչել են Հայաստան կամ Մեծ Հայք, իսկ օտարները մեծ մասամբ՝ Արմենիա։ Թեև պատմության տարբեր ժամանակներում Հայաստանի պետական սահմանները մերթ մեծացել, մերթ փոքրացել են, բայց հայ ժողովրդի հիմնական մասը հարյուրամյակներ ու հազարամյակներ շարունակ, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ապրելով Հայկական լեռնաշխարհում, այստեղ էլ կերտել է իր հինավուրց ու հիասքանչ կուլտուրան։

Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը Արևելքի և Արևմուտքի միջև՝ երկրին տվել է ռազմական ու տնտեսական խիստ մեծ նշանակություն։ Դեռ հին ու միջին դարերում Հայաստանով անցնող քարավանային ու առևտրական ճանապարհներին, ինչպես նաև կարևոր լեռնանցքներին տիրելու և իրենց ռազմա-ստրատեգիական դիրքերն ամրացնելու համար այստեղ շարունա-



կաբար մրցակցել են այն ժամանակվա խոշոր պետությունները։ Հայաստանով անցնող ճանապարհների հիմնական հանգուցակետն Արարատյան դաշտն էր՝ իր մեծ, մարդաշատ քաղաքներով ու բնակավայրերով։

Մեր դարաշրջանից մի քանի հարյուրամյակ առաջ, Հայկական լեռնաշխարհում ապրող հին ցեղերի ու ժողովուրդների ձուլման երկարատև պրոցեսում էլ ձևավորվել են հայ ժողովուրդն ու հայոց լեզուն։

IX—VIII դարերում (մ. թ. ա.) Հայկական լեռնաշխարհում ռազմա-քաղաքական մեծ հզորության հասավ Ուրարտական սարկատիրական պետությունը, որն այնուհետև իր գոյությունը շարունակելով մինչև VI դարը, ասպարեզը զիջեց ուրիշ ցեղային միությունների։ Ուրարտուն հանդիսացավ Արևելքի հզոր ու բարձր կուլտուրա ունեցող երկրներից մեկը։ Ուրարտացիները մեծ նվաճումների էին հասել հատկապես մետաղամշակության, ռազմական արվեստի, ջրանցքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության, գրի ու գրականության և անասնապահության ասպարեզներում։ Բազմաթիվ սերունդներ են օգտվել Վան քաղաքի մոտով հոսող, ուրարտական հմուտ վարպետների ձեռքով դեռևս մեր էրայից առաջ՝ IX դարում կառուցված 80 կմ երկարություն ունեցող Մենուայի հռչակավոր ջրանցքից, որն այժմ էլ ապշեցնում է իր ճարտարապետական հմուտ կառուցվածքով։ Ուրարտական ճարտարապետության մյուս խոշորագույն հուշարձանը Վանի միջնաբերդն է՝ իր հսկայական սրբատաշ քարերով կառուցված պարսպաշարերով, բազմաթիվ վիմափոր սենյակներով ու պալատներով, որոնց վրա ուրարտական թագավորները թողել են իրենց հաղթական արշավանքների մասին բազմաթիվ սեպագիր արձանագրություններ։

Ուրարտուի անկումից հետո (VI դար ն. մ. թ.) Հայկական լեռնաշխարհում տիրապետող դարձան հայերը, որոնք II դարի սկզբներին (ն. մ. թ.) ստեղծեցին իրենց պետականությունը ամբողջ Հայկական բարձրավանդակում։

Հայկական լեռնաշխարհում ձևավորվեցին երեք հայկական պետություններ՝ Ծոփք, Փոքր Հայք և Մեծ Հայք։ II դարում Հայկական լեռնաշխարհի առանձին թագավորությունների միավորման և մեկ միասնական պետություն ստեղծելու գործում վճռական դեր կատարեց Մեծ Հայքի Սելևկյան շրջանի կառավարիչ Արտաշեսը, որը դարձավ հայկական թագավորական նոր դինաստիայի՝ Ար-

տաշեսյան դինաստիայի հիմնադիրը: Այնուհետև մինչև մեր էրայի I դարը Հայաստանի ներքին տնտեսական կյանքի զարգացումը զուգակցվելով Մերձավոր Արևելքում ստեղծված նպաստավոր քաղաքական հանգամանքների հետ, հնարավորություն տվեց Մեծ Հայքին՝ մի երկար ժամանակ դառնալու Արևելքի հզոր տերություններից մեկը:

Տիգրան II-ի ժամանակ (95—55 թթ. նախքան մեր դարաշրջանը) Հայաստանի սահմանները ձգվում էին Քուռ գետից ու Կասպից ծովից մինչև Միջերկրականի ափերն ու Կիլիկիա և Փոքր Հայքից մինչև Մեդիայի լեռներն արևելքում: Ինչպես Տիգրանից առաջ Արտաշեսի, այնպես էլ Տիգրանի ու նրա հաջորդ Արտավազդ II-ի օրոք, Հայաստանում բուռն թափով զարգացավ հելլենիստական կուլտուրան: Հայկական թատրոնը, որն ուներ շատ հին պատմություն, էլ ավելի առաջադիմեց: Այստեղ տեղական ներկայացումների հետ միասին բեմադրում էին նաև օտար և հատկապես հունական թատերական արվեստի լավագույն գործերը: Արտավազդ II-ն ինքն էր հայերեն լեզվով գրում ողբերգություններ կամ թարգմանում հունարենից ու բեմադրում: Արտաշեսյանների ժամանակ Հայաստանն ապաստան էր տալիս Հունաստանից և ուրիշ երկրներից եկած, հռոմեացիներից հալածված՝ գիտության, արվեստի և ռազմական ասպարեզների նշանավոր գործիչներին: Հայաստանի այդ ժամանակվա կուլտուրայի ու հասարակական-քաղաքական կյանքի նշանավոր կենտրոններն էին Արտաշատը (հիմնադրվել է 176 թ. նախքան մեր դարաշրջանը), Տիգրանակերտը (հիմնադրվել է 77 թվականին, ն. մ. թ.), Արմավիրը, որը հիմնադրվել էր դեռևս ուրարտական թագավոր Արգիշտիի օրոք, VIII դարում, Կարկաթիոկերտը, Արշամաշատը և այլն: Հռոմի զավթողական պատերազմների ժամանակ, երբ Արևելքում շարքից դուրս եկան Հայաստանի դաշնակից մեծ ու փոքր պետությունները, I դարի վերջին տասնամյակներում Հայաստանի դրությունը նույնպես ծանրացավ, որի պատճառով 20—30-ական թվականներին Արտաշես II-ը հարկադրված ընդունեց Հռոմի գերիշխանությունը: Մեր դարաշրջանի I դարի կեսերին ողջ Արևելքում օրավուր հաստատվում էր հակահռոմեական ժողովրդական ցասումը: Պայքարը հռոմեական ագրեսիայի դեմ գլխավորում էին հայերն ու պարթևները, որոնց հռոմեական լեգեոններին հասցրած մի քանի ծանր հարվածները հարկադրեցին կայսր Ներոնին 63 թվականին ճանաչել Հայաստանի ինքնուրույնությունն ու անկախությունը: Հայաստանում հիմնադրվեց Արշակունիների դինաս-



տիան: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը նպաստեց երկրի հասարակական-տնտեսական հարաբերությունների զարգացմանը ֆեոդալիզմի ճանապարհով: Արդեն 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց որպես պետական, պաշտոնական կրոն: Եվ եկեղեցին, որպես ֆեոդալական ուժեղ կազմակերպություն, այնուհետև ամեն ինչով նպաստում էր ֆեոդալական հարաբերությունների ամրապնդմանը: Ֆեոդալական հիերարխիայի ամենաբարձր աստիճանի վրա կանգնած էր թագավորը, որն ուներ իր արքունիքը և կառավարական ապարատը:

III—IV դարերում պարսկա-հռոմեական մրցակցությունն Արևվ|լքում սուր կերպարանք ընդունեց: Հայաստանի ֆեոդալական ցրվածությունը, ինչպես նաև քաղաքական իրադրությունները ավելի նպաստում էին երկրի կենտրոնախույս ուժերի աշխուժացմանը: IV դարի կեսերին Արշակ II և Պապ Արշակունիները ուժեղ միապետական կարգեր ստեղծելու ուղղությամբ լուրջ քայլերի դիմեցին: Սակայն նրանց ինքնուրույն քաղաքականության դեմ դուրս եկան ոչ միայն երկրի խոշոր ֆեոդալական տները, այլև Պարսկաստանն ու Բյուզանդիան: Ֆեոդալական Հայաստանում սրվում էին նաև դասակարգային հարաբերությունները: Այսպիսի պայմաններում, 387 թվականին Բյուզանդական կայսրությունն ու Պարսկաստանը Հայաստանը բաժանեցին իրար միջև: Հայաստանի մասնատումը երկու տերությունների միջև ավելի թուլացրեց երկրի ուժը և մոտեցրեց նրա անկախության վերացումը: Արևելյան Հայաստանում, որտեղ իշխում էին պարսիկները, մինչև 428 թվականը ձևականորեն պահպանվեց հայկական թագավորությունը, որից հետո երկիրը վերածվեց Պարսկաստանին ենթակա մի շրջանի: Պարսկական իշխանությունները մեծ ջանքեր էին գործադրում հայ ժողովրդին ձուլելու, նրա լեզուն, կուլտուրան ու գրականությունը ոչնչացնելու ուղղությամբ: Սակայն նրանց բոլոր փորձերն անհաջողության մատնվեցին: Հայ ժողովուրդը 451 և 481—484 թվականների հուժկու ազատագրական ապստամբական շարժումներով՝ պարսկական արքունիքին հարկադրեց հրաժարվել պարսկացման քաղաքականությունից և ճանաչել Հայաստանի կիսանկախ դրությունը:

Հայ ժողովրդի դրությունը ծանր էր նաև Արևմտյան Հայաստանում: VI դարում բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ը հատուկ օրենքներով զրկեց հայ ազնվականությանն իր զինվորական պատռնություններից, ապա վերացնելով նախկինում գոյություն ունեցող ժառանգականության օրենքը, մտցրեց նոր օրենքներ,

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
27506-59

տրոնցով հայ ֆեոդալների սեփականատիրական իրավունքները ոչնչացնելով, վտանգի տակ դրեց նաև նրանց գոյությունը։ Այս բոլորի հետ մեկտեղ, Արևմտյան Հայաստանում հարկերը խիստ բարձրացվում էին, որն առիթ տվեց հայերին VI դարում ապստամբել բյուզանդական տիրապետության դեմ։

V դարում հայ ժողովուրդը կորցնելով իր պետականությունը, նույնիսկ օտարների տիրապետության տակ շարունակում էր ստեղծագործել ու հարստացնել իր կուլտուրայի գանձարանը։ Օտար բռնակալների դեմ զինված պայքարի հետ միասին, հայ ժողովուրդը մղում էր նաև գաղափարական պայքար։ IV դարի վերջերին Տարոն գավառի Հացեկաց գյուղի բնակիչ Վարդանի որդի Մեսրոպ Մաշտոցն իր ստեղծած հայկական նոր գրերով խոշոր դեր կատարեց հայ գրի և գրականության զարգացման գործում։ Նրա աշակերտներից ու հետևորդներից Փավստոս Բյուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին ու հայ պատմագրության հայր Մովսես Խորենացին և նրանց հետ շատ-շատերը իրենց պատմագիտական աշխատություններում, շարադրելով Հայաստանի անցյալ ու ներկա պատմությունը, իրենց ժամանակակիցների մեջ պատվաստում էին հայրենասիրություն ու ազգային ինքնաճանաչողություն։ Իսկ Եզնիկն ու Դավիթ Անհաղթը տրամաբանական ուժեղ փաստարկումներով մերկացնելով պարսկա-բյուզանդական կրոնական գաղափարախոսությունը, միաժամանակ վերլուծում էին փիլիսոփայական լուրջ ու բարդ հարցեր։ Մեսրոպ Մաշտոցն ու նրա շնորհալի և բարձր կրթություն ստացած աշակերտները խոշոր դեր կատարեցին նաև թարգմանական գրականության ստեղծման գործում։ V դարի տրադիցիաները գիտության ու գրականության ասպարեզներում շարունակվեցին նաև հետագայում։ VII դարում հանդես եկավ խոշոր մտածող, նշանավոր մաթեմատիկոս, աշխարհագրագետ և տիեզերագետ Անանիա Շիրակացին, որի կազմած թվաբանական դասագիրքը մեզ հասած նույնանման գործերից ամենահինն է աշխարհում։

Հայ ժողովուրդը մեծամեծ զրկանքների գնով շարունակում էր կերտել ճարտարապետական հիասքանչ կոթողներ, որոնցից էջմիածնի Մայր տաճարը, Հռիփսիմեի եկեղեցին, V—VII դարերի հայ ճարտարապետության գլուխ-գործոց Զվարթնոցի եկեղեցին և մյուսները իրենց նախագծման, կառուցողական արվեստով ու աննման քանդակներով հիացմունք են պատճառում նայողին նաև այսօր։



VII-ից մինչև IX դարի կեսերը, երբ ողջ Արևելքի հետ միասին արաբներն իրենց տիրապետությունը հաստատեցին նաև Հայաստանում, հայ ժողովուրդը ևս անհավասար պայքարի դուրս եկավ տիրողների դեմ։ 747—750, 773—775 և 851—855 թվականների ժողովրդական ապստամբությունները, որոնք զուգակցվում էին նաև արաբների կողմից ստրկացված մյուս ժողովուրդների պայքարի հետ, ունեցան այն հետևանքը, որ IX դարի 70-ական թվականներին վերջնականապես թոթափվեց արաբական լուծը, և Հայաստանում հիմնադրվեց ինքնուրույն ու անկախ թագավորություն, որի գլուխ անցան Բագրատունիները։ Արաբների դեմ մղված դարավոր պայքարի էպոխայում էլ ձևավորվեց մարդկային մտքի հանճարեղ ստեղծագործություններից մեկը՝ հայ ժողովրդի հերոսական էպոս «Սասունցի Դավիթը»։ Բագրատունի առաջին թագավորներ Աշոտ I-ը, Սմբատ I-ը և Աշոտ II-ը վարում էին երկրի կենտրոնացման քաղաքականություն և ձգտում էին ստեղծել ուժեղ, միասնական ֆեոդալական միապետություն։ Հայ Բագրատունիների վարած այդ քաղաքականությունը հանդիպում էր խոշոր ազնվականության դիմադրությանը։ Ներքին միջֆեոդալական պայքարի և Արաբական խալիֆաթի ռազմական միջամտության պատճառով, X դարից սկսած Հայաստանը մասնատվեց առանձին թագավորությունների ու իշխանությունների։ Սակայն, չնայած դրան, Հայաստանի մի զգալի մասում ստեղծվեց համեմատաբար խաղաղ աշխատանքի ու ստեղծագործության մի երկար ժամանակաշրջան, որը մեծ խթան հանդիսացավ Հայաստանի տնտեսական, կուլտուրական ու քաղաքական կյանքի զարգացման համար։ Հայաստանի ճանապարհներում նորից լսելի եղավ քարավանների ղողանջը։ Արտաքին ու ներքին առևտրի աշխուժացումը զարկ տվեց նաև քաղաքային կյանքի վերելքին։ Առևտրական ու արհեստավորական շերտերը կենտրոնանում էին Անիում, Կարսում, Նախիջևանում, Վանում, Դվինում, Արծնում, Խլաթում, Բաղեշում և մյուս քաղաքներում։ Անին դարձավ ոչ միայն Հայաստանի, այլև ողջ Մերձավոր Արևելքի առևտրա-արհեստավորական ու կուլտուրական մտքի խոշորագույն կենտրոններից մեկը, որի բնակչությունը XI դարում 100 000-ից ավելի էր։ Անիում այդ և հետագա շրջանում գործում էին միջնադարյան տիպի բարձր դպրոցներ, որտեղ կրոնի ու աստվածաբանության հետ միասին, դասավանդում էին նաև ճարտասանություն, մաթեմատիկա, տիեզերագիտություն, պատմություն, փիլիսոփայություն և այլ գիտություններ։ Անիի վանքերը, տաճար-

ներն ու եկեղեցիները, հյուրանոցները, շուկաները, պալատները ու քաղաքացիական այլևայլ կառուցումները արդեն XI դարում մշակել էին հայ ճարտարապետության «ևնիական ոճը», որն իր ազդեցությունն ունեցավ նաև հեռավոր երկրների ու ժողովուրդների կառուցողական արվեստի վրա: Անին մի մեծ թանգարան է: Նրա հուշարձանների ավերակները, որոնք մինչև օրս էլ պահպանում են իրենց շուքն ու հմայքը, դարձել են շատ ու շատ ճարտարապետների, պատմաբանների ու հնէաբանների ուսումնասիրության օբյեկտներ: Իրենց ճարտարապետությամբ հռչակված էին նաև Դվինը, Աղթամար կղզին (Վանա լճում), Կարսը, Արծնը և այլն: Ճարտարապետությունից բացի, հիշյալ շրջանում զարգացան նաև մատենագրությունը, փիլիսոփայությունը, թատրոնը, երաժշտությունն ու գեղարվեստական գրականությունը:

Հասարակական հարաբերությունների զարգացման, դասակարգային բուռն պայքարի և ֆեոդալական կարգերի երևման պահին էր, որ հանդես եկավ միջնադարյան խոշորագույն մտածող, հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին (X դար):

Հայ երաժշտական կուլտուրայի խոշոր նվաճումներից մեկը պետք է համարել այն, որ արդեն IX դարից և դուցե դրանից էլ առաջ, երգն ու երաժշտությունը նոտագրվում էին հատուկ նշաններով, որոնք հայկական մատենագրության մեջ հայտնի են խազեր անունով: Ցավոք սրտի պետք է նշել, որ մինչև օրս ոչ ոքի չի հաջողվել վերծանել այդ նոտաները և երաժշտասերների առաջ բաց անել հայ ժողովրդի այդ հարուստ գանձարանի դռները:

Հայաստանի ֆեոդալական մասնատված վիճակը և միջֆեոդալական ու դասակարգային պայքարի սրումը, օտար տերությունների ամենօրյա միջամտության հետ միասին, XI դարի կեսերից սկսած խիստ ծանր պայմաններ էին ստեղծում Բագրատունիների անկախության համար: Եվ ահա 1045 թվականին ներքին և արտաքին անբարենպաստ պայմաններում՝ Անին ընկավ բյուզանդացիների ձեռքը, և Բագրատունիների թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց: Բյուզանդացիները Հայաստանը կողոպտելու հետ միասին, վարում էին հայ բնակչության ու ակտիվ ռազմական, քաղաքական գործիչների՝ Հայաստանից դուրս քշելու նողկալի քաղաքականություն: Այդ բանը փաստորեն բաց էր անում երկրի դռները այլ նվաճողների առաջ: Եվ, ահա, երբ Արևելքում հանդես եկան թուրք-սելջուկները, բյուզանդացիները մեկը մյուսից



ետևից իրենց դիրքերը զիջեցին նրանց: Հայաստանից սկսվեց մասսայական արտագաղթը: Հայերի մեծ զանգվածները հաստատվեցին Կիլիկիայում, որտեղ արդեն XI դարի կեսերին ստեղծեցին իրենց անկախ ու հզոր իշխանությունները, որոնց հիմքերի վրա էլ XII դարի վերջերին ձևավորվեց նաև Կիլիկիայի հայկական անկախ թագավորությունը, որն իր գոյությունը պահպանեց մինչև 1375 թվականը՝ հայ ժողովրդի կուլտուրական ու քաղաքական կյանքում կատարելով խոշոր դեր: Կիլիկիայի հայության հետնորդները, որոնք ապրում էին այնտեղ մինչև 1914—1920-ական թվականները, ոչնչացվեցին թուրքական գիշատիչների կողմից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

1071 թվականի Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական զորքերի ջախջախումից հետո, սելջուկները նվաճեցին համարյա ողջ Հայաստանը: Սակայն XI դարի վերջերին սելջուկների ստեղծած հսկայական կայսրությունը քայքայվեց և նրա տերիտորիայում առաջացան առանձին մեծ ու փոքր իշխանություններ՝ էմիրություններ: Անդրկովկասում առաջացած էմիրությունները շուտով մեկը մյուսի ետևից սկսեցին շարքից դուրս գալ XII—XIII դարերում հայ-վրացական միացյալ ուժերի համաձայնեցված հարվածների տակ: Սելջուկներից ազատագրված տերիտորիաներում հայ ժողովուրդը դառնում էր իր երկրի տերը: Հայաստանի ազատագրված տերիտորիայում առաջացան հայկական նոր ֆեոդալական ուժեղ իշխանություններ:

Հայաստանի մի զգալի մասի ազատագրումը, ինչպես նաև Կիլիկիայի հայկական թագավորության գոյությունը բարենպաստ ազդեցություն ունեցան հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման վրա: Այդ ժամանակ է'լ ավելի մշակվեց միջին դարերի հայերեն խոսակցական լեզուն, որն արդեն XI դարից սկսած՝ իշխում էր գրականության մեջ: Գրի ու գրականության զարգացման ասպարեզում կարևոր դեր կատարեցին միջնադարյան հայկական համալսարանները Անիում, Հաղպատում, Սանահինում և ուրիշ տեղերում: Այստեղ էին ստեղծագործում այն ժամանակվա գրականության ու գիտության տարբեր ճյուղերի անվանի գործիչները՝ մաթեմատիկոս, տոմարագետ ու բանաստեղծ Հովհաննես Իմաստասերը (XI—XII դդ.), հայտնի իրավագետ և առակագիր Մխիթար Գոշը (XII—XIII դդ.), պատմաբաններ Կիրակոս Գանձակեցին (XIII դ.), Ստեփանոս Օրբելյանը (XIII—XIV դդ.), Վարդանը, Սմբատ Գունդստաբլը (XIII դ.), հայ բժշկության խոշորագույն ներկայացուցիչ

Մխիթար Հերացին (XII դ.) և շատ-շատերը։ Հայկական բժշկական դպրոցներում ավանդում էին բժշկագիտական առարկաներ, իսկ XIII դարից կատարում դիահերձում, որը եկեղեցու կողմից ուրիշ երկրներում արգելված էր ու համարվում էր սրբապղծություն։ Մխիթար Հերացին խոշոր դեր կատարեց դիագնոստիկայի բնագավառում, կյանքից վերցրած իր ուսումնասիրություններով հարստացնելով հայ բժշկագիտության բազմադարյան փորձը։ Սակայն երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի վերելքն ընդհատվեց XIII դարի 30-ական թվականներին, երբ այստեղ ասպարեզ եկան մոնղոլները։ Մինչև XIII դարի 40-ական թվականների կեսերը մոնղոլները նվաճեցին ամբողջ Հայաստանը։

Մոնղոլական հրոսակախմբերն իրենց ամենօրյա ասպատակությունների և արշավանքների ժամանակ տակնուվրա էին անում երկիրը, կոտորում բնակչությանը, ամայացնում ու անմարդաբնակ դարձնում քաղաքներն ու գյուղերը։ Մոնղոլները բնակչության վրա չտեսնված ծանր հարկեր ու պարտավորություններ էին դնում, որի պատճառով մարդիկ մասսայաբար դիմում էին արտագաղթի։ Շուտով երկրի հսկայական տարածությունների վրա միայն կարելի էր տեսնել մոնղոլների մեծաքանակ հոտերը, որոնք իրենց թափառումների ժամանակ ոչնչացնում էին այգիները, մշակելի հողային տարածությունները, ջրանցքներն ու բանջարանոցները։ Սակայն մոնղոլական տիրապետության այս մռայլ ժամանակներում ևս հայ ժողովուրդը հաղթահարելով հսկայական դժվարություններ, շարունակում էր ստեղծագործել։ XIII—XIV դարերում է գործել Գլաձորի համալսարանը, որտեղ աճել են միջնադարյան հայ գրականության աչքի ընկնող շատ գործիչներ։ Այդ ժամանակներում է հանդես եկել սոցիալական անհավասարություններն ու անարդարությունը խարազանող տաղանդավոր բանաստեղծ Ֆրիկը։ Հայաստանի դպրոցներում, վանքերում ու եկեղեցիներում շարունակվում էր կատարելագործվել հայ ձեռագրական արվեստն ու մանրանկարչությունը, որը նոր ու բարձր աստիճանի հասցվեց անվանի մանրանկարիչներ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Մոմիկի և մյուսների շնորհիվ։

XIV դարի վերջերից հայ ժողովուրդն ապրեց է՛լ ավելի մռայլ ու ծանր օրեր։ 1386—1402 թվականներին երկիրն անընդհատ ենթարկվում էր Լենկ Թեմուրի հորդաների ավերածություններին։ Ժողովուրդը սարսափահար թողնում էր իր հայրենիքը ու գաղթում ուրիշ երկրներ։ Նվաճողների արհավիրքների պակասը լրացնում էին սովն ու համաճարակը։ Մոնղոլ-թաթարների տիրապետության ժամանակ Հայաստանի մի շարք շրջաններ գրեթե անմարդաբնակ էին դարձել։ Լենկ Թեմուրի միահեծան պետության մասնատումից և անկումից հետո, հայ ժողովրդի պատմության մեջ այնքան կարևոր դեր խաղացած Արարատյան դաշտը կրկին դարձավ երկրի քաղաքական, տնտեսական ու մտավոր կյանքի կենտրոնը։ Հայաստանի ծայրամասային անմատչելի վայրերում նորից սկսեցին գործել հայկական միջնադարյան կուլտուրայի օջախները, որտեղ հանդես եկան կուլտուրայի ու գիտության այնպիսի խոշոր գործիչներ, ինչպիսիք էին Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին փիլիսոփայության բնագավառում, Ամիրդովլաթ Ամասիացին բժշկության ասպարեզում, Թովմա Մեծոփեցին պատմության մեջ և ուրիշները։ Այս շրջանում զարգացավ նաև աշխարհիկ պոեզիան, որի ականավոր ներկայացուցիչներն էին Հովհաննես Թլկուրանցին, Գրիգոր Աղթամարցին և Մկրտիչ Նաղաշը։

XV դարում քաղաքական իրադրությունները Մերձավոր Արևելքում փոխվեցին։ Լենկ Թեմուրից հետո այստեղ հաստատված թուրքմենական ցեղերի իշխանությունը թուլանալով, տեղի տվեց Իրանում համախմբվող նոր ուժերին, որոնք պայքարում էին նոր, միավորված պարսկական պետության ստեղծման համար։

Պարսկաստանից արևմուտք, դեռևս XIII դարից սկսած, կամաց-կամաց իրենց սահմաններն ընդարձակում էին նաև օսմանյան թուրքերը, որոնք մոնղոլների հետ գալով Արևելքից, հաստատվել էին հիմնականում Իկոնիայի սելջուկյան սուլթանության տերիտորիայում։ Թուրքերը շատ շուտով ստեղծեցին ուժեղ ռազմաֆեոդալական պետություն։ 1453 թվականին նրանք գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը և հաստատվեցին Բալկանյան թերակղզում։ Իսկ քիչ հետո իրենց սահմանները տարածեցին մինչև Ղրիմ, Միջագետք ու Եգիպտոս։

Պարսկաստանի ու Թուրքիայի հզորացումը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում գերիշխանության համար նրանց միջև մղվող արյունահեղ պատերազմները կործանարար ու ճակատագրական նշանակություն ունեցան նաև Հայաստանի ու հայ ժողովրդի համար։ Աշխարհակալության ձգտող երկու հզոր պետությունների պայքարի ու պատերազմների հիմնական թատերաբեմն այսուհետև դառնում էր Հայաստանը։ XVI դարից սկսած՝ պարսկա-օսմանական պատերազմների ժամանակ, արշավող բանակները գրեթե

անմարդաբնակ էին դարձնում հսկայական տերիտորիաներ, ոչնչացնում հայ ժողովրդի դարերի ընթացքում ստեղծած կուլտուրայի հուշարձանները, հրկիզում ու հիմնահատակ անում քաղաքները, ավաններն ու գյուղերը, այրում գրադարանները և ձեռագրերը: Պատերազմներն ուղեկցվում էին անպաշտպան ժողովրդի անհուն տառապանքներով, մասսայական բնաջնջումներով ու աքսորով: Պարսկաստանի և Թուրքիայի միջև մղվող պատերազմների հետևանքով, XVII դարի առաջին կեսերին Հայաստանը բաժանվեց երկու մասի. երկրի արևելյան շրջաններն անցան պարսիկներին, իսկ արևմտյանը՝ թուրքերին: Ինչպես պարսկական, այնպես էլ թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական տերիտորիաներում քաղաքացիական և ռազմական իշխանությունը մեծ մասամբ տրված էր ռազմամոլ քոչվոր ցեղերի զինվորական վերնախավի ձեռքը: Հայ գյուղացիությունը գտնվում էր ծայր աստիճան իրավազուրկ և ճնշված վիճակում: Օրենքը հայերին հարբատահարություններից և անարդարությունից պաշտպանող հոդված չուներ, սահմանված չափից ավելի հարկեր գանձելը կամ նույն հարկը մի քանի անգամ հավաքելը սովորական բաներ էին: Երկրում ստեղծված անսահմանորեն մռայլ իրականությունը պատճառ դարձավ հայերի նոր, մասսայական արտագաղթի՝ դեպի Ռուսաստան և Արևմտյան Եվրոպայի երկրները: Բնակչության հիմնական զանգվածը, որը մնացել էր տեղում, օտարի տիրապետության տակ գտնվող իր հայրենի երկրում, դատապարտված էր դառն ճակատագրի քմահաճույքին: Օտարի ծանր լուծը արյունաքամ էր արել աշխատավոր հայ ժողովրդին: Սակայն ազատասեր ժողովրդի լայն խավերի շրջանում աստիճանաբար ծնունդ է առնում ու սկսում հզորանալ ժողովրդական ազատագրական պայքարի գաղափարը:

XVII դարի երկրորդ կեսերից սկսած, հայ ժողովուրդն ավելի ու ավելի՝ իր հայացքն ուղղում էր դեպի հզորացող Ռուսաստանը: 1701 թվականին Օրին, որ Եվրոպայից վերադարձել էր Հայաստան, մեծ լիազորություններով մեկնեց Ռուսաստան: Օրին Պյոտր I-ին ներկայացրեց Հայաստանի ազատագրման իր ծրագիրը, որը հավանության արժանացավ ցարի. կողմից: Սակայն XVIII դարի ընկզբներին Ռուսաստանի կողմից Հայաստանին օգնելու ռեալ պայմաններ չկային: Դրա համար էլ առայժմ հայ, վրաց ու ադրբեջանական ժողովուրդները հարկադրված էին իրենց սեփական ուժերով պայքարելու թուրքերի ու պարսիկների դեմ: 1727 թվականին



Սյունիքի ապստամբները փառապանծ զորավար Դավիթ Բեկի գլխավորությամբ ջախջախելով թուրքերին, ամբողջ Զանգեզուրը մաքրեցին նրանց ջարդարարական ոհմակներից: Սյունեցիների օրինակին էին հետևում նաև ղարաբաղցիները: Սյունիքի, Ղարաբաղի, ինչպես նաև Հայաստանի մյուս մասերի հայության պայքարը արտաքին հարստահարիչների դեմ, հայերի ազատագրության հարցը լուծեց, որովհետև XVIII դարի կեսերին Պարսկաստանը նորից տիրեց նախկին սահմաններին Անդրկովկասում: Բայց այդ ժամանակներից սկսած, արտասահմանյան գաղթավայրերի հայկական շրջաններում հասունանում էր հայկական ազգային պետության ստեղծման գաղափարը և պայքարի ոգին: Այդ նպատակի համար առանձին հետևողականությամբ էին գործում հատկապես Հնդկաստանի հայերը, որոնց առաջավոր ներկայացուցիչները լայն կապեր ունեին ռուսական արքունիքի հետ և Ռուսաստանի օգնության վրա մեծ հույսեր էին դնում:

Հայ, ինչպես նաև Անդրկովկասի մյուս բախտակից ժողովուրդների մեջ մեծ խանդավառություն առաջացրեց 1783 թվականի Գեորգիևսկում կնքված ռուս-վրացական պայմանագիրը, որով Ռուսաստանն իր հովանավորության ու պաշտպանության տակ էր վերցնում Վրաստանին:

Պարսկա-թուրքական արյունոտ տիրապետությունը խոշոր չափով կասեցրեց հայ ժողովրդի կուլտուրայի զարգացումը: Հատ ու կենտ վանքերում ու եկեղեցիներում, որոնք այս կամ այն չափով քիչ էին տուժել սոսկալի արհավիրքներից, մշտական ահ ու սարսափի տակ շարունակում էին ստեղծագործել հայ խոշոր պատմիչներն ու ժամանակագիրները: Գրիգոր Դարանաղցու (XVI—XVII դդ.), Առաքել Դավրիժեցու (XVII դ.), Զաքարիա Քանաքեռցու (XVII դ.), Աբրահամ Կրետացու (XVIII դ.), Խաչատուր Ջուղայեցու (XVIII դ.) և մյուսների գործերը հայ ժողովրդի ապրած մղձավանջային օրերի խոսող վկաներն են: Այդ հեղինակների պատմագիտական աշխատությունները, ինչպես նաև դրանից առաջ եղած մի քանի տասնյակ պատմիչների ու հարյուրավոր ժամանակագիրների գործերը հարուստ ու բովանդակալից տեղեկություններ են հաղորդում ոչ միայն Հայաստանին մոտ գտնվող երկրների ու ժողովուրդների պատմության, կուլտուրայի ու այլ բնագավառների մասին, այլև խոսում են այնպիսի հեռավոր երկրների մասին, ինչպիսիք են Հնդկաստանը, Չինաստանը և այլն:

Բուն Հայաստանում հայ ժողովրդի կուլտուրական ու դիտական մտքի զարգացման համար ստեղծված միանգամայն անբարենպաստ պայմաններին հակառակ, հայկական կուլտուրան մեծ պրոգրես էր ապրում արտասահմանյան հայկական գաղթավայրերում, որտեղ հայերը մշտապես հաղորդակից լինելով Եվրոպայի ու մյուս երկրների կուլտուրական կյանքին, որոշակի քայլեր էին անում դեպի առաջ՝ գրականության, թատրոնի, տպագրության ու այլ բնագավառներում: Այսպես, 1512 թվականին Վենետիկում լույս տեսավ առաջին հայերեն գիրքը: Դա կուլտուրական խոշոր նվաճում էր հայ ժողովրդի համար, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ հայերեն առաջին գրքի լույս տեսնելու ժամանակ ամբողջ Եվրոպայում գրքերը հրատարակվում էին ընդամենը մի քանի լեզուներով: Հետագայում հայկական տպարաններ հիմնվեցին նաև Նոր Ջուղայում (Պարսկաստան), Կոստանդնուպոլսում, Ամստերդամում, Մադրասում, Էջմիածնում և այլն: Լեհաստանի հայկական գաղթավայրերից Լվովը, որն իր իրավունքների տեսակետից բավականին մեծ արտոնություններ ուներ, 1668 թվականին ստեղծեց նաև իր ազգային թատրոնը: Մեծ չափով զարգացավ աշխարհիկ պոեզիան ու բանաստեղծությունը: Այս ասպարեզում փայլում էին հատկապես սիրո ու աշխատանքի երգիչներ Նահապետ Քուչակը (XVI դ.), Սայաթ Նովան (XVIII դ.) և մյուսները: XVIII դարի սկզբներից արտասահմանում հանդես եկան նաև հայագիտության գիտական կենտրոնները: 1717 թվականին Վենետիկից ոչ հեռու ս. Ղազար կղզում Մխիթար Սեբաստացու ջանքերով հաստատվեց հայ կաթոլիկների միաբանությունը, որը հիմնադրի անունով կոչվեց Մխիթարյան միաբանություն: Մխիթարյանները շուտով այստեղ հիմնեցին իրենց տպարանը, ձեռագրատունը և գրադարանը ու սկսեցին զբաղվել հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության հարցերով՝ այդ բնագավառների գծով հրատարակելով շատ ու շատ միծարժեք գործեր, որոնց մի զգալի մասը մինչև օրս էլ պահպանում է իր գիտական բարձր արժեքը: Առանձնապես «Հայկազյան բառարանը», Մ. Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը», Ղ. Ալիշանի պատմա-բանասիրական ու աշխարհագրական մի շարք ուսումնասիրությունները համարվում են հայագիտական լավագույն գործեր: 1794 թվականին Մադրասում (Հնդկաստան) լույս տեսավ նաև առաջին հայերեն ամսագիրը «Ազդարար» անունով:

1801 թվականին Վրաստանի՝ Ռուսաստանին միացվելուց



հետո ավելի ռեալ դարձավ հայկական հողերի ազատագրման հարցը: Ռուսաստանի ակտիվ գործողություններն այդ ուղղությամբ ազատագրվելու հույս էին ներշնչում նաև հայերին, որոնք ակտիվ կերպով մասնակցում էին ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներին, որպես Ռուսաստանի դաշնակիցներ ու բարեկամներ: 1826 թվականին սկսած ռուս-պարսկական պատերազմը ավարտվեց Ռուսաստանի լիակատար հաղթանակով. Երևանի ու Նախիջևանի խանություններն անցան Ռուսաստանին: 1828 թվականին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Այդ պատերազմում ևս հաղթանակը տարավ Ռուսաստանը ու գրավեց Կարսը, Արդահանը, Բայազետը, Էրզրումը: Ամենուրեք ազատագրված տերիտորիաների հայությունը՝ բերկրանքի և ուրախության արցունքն աչքերին, աղ ու հացով էր դիմավորում իր ազատարար հայ և ռուս զինվորներին: Սակայն Թուրքիայից ազատագրված տերիտորիաները շուտով (1829 թ.) կրկին վերադարձվեցին: Բավականին ծանր դրություն էր ստեղծվում մեկ անգամ ազատագրված և կրկին վերադարձված վայրերում ապրող հայերի համար: Դրա պատճառով Արևմտյան Հայաստանից 90 000 հայեր գաղթեցին Անդրկովկաս ու բնակություն հաստատեցին Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող քաղաքներում ու գյուղերում:

Այսպիսով, XIX դարի 20-ական թվականներին Հյուսիս-Արևելյան Հայաստանն անցավ ռուսական տիրապետության տակ: Դրանով հայ ժողովրդի մի հատվածն ընդմիշտ ազատագրվեց պարսկա-թուրքական գիշատիչներից և բախտը կապեց Ռուսաստանի հետ:

Տվյալ ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի առաջավոր ներկայացուցիչների պայքարն ուղղված էր ֆեոդալական հարաբերությունների մնացորդների դեմ՝ ժողովրդի լուսավորության, կրթության ու դպրոցների վերակառուցման համար: Այս ուղղությամբ իր ստեղծագործություններով և պրակտիկ գործունեությամբ խոշոր դեր կատարեց հայ լուսավորիչ, մեծ հայրենասեր Խ. Աբովյանը: Աբովյանի տրադիցիաներով հայ հասարակական միտքը XIX դարի 50—60-ական թվականներին նոր քայլ արեց դեպի առաջ: Ձևավորվեց հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, որի խոշորագույն ներկայացուցիչն էր գրող, բանաստեղծ ու հրապարակախոս, մեծ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման համար խոշոր նշանակություն ունեցավ 1862 թվականի Զեյթունի

(Կիլիկիա) ապստամբությունը։ Զեյթունի անվախ ու ազատասեր մի բուռ հայեր զենքը ձեռքներին, դուրս գալով թուրքական զորքերի դեմ, ջարդ ու փշուր արեցին տասնյակ հազարների հասնող թշնամու կանոնավոր ու անկանոն բանակները։ Զեյթունցիներն արժանացան ողջ հայության հայրենասիրական համակրանքին, և իզուր չէ, որ նրանց հերոսամարտերի մասին մեծ զգացմունքով արտահայտվեցին Մ. Նալբանդյանը և հայ գրականության ու հասարակական մտքի մյուս նշանավոր դեմքերը։

1860-ական թվականներից սկսած հայ ժողովրդի մեջ ավելի ու ավելի էր պրոպագանդվում թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցը։ Նույն ժամանակներում թուրքական տիրապետության դեմ ոտքի էին կանգնել հայերին բախտակից բալկանյան ժողովուրդները։ Մամուլում, գրականության ու ժողովրդի մեջ ազգային-ազատագրական գաղափարներ տարածելու գործում հսկայական դեր կատարեցին հրապարակախոս Գ. Արծրունին, մեծ վիպասան Րաֆֆին ու հայրենասեր բանաստեղծ Ռ. Պատկանյանը։ 1877—1878 թվականներին բռնկված ռուս-թուրքական պատերազմը ազատագրվելու մեծ հույսեր էր ներշնչում հայերին։ Պատերազմը վերջացավ Թուրքիայի պարտությամբ։ Երկու կողմերի միջև կնքված Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին անցան Կարսը, Արդահանը և Ալաշկերտի հովիտը։ Պայմանագրի 16-րդ կետով Թուրքիան պարտավորվում էր Հայաստանի մյուս մասերում բարենորոգումներ մտցնել ու պաշտպանել հայերին թուրքերի ու քրդերի կամայականություններից և հետապնդումներից։ Սա առաջին պայմանագիրն էր, որտեղ հայերի իրավունքների պաշտպանությունը ստանում էր միջազգային իրավաբանական ուժ։ Պայմանագրում հայերին վերաբերող հարցն էլ ստացավ «Հայկական հարց» անունը։ Հայերի դրության բարելավման համար Թուրքիան պատասխանատու էր Ռուսաստանի առաջ։ Դրա համար ռուսական զորքերն իրենց գրաված վայրերում պետք է մնային մինչև խոստացված բարենորոգումների իրականացումը։ Սակայն իմպերիալիստական տերությունները չէին կարող հանդուրժել Ռուսաստանի հաջողությունները։ 1878 թվականի հունիսին կայացած Բեռլինի միջազգային կոնգրեսը վերանայեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը. «Հայկական հարցն» այստեղ մոտվեց 61-րդ հոդվածի մեջ, իսկ հայերի վիճակի բարելավման վրա այսուհետև հսկելու էին կոնգրեսի մասնակից բոլոր իմպերիալիստական պե-



տությունները։ Եվ որովհետև Բեռլինի կոնգրեսի մասնակից տերություններից յուրաքանչյուրն իր շահերն էր հետապնդում Թուրքիայում, ուստի հայկական հարցը դառնում էր նրանց ձեռքում պատրվակ՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար, մի հանգամանք, որը փաստորեն ազատ էր արձակում թուրքական կառավարության և սուլթան Աբդուլ Համիդի արյունոտ ձեռքերը հայերի նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար, որը հասցրեց Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի տարբեր մասերում ապրող հայերի դրության էլ ավելի ծանրացմանը։ Աբդուլ Համիդի կազմակերպած հատուկ ջարդարարական գնդերն սկսեցին իրագործել հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման ահավոր ծրագիրը։

Թուրքական իշխանությունները հայկական հարցը սկսեցին լուծել հայ ժողովրդին ամբողջապես ոչնչացնելու եղանակով։ 1895—1896 թվականներին հայ ազգաբնակչության մասսայական բնաջնջումներն սկսվեցին Սասունում, Էրզրումում, Կոստանդնուպոլսում, Տրապիզոնում, Խարբերդում, Մարաշում և ուրիշ տեղերում։ Հայերի ունեցվածքն ու գույքը ենթարկվում էր թալանի ու կողոպուտի։ Կարճ ժամանակում Արևմտյան Հայաստանում հողին հավասարվեցին հարյուրավոր հայկական գյուղեր ու բնակավայրեր։ Բնակչությունը սարսափահար փախչում էր ուր որ կարող էր։ Հայերի նկատմամբ Աբդուլ Համիդի կիրառած արյունոտ դատաստանը բորբոքեց Ռուսաստանի և ամբողջ աշխարհի առաջադիմական ուժերի ատելությունն ու բողոքը։ Համաշխարհային մամուլում այդ առթիվ հանդես եկան կուլտուրայի և գրականության շատ գործիչներ։

Ռուսական հեղափոխական շարժումների ազդեցության տակ, XX դարի սկզբներից Հայաստանում ևս կազմակերպվեցին հեղափոխական խմբակներ ու կազմակերպություններ, որոնց աշխատանքները կազմակերպելու և ղեկավարելու համար հսկայական դեր կատարեցին Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը։ Հեղափոխական խմբակները Հայաստանում տարածում էին մարքսիզմի գաղափարներն ու պրոպագանդում սոցիալիստական հեղափոխության համար պայքարի անհրաժեշտությունը։ Այս կազմակերպությունների շնորհիվ XX դարի սկզբներին Հայաստանի արդյունաբերական վայրերում ու գյուղերում տեղի ունեցան մի շարք բանվորական գործադուլներ և գյուղացիական հուզումներ։

1912—1914 թվականներին ռուսական կառավարությունը դիվանագիտական բանակցությունների միջոցով հասավ այն բանին,

որ 1914 թվականի հունվարի 25-ի Թուրքիայի հետ կնքած պայմանագրով պարտադրեց Թուրքիային՝ Արևմտյան Հայաստանի վիլայեթներում (նահանգներում) անհապաղ ռեֆորմ անցկացնել։ Սակայն վրա հասած առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի պատճառով այս պայմանագիրը չիրագործվեց։

1915—1916 թվականներին թուրքական իշխանությունները կայսերական Գերմանիայի թելադրանքով սկսեցին Արևմտյան Հայաստանի հայության պլանաչափ ոչնչացումը ու կենդանի մնացածների արտաքսումն օտար երկրներ։ Թուրքական ենիչերիներն իրենց արյունոտ ձեռքը բարձրացրին նաև հայ ժողովրդի ծաղիկը կազմող ինտելիգենցիայի ականավոր ներկայացուցիչների վրա, մի դիշերում ոչնչացնելով նրանցից հարյուրավորներին։ Այս եղանակով 1915—1916 թվականներին Թուրքիան Հայաստանում ոչնչացրեց ավելի քան մեկ ու կես միլ. հայերի և նույնքան թվով էլ քշեց երկրից դուրս, որոնցից շատ-շատերը կոտորվեցին ճանապարհին, չդիմանալով աննկարագրելի դժվարությունների։ Արևմտյան Հայաստանից մոտ 300 000 հայերի միայն հաջողվեց խուսափել թուրքական սպանդից և անցնել ռուսական սահմանը։

1917 թվականի Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո, Անդրկովկասում իշխանությունն անցավ բուրժուազիայի ձեռքը, որի քաղաքականությունն այստեղ իրականացնում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ՕԶԱԿՈՄ)։ Երբ Ռուսաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը, բուրժուազիան Անդրկովկասում ավելի մոլեգնեց. ազգային նացիոնալիստական կուսակցություններն այստեղ 1918 թվականի մայիսին ստեղծեցին իրենց առանձին-առանձին բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները։ Հայաստանում իշխանության գլուխ անցան դաշնակցականները։ Օգտվելով Անդրկովկասի մասնատված վիճակից ու նրա անջատված լինելուց Սովետական Ռուսաստանից, թուրքերը Կովկասյան ճակատում վերսկսեցին պատերազմը։ Հայ ժողովրդի գլխին կախվեց պատերազմի ու սովի ահավոր ուրվականը։ Սովից ու տարափոխիկ հիվանդություններից 1918—1920 թվականներին Երևանում ու էջմիածնում օրական մեռնում էին հարյուրավոր գաղթականներ։ Առանձին բարեգործական ընկերությունների ու կազմակերպությունների ցույց տված օգնությունը սովյալներին՝ վիճակը չէր թեթևացնում։ Հայաստանի աշխատավորությունն ու հեղափոխական կազմակերպությունները գոնում էին, որ փրկությունը կայանում է միայն Սովետական Ռուսաստանին միանալու մեջ։ Ահա Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների հիմնական աշխատանքն էլ գնում էր այդ ուղղությամբ։ 1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանի հյուսիսային շրջանների աշխատավորները ոտքի կանգնեցին, տապալեցին տեղում դաշնակցականների իշխանությունը և Հայաստանը հռչակեցին սովետական։ Հայ աշխատավորները միաժամանակ խնդրեցին Սովետական Ադրբեջանում գտնվող 11-րդ Կարմիր Բանակին՝ օգնելու իրենց։ Կարմիր Բանակի զորամասերը անմիջապես անցան սահմանն ու իրենց պաշտպանության տակ առան հայ աշխատավորությանը։ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Կարմիր Բանակի զորամասերն ու աշխարհազորային ուժերը մտան Երևան։

Սովետական իշխանությունը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից ու երկիրը դրեց նորմալ զարգացման հունի մեջ։ Մի քանի տարվա համառ աշխատանքի հետևանքով ավերված երկիրն իր պատկերը փոխեց։ Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին մեծ էր Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս ժողովուրդների օգնությունը հայ ժողովրդին։ Այդ անշահախնդիր օգնության շնորհիվ հայ ժողովուրդը կարճ ժամանակում բուժեց իր վերքերը, երկիրը դուրս բերեց քայքայումից և Սովետական Միության մեծ ընտանիքում դուրս եկավ սոցիալիզմի մեծ ու փառավոր ուղին։



Լենինի արձանը Երևանի Լենինի հրապարակում



Լենինի արձանը Երևանի Լենինի հրապարակում



## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ԱՌԱՋ



այկական լեռնաշխարհը համարվում է մարդկության հնագույն օրրաններից մեկը։ Այստեղ շատ վաղ ժամանակներից իվեր բնակչության զբաղմունքը կազմել են դյուղատնտեսության երկու կարևոր ճյուղերը (երկրագործությունն ու անասնապահությունը) և արհեստավորությունն ու առևտուրը։ Այդ բնագավառներում մեծ հաջողությունների էր հասել, մանավանդ, Ուրարտական պետությունը, որը անմիջապես նախորդել է հայկական պետությանը և վերջինիս է ժառանգել տնտեսության ու կուլտուրայի ասպարեզում իր ձեռք բերած նվաճումները։ Երկրագործության, անասնապահության, արհեստների (հատկապես մետաղամշակության և շինարարության հետ կապված արհեստների), լեռնային արդյունագործության և տնտեսության այլ ճյուղերով հին Հայաստանը կանգնած էր այն ժամանակվա ամենազարգացած պետությունների շարքում։ Սակայն Հայաստանին բախտ չէր վիճակված իր բնական ընթացքով զարգանալու։ Նա դարեր շարունակ Արևելքի ու Արևմուտքի պայքարի թատերաբեմ էր դարձել, որի հետևանքով էլ նրա տնտեսությունը զարգանում էր մեծ ելևէջներով։ Բայց և այնպես, ընդհուպ մինչև XIII դարը ներառյալ, Հայաստանը իր տնտեսությամբ ու կուլտուրայով մնում էր որպես Առաջավոր Ասիայի ամենազարգացած երկրներից մեկը։

XIII դարից սկսվում է Հայաստանի պատմության մռայլ ժամանակաշրջանը, որը տևում է մոտ 600 տարի։ Թուրքական ցեղերի և պարսկա-թուրքական տիրապետության այդ ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական կյանքը մեծապես հետադիմում է, երկրագործությունը շատ տեղերում խափանվում, ոռոգման ցանցերն ավերվում, առևտուրը ընդհատվում, բազմաթիվ արհեստներ վերանում։ Դրանց փոխարեն երկրում գնալով ավելի ու ավելի տարածում է ստանում քոչվորական և կիսաքոչվորական անասնապահությունը, որ ավելի էքստենսիվ բնույթ ուներ և որը կազմում էր եկվոր տիրապետողների հիմնական զբաղմունքը։ 1828 թ. Հայաստանի մի մասում վերջ է տրվում ժողովրդապան ժամանակաշրջանին։ Այդ թվականին Ռուսաստանին միացած Երևանի ու Նախիջևանի խանությունների բնակչությունը փրկվում է ֆիզիկական բնաջնջումից և հնարավորություն ստանում զբաղվելու իր տնտեսությամբ։

XIX դարի առաջին կեսի վերջերից Արևելյան Հայաստանում աստիճանաբար երևան են գալիս մի քանի կապիտալիստական ձեռնարկություններ։ Դրանք սկզբում հանդես եկան պղնձի արդյունաբերության մեջ (Ղափան, Ալավերդի), ապա՝ գինու-կոնյակի։ Արտադրության մյուս ճյուղերը՝ մետաղամշակում, կաշեմշակում, բամբակագործություն և ուրիշները շարունակում էին մնալ արհեստագործության մակարդակի վրա։ Նախանձելի չէր և գյուղատնտեսության վիճակը։ Այստեղ անմրցակից իշխող էին էքստենսիվ երկրագործությունն ու կիսաքոչվորական անասնապահությունը։ Նկատված առաջխաղացումն էլ, որ գերազանցապես վերաբերում էր բամբակագործությանն ու խաղողագործությանը, ուներ միակողմանի բնույթ և ելնում էր ռուսական կապիտալիստական ձեռնարկություններին հումք մատակարարելու նեղ շահերից։ Այլ կերպ ասած, Արևելյան Հայաստանը ցարական Ռուսաստանի հետամնաց անկյուններից մեկն էր, նրա կիսագաղութը։

1920 թ. նոյեմբերին, ռուս մեծ ժողովրդի և եղբայրական մյուս ժողովուրդների օրինակով հայ ժողովուրդը ևս բարձրացնում է ազատության դրոշը։ Ազատարար Կարմիր Բանակի քաջարի զոհերի օգնությամբ նա տապալում է դաշնակների լուծը և երկրում հաստատում սովետական կարգեր։ Հայ ժողովուրդը ձեռք է բերում իր վաղուց կորցրած պետականությունը և ՍՍՌՄ մյուս ժողովուրդների հետ միասին բռնում ոսկեդարի ուղին։

Սովետական Հայաստանը կազմվում է նախկին ցարական



Երևանի նահանգի մեծ մասից և Թիֆլիսի ու Ելիզավետապոլի նահանգների հայաբնակ մի քանի շրջաններից։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրան հաջորդած դաշնակցական կարճատև տիրապետության շրջանում Հայաստանի տնտեսությունը քայքայվել էր, իսկ ժողովուրդը՝ թե եկվոր և թե բնիկ, կանգնել էր ահռելի սովի ու համաճարակ հիվանդությունների սարսափի առաջ, որոնք սպառնում էին նրա ֆիզիկական գոյությանը։ Անհրաժեշտ էր Սովետական Հայաստանի ձեռք բերած ժառանգությունը։ Նրան բաժին ընկան կիսաավերված արդյունաբերական ձեռնարկություններ, քայքայված գյուղատնտեսություն, որի հիմնական գործիքը մնում էր հնադարյան արորը, և սովն ու համաճարակները, որոնք մոլեգնում էին ամբողջ երկրով մեկ։ Սակայն սովետական կարգերի հաստատումից հետո աշխատասեր հայ ժողովուրդը անմիջապես լծվեց տնտեսության վերականգնման գործին, և ՌՍՖՍՌ-ի ու Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների օգնությամբ Հայաստանում ոչ միայն շատ շուտով վերականգնվեցան սովն ու համաճարակները, այլև սկսվեց տնտեսական հետագա վերելք։ Տնտեսության բոլոր ճյուղերի գծով 1927—1928 թթ. զգալի չափով արդեն գերազանցվեց 1913 թվականի մակարդակը։

Սակայն այդ չէր խնդիրը։ 1913 թ. Հայաստանը հետամնաց ագրարային երկիր էր, այդ թվականի տնտեսական մակարդակի վերականգնումը դեռևս հարցի լուծումը չէր։ Սովետական կառավարությունն ու Կոմունիստական պարտիան, Սովետական Միության ազգային մյուս ռեսպուբլիկաների հետ միասին, սկզբից և՛ մեծ հոգ են տանում նաև Հայաստանի տնտեսության հետագա զարգացման համար։

Սովետական տարիներին, պատմական ամենակարճ ժամանակամիջոցում Հայաստանը ագրարային հետամնաց երկրից վեր է ածվում զարգացած ինդուստրիալ երկրի՝ մեքենայացված ու առաջավոր գյուղատնտեսությամբ։ Երկրի արդյունաբերական զարգացման սկիզբն է դրվում Լենինի մշակած հայտնի ԳՕԷԼՌՕ-ի պլանով։ Ղեկավարվելով այդ պլանով, Հայաստանի Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը նախատեսում են ռեսպուբլիկայում կառուցել խոշոր էլեկտրակայաններ։ Շուտով սկսվում է Երևանի առաջին և Լենինականի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը։ Դրանք շահագործման են հանձնվում մինչև առաջին հնգամյա պլանին անցնելը։ Էլեկտրակայանների կառուցման հետ միասին հոգ է տարվում առաջին համաշխարհա-

յին պատերազմի և դաշնակների տիրապետության շրջանում խափանված արդյունաբերական օբյեկտներն ու ճյուղերը վերականգնելու, ռեսպուբլիկայի տոռգման ցանցը կանոնավորելու, նոր ջրանցքներ անցկացնելու, բնակչության կրթական-կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ Արդյունաբերության զարգացման տեմպերը ավելի են արագանում Համկ(բ)Պ XIV համագումարի պատմական որոշումից հետո, երբ դրվում է Սովետական պետությունը ինդուստրացման հնթարկելու խնդիրը։ Հայաստանում 1928 թ. արդեն առկա էին ժողովրդասիրական այդ քաղաքականության առաջին, լուրջ ու խոստումնալից արդյունքները։ Այդ թվականին Հայաստանի գյուղատնտեսությունը 1913 թ. մակարդակն անցել էր 10%-ով, իսկ արդյունաբերությունը՝ 36%-ով։ Սակայն դա ռեսպուբլիկայի տնտեսության վերելքի միայն սկիզբն էր։ Նրա արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տրանսպորտը արմատական փոփոխությունների հնթարկվեցին ու շլսված զարգացում ստացան նախապատերազմյան հնգամյակների ընթացքում։ 1940 թ. Հայաստանն արդեն բարձր զարգացած արդյունաբերական երկիր էր։ Նրա արդյունաբերական արտադրանքը 1913 թ. մակարդակը գերազանցել էր 21 անգամ՝ տալով ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի մոտ 81%-ը, 1913 թ. 24 %-ի դիմաց։ Նույն կարգի հաջողություններ ձեռք բերվեցին նաև գյուղատնտեսության բնագավառում. Հայաստանի փոշիացած գյուղատնտեսությունը վերածվեց կոլտնտեսային գյուղատնտեսության՝ հագեցված ժամանակակից տեխնիկայով։

Այս ժամանակաշրջանի ընթացքում Հայաստանում կառուցվում և շահագործման են հանձնվում արդյունաբերական տասնյակ օբյեկտներ՝ գործարաններ և ֆաբրիկաներ, որոնց մի զգալի մասը ունի համամիութենական նշանակություն։ Առանձնապես հիշատակության արժանի են արհեստական կաուչուկի գործարանը, որն իր տիպի մեջ առաջին անգամ Հայաստանում է կառուցվել, Կիրովականի քիմիական խոշոր գործարանը՝ արհեստական պարարտանյութեր արտադրելու համար, Զորագետի և Քանաքեռի հսկա հիդրոէլեկտրակայանները, շինանյութեր արտադրող բազմաթիվ ու բազմապիսի օբյեկտները, տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունները, պահածոների գործարանները։ Արդյունաբերական նոր ճյուղեր ստեղծելու հետ միասին արմատապես վերափոխվում, ընդարձակվում և մեքենայացվում են հին ճյուղերը՝ գունավոր մետալուրգիան (Ալավերդի և Զանգեզուր), գինու-կոնյակի արդյունաբերությունը։ Կարևոր փոփոխություններ են տեղի ունենում արդյունաբերության տեղաբաշխման բնագավառում։ Նախկին կենտրոններից՝ Ալավերդուց ու Ղափանից բացի, որոնք հսկայական զարգացում են ստանում, առաջանում են արդյունաբերական նոր, խոշոր կենտրոններ՝ Լենինականը, որի արդյունաբերությունը նախասովետական շրջանում ամբողջապես գտնվում էր արհեստագործության մակարդակի վրա, և նախկինում սովորական գյուղ ներկայացնող Կիրովականը (Ղարաքիլիսա)։ Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը հարստանում է նորանոր գործարաններով ու ֆաբրիկաներով, դառնում է ռեսպուբլիկայի արդյունաբերության խոշորագույն հանգույցը՝ տալով նրա ամբողջ արդյունաբերական արտադրանքի 50%-ը։

Փոքր չի եղել զարգացման թափը նաև գյուղատնտեսության մեջ։ Այս ժամանակաշրջանում ռեսպուբլիկայի մասը, փոշիացած գյուղատնտեսությունը համախմբվում է կոլտնտեսությունների մեջ, ստեղծվում են մի շարք ՄՏ կայաններ, սովխոզներ։ Կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատանքների հիմնական մասը են թարկվում է մեքենայացման, լիովին կանոնավորվում է ոռոգման հին ցանցը, կառուցվում են նոր ջրանցքներ՝ հատկապես Արարատյան հարթությունում, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում զարգացող արդյունաբերության համար հումք ծառայող տեխնիկական կուլտուրաների մշակման, խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբուծության, ինչպես և հացահատիկային տնտեսության վրա։ Նշանակալի զարգացում է ստանում նաև տնասնաբուծությունը։ Արդյունաբերական կենտրոնների շուրջը (Երևան, Լենինական, Կիրովական, Ալավերդի, Ղափան) զարգանում է կաթնատնտեսությունը, բարելավվում են անասունների ցեղերը՝ և՛ ոչխարաբուծության, և՛ խոշոր եղջերավոր անասնաբուծության գծով։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների տնտեսության նման, Սովետական Հայաստանի տնտեսությունը ևս ի սպաս դրվեց թշնամու դեմ հաղթանակ տանելու գործին։ Հայաստանը ռազմաճակատին էր տալիս բազմապիսի և մեծ քանակությամբ զենքեր, հանդերձանք, պարենամթերքներ։ Այդ տարիներին հսկայական փոփոխություններ կրեց Սովետական Հայաստանի արդյունաբերությունը։ Սկսվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկությունների շինարարությունները (հիդրոէներգետիկայի, գունավոր մետաղաձուլության,

քիմիական արդյունաբերության, մեքենաշինության, լեռնագործության և այլ բնագավառներում), որոնց ավարտումով ռեսպուբլիկայի արդյունաբերությունը ստանում է նոր թափ ու ծավալ։

Ստալինյան հնգամյա տարիներին Հայաստանի ամբողջ տնտեսությունը ստանում է զարգացման նոր, հուժկու թափ։ Մեկը մյուսի հետևից շարք են մտնում Սևան-Հրազդան կասկադին պատկանող և այլ հիդրոէլեկտրակայաններ, քիմիական արդյունաբերության կիսաֆաբրիկատները մշակող գործարաններ (Երևանում), ընդարձակվում է քիմիական պարարտանյութերի արտադրությունը (Կիրովական, Ալավերդի)։ Երկրի ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շնորհիվ հայտնաբերվում են գունավոր մետաղների նոր, հարուստ հանքավայրեր (պղինձ և մոլիբդեն՝ Քաջարանում, Դաստակերտում, Ագարակում), որոնց բազայի վրա առաջանում են գունավոր մետաղագործության նոր ձեռնարկություններ՝ Քաջարանի և Դաստակերտի կոմբինատները։ Մեծանում է շինանյութերի՝ տուֆերի, բազալտների, մարմարների, գրանիտի, կրի, աղյուսի, կղմինդրի, ավազի, ցեմենտի, գաջի արտադրությունը, որոնց ձեռնարկությունները գտնվում են գլխավորապես Արարատյան հարթությունում, Շիրակում և Հյուսիսային Հայաստանում։ Քաղաքային կյանքի և գյուղատնտեսության զարգացման շնորհիվ կառուցվում են ննդի և թեթև արդյունաբերության նոր ձեռնարկություններ, որոնք տեղաբաշխված են ամբողջ ռեսպուբլիկայով մեկ։

Գյուղատնտեսության մեջ այդ ժամանակաշրջանում եղած վերելքը պայմանավորված է ոռոգման նոր առուների անցկացմամբ, արդեն եղած ոռոգման ցանցի ընդարձակմամբ, գյուղատնտեսական աշխատանքների հետագա մեքենայացմամբ, ագրոտեխնիկական ժամանակակից գիտության նվաճումների ճշգրիտ կիրառմամբ, գյուղատնտեսական մշակույթների տարածման շրջանների ընդարձակմամբ, անասնացեղերի բարելավմամբ, գյուղատնտեսական աշխատանքների զգալի մասի էլեկտրիֆիկացմամբ։ Ստալինյան չորրորդ, ինչպես նաև հինգերորդ հնգամյակի անցած տարիներին ռեսպուբլիկայի տնտեսության որակական և քանակական փոփոխությունները աննախընթաց են։ ՍՄԿԿ-ի և Սովետական կառավարության մի շարք որոշումների շնորհիվ (1953—1958 թթ.), ամբողջ լայնածավալ Սովետական Միության մեջ, այդ թվում և Սովետական Հայաստանում արմատական բարելավումներ կատարվեցին արդյունաբերության ու



գյուղատնտեսության ղեկավարման, կոլտնտեսությունները էլ ավելի ամրացնելու և տնտեսապես հզորացնելու, ծանր ինդուստրիայի հետ միասին գյուղատնտեսության, թեթև և սննդի արդյունաբերության, կոմունալ շինարարության և սովետական քաղաքացու բարձր պահանջմունքները բավարարող այլ ճյուղերի զարգացման բնագավառներում։ Արդյունաբերության հետ միասին այժմ հսկայական քայլերով է զարգանում նաև Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսության ասպարեզում ձեռք բերած մեծ նվաճումների համար ռեսպուբլիկան ՍՍՌՄ Գերագույն Սովետի 1958 թ. դեկտեմբերի 29-ի Հրամանագրով պարգևատրվել է Լենինի շքանշանով։

Սովետական Հայաստանի տնտեսության զարգացման մասին որոշակի գաղափար կարելի է կազմել հետևյալ մի քանի թվերով։ 1958 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը նույն տերիտորիայում 1913 թվականի համեմատությամբ ավելացել է 54 անգամ։ 1958 թ. յուրաքանչյուր յոթ օրում ավելի շատ արտադրանք էր թողարկվում, քան ամբողջ 1913 թվականին։ Պակաս արտահայտիչ չեն թվերը նաև գյուղատնտեսության գծով։ Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1957 թ. 1913 թվականի մակարդակը գերազանցեց 3,5 անգամ։ Մեծապես բարձրացել է բերքատվությունը, ավելացել են ինտենսիվ մշակույթների գրաված տարածությունները։ Գրեթե նույնպիսի պատկեր ունի և անասնաբուծությունը։

Անհամեմատելի է քաղաքային կյանքի, ինչպես և կուլտուրայի զարգացումը։ Մինչև սովետական կարգերի հաստատումը երկրում կար ընդամենը երեք քաղաք (Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ), որոնց բոլորի բնակչության թիվը նույնիսկ չէր հասնում 70 հազար մարդու, իսկ այժմ Սովետական Հայաստանը ունի 12 քաղաք և 23 քաղաքատիպ բարեկարգ ավաններ, որոնցում բնակվում է ռեսպուբլիկայի բնակչության գրեթե 50 տոկոսը։ Եթե նախասովետական շրջանում Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտահետազոտական հիմնարկ, իսկ հանրակրթական դպրոցների թիվը հազիվ էր հասնում մի քանի հարյուրի, ապա 1958 թ. Սովետական Հայաստանը ուներ 11 բարձրագույն ուսումնական հաստատություն, 65 գիտահետազոտական հիմնարկներ, 37 տեխնիկում և այլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, իսկ ընդհա-

նուր հանրակրթական դպրոցների թիվը անցնում էր 1200-ից։ Այդ թվականին ռեսպուբլիկայում ուսման բոլոր ձևերի մեջ ընդգրկված էր 325 հազար մարդ։ Սովետական Հայաստանը համատարած գրագիտության երկիր է։ Այստեղ հաջողությամբ անց է կացվել քաղաքում ընդհանուր միջնակարգ, իսկ գյուղական վայրերում՝ յոթնամյա պարտադիր ուսուցումը։

Սովետական Հայաստանն ունի հարյուրավոր կինոթատրոններ, մի շարք պետական թատրոններ, գեղարվեստական բազմաթիվ խմբեր, օպերայի և բալետի թատրոն։ Երկրում հրատարակվում են տասնյակ ամսագրեր, թերթեր և հարյուրավոր գրքեր։ Իրենց ոսկե դարն են ապրում հայ երաժշտությունը, ճարտարապետությունը, գրականությունը, գիտությունը։

Ժողովրդի նյութական ապահովվածության հետ միասին ուշադրության կենտրոնում են նաև նրա առողջապահության, հանգստի և աճի հարցերը։ Եթե ժամանակակից Սովետական Հայաստանի տերիտորիայում 1913 թ. կային ընդամենը 73 բժիշկ, ապա ներկայումս ռեսպուբլիկայում աշխատում են ավելի քան 4 հազար բժիշկներ։ 1913 թ. համեմատությամբ 1958 թվականին 51 անգամ աճել է հիվանդանոցային մահճակալների և 40 անգամ՝ բուժհիմնարկների թիվը։ Սովետական Հայաստանն ունի մոտ 20 առողջարաններ։ Այդ թվին են պատկանում նաև բովանդակ Սովետական Միության մեջ հայտնի դարձած Արզնին, Ջերմուկը, Կիրովականը և Դիլիջանը։ Կան մի շարք հանգստի տներ։ Ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ մեծ է Սովետական Հայաստանի բնակչության աճը։

Սովետական Հայաստանն իր արդյունաբերական արտադրանքներով մասնակցել է միջազգային մի շարք ցուցահանդեսների։ Նրա արտադրանքներից շատերը (գինիներ, կոնյակներ, հեծանիվ և այլն) արժանացել են բարձր գնահատականի։ Այսօրվա մեր Սովետական Հայաստանի ժողտնտեսության արտադրանքները՝ կաուչուկը, ավտոդողերը, շատ էլեկտրամեքենաներ, ալյումինը, էլեկտրալարերը, պղինձը, մոլիբդենը, մարմարները, տուֆերն ու ցեմենտը, հռչակավոր կոնյակն ու գինին, ընտիր պանիրներն ու ծխախոտը, հանքային ջրերն ու շատ այլ արտադրանքները կարելի է տեսնել Սովետական Միության ամենատարբեր՝ հեռու ու մոտիկ շրջաններում, իսկ որոշ տեսակի ապրանքներ (կոնյակ, էլեկտրամեքենաներ, շինանյութեր, գործվածքներ և այլն)՝ ժողովրդական դեմոկրատիայի և, նույնիսկ, աշխարհի ամենահեռավոր երկրներում։ Հայտնի են Սովետական Հայաստանի գիտության լուրջ նվաճումները, իսկ ռադիոն, կինոն, ամսագրերն ու թերթերը ազդարարում են մեր զարգացած ու նրբաճաշակ արվեստի, ճարտարապետության ու գրականության մասին։



Ողջ Սովետական Միության հետ միասին մեր ռեսպուբլիկան ևս նոր, հուժկու առաջընթաց է կատարելու ընթացիկ 7-ամյա պլանով, որը հաջողությամբ իրականանում է։ Այդ հոյակապ պլանով ռեսպուբլիկայում շարք կմտնեն տնտեսական բազմաթիվ օբյեկտներ, կուլտուր-լուսավորական հիմնարկներ, գիտական հաստատություններ։ Հսկայական չափով բարձրանալու է սովետական քաղաքացու կենսամակարդակը։

Սակայն նշված բոլոր նախադրյալներն ու միջոցները լիովին չեն կարող բավարարել տուրիստին, էքսկուրսանտին և հետաքրքրասերին։ Սովետական Հայաստանի բնությանն ու առօրյային մոտիկից ծանոթանալու և անմիջական տպավորության համար անհրաժեշտ է լինել նրա դաշտերում, սարերում ու ձորերում, կոլտնտեսություններում ու սովխոզներում, քաղաքներում ու ավաններում, գործարաններում, նորակառույցներում, ուսումնական ու գիտական հիմնարկներում, հիվանդանոցներում ու առողջարաններում, արվեստի տներում, թանգարաններում և այլ տեսարժան վայրերում։ Այլ կերպ ասած, այցի պետք է գալ Սովետական Հայաստան և ուղևորություններ կատարել նրա երթուղիներով, բարեկարգ խճուղիներով, լեռնային կածաններով և օդային գծերով։

Գլխավոր երկաթգծից բացի, որը, ռեսպուբլիկայի տերիտորիայով անցնելով, Երևանը կապում է Վրացական ՍՍՌ-ի և Ադրբեջանական ՍՍՌ-ի հետ, Սովետական Հայաստանը ունի նաև մի քանի այլ փոքրիկ երկաթգծեր, որոնցից մեկը Հարավային Հայաստանի պղնձի արդյունաբերության խոշոր կենտրոն Ղափանը կապում է Երևան—Բաքու երկաթգծի Մինջևան կայարանի հետ, երկրորդը՝ Երևանը՝ նրանից 40 կմ հեռավորության վրա գտնվող Ախտա շրջկենտրոնին (այս ուղու շինարարությունը դեռ շարունակվում է, և երկաթգիծը պետք է հասցվի Թբիլիսի—Բաքու մայրուղու Ազստաֆա կայարան), երրորդը՝ Լենինականը միացնում է Արթիկ քաղաքավանի հետ և այլն։ Խճուղային ճանապարհների խիտ ցանց ունի Սովետական Հայաստանը։ Նրա մայրաքաղաք Երևանը խճուղային ճանապարհներով (որոնց մեծագույն մասը ասֆալտապատված է) կապված է ռեսպուբլիկայի բոլոր շրջանների ու քա-

*դ․րքների և հարևան ռեսպուբլիկաների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ։ Խճուղիներից անջատվում և դեպի երկրի տարբեր անկյուններն են ձգվում զանազան կարգի ճանապարհներ ու բազմաթիվ լեռնային կածաններ։ Հայաստանի ճանապարհներն անցնում են խիստ զանազանակերպ մակերևույթ ունեցող շրջաններով՝ դաշտերով, խոր ձորերով, բարձր լեռներով ու լեռնանցքներով։ Դրանք մերթ իջնում են դաշտերն ու անդնդախոր ձորերը, մերթ էլ, ոլորապտույտ փարվելով լեռների լանջերին՝ բարձրանում վեր, դեպի բարձրադիր լեռնային շրջանները։ Ռեսպուբլիկայի խճուղային ցանցը կառուցվել է սովետական ժամանակաշրջանում։ Նախկինում եղած ճանապարհները անբարեկարգ էին, նրանցից ամենալավերը պիտանի էին միայն սայլային երթևեկության համար, իսկ ձմեռը ամիսներով խափանվում էին ձյան ու ցեխի պատճառով։*

*Սովետական Հայաստանն իր զանազանակերպ բնական պայմաններով, անցյալի ու ժամանակակից կոթողներով ու տեսարժան վայրերով մեծ հետաքրքրություն է ներկայացնում և՛ բնախույզի ու պատմաբանի, և՛ արվեստագետի ու ճարտարապետի, և՛ տուրիստ հետաքրքրասերի համար։*

*Ելման կետ ու հիմնական հանգրվան դարձնելով ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը՝ Սովետական Հայաստան այցելած տուրիստը կարող է երկաթգծերով և խճուղիներով կտրել-անցնել ռեսպուբլիկայի տերիտորիան տարբեր ուղղությամբ, իսկ դաշտամիջյան ճանապարհներով և կածաններով կատարելով տեղական ուղևորություններ՝ լինել նրա բոլոր անկյուններում։ Իր ուղևորությունների ընթացքում նա կտեսնի բնական և դարերի խորքից եկող տոկուն, աշխատասեր, ազատասեր ու ստեղծագործ հայ ժողովրդի ձեռքով կերտված շատ հրաշալիքներ։*

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ





## ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Ովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը գտնվում է Արտրատյան դաշտի հյուսիս-արևելյան ևզրին, Արաքսի ձախակողմյան վտակ Հրազդանի ստորին հոսանքի վրա՝ երեք կողմից շրջապատված Նորքի, Քանաքեռի և Արաբկիրի բարձրություններով, որոնք կազմում են դեպի հարավ-արևելք բացվող մի կանոնավոր ամֆիթատրոն։ Քաղաքից հարավ, Արաքս գետի աջ կողմում, իրար կողք-կողքի բարձրանում են Մեծ ու Փոքր Մասիսները, որոնք հոյակապ ու անկրկնելի տեսարան են ներկայացնում։ Դրանք կարծես հավերժական ջահ և հսկա պահապաններ լինեն հայոց մայրաքաղաքի համար։ Մեծ ու Փոքր Մասիսները առանձնապես վեհաշուք են պարզկա օրերին՝ արշալույսի և վերջալույսի լույսով ողողված։ Շրջակայքի նկատմամբ Երևանի դիրքը ցածր է։ Եթե բուն քաղաքի բարձրությունը ծովի մակերևույթից չի հասնում նույնիսկ 1000 մետրի, ապա նրանից ընդամենը մի քանի տասնյակ կմ հեռավորության վրա գտնվող Մեծ Մասիսի բացարձակ բարձրությունը 5156 մ է։ Բարձրությունների այդպիսի մեծ տարբերությունը ստեղծում է նաև բնա-կլիմայական պայմանների սուր հակադրություններ, որոնք առանձնապես զգալի են ամռանը։ Տարվա այդ եղանակին, երբ Երևանում ու Ա-

րարատյան դաշտում անտառների շոգ է լինում և օդի ջերմությունը երբեմն հասնում է նույնիսկ ավելի քան 40°-ի, Մեծ Մասիսի վրա, 4000 մ բարձրությունից վեր ընկած մասերում սպիտակին է տալիս հավերժական ձյունը, իր գոյությամբ ավելի ընդգծելով Արագսի հովտի շոգն ու տոթը։

Երևանի կլիման խիստ ցամաքային է, շոգ ու ձոր ամառով և համեմատաբար խստաշունչ ձմեռով, որը սակայն կարճատև է լինում։ Ջերմության բացարձակ տատանումը հասնում է 70°-ի, ամենատաք ամսվա՝ օգոստոսի միջին ջերմությունը +25° է, իսկ հունվարի միջին ջերմությունը՝ —6,4°։ Մթնոլորտային տեղումները հասնում են 320—350 մմ-ի։ Տեղումները մեծ մասամբ լինում են գարնանն ու աշնանը։ Անձրևները, մանավանդ ամռանը, սովորաբար լինում են կարճատև, տեղատարափ բնույթի և վրա են հասնում անսպասելի կերպով։ Երևանի համար անսովոր չեն նաև կայծակը, որոտը, կարկուտը և հեղեղները, որոնք նախկինում հսկայական վնասներ են հասցրել քաղաքի տնտեսությանն ու բնակչությանը։ Հեղեղների ժամանակ ահավոր է գառնում Երևանով անցնող՝ Հրազդանի ձախակողմյան փոքրիկ վտակ Գետառը, որը շրային եղանակներին հազիվ է զգացնել տալիս իր գոյությունը։ Բայց Երևանում հսկայական շերտ են կազմում հեղեղների ժամանակ Գետառի բերած լիցքերը։ Լեռնային խենթ գետակի՝ Գետառի «գժոտությունների» մայրաքաղաքը ապահովելու համար վերջին ժամանակներս հատուկ կառուցումներ են կատարել և՛ գետի վերին հոսանքի շրջանում, և՛ քաղաքում, որտեղ նրա հունը խորացված է և ամրացված բազալտյա պատերով։ Երևանի կլիման ղգալի չափով մեղմանում է նրա շրջակայքում տարածվող արհեստական անտառների, քաղաքի պողոտաու այգիների, բանջարանոցների, պուրակների և փողոցների ծառազարդ ու կանաչապատ տարածությունների շնորհիվ։ Դեկորատիվ բուսատեսակներից բացի (հարավային չինար, գնդաձև ակացիա, բարդի, հացենի և այլն), որոնք զարդարում են քաղաքի պուրակներն ու փողոցները, Երևանը հայտնի է նաև իր մրգատու այգիներով և բոստաններով ու բանջարանոցներով։ Երևանի ընտիր խաղողատեսակները, աշխարհահռչակ ծիրանն ու դեղձը, ամենատարբեր տեսակի ու համի կանաչիները, բանջարեղենը, շրջակայքի կոլտնտեսություններից ու սովխոզներից բերված մրգեղենի, բանջարեղենի ու կանաչեղենի հետ միասին կազմում են նրա մթերային շուկաների զարդը։



Երևանում գարունը շատ կարճատև է լինում, ցրտաշունչ օրերին անսպասելի կերպով հաջորդում են շոգերը, որոնք սովորաբար տևում են մինչև սեպտեմբերի կեսերը։ Ընդհակառակն, երկար և թավշյա է նրա աշունը։ Մրգի և բանջարեղենի առատությունը, անտառների, պուրակների և փողոցների ծառաստանների գույնզգույն, բայց ընդհանուր ֆոնով ծիրանին տվող «հագուստները», տաք ու արևոտ ցերեկները և զով ու աստղալից գիշերները՝ Երևանի աշունը դարձնում են հմայիչ, «ոսկի աշուն», ինչպես սովորաբար ասում են երևանցիները։ Քաղաքն այդ եղանակներին ամենուրեք ժպտում է, ժպտում են նրա մթերային շուկաները, ծառաստանները, այգիները և բուրմունք տարածում ամեն կողմ։ Խոշորագույն բարիք է Երևանի խմելու ջուրը, որը բերված է Քառասուն աղբյուրներից։ Անմահական է, զուլալ ու վճիտ այդ ջուրը։ Ոլ թեկուզ մեկ անգամ եղել է Երևանում, նա տաք եղանակներին միշտ կարոտով կհիշի նրա ջուրը։

Երևանը շարունակ ընդարձակվում է և գրավում նորանոր տարածություններ։ Եթե նախասովետական շրջանում քաղաքի այժմյան բռնած տերիտորիայի մի մասն այնքան էր ամայի, որ հաճախ ծառայում էր որպես որսատեղի, իսկ 30-ական թվականներին ընդգրկում էր միայն Կոնդի և Նորքի բարձրությունների միջև ընկած գոգավորությունը, ապա այժմ այն դուրս է եկել իր «բնական սահմաններից»՝ հսկայական տարածություններ ընդգրկելով բոլոր կողմերում։ Հյուսիսում նա տարածվում է մինչև Քանաքեռ ավանը, իսկ արևմուտքում՝ գրեթե մինչև Շահումյան։ Համարյա նույն չափերով նա մեծացել է նաև այլ ուղղություններով։



## ՀԻՆԱՎՈՒՐՑ, ԲԱՅՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ Է ԵՐԵՎԱՆԸ



արուստ և բազմադարյան պատմություն ունի Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը։ Նա Հայաստանի հին քաղաքներից մեկն է։ Ուրարտագետների մեծ մասը Երևան անունը կապում են ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակվող Իրիբունի բերդաքաղաքի անվան հետ։ Երևան անվան առաջացման մասին պատմվում է նաև հայկական ծագում ունեցող առասպելաբանության մեջ։ Վերջին տասնամյակների ընթացքում Երևանի շրջակայքում՝ Շենգավիթում, Նորագավիթում, Միծամոսկաբերդում, Կարմիր բլուրում, Արին բերդում հայտնաբերված են նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանի մի քանի բերդերի և ամրացված վայրերի մնացորդներ։ Դրանք գալիս են ասելու, որ Երևանը տակավին հնագույն ժամանակաշրջանում եղել է ամրությունների մի հանգույց, որն ունի մոտ 2800 տարվա պատմություն։ Երևանի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է VII դարի սկզբներին (մ. թ.), իսկ երկրորդ վկայությունը՝ նույն դարի 40-ական թվականներին։ Վերջին վկայությունից պարզ երևում է, որ Երևանն այդ ժամանակ եղել է բավականին ամուր բերդ և ավան, և նրա բնակչությունն էլ՝ բազմամարդ։

VII—VIII դարերում Հայաստանը գտնվում էր արաբական լծի



տակ, իսկ նրա տնտեսական ու հասարակական կյանքը առաջադիմելու փոխարեն ապրում էր լճացման ու հետադիմության շրջան։ Երևանը ևս ենթակա էր երկրի ընդհանուր պատմական ճակատագրին, նա այդ դարերում որևէ զարգացում չի ունենում, նրանում նույնիսկ լիովին չեն վերացվում արաբական զորքերի կատարած ավերումների հետքերը։ Երկրի քաղաքական անկախության վերականգնման և տնտեսական վերելքի հետ միասին՝ IX դարից սկսած իր զարգացման ուղին է բռնում նաև Երևանը։ IX—X դարերում նա արդեն այնքան էր առաջադիմել, որ մեր մատենագիրների կողմից հիշատակվում է որպես «մեծ ավան», «գյուղաքաղաք»։ Սակայն Երևանը մինչև XIV դարի վերջերը մնում էր որպես երկրորդական-երրորդական կարգի քաղաք։ IX—XIII դդ. Այրարատյան աշխարհի մեծահռչակ քաղաքները, հատկապես Անին, Դվինը և Կարսը դեպի իրենց էին ձգում երկրի կենտրոնի տնտեսական ու կուլտուրական բոլոր թելերը, Երևանն ու նրա նման մյուս փոքրիկ քաղաքները մնում էին խղճուկ վիճակում, ստվերի տակ. դրանց աղդեցությունը հեռու չէր անցնում իրենց գավառի կամ շրջանի սահմաններից։ XIII դարից սկսած, երբ երկրում հաստատվում են մոնղոլական, ապա թուրք-թաթարական ցեղերի տիրապետությունները, Հայաստանի ծաղկած քաղաքների տնտեսական կյանքն աստիճանաբար մարում է, նրանք արագ կերպով կորցնում են իրենց նախկին փառքն ու նշանակությունը՝ վերածվելով սովորական բնակավայրերի կամ վերանալով երկրի քարտեզներից։ Մոնղոլական և թուրք-թաթարական տիրապետությունների ժամանակաշրջանում շատ թե քիչ զարգացում են ունենում միայն այն քաղաքները, որոնք հանդիսանում էին օտարների հաստատած վարչական միավորների կենտրոններ։ Այդ տիպի կենտրոններից էր նաև Երևանը, որը Դվինի, Անիի և Կարսի անշուքացումից հետո դարձավ Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքի օրրանի՝ Այրարատյան աշխարհի կենտրոնը, նրա սիրտը, չնայած իր մեծ ու հռչակավոր նախորդների համեմատությամբ մնաց անշուք ու գաճաճ։ Արևելյան Հայաստանի կենտրոնի այդ դերը Երևանը ստանձնեց 1440 թ. և այդ ժամանակվանից սկսած նա մեր մատենագիրների երկերում հիշատակվում է որպես «Այրարատյան աշխարհի մայրաքաղաք», չնայած Հայաստանը չուներ իր պետականությունը և ենթակա էր օտարի ծանր տիրապետությանը։ Երևանին բախտ չէր վիճակված բնական ընթացքով զարգանալու, նրա պատմությունը ունի իր անցանկալի ելևէջները, իր տխուր ու ողբալի տարեգրությունը, որն իրենից ներկայացնում է ավերումների, կոտորածների,

սովի ու համաճարակների մի երկարաձիգ շղթա։ Պարսկա-թուրքական մռայլ ու ծանր տիրապետության շրջանում Հայաստանը դարձել էր սուլթանական Թուրքիայի և Պարսկաստանի միջև մղվող պատերազմների մշտական թատերաբեմը։ Այդ պատերազմների հետևանքով լիակատար ավերման էր ենթարկվում երկիրը, խափանվում տնտեսական կյանքը, կործանվում նրա կուլտուրան։ Թշնամի բանակների առաջին հարվածը գրեթե միշտ առանում էր Երևանը, Երևանյան խանության մայրաքաղաքը, որն իր ամուր բերդով Արևելքում երկար ժամանակ հռչակված էր իբրև անմատույց։ Պարսկա-թուրքական դարավոր պայքարի շրջանում Երևանը ավելի քան 14 անգամ անցել է ձեռքից ձեռք և ենթարկվել ավերման։ Քաղաքի համար առանձնապես ծանր հետևանքներ է ունեցել 1604 թ. շահ Աբբասի նվաճումը, որի հրամանով Պարսկաստանի խորքերը քշվեցին Արարատյան հարթության հայ բազմահազար բնակիչները։ XVII դարի ընթացքում, լինելով սահմանային բերդաքաղաք, Արևմուտքի և Արևելքի քարավանային առևտրի կարևոր կետերից մեկը՝ Երևանը, ունենում է տնտեսական որոշ զարգացում, սակայն XVIII դարի առաջին կեսին այն երկու անգամ ավերվում է թուրքերի և պարսիկների կողմից։ Պարսկա-թուրքական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, այսպիսով, Երևանը պարբերաբար ենթարկվում է ավերումների և զրկվում մեծ ու բարեկարգ քաղաք դառնալու ամեն հնարավորությունից։ Ականատես շատ ճանապարհորդներ, գործիչներ ու գրողներ պարսկական տիրապետության տակ գտնվող խանական կենտրոն Երևանը նկարագրում են որպես հետամնաց, նեղ ու ծուռումուռ փողոցներով, փոշոտ ու ցեխոտ, կավակերտ կամ աղյուսապատ տներով, տարափոխիկ հիվանդություններով լի ասիական տիպի քաղաք։ Ճարտարապետական առումով նրա շատ թե քիչ հիշարժան վայրերը սահմանափակվում էին միայն բերդով, խանի պալատով, մեկ—երկու եկեղեցիներով և նույնքան մզկիթներով։ Ժամանակակիցները միահամուռ վկայում են, որ Երևանում պարսկական տիրապետողները կատարում են ամեն տեսակ կամայականություններ և, նույնիսկ, բացարձակ թալան։ Բավական էր, որ որևէ մեկը հարուստ երևար, անմիջապես ձեռնարկում էին ամեն հնարավոր միջոց նրան կողոպտելու համար։ Հենց այդ է եղել պատճառը, որ հին Երևանի տների մեծ մասի շքամուտքն ուղղված է եղել ոչ թե դեպի փողոց, այլ դեպի բակ, դեպի բանջարանոց կամ այգի։ Ամեն մեկը աշխատել է կողոպտիչ տիրողների տեսողությունից զերծ պահել իր ունեցվածքը, թաքցնել իր ունևոր վիճակը՝ թալանի վտանգից խուսափելու համար։



Պարսկական ամբողջ տիրապետության ժամանակաշրջանում Երևանը շատ թե քիչ շոշափելի հաստատուն զարգացում է ստացել միայն XIX դարի առաջին քառորդի ընթացքում, վերջին սարդարի՝ Հուսեյին խանի ժամանակ։ Վերջինիս օրոք վերականգնվում և բարեկարգվում են ոռոգման հին առուները (Դալմայի, Աբուհայաթի և այլն), գցվում են նոր այգիներ, ավելանում են բանջարանոցներն ու բոստանները։ Այդ ժամանակ քաղաքն ունեցել է 1730 տուն, իսկ բնակչության թիվը հասել է ընդամենը մոտ 11 500-ի։ Ծավալով փոքր, բայց աշխույժ բնույթ է ունեցել նրա առևտուրը։ Ըստ վկայության, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պահին Երևանն ունեցել է 7 քարվանսարա և 851 կրպակ։ Նրա շուկայում և կրպակներում վաճառվում էին թարմ և չորացրած մրգեր, խմիչք, բամբակ, հացահատիկներ, բանջարեղեն, տնային գործածության զանազան իրեր, գորգեր, զանազան գործվածքներ, քարազ և այլն։ Քաղաքի տնտեսական կյանքում առևտրից բացի խոշոր տեղ ունեին այգեգործությունը, բանջարաբուծությունը և արհեստագործությունը։ Արհեստավորները ըստ իրենց զբաղմունքի կազմել էին համքարություններ («եղբայրություն»), որոնք իրենց գործերը վարում էին տրադիցիոն դարձած սովորություններով (ադաթով)։ Քաղաքային արհեստների մեջ առանձնապես աչքի էին ընկնում որմնադրությունը, ներկարարությունը, դարբնությունը և այլն։ Երևանում կային ջրաղացներ, ձիթհանքեր, դեներ և այլ մանր-մունր ձեռնարկություններ։

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով, որը ավարտվեց Պարսկաստանի պարտությամբ, Արևելյան Հայաստանը միացվում է Ռուսաստանին։ Այդ պատերազմի ընթացքում, 1827 թ. հոկտեմբերի 1-ին, ռուսական զորքերի կողմից, որոնց օգնում և օժանդակում էին բազմաթիվ հայեր, ազատագրվում է Երևանը, որը դառնում է 1828 թ. կազմավորված Հայկական մարզի, իսկ 1840 թ.՝ Երևանի գավառի կենտրոնը։ 1850 թ. կազմակերպվում է Երևանի նահանգը, որի կենտրոնը դարձյալ Երևանն էր։ Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո, ընդհուպ մինչև 70—90-ական թվականները զգալի որևէ առաջադիմություն չի ունենում ոչ տնտեսական և ոչ էլ կուլտուրական առումով։ 80-ական թվականներին (1887 թ.) նրա բնակչության թիվը նույնիսկ չէր հասնում 15 հազարի։ Ցարական տիրապետության ժամանակա-

շրջանի Երևանի պատմության կարևոր տարեթվերն են հանդիսանում 1879 թ., երբ այնտեղ անցկացվեց 1872 թ. «Քաղաքային պոլոժենիեն» («Городское положение»), որը բուրժուական ռեֆորմի արդյունքն էր և որով քաղաքում հաստատվեց ինքնավարության՝ հանձին քաղաքային դումայի՝ իր վարչությամբ հանդերձ, 1901 թ., երբ քաղաքը երկաթգծով՝ Ալեքսանդրապոլով (այժմ Լենինական) միացվեց Թիֆլիսի հետ, իսկ 1908 թ.՝ միացվեց Ջուլֆայի հետ, 1913 թ., երբ քաղաքը խմելու ընտիր ջուր ստացավ Քառասուն աղբյուրներից սկսվող ջրմուղի միջոցով և այլն։ XIX դարի վերջերին Երևանի տնտեսական ու կուլտուրական զարգացումը բավական արագանում է։ Քաղաքում մեկը մյուսի եռևից առաջ են գալիս մի շարք ձեռնարկություններ (օրինակ՝ Շուստովի, Սարաջևի և մյուսների գինու-կոնյակի ձեռնարկությունները, բամբակազտիչ ձեռնարկությունները, մեխանիկական գործարանը, դեներ, ջրաղացներ, ներկատներ և այլն), որոնք սակայն, բացառությամբ Շուստովի գինու-կոնյակի գործարանի, որն այնքան մեծ հռչակ էր բերել իր ընտիր կոնյակներով, առաջնակարգ կապիտալիստական ձեռնարկություններ չէին, այլ մանր ձեռնարկություններ և մեծ մասամբ խարխլված էին ձեռքի աշխատանքի վրա։ 1912 թ. Երևանի արդյունաբերության շրջանառությունը կազմել է 847,7 հազար ռուբլի, որից ավելի քան 600 հազ. բաժին էր ընկնում զանազան խմիչքների արտադրությանը։ Կառուցվում են քարակերտ և բարեկարգ շենքեր, սակայն դրանք սակավաթիվ էին, ոչ մոնումենտալ և կազմում էին առանձին կղզյակներ, նրանք չէին փոխում քաղաքի ընդհանուր տեսքը։ Ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը՝ Երևանի համար բնորոշ մնացին կավակերտ ու աղյուսակերտ մանր տներն ու հյուղակը՝ իրենց հողե տանիքներով։ Եթե մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը Երևանում կային միայն մի քանի հոգևոր խղճուկ ուսումնարաններ, որոնք գործում էին եկեղեցիներին ու մզկիթներին կից, ապա XIX դարի երկրորդ կեսից այստեղ աստիճանաբար բացվում են մի քանի աշխարհիկ դպրոցներ, որոնց թվում էին տղաների գիմնազիան, օրիորդաց գիմնազիան և ուսուցչական սեմինարիան։

Դաշնակների կարճատև տիրապետության շրջանում բովանդակ Հայաստանի հետ միասին քայքայվում է նաև Երևանի տնտեսությունը, իսկ բնակչությունը հասնում ծայրահեղ աղքատության ու սովի դուռը։ Այդ տարիներին Երևանում անընդհատ էին դարձել համաճարակ հիվանդությունները, որոնք, սովի հետ միասին, պատճառ էին դառնում բազմաթիվ զոհերի։



1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորները 11-րդ Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ տապալում են դաշնակների լուծը և երկրում հաստատում սովետական կարգեր։ Սովետական կարգերի հաստատմամբ նոր, լուսավոր դարաշրջան սկսվեց հայ ժողովրդի պատմության մեջ։ Այդ հավասար չափով վերաբերում է նաև նրա սիրելի ոստան Երևանին։ Չնայած բազմամյա տարիքին, Երևանը իր երիտասարդության ծաղկափթիթ շրջանը թևակոխեց միայն 1920 թ.։ Այդ պատճառով էլ պարադոքսային չպետք է համարել նրա պատմական անցյալի բնութագրությանը «հինավուրց, բայց երիտասարդ է Երևանը» դրված վերտառությունը։

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում շատ մայրաքաղաքներ է ունեցել։ Հայաստանը բուֆերային վիճակ ունենալով իրար հետ հարատև բախման մեջ գտնվող Արևելքի և Արևմուտքի միջև, հաճախ ընկել է քաղաքական աննպաստ դրության մեջ և ստիպված է եղել մայրաքաղաքը տեղափոխել ավելի անվտանգ և պաշտպանված շրջաններ։ Պատմության ընթացքում Հայոց մայրաքաղաքների թիվը 10-ից անցնում է (Արմավիր, Եղվարդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Երազգավորս, Կարս, Անի և, վերջապես, Երևան)։ Ոչ մի հին և նոր ժողովուրդ այդքան մեծ թվով մայրաքաղաքներ չի փոփոխել։ Այդ է պատճառը, որ օտար մի քանի ճանապարհորդներ ու ուսումնասիրողներ Հայաստանը կոչել են «Քաշառող մայրաքաղաքների երկիր»։ Երկար շարք կազմող հայոց մայրաքաղաքները ավերվել են՝ պարբերաբար մեր երկիրը ներխուժող և այնտեղ իրենց տիրապետությունը հաստատող Արևելքի և Արևմուտքի նվաճողների կողմից։ Երևանը ևս ենթարկվել է բազմաթիվ ավերումների, բայց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելով նա փրկվեց հետագա ավերումներից, իսկ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո բռնել է իր զարգացման ոսկեդարի ուղին։ Հետևապես, Երևանը հայոց ամենաերջանիկ ճակատագիր ունեցող մայրաքաղաքն է, լուսաշող Սովետական Հայաստանի ամենալուսավոր կենտրոնը, սփյուռքի աշխատավոր հայության՝ իղձերի քաղաքը։



## ԵՐԵՎԱՆՆ ԱՅԺՄ

### 1. Ընդհանուր տեղեկություններ

Երևանը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաքը, Սովետական Միության այն քաղաքներից է, որը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո անցել է տնտեսական և կուլտուրական զարգացման փառավոր ուղի, անհամեմատորեն աճել ազգաբնակչությամբ և անճանաչելիորեն փոխվել իր արտաքին տեսքով։ Սովետական մարդիկ, վարպետորեն օգտագործելով սովետական կարգերի ընձեռած հնարավորությունները, պատմականորեն կարճ ժամանակամիջոցում ստեղծեցին ՍՍՌՄ-ի տնտեսական, գիտական և կուլտուրական խոշոր կենտրոններից մեկը։ Սովետական ճարտարապետների միասնական նախագծով հիմնովին վերակառուցված Հայաստանի մայրաքաղաքը ոչ մի ընդհանուր բան չունի նախառևոլյուցիոն շրջանի գավառական Երևանի հետ։

Հայ ժողովուրդը սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից միահամուռ կերպով սկսեց վերակառուցել իր հարազատ մայրաքաղաքը, նրա արդյունաբերությունը և կոմունալ տնտեսությունը։ Սակայն քաղաքի արմատական վերակառուցումը և շինարարությունն սկսվեց 1924 թվականից։ Սովետական Հայաստանի կառավարության հանձնարարությամբ հայ տաղանդավոր ճարտարապետ, Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի սան ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը (1878—1936 թթ.) մշակեց և ներկայացրեց Երևանի վերակառուցման գլխավոր նախագիծը։ Այդ օրվանից Երևանը դարձավ շինարարական մի հսկա հրապարակ, որտեղ երբեք չի դադարում ստեղծագործ աշխատանքը։

Ակադեմիկոս Թամանյանի նախագծով քաղաքի տերիտորիան հիմնականում դուրս չէր գալիս Երևանի հին սահմաններից։ Նրա սահմանները պետք է կազմեին քաղաքի բնակելի և վարչական մասերը կիսաշրջանաձև օղակող կանաչապատ տարածություններ։ Այդ տարածության մեջ չէր մտնելու արդյունաբերական շրջանը, որը տեղավորվելու էր քաղաքի գոգահովտից դուրս, կենտրոնից հարավ, դեպի Արարատյան հովտի կողմը։

Քաղաքի ազգաբնակչության աճը, Ա. Թամանյանի նախագծի համաձայն, նախատեսվում էր մինչև 150 հազար մարդ։ Սակայն շատ շուտով իրականությունը շրջեց բոլոր սկզբնական կանխատեսումները։ Քաղաքը բուռն թափով աճեց և զարգացավ՝ տարածվելով նախկինում գծված շրջանակներից դուրս։ Արդեն 1935 թվականին քաղաքի ազգաբնակչության քանակը գերազանցեց գլխավոր նախագծով կանխատեսված թիվը։ Անհրաժեշտ եղավ անմիջապես վերանայել 1924 թվականի նախագիծը, հարմարեցնելով այն կյանքի պահանջներին։

Քաղաքի վերակառուցման նոր նախագիծը, որը ստացավ «Մեծ Երևան» անունը, Ա. Թամանյանի նախանշմամբ քաղաքի հետագա զարգացումը նախատեսում էր հիմնականում արդեն ձևավորվող կենտրոնի շուրջը։ Բայց քաղաքը պետք է զարգանար գլխավորապես Քանաքեռի սարալանջի ուղղությամբ, որը ավելի նպաստավոր էր կլիմայական տեսակետից և տեղանքի ռելիեֆի բնույթով հարմար շինարարության համար։

1935 թվականին մահը ընդհատեց անվանի ճարտարապետի բեղմնավոր գործունեությունը։ «Մեծ Երևան» գլխավոր նախագծի հետագա մշակումն իրենց վրա վերցրին նրա աշակերտները։ Այս վերջին գլխավոր նախագծով էլ այժմ շարունակվում է իրականացվել Երևան քաղաքի վերակառուցումն ու շինարարությունը։

Սովետական իշխանության 38 տարիների ընթացքում Հայաստանի մայրաքաղաքը վերածվեց արդյունաբերական և կուլտուրական խոշոր կենտրոնի։ Երևանը դարձավ կանաչապատված լայն

պողոտաներով և ընդարձակ հրապարակներով, գործարաններով ու ֆաբրիկաներով, բարձրագույն ուսումնական հաստատություններով ու գիտահետազոտական ինստիտուտներով, թանգարաններով, ճոխ զրոսայգիներով և բազմահարկ քարակերտ բնակելի տներով մի բարեկարգ գեղեցիկ քաղաք:

Այդ ժամանակամիջոցում Երևանի ազգաբնակչությունն աճեց ավելի քան տասն անգամ և հասավ 400 հազարի: Ռեսպուբլիկայի մայրաքաղաքի բուռն ծաղկումը և նրա բնակչության աճը պայմանավորված էին երկրի ինդուստրացման լենինյան քաղաքականության հետևողական իրականացմամբ:

Այժմ Հայաստանի մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները արտադրում են հարյուրավոր տեսակի ապրանքներ, որոնց զգալի մասն ունի համամիութենական առաջնակարգ նշանակություն: Երևանի արդյունաբերությունը տալիս է ամբողջ ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի զգալի մասը: Առաջատարն այստեղ քիմիական արդյունաբերությունն է, մեքենաշինությունը, թեթև մետաղների մշակությունը: Երևանի քիմիական արդյունաբերությունը ներկայացնում են համամիութենական նշանակություն ունեցող այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի և ավտոդողերի գործարանները, որոնց արտադրանքը հայտնի է Հայաստանի սահմաններից շատ հեռու: Ռեսպուբլիկայի տնտեսության համար կարևոր նշանակություն ունեն նաև ռետինա-տեխնիկական շինվածքների, լաքաներկերի, խրոմպիկի, պոլիվինիլացետատի և մի շարք այլ գործարաններ: Վերջին տասնամյակում Երևանի արդյունաբերության մեջ առանձնապես աչքի ընկավ ու առաջ մղվեց մեքենաշինությունը: Սովետական Միության շատ քաղաքներում ու նորակառույցներում, և ոչ միայն Սովետական Միության, լայն հռչակ ձեռք բերեց այնպիսի գործարանների արտադրանքը, որպիսիք են զազգահաշինական, կաբելի, ավտոդեպո, ինչպես նաև էլեկտրալամպերի, ճշգրիտ էլեկտրասարքերի, ժամացույցի և ուրիշ գործարաններ: Երևանում սկսված է շարժական էլեկտրակայանների՝ այսպես կոչվող «միկրոգէսերի» սերիական արտադրանքը երկրի կոլտնտեսությունների և սովխոզների համար:



Երևանում են կենտրոնացված թեթև արդյունաբերության բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց թվում կարելի է նշել կոշիկի, արդուզարդի, կարի, կահույքի, մետաքսափաթաթման, տրիկոտաժի, մետաքսագործական, մահուդի, գուլպա-տրիկոտաժեղենի և այլ ֆաբրիկաները, նույրբ բրդյա գործվածքեղենի կոմբինատը, կաշվի գործարանը և շատ ուրիշներ:

Ռեսպուբլիկայի ոչ հանքային հանածոների հարուստ ռեսուրսների օգտագործման հիմքի վրա Երևանում ստեղծվեց ու զարգացավ շինանյութերի արդյունաբերությունը: Այդ ճյուղը ներկայացված է այնպիսի ձեռնարկություններով, ինչպես մուլիտի, մարմարի, ասֆալտա-բետոնային, գաջի, տղմուտի և պեմզաբլոկների գործարանները և այլն:

Երևանի նպաստավոր տեղադրությունը Հայաստանի տարբեր պտղատնտեսական շրջանների միացման կետում, ինչպես նաև նրա կարևոր նշանակությունը որպես ռեսպուբլիկայի մայրաքաղաք, կանխորոշեցին այստեղ պտղատնտեսական հումքի վերամշակման խոշոր ձեռնարկությունների կազմակերպումը: Երևանի սննդարդյունաբերության ձեռնարկությունների շարքում կարելի է թվել ալրաղացի, կաթի-մսի կոմբինատները, ձկնօճառի, հիդրոգենիզացիոն, պահածոների և գարեջրի գործարանները, սառցակոմբինատը և այլն: Սակայն համամիութենական կարևորագույն նշանակություն ունեն «Արարատ» տրեստի գործարանները, որոնք մշակում են շամպայն և քաղցր ու սեղանի գինիներ (Մուսկատ, Սաերանվի, Պորտվեյն, Մադերա, Վերնաշեն, Ոսկեվազ, Այգեշատ, Ոսկեհատ) և բարձրորակ կոնյակներ (Հոբելյանական, Հայաստան, Դվին, Երևան): Երևան այցելողը, անշուշտ, մեծ տպավորություն կստանա «Արարատ» գործարանի գինու և կոնյակի բաժանմունքներից, որտեղ ստորերկրյա նկուղներում հսկայական տակառների և ամանների մեջ պահվում են Արարատյան դաշտի հյութեղ խաղողներից ստացված, տասնյակ տարիների հնություն ունեցող գինիներն ու կոնյակները: Գործարանի աշխատողներն ու լաբորանտները հաճույքով ձեզ կմեկնեն տարբեր չափի սրվակների մեջ լցված խմիչքներ՝ համտես անելու համար: Երևանի ծխախոտի ֆաբրիկայի արտադրանքը նույնպես հայտնի է Հայաստանի սահմաններից շատ հեռու:

Երևանում նշանակալից չափերի է հասել արհեստագործական կոոպերացիան, որը արտադրում է մասսայական սպառման ապրանքներ:

Երևանում ժողովրդական տնտեսության զարգացման կարևոր խնդիրների հաջող լուծման համար անհրաժեշտ էր ամենից առաջ լուծել քաղաքի արդյունաբերության էներգետիկ բազայի պրոբլեմը։ Այս կարևորագույն պրոբլեմը լուծվեց Հրազդան գետի կոմպլեքսային օգտագործման եղանակով՝ ինչպես էլեկտրաէներգիայի մշակման, այնպես էլ գետին հարող անջրդի տարածությունները ոռոգելու տեսակետից։ Երևանի արդյունաբերության համար էներգետիկ բազա հանդիսացան հիմնականում Սևան-Հրազդան կասկադի հզոր հիդրոկայանները, որոնք կառուցվել են վերջին 30 տարում։

Հայ ժողովրդի կուլտուրայի իսկական ծաղկումը կապված է Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայից հետո ընկած տարիների ընթացքում Երևանը դարձավ բարձր կուլտուրա ունեցող, համատարած գրագիտության քաղաք, գիտության, գրականության և արվեստի նշանավոր կենտրոն։

Նախահեղափոխական Երևանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, ոչ մի գիտահետազոտական ինստիտուտ։ Հայաստանի կենտրոնի կուլտուրական դեմքը որոշում էին սոսկ 30 տարրական և միջնակարգ դպրոցներ, ուսումնարաններ ու գիմնազիաներ (այդ թվում 10-ը հոգևոր)։

Իսկ ներկայումս Երևանում կան 14 ստացիոնար ու հեռակա բարձրագույն ուսումնական հաստատություններ և բազմաթիվ տեխնիկումներ, որոնք ամեն տարի տալիս են բարձրագույն և միջին որակավորման շատ մասնագետներ՝ ժողովրդական տնտեսության համարյա բոլոր ճյուղերի համար։ Հայ ժողովրդի գիտական մտքի կենտրոնը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան է (հիմնադրված՝ 1943 թ.)։ Երևանի 118 հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 70 հազ. աշակերտներ։ Հազարավոր աշակերտներ ընդգրկված են երկաթուղային, սպորտային, երաժշտական, առևտրա-կոոպերատիվ, գյուղատնտեսական և այլ դպրոցներում, ինչպես նաև արհեստագործական և ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններում, որոնք պատրաստում են միջին որակավորման զանազան մասնագետներ։ Հետաքրքրական է նշել, որ մայրաքաղաքի թերի միջնակարգ և միջնակարգ դպրոցներում այժմ այնքան ուսուցիչներ կան, որքան աշակերտ կար նախահեղափոխական Երևանի բոլոր ուսումնական հաստատություններում։ Քաղաքում ստեղծված է կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց։ Բնակչությանն սպասարկում են բազմաթիվ գրադարաններ, որոնցում պահվում են աշխարհի գրեթե բոլոր լեզուներով գիտական ու գեղարվեստական շատ գրքեր։ Տասնյակ ակումբներ և կուլտուրայի տներ, իրենց գեղարվեստական ինքնագործունեության բազմաթիվ խմբակներով, Երևանի աշխատավորության կուլտուրական ժամանցի սիրված վայրերն են։ Թատրոնը, կինոն, ռադիոն հաստատուն մուտք են գործել քաղաքի բնակչության բոլոր խավերի կենցաղի մեջ։ Քաղաքում գործում են 7 թանգարաններ, 6 թատրոն, կուլտուրայի և հանգստի 6 զբոսայգիներ, 26 կինոթատրոն և այլն։ 1956 թվականի նոյեմբերից շարք մտավ նաև Երևանի հեռուստատեսության կենտրոնը, որն իր բազմաբովանդակ հաղորդումներով արդեն վայելում է ռեսպուբլիկայի աշխատավորների մեծ սերն ու գրավում նրանց հետաքրքրությունը։

Երևանում բացառիկ տեղ է գրավում հրատարակչական գործը։ Սովետական իշխանության տարիներին հրատարակված գրքերի ընդհանուր քանակով Երևանը եղբայրական ռեսպուբլիկաների բազմաթիվ քաղաքների շարքում գրավում է առաջին տեղերից մեկը։ Երևանում հրատարակվում են 15 ռեսպուբլիկական և քաղաքային թերթեր հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն և քրդերեն լեզուներով, ինչպես և գիտական, հասարակական-քաղաքական, գրական ու արվեստագիտական ամսագրեր։

Վերջին 30 տարիների ընթացքում Երևանում ստեղծվել են տասնյակ հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, դիսպանսերներ, ծննդատներ, կոնսուլտացիաներ և այլն, որոնք հագեցված են բժշկական նորագույն սարքավորումներով և որակյալ կադրերով։ Երևանի հիվանդանոցներն ունեն 3800 հիվանդանոցային մահճակալներ։

Ընդհանուր գծերով սրանք են Երևանի նվաճումները արդյունաբերական և կուլտուրական շինարարության բնագավառում։

## 2. Փողոցներ, հրապարակներ, հուշարձաններ, զբոսայգիներ, խաղադաշտեր

Այժմ անցնենք Երևանի փողոցներով ու հրապարակներով, մտնենք զբոսայգիներն ու հանգստավայրերը, թանգարաններն ու թատրոնները, բուհերն ու գիտական ինստիտուտները և մոտիկից ծանոթանանք այն ամենի հետ, ինչի մասին սոսկ ընդհանուր պատկերացում տվեցինք։ Մենք կծանոթանանք նաև մայրաքաղաքի

բնակիչների, նրա շինարարների հետ, նրանց աշխատանքային առօրյային, մեծ ու փոքր գործերին։

Հայկական ռեսպուբլիկայի մայրաքաղաք կարելի է դալ երկաթուղային ճանապարհով, մի շարք խճուղային մայրուղիներով, ինչպես նաև օդային տրանսպորտով։ Այդ ուղիները Երևանը միացնում են ոչ միայն ռեսպուբլիկայի ամենահեռավոր շրջանների, այլև մեր լայնատարած Հայրենիքի շատ քաղաքների հետ։

Եթե դուք Երևան եք գալիս երկաթուղով, ապա առաջին բանը, որ գրավում է ձեր ուշադրությունը ճանապարհին, երկաթգծից հարավ ձգվող Արարատյան դաշտահովտի անծայրածիր տարածություններն են՝ զարդարված հպարտ Արարատի երկգլխանի ճերմակ գագաթներով, իսկ հյուսիսում շողշողում է քառագագաթ Արագածը։

Երևանում ձեզ դիմավորում է կայարանի նորակառույց հոյակապ շենքը (ճարտարապետ՝ է. Ա. Տիգրանյան), որը կառուցված է դեղնա-վարդագույն դեղեցիկ քարից։ Շենքն իր նրբերանգներով, երևանյան արևի պայծառ ճառագայթների տակ խայտում է իրեն նայողին։ Կայարանի շենքի առջևում ընդարձակ հրապարակն է, որն այժմ շրջապատվում է նոր բազմահարկ շենքերով։ Հրապարակի կենտրոնական փոքրիկ ծաղկազարդ պուրակում շուտով կանգնեցվելու է հայկական ժողովրդական դյուցազներգության ազատատենչ հերոս Սասունցի Դավթի արձանը։ Նախկինում քաղաքը կայարանի հետ միացնում էր նեղլիկ ու ծուռումուռ մի փողոց՝ տեղ-տեղ երևացող կավե միայնակ տներով։ Իսկ այժմ կայարանից դեպի քաղաքի կենտրոնն է ուղղվում լայն ու գեղեցիկ Հոկտեմբերյան պողոտան։ Պողոտայի երկու կողմերում, նրա լայն մայթերի երկայնքով մի քանի կիլոմետրի վրա, կանոնավոր շարքերով կանգնած են բազմահարկ շենքերը, որոնց երիվներանգ պատերը սոսվերվում են սլացիկ բարդիներով։ Եվ արդեն այստեղ, հենց քաղաք մտնելիս, այսպես կոչվող ծայրամասի սահմաններում, դուք ականատես եք լինում սոցիալիստական քաղաքաշինության հիմնական սկզբունքի իրականացմանը Երևանում՝ քաղաքի թե՛ կենտրոնական և թե՛ ծայրամասային շրջանների բարեկարգումը միատեսակ հոգատարությամբ և ուշադրությամբ։ Այժմ արդեն «ծայրամաս» հասկացողությունը Երևանի արվարձանների համար ունի սոսկ տերիտորիալ նշանակություն, որը բոլորովին էլ չի նշանակում հեռավորաց, քաղաքի ամենից քիչ բարեկարգված մաս։ Հոկտեմբերյան պողոտայով դեպի քաղաքի կենտրոնն են երթևեկում տրամվայներ, տրոլեյբուսներ, ավտոբուսներ, տաքսիներ։ Բայց եթե դուք ուզում եք մոտիկից ծանոթանալ քաղաքին, և չեք վախենում հոգնելուց, ապա ավելի լավ է գնալ ոտքով։ Ձեր ճանապարհին դուք կտեսնեք ճարտարապետական տեսակետից գեղեցիկ ձևավորված վարչական, հասարակական և բնակելի շատ շենքեր։ Դրանք շինված են բազմագույն տուֆերից, բազալտից և այլ քարերից, որոնցով այնքան հարուստ է Հայաստանը։ Եվ չզարմանաք, եթե քարե բազմահարկ շենքերի կողքին նկատեք նաև միահարկ կավածեփ տներ. դրանք հնի անխուսափելի մնացորդներն են։ Ջէ՛ որ նորը կառուցվում ու զարգանում է հնի տեղում և նրան դուրս է մղում աստիճանաբար։ Շարունակելով ձեր ճամփան, քայլ առ քայլ, շենքից շենք, դուք աննկատելիորեն անցնում եք ողջ Հոկտեմբերյան պողոտան։ Եվ հանկարծ, անսպասելիորեն ձեր առջև բացվում է մի հոյակապ պատկեր։ Դուք տեսնում եք Սովետական Միության քաղաքային ամենագեղեցիկ հրապարակներից մեկը՝ վ. Ի. Լենինի անվան հրապարակը։ Լենինի հրապարակը Հայաստանի մայրաքաղաքի գլխավոր հասարակական կենտրոնն է։ Նախկինում այս տարածությունը գրավում էին հողե տափակ կառուներով տների մի քանի շարքեր՝ բաժանված նեղ ու կեղտոտ փողոցներով։ Այժմ դրանց հետքն անգամ չի մնացել։ Լենինի հրապարակի շինարարության սկիզբը հաշվվում է 1926 թվականը։ Հրապարակի առաջին խոշոր կառույցը և ճարտարապետական դոմինանտը եղավ ակադեմիկոս Ա. Ի. Թամանյանի նախագծով կառուցված Հայկական ՍՍՌ կառավարական տունը։

Տաղանդավոր ճարտարապետը այդ հոյակապ կառույցում մարմնավորել է հայ ազգային ճարտարապետության դարավոր ու լավագույն տրադիցիաները՝ հարստացնելով դրանք մեր սոցիալիստական իրականության նոր մոտիվներով։ Կառավարական տան շենքը գրավում է հրապարակի միայն մի մասը։ Նրա մնացած մասերը ներփակում են Հայկական ՍՍՌ ժողտնտխորհրդի (ճարտ.՝ Ս. Ա. Սաֆարյան, մասնակցությամբ ճարտարապետներ Ռ. Ս. Իսրայելյանի և վ. Ա. Արևշատյանի) և Կուլտուրայի տան վերակառուցված շենքերը (վերակառուցում՝ ճարտ. Մ. վ. Գրիգորյանի, մասնակցությամբ ճարտ. է. Ա. Սարապյանի), վերջապես նոր հյուրանոցի և Հայաստանի Արհմիությունների Սովետի տան՝ վերակառուցված Կապի տան հետ միացված շենքերը (ճարտարապետներ՝ Մ. վ. Գրիգորյան և է. Ա. Սարապյան)։

Այս շենքերը իրենց ճարտարապետական առանձնահատուկ-

թյուններով արձագանքում և ներդաշնակում են կառավարական ամենահիանալի ansամբլներից մեկը: Այստեղ հենց, Կուլտուրայի տան շենքի հետ՝ կազմելով հայկական ճարտարապետության տան առաջ, կառուցված է մեծ ջրավազան, որի կապույտ հայելում անդրադառնում են հրապարակի բաց-դեղնավուն և վարդագույն շենքերը: Գույնզգույն ծաղիկներով և վառ կանաչով շրջապատված այս ջրավազանը, հզոր շատրվանի իր արծաթափայլ ու սառնորակ շիթերով, ունի ոչ միայն դեկորատիվ նշանակություն, այլև ամռվա շոգ օրերին զգալիորեն թարմացնում է հրապարակի տապ օդը:

Հրապարակի ընդհանուր կոմպոզիցիայում կարևորագույն տեղը պատկանում է Վ. Ի. Լենինի մոնումենտալ հուշարձանին, որը բացված է 1940 թ. (Հուշարձանի հեղինակներն են՝ ՍՍՌՄ ժողովրդական քանդակագործ Ս. Դ. Մերկուրովը և ճարտարապետներ Լ. Ս. Վարդանյանն ու Ն. Ֆ. Պարեմուզովան): Լենինի պղնձաձույլ ֆիգուրան, որ կանգնած է մոխրակապտավուն հղկված գրանիտե պատվանդանի վրա, մեծ առաջնորդի ամենահաջողված արձաններից մեկն է: Հուշարձանը կանգնեցված է Կուլտուրայի տան դիմաց, հրապարակի հակառակ կողմում, փոքրիկ պուրակի մոտ, որի կանաչը հիանալի ֆոն է ստեղծում արձանի համար: Պատվանդանի հիմքի մոտ հրապարակի կողմից կառուցված են կառավարական տրիբունաները, որոնցում կարող է տեղավորվել 300 մարդ: Տրիբունաները շրջապատված են հղկված բազալտի ոչ բարձր բազրիքով: Բազրիքի՝ սև լաբրադորից պատրաստված քիվերը զարդարված են նրբաքանդակ նախշերով: Հուշարձանի հիմքում տրիբունաների տակ հարմարեցված է սրահ, դեպի որը տանում է նուրբ նախշով փորագրված պղնձյա դուռը: Սրահը երեսպատված է հայկական գեղեցիկ մարմարով:

Հրապարակի վրա մոտ 20 մետր բարձրանալով՝ հուշարձանն իր վրա է կրում ռեսպուբլիկայի հասարակական գլխավոր կենտրոնի ճարտարապետական անսամբլի ողջ գաղափարական ծանրությունը:

Որպես քաղաքի կենտրոն Լենինի հրապարակը լավ է միացված իր բոլոր շրջանների հետ: Բոլոր ուղղություններով այստեղից հարաձև բաժանվում են բազմաթիվ լայն ասֆալտապատ փողոցներ: Դուք կարող եք ընտրել ցանկացած փողոցը և անպայման այնտեղ կգտնեք ձեզ համար որևէ գրավիչ բան: Շահումյանի և Նալբանդյանի երկու զուգահեռ փողոցների և ստվերախիտ ծառուղիներ ու գեղեցիկ շատրվաններ ունեցող հինավուրց զբոսայգու միջոցով Լենինի հրապարակը միանում է մի այլ հրապարակի հետ, որը կոչվում է Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակից և աշակերտ, հայ ժողովրդի բոցաշունչ զավակ Ստեփան Գևորգի Շահումյանի անունով: Դա Երևանի խոշոր հրապարակներից է: Այստեղ գտնվում են պարտիական և վարչական հիմնարկներ, երկաթգծի քաղաքային կայարանը, Երևանի «Սևան» հյուրանոցը և այլն: Հրապարակի հարավային անկյունները շրջափակում են երկու զբոսայգիներ՝ 26 կոմիսարների անվան կուլտուրայի և Հանգստի զբոսայգին և Կիրովի անվան մանկական այգին:

Հրապարակին տոն տվող կենտրոնը Ստ. Շահումյանի հուշարձանն է (հեղինակներն են՝ քանդակագործ Ս. Դ. Մերկուրովը և ճարտարապետ Ի. Վ. Ժելտովսկին): Շահումյանի արձանը քանդակված է վարդագույն գրանիտից և կանգնեցված է աստիճանադակված վարդագույն գրանիտից և կանգնեցված է աստիճանավոր պատվանդանի վրա: Հուշարձանի ստորոտում գցված է ծաղկեպսակ նրա եռևի ավազանում խփում են բարձրացայտ շատրվանի բարակ շիթերը:

Լենինի հրապարակից դեպի Քանաքեռի ստորոտն է բարձրանում քաղաքի գլխավոր մայրուղիներից մեկը՝ Աբովյան փողոցը, որը հատկապես հետաքրքրական է քաղաքին ծանոթանալու տեսակետից: Դա նախկին Աստաֆյան փողոցն է, այժմ համարյա ամբողջապես վերակառուցված, երկու կողմերից բարձրացող հասարակական, վարչական և բնակելի շենքերով: Այս փողոցի վրա են գտնվում քաղաքի գլխավոր թանգարանները, թատրոնները, կինոթատրոնը, Ֆիլհարմոնիայի Փոքր դահլիճը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի շենքը, բարձրագույն ուսումնական հաստատություններ: Այդ փողոցին համընկնում են մի քանի հրապարակներ: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի շենքից վերև սկսվում է փողոցի լիովին վերակառուցված և զգալիորեն լայնացված մասը: Այստեղ փողոցի կենտրոնով, 7 մետր լայնությամբ վերից վար ձգվում է գեղեցիկ ծաղկանոցը, բազմերանգ ծաղիկներով: Փողոցի երկու կողմերում լայնահուն մայթերի երկարությամբ ձգվում են չորս և հինգ հարկանի գեղեցիկ տուֆե և բազալտե շենքերը: Մեկը մյուսից զարդարուն այդ շենքերը երկու ուղիղ գծերով բարձրանում են մինչև Աբովյան փողոցի վերջը, մինչև Աբովյանի հրապարակը, որն ընկած է Քանաքեռի բարձրավանդակի ստորոտում: Այստեղ շրջապատված կանաչով և վառվռուն ծաղկաշարքերով հառնում է Խաչատուր Աբովյանի հու-

շարձանը (հեղինակներ՝ Ս. Լ. Ստեփանյան, Գ. Ա. Թամանյան)։ Աբովյանը խաչաձևող փողոցներից մեկի՝ Կիրովի փողոցի շարունակությունն է կազմում մայրաքաղաքի Այգեստան թաղամասի գլխավոր զարկերակը՝ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի անունը կրող փողոցը, որի վրա են գտնվում Երևանի Պետական համալսարանի նոր շենքի առանձին կորպուսներ, բազմաթիվ անհատական տներ ու բնակելի շենքեր։ Չարենցի փողոցի վրա է գտնվում իր ճարտարապետական կառուցվածքով Երևանի լավագույն դպրոցական շենքերից մեկը՝ 26 կոմիսարների անվան դպրոցի շենքը։ Քաղաքի հենց այս մասում, ուր շառավղաձև միանում են Նալբանդյան, Աբովյան, Տերյան փողոցները և Ստալինյան պողոտան, գտնվում է այսպես կոչված ուսանողական թաղամասը՝ Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների կենտրոնը։ Այստեղ իրարից ոչ հեռու տեղավորված են Երևանի Պետական համալսարանը, Անասնաբուժական, Բժշկական, Գյուղատնտեսական, Պոլիտեխնիկական, Թատերական-գեղարվեստական ինստիտուտներն ու Կոմիտասի անվան կոնսերվատորիան։

Ուսանողական թաղամասի կենտրոնում, Աբովյան և Տերյան փողոցների միջև ընկած է Ղուկաս Ղուկասյանի անվան ուսանող երիտասարդության սիրելի պուրակը։ Պուրակի գլխավոր մուտքի առջև Աբովյան փողոցին է նայում Հայաստանի կոմերիտմիության հիմնադիր, ժողովրդի փառապանծ զավակ Ղուկաս Ղուկասյանի հուշարձանը (քանդակագործ՝ Ս. Լ. Ստեփանյան)։ Պուրակի խիտ կանաչի մեջ սպիտակին է տալիս դորիական զույգ սյուներով ամփոփված, տուֆակերտ փոքրիկ աստղադիտարանի կլոր գմբեթը։

Ամբողջ քաղաքի լայնությամբ, Քանաքեռի բարձրավանդակից մինչև Հրազդան գետը (Զանգու) ձգվում է քաղաքի գլխավոր մայրուղիներից մեկը՝ Ստալինի անվան պողոտան։ Ստալինի անվան պողոտան կառուցված է նախկին Սունդուկյանի անվան նեղլիկ, ծուռումուռ փողոցի տեղում։ Այստեղ հիմնականում տեղադրված են բնակելի շենքեր։ Պողոտայի մայթերին տնկված են լայնատերև թխկիներ։ Պողոտայի հարավ-արևմտյան վերջավորությունից ոչ հեռու գտնվում է քաղաքի առևտրական խոշոր կենտրոններից մեկը՝ ծածկած շուկան (ճարտ.՝ Գ. Գ. Աղաբաբյան)։

Շուկան ունի կենտրոնական առևտրական կամարապատ դահլիճ, որի երկարությամբ երկշարք ձգվում են սպիտակ փայլաղյուսով երեսպատված առևտրական սեղանները։

Շուկայի սլացիկ կամարների երկու թևերի տակ տեղավորված





Կառավարական տունը Լենինի հրապարակում

են առևտրական միջանցքները, որով և լուծված է շուկայի երկրորդ հարկի դժվարին խնդիրը: Միջանցքների տակ աշխույժ գործում են պետական բազմաթիվ խանութները: Շուկան ունի լավ կահավորված պահեստներ, սառցարանային տնտեսություն, հյուրանոց, սանիտարա-տեխնիկական կետ, ճաշարան և շատ ուրիշ հարմարություններ՝ իրենց մթերքները վաճառելու համար Երևան բերող կոլտնտեսականների համար:

Շուկայի սքանչելի զարդն է հանդիսանում մետաղակուռ ցանցկեն վիտրաժը, դեպի աջ ու ձախ սահող հսկա դռներով: Վիտրաժի նախշերում յուրահատուկ նկարազարդերով արտացոլված են գյուղատնտեսական մթերքներ՝ մրգերի, որսի մսի, ցորենի հասկերի, բանջարեղենի և այլ ձևերով:

Ծածկած շուկայի շենքը Երևանի հաջողված ճարտարապետական ստեղծագործություններից մեկն է:

Քաղաքի այս հատվածում, Ստալինյան պողոտայի վրա պահպանվել է Հայաստանում պարսկական տիրապետության շրջանի ճարտարապետական մի հուշարձան՝ կապույտ գմբեթով ու մինարեով՝ Գյոյ-մեչիդը (կապույտ մզկիթ): Մզկիթում այժմ տեղավորված է Երևան քաղաքի պատմության թանգարանը, ինչպես նաև Ընախուզական թանգարանը (Պլանետարին):

Ստալինյան պողոտան կտրում անցնում են Կարմիր Բանակի, Մարքսի, Ամիրյան, Մոսկովյան փողոցները, Լենինի անվան պողոտան և մի քանի ուրիշ փողոցներ: Լենինի անվան պողոտան նույնպես վերակառուցված մայրուղիներից է: Այս փողոցի վրա է գտնվում գեղարվեստական պավիլիոնը:

Ստալինյան պողոտայից սկիզբ է առնում Բարեկամության փողոցը (նախկին Բաղրամյան), որը հիմնականում կառուցվել է Հայրենական Մեծ պատերազմից հետո: Բարեկամության փողոցը երևանցիների սիրած զբոսավայրերից է, նրա մասին հաճախ կարելի է լսել երգերում, ոտանավորներում: Բարեկամության փողոցը գրավիչ է իր նորակառույց, շողշողուն, գեղեցիկ տուֆակերտ շենքերով, որոնք ունեն կամուշապատ փշատենիների բուրումնավետ ծառերով զարդարուն փոքրիկ բակեր: Որքան բարձրանում ես փողոցով վեր, այնքան ավելի մաքուր ու թարմ է դառնում օդը, արբեցուցիչ՝ այգիների կանաչի ու փշատենիների բուրմունքը:

Բարեկամության փողոցում կառուցված են գեղեցիկ առանձնատներ, բնակելի, հասարակական ու վարչական շենքեր: Ոչ մի շենք ճարտարապետական իր ձևերով և ստեղծագործական

մատհղացմամբ չի կրկնում մյուսին: Դրանք իրարից տարբեր, յուրօրինակ և ինքնատիպ են: Բարեկամության փողոցի դեղեցիկ շենքերից են Հայկական ՍՍՌ Ֆիզիկայի ինստիտուտի, Ճարտարապետների տան ու Չեխովի անվան դպրոցի շենքերը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գլխավոր շենքը և շատ ուրիշ շենքեր: Այստեղ հատկապես աչքի են ընկնում Հայաստանի ԿՊԿԿ և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության շենքերը (Ճարտարապետ՝ Մ. Վ. Գրիգորյան) և այլն: Բարեկամության փողոցից է ճյուղավորվում նաև Երևանի ամենաերիտասարդ փողոցներից մեկը՝ Կիևյան փողոցը: Այս փողոցն ավարտվում է Հրազդանի կիրճի բարձր ափերը կամարող Հրազդանի Մեծ կամրջով: Կամուրջը միացնում է քաղաքի 26 կոմիսարների անվան շրջանը Շահումյանի անվան վարչական շրջանի հետ:

Քաղաքի հարավային մասը գրավում է Ստալինյան շրջանը: Դա քաղաքի արդյունաբերական շրջանն է, ուր կենտրոնացված են քիմիական, էլեկտրամեքենաշինական, դազգահաշինական, անդի և արդյունաբերական այլ հարյուրավոր ձեռնարկություններ:

Ասում են, թե իբր մեծ քաղաքների արդյունաբերական շրջանները լինում են մրածածկ, ծխապատ և կեղտոտ: Բայց եթե դուք անցնեք այդ շրջանի փողոցներով, ապա անմիջապես կհամոզվեք, որ դա Երևանի Ստալինյան շրջանին չի վերաբերում: Այս շրջանն իր բարեկարգությամբ ոչնչով չի զիջում քաղաքի մյուս շրջաններին: Այստեղ ևս նույնպիսի լայն ասֆալտապատ փողոցներ են (Օրջոնիկիձեի պողոտան, Կալինինի, Թամանցիների փողոցները), նույնպիսի բազմահարկ գեղեցիկ բարե շենքեր, ստվերախիտ մեծ զբոսայգիներ, պուրակներ, զբոսավայրեր: Այստեղ, ինչպես և ամենուրեք Երևանում, ոչ մի օր չի դադարում բուռն շինարարությունը, ոչ մի ժամ չի լռում քարտաշի ուրախ երգը: Քանդվում է հինը, խախուտը, իսկ ազատված տարածություններում մեկը մյուսի ետևից բարձրանում են նորանոր կառույցներ:

Կանաչ զգեստավորումը Երևանի բնորոշ կողմն է: Երևանցիները սիրում են կանաչը, հոգատարությամբ աճեցնում են այն, սիրով կանաչապատում հարազատ քաղաքը: Երևանում կան կուլտուրայի և հանգստի 6 խոշոր զբոսայգիներ, 12 պուրակներ և կանաչ զբոսավայրեր: Երեք կողմից քաղաքը շրջապատված է Նորքի բարձրությամբ, Քանաքեռի և Արաբկիրի բարձրավանդակներով, որոնք ծածկված են տնկովի երիտասարդ անտառաշերտերով ու մրգատու այգիներով: Դժվար է այսօր Երևանում գտնել գոնե մի



փողոց, որի երկու կողմերում տնկված չլինեն ծառեր: Իզուր չէ, որ Երևանն անվանում են կանաչի ու ծաղիկների քաղաք:

Ներկայումս Երևանի ամենամեծ պարկը կուլտուրայի և հանգստի «Հաղթանակ» զբոսայգին է, որը տարածվում է Քանաքեռի բարձրավանդակի վրա՝ Սևանի խճուղու երկու կողմերում: Զբոսայգում, ծովի մակերևույթից 1200 մ բարձրության վրա կանգնեցված է 51 մետրանոց Հաղթանակի մոնումենտը՝ Ի. Վ. Ստալինի արձանով (հեղինակներ՝ քանդակագործ Մերկուրով, ճարտարապետ Թարխանով): Մոնումենտը կառուցված է ի պատիվ Հայրենական Մեծ պատերազմում ՍՍՌՄ ժողովուրդների տարած հաղթանակի:

Քաղաքի կենտրոնում, Մարքսի և Կարմիր Բանակի զուգահեռ փողոցների միջև գործում են երկու ուրիշ՝ 26 կոմիսարների և Կիրովի անվան մանկական զբոսայգիները (երկուսի շքամուտքն էլ Շահումյանի անվան հրապարակի կողմից): 26 Կոմիսարների անվան զբոսայգին, ինչպես և քաղաքային մյուս այգիները (Կոմիտասի անվան զբոսայգին, Օրջոնիկիձեի պողոտայի վրա, Կոմերիտմիության զբոսայգին Մայակովսկու փողոցի վրա և այլն) բարեկարգ են և ապահովում են աշխատավորների կուլտուրական հանգիստը: Կոմիտասի պարկում է գտնվում հայ ժողովրդի Կուլտուրայի, գրականության ու արվեստի բնագավառի տաղանդավոր գործիչների պանթեոնը: Այստեղ գործում են կինոթատրոնը, պարի հրապարակը, համերգային էստրադան, զրադարան-ընթերցարանը, նվագում է նվագախումբը, պտտվում է կարուսելն ու պտտվող անիվը և այլն: Կոմերիտմիության անվան զբոսայգում է գտնվում քաղաքի ամենամեծ ջրավազան-լճակը, որը քաղաքի երիտասարդության ամենասիրած վայրերից է:

## 3. Գիտահետազոտական հիմնարկները, թանգարանները, թատրոնները, կինոն

Առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը Երևանում Պետական համալսարանն է, որը հիմնադրվել է 1920 թվականի դեկտեմբերին: Ներկայումս համալսարանն ունի 12 ֆակուլտետ, որտեղ մոտ 5 հազ. ստացիոնար և հեռակայող ուսանողներ ուսանում են ֆիզիկոսի ու մաթեմատիկոսի, բնագետի ու քիմիկոսի, անտեսագետի ու իրավաբանի, երկրաբանի ու աշխարհագրագետի, բանասերի ու պատմաբանի բարձրագույն որակավորում:

Երևանի Պետական համալսարանը գիտական կապեր ունի ոչ

միայն մեր երկրի բուհերի ու գիտական հիմնարկների, այլ աշխարհի տասնյակ երկրների բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների հետ: Համալսարանի գրադարանը Երևանի խոշորագույն գրապահոցներից է: Նրա ֆոնդում հաշվվում է մոտ 600 հազ. հատոր գիրք՝ աշխարհի համարյա բոլոր լեզուներով: Իր գոյության ընթացքում համալսարանը տվել է ավելի քան 7 հազար մասնագետներ, որոնք այժմ բեղմնավոր գործունեություն են ծավալում ոչ միայն մեր, այլև եղբայրական շատ ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի բազմաթիվ բնագավառներում:

Ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների համար բարձր որակավորման կադրեր պատրաստելու գործում կարևոր տեղ է գրավում Երևանի Կարլ Մարքսի անվան Պետական պոլիտեխնիկական ինստիտուտը, որը պատրաստում է 16 մասնագիտություններ: Երևանի բժշկական ինստիտուտի սանները կազմում են Հայաստանում աշխատող բժիշկների 95 տոկոսը: Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիան ունի 5 ֆակուլտետ: Կարևոր են նաև Գյուղատնտեսական ինստիտուտը՝ Հայաստանի գյուղատնտեսական բարձրագույն ուսումնական հաստատությունը, Թատերական-գեղարվեստական ինստիտուտը, Անասնաբուժական, Մանկավարժական և մյուս ինստիտուտները:

Աբովյան և Լերմոնտով փողոցների անկյունում գտնվում է եռահարկ, արտաքնապես ոչ այնքան շքեղ մի շենք, որտեղ ժամանակավորապես տեղավորված է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան:

Հայկական ՍՍՌ ԳԱ-ն կազմակերպվել է 1943 թվականի նոյեմբերի 29-ին՝ ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի բազայի վրա: Նրա սիստեմում ներկայումս մտնում են ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, բիոլոգիական, ինչպես նաև հասարակական գիտությունների բաժինները, որոնք միավորում են 27 գիտահետազոտական հիմնարկներ: Հայկական ՍՍՌ ԳԱ սիստեմում աշխատում են ավելի քան 750 գիտաշխատողներ: ԳԱ իսկական անդամների կազմի մեջ են մտնում 23 խոշորագույն գիտնականներ: Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտն է Վ. Հ. Համբարձումյանը, համաշխարհային հռչակ վայելող մի գիտնական, որը հիմնադրել և գլխավորում է Սովետական Միության աստղային ֆիզիկայի տեսական դպրոցը:

Իր գոյության 16 տարիների ընթացքում Գիտությունների ակա-



դեմիայի գիտնականները լուծել են մի շարք ժողովրդա-տնտեսական կարևոր նշանակություն ունեցող հարցեր: Հատկապես պետք է նշել Ֆիզիկայի ինստիտուտի նվաճումները: Այստեղ Հայկական ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամներ Ա. Ի. Ալիխանով և Ա. Ի. Ալիխանյան եղբայրների ղեկավարությամբ հայտնաբերված են կոսմիական ճառագայթների նոր կարևոր հատկություններ: Հայ գիտնականները մեծ աշխատանք են կատարել ռեսպուբլիկայի երկրաբանական ընդերքը հետազոտելու ուղղությամբ: Այդ հետազոտությունների շնորհիվ հայտնաբերված են օգտակար հանածոների, տվյալ տերիտորիայում մինչև այդ անհայտ նոր տեղեր, ինչպես նաև հանքային ջրերի նոր խմբեր, որոնք ունեն բուժիչ նշանակություն:

Լուրջ հաջողություններ են ձեռք բերել գյուղատնտեսական գիտությունների բաժնի աշխատակիցները: Այստեղ մեծ աշխատանք է տարվում նախկինում չօգտագործված հողերի յուրացման, գյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերքատու նոր տեսակներ ստեղծելու, ցեղային անասնապահության զարգացման և անասունների մթերատվության բարձրացման ուղղությամբ:

Գիտական նշանակալից նվաճում է հանդիսանում ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի գլխավորությամբ աստրոֆիզիկական դպրոցի ստեղծումը: Բյուրականում կառուցված աստղային ֆիզիկայի աստղադիտարանը ներկայումս ուսումնասիրում է գալակտիկայի սիստեմում Վ. Հ. Համբարձումյանի հայտնաբերած աստղային ասոցիացիաները:

Գիտական խոշոր աշխատանք է տարվում Քիմիայի ինստիտուտում: Մասնավորապես նոր ռացիոնալ տեխնիկայի բազայի վրա ուսումնասիրվում են նեֆելինային սիենիտների օգտագործման հնարավորությունները:

Հետաքրքրական աշխատանքներ են կատարել Լեզվի, Գրականության, Պատմության և այլ ինստիտուտները:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան հրատարակում է մի քանի տեղեկագրեր, զեկույցներ ու գիտական աշխատությունների ժողովածուներ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան կապված է աշխարհի շատ երկրների հարյուրավոր գիտական հիմնարկների հետ:

Լենինի հրապարակի մոտ տեղադրված կուլտուրայի տանը գտնվում են երկու թանգարաններ՝ Հայկական ՍՍՌ Պետական պատմական և Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի

բանգարանները, Պետական պատկերասրահը, ինչպես նաև Հայ-ֆիլհարմոնիայի Փոքր դահլիճը։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարում ստեղծված Պատմական թանգարանում են գտնվում հայ ժողովրդի ավելի քան երեք հազար տարվա կուլտուրային վերաբերող բազմազան նյութերը, որոնք պերճախոս կերպով պատմում են ձեզ մի տաղանդավոր ժողովրդի և նրա հնագույն կուլտուրայի մասին, նրա ստեղծագործ աշխատանքի և ազգային անկախության ու ազատության համար մղած հերոսական պայքարի մասին։ Հայաստանում հավաքված և թանգարանում ցուցադրվող առարկաները, որոնք վերաբերում են պալեոլիթի (հին քարե դարի) և նեոլիթի (նոր քարե դարի) ժամանակաշրջաններին, վկայում են, որ մեր երկրի տերիտորիայի վրա հնագույն ժամանակներից գոյություն է ունեցել կյանք։ Այստեղ ցուցադրվում են նաև Շենգավիթում և Դիլիջանում, Կարմիր Բլուրում ու Սևանա լճի ափերին, Դվինում և Անիում պեղված հազվագյուտ առարկաները։ Այստեղ շատ կան ուրարտական՝ ՍՍՌՄ տերիտորիայում առաջին պետության սեպագրեր, որոնք փորագրված են բազալտյա սալերի վրա։ Թանգարանում պահվում են նաև եղրայրական ռեսպուբլիկաների դիտության ու կուլտուրայի պատմության հարցերին վերաբերող մի շարք արժեքավոր նյութեր, ինչպես նաև հայ և ռուս ժողովուրդների բարեկամության դարավոր պատմությունը հաստատող փաստաթղթեր։

Հայաստանի Պետական պատկերասրահը (հիմնված է 1921 թ.) Սովետական Միության ամենահարուստ պատկերասրահներից մեկն է։ Այստեղ դուք կծանոթանաք XVII դարից սկսած, մինչև մեր օրերի հայկական գեղանկարչության խոշորագույն վարպետների ստեղծագործություններին։ Հայաստանի պատկերասրահում հատկապես բազմակողմանիորեն է ներկայացված ռուսական և արևմտաեվրոպական գեղանկարչությունը։ Եվ առանց բացառության ցուցադրվում են միայն սկզբնօրինակները։

Պատկերասրահի հայկական բաժնում կարելի է ծանոթանալ Ա. Հովնաթանյանի (1808(09)—1880)՝ հայ արվեստում աշխարհիկ, ռեալիստական ուղղության հիմնադրի պորտրեներին և Ստ. Ներսիսյանի (1827—1884) ժանրային նկարներին, Գ. Բաշինջաղյանի (1857—1925)՝ Սևանա լճի տեսարաններին, ինչպես նաև Վ. Սուրենյանցի (1860—1921) պատմական կտավներին և Փ. Թերլեմեզյանի (1865—1941) ու Ս. Առաքելյանի (1884—1942) նկարներին։ Այստեղ կարելի է տեսնել նաև Հայաստանի ժամանակակից խոշորագույն նկարիչների՝ Մ. Սարյանի (1880), Հ. Կոջոյանի (1883), Հ. Գյուրջյանի (1892) և ուրիշների աքանչելի բնանկարներն ու այլ հետաքրքրական կտավներ։

Պատկերասրահի հայկական բաժինն ավարտվում է Հ. Կ. Այվազովսկու (1817—1900) չգերազանցված ծովանկարների ցուցահանդեսով։ Դա հանճարեղ հայ ծովանկարչի ստեղծագործությունների խոշորագույն հավաքածուներից մեկն է Սովետական Միությունում։ Այստեղ կարելի է տեսնել նրա «Լուսաբացը Թեոդոսիայում», «Վանյակ դիշեր Կոստանդնուպոլսում», «Փոթորիկը ծովի վրա», «Նեապոլիտանական ծովախորշը ամպամած առավոտին», «Քրիստափոր Կոլումբոս», «Փոթորիկ Նիցցայի ափերին», «Թեոդոսիա քաղաքի տեսարանը», «Չկնորսները ծովափին» և ուրիշ շատ կտավներ։

Շատ հարուստ է ներկայացված պատկերասրահի ռուսական բաժինը։ Այստեղ ցուցադրվում են ռուսական գեղանկարչության այնպիսի հսկաների կտավները, ինչպիսիք են՝ Վ. Սերովը (1865—1911) և Մ. Նեստերովը (1862—1942), Վ. Պերովը (1833—1882) և Վ. Մակովսկին (1846—1920 թթ.), Ի. Կրամսկոյը (1837—1887 թթ.)։ Ցուցադրված են նաև Ի. Շիշկինի (1831—1898 թթ.), Ս. Կուինջիի (1842—1910 թթ.), Ի. Ռեպինի (1844—1930 թթ.), Ն. Գեի (1831—1894 թթ.), Մ. Վասնեցովի (1856—1933 թթ.), Դ. Լևիցկու (1735—1822 թթ.) և շատ ուրիշների էյուդները։ Հարուստ ու բազմաբովանդակ է նաև արևմտաեվրոպական բաժինը։ Այստեղ ներկայացվում են իտալական, հոլանդական, ֆլամանդական, ֆրանսիական և ուրիշ ամենատարբեր ուղղությունների ու դպրոցների բազմաթիվ նկարիչների ստեղծագործությունները։ Այստեղ են գտնվում Յա. Բասսանոյի (1510—1592 թթ.), Յա. Տինտորետտոյի (1519—1596 թթ.), Լ. Բասսանոյի (1557—1612 թթ.), Պ. Ֆարիանտիի (1522—1606 թթ.), Յա. Յորդանսի (1593—1678 թթ.), Պ. Ռուբենսի (1577—1640 թթ.), Ա. Վան-Դեյկի (1599—1641 թթ.), Յու. Յակոբսոնի (1610—1664 թթ.), Է. Դելակրուայի (1798—1863 թթ.), Ֆ. Դրեի (1727—1775 թթ.), Օ. Ֆրագոնարի (1732—1806 թթ.) և Արևմուտքի շատ այլ խոշոր նկարիչների արժեքավոր կտավները։

Գրականության և արվեստի թանգարանի գրականության բաժնում կարելի է ծանոթանալ հայ գրողների, բանաստեղծների, գրաքննադատների կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող շատ

նյութերի։ Արվեստի բաժնում ցուցադրված էքսպոզիցիաներում ներկայացված են ավելի քան երկու հազար տարվա տրադիցիաներ ունեցող հայ թատերական արվեստի զարգացման հիմնական էտապները։

Կուլտուրայի տնից ոչ հեռու գտնվում է մի այլ թանգարան, ուր պետք է անպայման այցելել, եթե ցանկանում եք Հայաստանի բնական հարստություններ մասին պատկերացում ունենալ։ Դա Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրոֆ. Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանն է, որը կազմակերպվել է 1937—1938 թվականներին։ Այս թանգարանում ցուցադրվում են բոլոր նրբերանգների ու տեսակների հայկական հիանալի տուֆերը, որոնք հանդիսանում են շինարարական ու երեսպատման հիմնական նյութը Հայաստանում։ Այստեղ ներկայացված են նաև հայկական նշանավոր մարմարների նմուշները, որոնք հայտնի են ողջ Միության մեջ։ Թանգարանում պահվում են նաև հանքատեսակների և զանազան այլ օգտակար հանածոների նմուշներ, որոնցով այնքան հարուստ է մեր ռեսպուբլիկան։ Թանգարանում ուշադրություն է գրավում վաղ պատմական ժամանակներում Հայաստանի տերիտորիայում ապրած, չորրորդական շրջանի փղի նախահայրերից մեկի հսկայական կմախքը՝ վեց մետր երկարությամբ և 3,5 մետր բարձրությամբ։

Հայաստանի մայրաքաղաքի թանգարանների և տեսարժան վայրերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Երևանի մատենադարանը, հին հայկական ձեռագրերի պահպանման այդ հաստատությունը, որը տեղավորված է Ստալինի պողոտան հյուսիսային կողմից փակող բազալտակերտ նորակառույց մոնումենտալ շենքում։ Երևանի մատենադարանն իրավացիորեն համարվում է աշխարհի հնագույն ու հարուստ ձեռագրեր ունեցող ամենահարուստ գրադարաններից մեկը։ Այստեղ մեծ խնամքով պահվում են շուրջ 9300 հայերեն ամբողջական ձեռագրեր և ավելի քան 3500 պատառիկներ (ամբողջական ձեռագրերից պահպանված թերթիկներ) ու մոտ 200 000 արխիվային վավերագրեր հայ ժողովրդի և հարևան ժողովուրդների պատմության, նրանց գիտության, գրականության և արվեստի պատմության վերաբերյալ։ Հոգատարությամբ պահպանվում են մագաղաթյա և թղթյա հազվագյուտ ձեռագրեր՝ սկսած V դարից, վերջացրած XVIII դարով՝ ներառյալ։ Ըստ որում այդ բոլորը ոչ միայն հայերեն լեզվով է, այլև եբրայերեն, հունարեն, եթովպերեն, ասորերեն, լատիներեն, պարսկերեն, ուզբեկերեն, արաբերեն և աշխարհի այլ լեզուներով։ Ձեռագրերի մեջ կան հայ նշանավոր փիլիսոփաներ Եզնիկ Կողբացու (V դար) և Դավիթ Անհաղթի (V—VI դար), Հովհաննես Իմաստասերի (XII դար), Գրիգոր Տաթևացու (XIV—XV դար) և մյուսների, պատմագիրներ Փավստոս Բուզանդի (V դար), Մովսես Խորենացու (V դար), Սեբեոսի (VII դար), Ղևոնդ պատմիչի (VIII դար), Ստեփանոս Օրբելյանի (XIII—XIV դար), միջնադարյան հայ բժիշկներ Մխիթար Հերացու (XII դար) և Ամիր Դովլաթ Ամասեցու (XV դար), աշխարհահռչակ մաթեմատիկոս, տոմարագետ, աշխարհագրագետ ու պատմաբան Անանիա Շիրակացու (VII դար) և հայ գիտության, կուլտուրայի ու գրականության բազմաթիվ ներկայացուցիչների աշխատությունները։ Մատենադարանում մեծ տեղ է գրավում նաև գեղարվեստական գրականությունը։ Այստեղ կարելի է ծանոթանալ հայ նշանավոր պոետներ Ներսես Շնորհալու (XI դար), Գրիգոր Նարեկացու (X դար), Հովհաննես Թլկուրանցու (XIV դար), Մկրտիչ Նաղաշի (XV դար), Սայաթ-Նովայի (XVIII դար) և շատ ուրիշների ինքնատիպ ստեղծագործություններին։ Հայերեն լեզվով գրված գիտական աշխատություններից ու գեղարվեստական ստեղծագործություններից բացի, այստեղ կարելի է տեսնել շատ օտար ռազմի հեղինակների թարգմանություններ, իսկ դրանց թվում այնպիսի հեղինակների, որոնք պահպանվել ու հայտնի են միայն հայերեն թարգմանությունների շնորհիվ։ Վերջապես բոլորի համար էլ բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում հայկական միջնադարյան մանրանկարները, որոնցով հայ բազմահմուտ վարպետները զարդարել են ձեռագրերը։ Քանաքեռի սարալանջին վեր խոյացած Մատենադարանի բազմահարկ, հսկա ու գեղեցիկ, բոլոր հարմարություններով հագեցված այդ նոր շենքը փաստորեն հայ ժողովրդի բազմադարյան ստեղծագործության ամենաթանկ գանձարաններից մեկն է։

Լենինի անվան պողոտայի հյուսիս-արևմտյան ծայրում կառուցված է հայ մեծ պոետ, լուսավորիչ, իր ժամանակի հասարակական եռանդուն գործիչ Հովհաննես Թումանյանի (1869—1923) տուն-թանգարանը։ Տուն-թանգարանը բաղկացած է հինգ սրահներից, որոնց տեղադրությունը համապատասխանում է պոետի վերջին տարիներին Թբիլիսիում ունեցած բնակարանի պլանին։ Բնակարանը ունի ճաշասրահ, մանկական սենյակ, ննջարան, աշխատասենյակ և ընդունարան։ Այցելուի համար հետաքրքրական է հատկապես աշխատասենյակը (4-րդ սրահը), որտեղ պահպանվել

են պահել անձնական իրերն ու դրանց դասավորությունը։ Թիֆլիսի իր բնակարանի այս սենյակում է ընդունել բանաստեղծը Սա. Շահմյանին, կոմպոզիտորներ Սպենդիարյանին, Պալիաշվիլուն, Բարխուդարյանին, դրողներ Աղայանին, Շիրվանզադեին, բանաստեղծներ Տերյանին, Բրյուսովին, Զարենցին, Խահակյանին և իր ժամանակի բազմաթիվ այլ նշանավոր մարդկանց, բարեկամներին ու համագյուղացիներին։

Թումանյանի ստեղծագործությունը ներկայացված է 5-րդ դահլիճում։ Այստեղի 7 բաժիններդ պերճախոս կերպով պատմում են նրա բազմակողմանի տաղանդի և մինչև կյանքի վերջին օրերը չդադարող հուսադան գործունեության մասին։

Թատերական արվեստը Հայաստանում հնագույն տրադիցիաներ ունի։ Հայտնի է, որ մեր թ. ա. Հայաստանի հինավուրց մայրաքաղաքներից մեկի՝ Արտաշատի թատրոնում բեմադրվում էին ինչպես սեփական, այնպես էլ թարգմանական դրամատուրգիայի երկերը։

Մենանդրի կատակերգությունները, էվրիպիդեսի ողբերգությունները հայկական բեմից չեն իջել՝ ընդհուպ մինչև V—VI դարերը։ Միջին դարերում Հայաստանում զարգանում է մնջկատակերգությունը, սուր երգիծանքի, ժողովրդական դրամայի թատրոնը։ Հետագա դարերում Հայաստանի վրա օտարերկրյա հրոսակների մշտական հարձակումների և Հայաստանը Պարսկաստանի ու Թուրքիայի միջև բաժանելու հետևանքով կուլտուրական կյանքն այստեղ լիակատար անկում է ապրում։ Հայաստանում արվեստի բոլոր բնագավառների, այդ թվում նաև թատրոնի, հետագա զարգացման նոր փուլը կապված է պարսկական բռնակալության լծից Հյուսիս-Արևելյան Հայաստանի ազատագրման և Ռուսաստանին միանալու հետ։ Սկսած XIX դարի առաջին կեսից, հայ բեմում հանդես են գալիս հայ խոշորագույն դրամատուրգ Գ. Սունդուկյանի (1825—1912) սոցիալ-կենցաղային խորապես ռեալիստական պիեսները, ինչպես նաև Հ. Պարոնյանի (1841—1891) սատիրական կատակերգությունները և Ալ. Շիրվանզադեի (1858—1935) ռեալիստական դրամաները։

Սակայն, չնայած քանդարյա տրադիցիաներին, մինչև Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում չկար ոչ մի մշտական թատրոն կամ թատերական խումբ։ Այստեղ բեմադրվում էին սիրողների ներկայացումներ և շրջում էին թափառաշրջիկ խմբեր, որոնց կազմը անընդհատ փոփոխվում էր։



Սովետահայ թատրոնի երախայրիքը հանդիսացավ 1921 թ. կազմակերպված Գ. Սունդուկյանի անվան կարմրատրոշ Հայկական դրամատիկական թատրոնը, որը ժառանգելով հայկական թատրոնի լավագույն տրադիցիաները, դարձավ Սովետական Հայաստանի կուլտուրական կարևոր օջախներից մեկը։

Հետագա տարիներին Երևանում մեկը մյուսի ետևից ստեղծվում են Ա. Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի թատրոնը (1929), Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնը (1933), Ստանիսլավսկու անվան ռուսական Պետական դրամատիկական թատրոնը (1937), երաժշտական կոմեդիայի թատրոնը (1942) և այլն։

Թատերական ներկայացումների խոշորագույն ձեռնարկությունը Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնն է, որը կառուցված է Ա. Ի. Թամանյանի նախագծով։ Թատրոնն ունի երկու դահլիճ՝ օպերային թատրոնի, որն ունի 1260 տեղ և Հայֆիլհարմոնիայի համերգային Մեծ դահլիճը, որն ունի 1400 տեղ։ Իրար նկատմամբ դեմառդեմ տեղադրված երկու դահլիճների միջև կատուցված են համապատասխան բեմական հարմարություններ։ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը Սովետական Միության խոշորագույն երկդահլիճ ձեռնարկությունն է, Հայաստանի ճարտարապետության հանրահայտ նվաճումը։

Երևանի կուլտուրական կյանքում խոշոր իրադարձություն էր ռուսական թատրոնի ստեղծումը։ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական Պետական թատրոնն իր գոյության ընթացքում իրականացրել է ռուս դասական և սովետական դրամատուրգիայի լավագույն ստեղծագործությունների ցուցադրումը։ Կ. Ստանիսլավսկու անվան թատրոնը հանդիսանում է ռուսական գեղարվեստական մշակույթի կարևոր օջախը Սովետական Հայաստանում և նշանակալից դեր է կատարում երկու եղբայրական ժողովուրդների կուլտուրաների մերձեցման գործում։

Թատրոնի ռեպերտուարում նշանակալից տեղ են գրավում նաև հայ և արևմտաեվրոպական առաջավոր դրամատուրգիայի ստեղծագործությունները։

Հայ ժողովրդի երաժշտական կուլտուրան ևս դարավոր արմատներ ունի։ Հայկական երաժշտությունը կոլորիտային է ու ինքնատիպ։ Նույնիսկ օտարերկրյա բռնակալության ամենադաժան ճնշման ժամանակներում հայկական երաժշտությունը չի կորցրել

ազգային ինքնատիպությունն ու կենսահաստատ պաթոսը և զարգացել է ինքնուրույնաբար։

Խնամքով պահպանվելով և բազմաթիվ սերունդների շուրթից շուրթ հաղորդվելով՝ հայկական ժողովրդական երաժշտությունն աստիճանաբար գրառվում է և մշակվում երաժշտական կուլտուրայի գործիչների կողմից։ XIX դարի երկրորդ կեսից հայ ժողովրդի կուլտուրայի ասպարեզն են ելնում երաժշտական արվեստի այնպիսի մեծ վարպետներ, ինչպիսիք են՝ կոմպոզիտորներ Տ. Չուխաջյանը (1837—1898), Ե. Կարա-Մուրզան (1853—1902), Մ. Եկմալյանը (1856—1905), Ա. Սպենդիարյանը (1871—1928), Կոմիտասը (1869—1935), Ա. Տիգրանյանը (1879—1950) և շատ ուրիշներ, որոնց արմատավորած տրադիցիաների վրա աճում է երաժշտական ստեղծագործության սովետական գործիչների նոր սերունդը (Ա. Խաչատրյան, Ա. Սաթյան, Ա. Հարությունյան, Ա. Բաբաջանյան, Է. Միրզոյան, Է. Բաղդասարյան և ուրիշներ)։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ստեղծված է երաժշտական հիմնարկների ու կոլեկտիվների լայն ցանց։ Այդ ցանցի կարևոր օջախներից են Պետական կոնսերվատորիան, Պետական ֆիլհարմոնիան, ֆիլհարմոնիայի և Պետական օպերայի երկու սիմֆոնիկ պրոֆեսիոնալ նվագախմբերը, երգեցիկ խումբը, Հայկական երգի ու պարի վաստակավոր անսամբլը, Կոմիտասի անվան Պետական կվարտետը և Սպենդիարյանի անվան կվարտետը, Հայֆիլհարմոնիայի էստրադային նվագախումբը, Ռադիո և հեռուստատեսության պետական վարչության ժողովրդական գործիքների, Սայաթ-Նովայի անվան դուետանական և ժողովրդական գործիքների անսամբլները։

Թատերական արվեստին և երաժշտական կուլտուրային զուգահեռ Հայաստանում զարգանում է կինոարվեստը։ 1923 թվին այստեղ հիմնադրվեց Երևանի կինոստուդիան՝ «Հայկինոն», որն իր ընդարձակ բազմաթիվ գեղարվեստական ու դոկումենտալ կինոնկարներով հայտնի դարձավ Սովետական Միությունում։ Լայն հասարակայնության ջերմ հետաքրքրությունն առաջացրին երևանյան ստուդիայի առաջին ֆիլմերը՝ «Նամուս», «Ջար ոգի», «Մեքսիկական դիվանագետներ», «Գիքոր», հայկական ստուդիայի առաջին հնչյունային «Պեպո» ֆիլմը, ինչպես նաև սովետական իրականությունն արտացոլող «Լեռնային մարշ», «Ջանգեզուր», «Սևանի ձկնորսները», գեղարվեստական և «Հարազատ երկիր», «Սովետական Հայաստան» դոկումենտալ ֆիլմերը և այլն։ Վերջին ժամանակներում երևանյան ստուդիան թողարկել է «Ուրվականները հեռանում են լեռներից», «Ամպրոպի արահետով», «Պատվի համար», «Անձամբ ճանաչում եմ (Կամո)» և այլ ֆիլմեր։



Երևանում այժմ գործում են 26 կինոթատրոններ։ Դրանց թվում խոշորագույնը «Մոսկվա» երկդահլիճ կինոթատրոնն է։

## Երևանի շրջակայքը

Երևանի շրջակայքն ու նրա արվարձանները հարուստ են բազմաթիվ տեսարժան վայրերով, հին հուշարձաններով, գեղեցիկ այգիներով ու ամառանոցներով։ Քաղաքի արևմտյան մասում, խոր ձորով սրընթաց հոսում է Հրազդանը (Զանգուն)։ Այստեղ՝ Հրազդանի կիրճի գեղատեսիլ ծառաստանների մեջ, գետի ձախ ափին դեռևս 1937 թվականին կառուցվեց Երևանի մանկական երկաթուղին, որին սպասարկում են իրենք՝ երեխաները։ Մանկական երկաթուղուն կից գտնվում է Խ. Աբովյանի անվան կուլտուրայի և հանգստի մանկական սաղարթախիտ զբոսայգին, որի մուտքի մոտ դրված է Խ. Աբովյանի բրոնզաձույլ արձանը (քանդակագործ՝ Տերմարուքյան)։ Հարմար վագոններով փոքրիկ գնացքը, զվարճալի ճոճանակները, ոչ մեծ ընթերցարանի հետաքրքրաշարժ գրքերն ու ամսագրերն ամեն օր դեպի իրենց են գրավում մանուկների զվարթաձայն բազմությունը։ Զբոսայգու վերին մասում՝ բարձրադիր պատթափի երկարությամբ, գունագեղ տուֆից շինված են տասն աղբյուր-հուշարձաններ, որոնք նվիրված են Սովետական Միության հերոսներ՝ Նելսոն Ստեփանյանին, Հունան Ավետիսյանին, Զոյա Կոսմոդեմյանսկայային, Լիզա Չայկինային և ուրիշների։

Ներքևում՝ գետի կանաչ ափերի երկարությամբ, ձգվում են երկու ասֆալտապատ խճուղային ծառուղիներ։ Գետի վերին հոսանքում ծառուղիները միանում են մի կամրջակով։ Հենց այստեղ, կիրճի վրա 75 մետր բարձրությամբ կախված է Հրազդանի մեծ կամուրջի հսկայական կամարը, որը միացնում է գետի լեռնաշեն ափերը։

Երևանից դեպի հարավ-արևմուտք, քաղաքի սահմանագծից անմիջապես այն կողմը գտնվում են ուրարտական խոշոր կենտրոն (VII դար մ. թ. ա.) Թեյշեբաինի ավերակները, որոնք գետնի տակից լույս աշխարհ են հանված՝ մեր օրերում կատարված պեղումների շնորհիվ, որոնք սկսվել են 1939 թվականից։

Պեղումները ցույց տվեցին, որ այդ տեղում եղել է հզոր ամրոց-պալատ, որտեղ ապրել են փոխարքան, նրա ընտանիքը, շքա-

խումբը, մերձավորները։ Ամրոցի պարիսպներից դեպի հարավ և արևմուտք, լայնատարած սարահարթով ձգվում է քաղաքը, որը զբաղեցնում էր մոտ 40 հեկտար տարածություն։ Այստեղ հիմնականում բնակվում էին դյուղացիները, զինվորականների ընտանիքները և արհեստավորները։

Կարմիր բլուրի պեղումների հարուստ նյութերը պատմում են Արարատուի բնակիչների բարքերի ու սովորությունների, կուլտուրայի, կենցաղի և ապրելակերպի մասին։ Պեղումների տեղամասերում հեշտությամբ կարելի է դիտել քաղաքի կյանքի վերջին դարերդական ժամերի հետքերը։ Այստեղ գտնված են տնային սպասեղենի բազմաթիվ առարկաներ, մետաղյա զենքեր, արտադրական գործիքներ, պերճանքի իրեր, կանացի զարդեր և այլն։ Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում 600-ից 1200 լիտր տարողությամբ հարյուրավոր գինու կարասները և գարեջուր պատրաստելու ամանները, թրծված կավից կարմրափայլ ու սևափայլ կժերը և շատ լավ պահպանված բրոնզյա գավաթները, մ. թ. ա. VIII դարի ուրարտական թագավորների բրոնզյա սաղավարտները, զրահներն ու վահանները։ Բացառիկ արժեք են ներկայացնում այստեղ գտնված ուրարտական սեպագիր տախտակները։ Պեղումների ժամանակ հայտնաբերված են նաև եգիպտական, ասորական, հնդկական և սկյութական ծագմամբ շատ առարկաներ, որոնք պերճախոս կերպով պատմում են ուրարտական պետության՝ հարևան պետությունների ու ժողովուրդների հետ ունեցած առևտրական լայն կապերի մասին։

Կարմիր բլուրից ոչ հեռու, Զանգվի աջ ափին շատ լավ պահպանվել է 2600 տարի առաջ Ռուսայի սորուկների ձեռքով՝ բազալտ քարի մեջ փորված ոռոգիչ ջրանցքը՝ թոնելով։ Ռուսայի ջրանցքի ծայրում գտնված է մեծ քարարձան 47 տող բնորոշ սեպագրերով, որոնք պատմում են Արգիշտիի որդի Ռուսա թագավորի կատարած շինարարական մեծ սխրագործությունների մասին։

Կարմիր բլուրից ոչ հեռու, ձիարշավարանի մոտ է գտնվում Հանրապետության գյուղատնտեսական ցուցահանդեսը, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում Երևանի արվարձաններում էքսկուրսիա կատարողների համար։

Երևանի արևելյան արվարձանները քաղաքի զեղատեսիլ անկյուններից են։ Նորքի բարձունքները ծածկող մրգատու այգիների, խաղողի վազերի և ջահել անտառաշերտերի վառվռուն կանաչների մեջ թաքնվել են բազմաթիվ առանձնատները, մանկական առանձնատները, Քանաքեռի ալյումինի գործարանի հանգստի տունը և այլն։ Այստեղ է գտնվում նաև կանաչի ծովով ողողված, դեկորատիվ ծառերով և գունագեղ ծաղկաշերտերով զարդարուն Երևանի տուրիստական բազան։

Երևանի տուրբազան սպասարկում է երեք երթուղիների՝ 61-րդ, 45-րդ և 62-րդ։ Առաջինն անցնում է Հայաստանով և Վրաստանով, երկրորդը՝ Ադրբեջանով, Հայաստանով, Վրաստանով, երրորդն ընդգրկում է Երևանի ու նրա շրջակայքի տեսարժան վայրերը, ինչպես նաև Էջմիածինն ու Սևանը։ Տեղում տուրբազան կազմակերպում է բովանդակալից էքսկուրսիաներ դեպի Երևանի և նրա շրջակայքի տեսարժան վայրերը։ Երևանի տուրբազան Հայաստանի տարբեր կետերում ունի իր ֆիլիալները, որոնք իրենց հերթին ունեն էքսկուրսիոն միջոցառումների լայն ծրագրեր։

Երևանի մոտերքում կան ևս երկու օբյեկտներ, որոնց այցելելու խորհուրդ ենք տալիս տուրիստներին։ Դրանք Կենդանաբանական և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական այգիներն են։ Երկուսն էլ տեղադրված են Ավանի խճուղու գծի վրա, որը սկիզբ է առնում Խ. Աբովյանի անվան պուրակից։ Կենդանաբանական այգին Խ. Աբովյանի պուրակից երկու կիլոմետրի վրա է։ Այն գրավում է մոտ 30 հեկտար տարածություն, որտեղ ջրային թռչունների համար կա ջրավազան, ինչպես նաև հայրենական կլիմայական պայմաններին համապատասխանորեն հարմարեցված արգելանոցներ բոլոր աշխարհամասերից բերված կենդանիների համար։

Ավանի խճուղով դեպի վեր, Կենդանաբանական այգուց երկու կիլոմետրի վրա տարածվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Բուսաբանական այգին, որն զբաղեցնում է մոտ 100 հեկտար տերիտորիա։ Այստեղ ներկայացված են աշխարհի շատ երկրների բուսականության տեսակները։

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ





## 1. ԵՐԵՎԱՆ—ԶՎԱՐԹՆՈՑ—ԷՋՄԻԱԾԻՆ

Երևանից ուղիղ դեպի արևմուտք՝ «Հաղթանակ» կամրջից այն կողմ, 20 կմ երկարությամբ ձգվում է ասֆալտապատ խճուղին, որը տանում է դեպի Էջմիածնի շրջանային կենտրոնը՝ Էջմիածին քաղաքը (հնում՝ Վաղարշապատ)։ Ճանապարհը դեպի Էջմիածին ձգվում է Արարատյան դաշտի ազատ տարածություններում մշակվող խաղողի և մրգատու այգիների խիտ զանգվածների միջով։ Ճանապարհի կողքերին երկու ուղիղ գծերով ձգվում է բրգաձև բարդիների կանոնավոր ցանկապատը, որը խճուղին վերածում է մի հսկա պարկի, գեղատեսիլ ծառուղու։ Կանաչ ծառերի կենդանի պատնեշի միջով երևում է, թե ինչպես հարավում իր հպարտ վեհությամբ հառնում են Արարատի կոնաձև գագաթները։ Իսկ հյուսիսում ջինջ երկնքի թավշակապույտ լազուրում շողշողում են Արագածի կապտավուն գագաթները։

Չհասած Էջմիածին, նրանից 3 կմ հեռավորության վրա, խճուղու ձախ կողմում գտնվում են հայկական ճարտարապետության լավագույն կոթողներից մեկի՝ Զվարթնոց տաճարի ավերակները։

Զվարթնոցի տաճարը հին հայկական ճարտարապետության ամենաբնորոշ հուշարձաններից է։ Նրանում իրենց վառ արտացոլումն են գտել այն նշանավոր դարաշրջանի կուլտուրական լավա-

գույն նվաճումները, երբ արաբների արշավանքի նախօրյակին Հայաստանում բուռն կերպով զարգանում էին գիտությունները, գրականությունն ու արվեստը։

Զվարթնոցի տաճարը կառուցել է հայկական կաթողիկոս Ներսես 3-րդ Շինարարը (641—661) 652 թ.։ Ներսես 3-րդի ժամանակակից հայ պատմագիր Սեբեոսը գրում է. «...Ներսեսը մտածեց իր համար բնակության վայր կառուցել սուրբ եկեղեցիների մոտ (նկատի է առնվում էջմիածինը—Ա. Ս.) Վաղարշապատ քաղաքում։ ...Հենց այստեղ էլ նա կառուցեց եկեղեցին հանուն երկնային արթոն ուժերի... եկեղեցին բարձր էր, զարմանալի հոյակապ, արժանի աստվածային ուժին, որին այն նվիրված էր»։

Եվ իրոք, այստեղ հավաքելով Հայաստանի լավագույն վարպետներին, Ներսեսն ստեղծել է ազգային տաճարաշինության ճարտարապետական բացառիկ ինքնատիպ մի կոթող, որը ո՛չ իր կոմպոզիցիոն մտահղացման խիզախությամբ, ո՛չ ճարտարապետական ձևերի հարստությամբ ու ճոխությամբ, ո՛չ էլ էմոցիոնալ ներգործման ուժով հավասարը մինչ այդ չի ունեցել։ Եվ զարմանալի չէ, որ բյուզանդական Կոնստանդին II կայսրը, որն այդ ժամանակ (652 թ.) քաղաքական հատուկ միսիայով եղել է Հայաստանում և անմիջական մասնակցություն ունեցել տաճարի օրհնության ծիսակատարությանը, վերադառնալով հայրենիք, Զվարթնոցը կառուցող ճարտարապետին հրամայել է իր հետ գնալ, որպեսզի նույնպիսի տաճարով զարդարի իր մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը։ Սակայն, հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացու վկայությամբ՝ վարպետը վախճանվում է ճանապարհին, և Կոնստանդին կայսրն ստիպված է լինում դառնությամբ հրաժարվել իր մտքից։

Սակայն երկար չի տևում համաշխարհային ճարտարապետության այդ սքանչելի կոթողներից մեկի կյանքը։ Տաճարը գոյություն ունեցավ մոտ 300 տարի և X դարում արդեն ավերակ էր դարձել։ Բայց Զվարթնոցի ճարտարապետական ոճն անհետ չկորավ, իր ազդեցությունը թողեց հայկական ճարտարապետության հետագա կառույցներում։

Էջմիածինը հայ լուսավորչական եկեղեցու կենտրոնն է։ Քաղաքը հիմնել է հայոց Վաղարշակ I (117—140 թթ.) թագավորը և այն անվանելով Վաղարշապատ՝ Հայաստանի մայրաքաղաք հռչակել։ 301 թվականին այստեղ կառուցվել է աշխարհում առաջին քրիստոնեական եկեղեցիներից մեկը՝ Էջմիածնի Մայր տաճարը։



Պատմական տեղեկություններն ասում են, որ եկեղեցին կառուցել են հայոց թագավոր Տրդատ III-ը (297—330 թթ.) և Գրիգոր Լուսավորիչը իրենց քանդած հեթանոսական հինավուրց շինության տեղում։ Էջմիածնի եկեղեցին քաղաքի ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններից մեկն է։ Նա դարերի ընթացքում մի քանի անգամ վերակառուցվել ու վերանորոգվել է։ Իսկ XVIII դարի սկզբին հայ նշանավոր նկարիչ Նաղաշ Հովնաթանը (1661—1722 թթ.) եկեղեցու ներսը զարդարել է գեղեցիկ որմնանկարներով, որոնք վերանորոգման ենթարկվեցին արդեն վերջերս՝ 1955 թվականին, երբ սկսվեց վանքի ու նրա շրջակայքի ընդհանուր վերանորոգման աշխատանքը։ Էջմիածնի տաճարին կից գործող պատմա-եկեղեցական բնույթի թանգարանը ունի հարուստ և արժեքավոր շատ էքսպոնատներ, որոնք արտացոլում են հայ ժողովրդի կիրառական և գեղանկարչական արվեստի բարձր կուլտուրայի մադարյան պատմությունը։

Էջմիածնում է ապրում Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայկական եկեղեցական նվիրապետության բարձրագույն հոգևոր դեմքը, Հայկական լուսավորչական եկեղեցու գլուխը։ Էջմիածինը Հայաստանի հնագույն կուլտուրական կենտրոններից մեկն է։ IV դ. սկզբին քրիստոնեության՝ Հայաստանում պետական, պաշտոնական կրոն հայտարարվելուց հետո, Էջմիածինը հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման պատմության մեջ ստանում է բացառիկ կարևոր նշանակություն։ Այստեղից էլ Գրիգոր Պահլավունին (հետագայում Լուսավորիչ) սկսել է Հայաստանում քրիստոնեություն տարածելու իր գործունեությունը։

Իր բեղմնավոր գործունեության մի որոշ շրջանն Էջմիածնում է անցկացրել հայ խոշոր գիտնական, V դարի լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցը (359—440 թթ.)՝ հայկական այժմյան գրերի ստեղծողը։ Էջմիածնի տաճարի հայտնի գրապահոցում դարերի ընթացքում հավաքվել և խնամքով պահվել են հազարավոր հինավուրց ձեռագրեր, որոնք հայ կուլտուրայի արժեքավորագույն գանձերն են։ 1771 թվականին Էջմիածնում ստեղծվեց Հայաստանում առաջին (բայց ոչ երբեք՝ առաջին հայկական, հայերեն լեզվով առաջին տպագիր գիրքը լույս է տեսել Վենետիկում 1512 թվականին, այն ժամանակ, երբ Եվրոպայում տպագրվում էին ընդամենը 8—10 լեզվով գրքեր) տպարանն ու քիչ հետո՝ թղթի ֆաբրիկան։ Վերջապես 1863 թվականին այստեղ կազմակերպվեց Էջմիածնի բարձրագույն հոգևոր դպրոցը՝ Գևորգյան ճեմարանը։

Ներկայումս էջմիածին քաղաքը հանրապետության տնտեսական և կուլտուրական կենտրոններից մեկն է։ Քաղաքի և նրա շրջակայքի գործարանների ու ֆաբրիկաների տված արտադրանքը կարևոր նշանակություն ունի բնակչության կարիքները ապահովելու համար։ Շրջանում գործում է կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանց։ Քաղաքում կազմակերպված է հայ նշանավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի (1864—1929 թթ.) տուն-թանգարանը։

Էջմիածնի ճանապարհի վրա էջմիածին քաղաքի ծայրամասում է գտնվում Հայաստանի մյուս նշանավոր վանքը՝ Հռիփսիմեի տաճարը։ Այն կառուցվել է 618 թվականին, Կոմիտաս կաթողիկոսի օրոք, 395 թվականին շինված հին զանգակատան տեղում։ Էջմիածնի շրջակայքում են գտնվում նաև Գայանե (կառուցված 630 թ.) ու Շողակաթ (կառուցված 1694 թ.) ճարտարապետական հուշարձանները, որոնց հետ ծանոթանալը այցելուի համար նույնպես հետաքրքրական կլինի։

## ա. Էջմիածին—Մեծամորի լիճ—Հոկտեմբերյան

Էջմիածնից 15 կիլոմետրի վրա, Հոկտեմբերյանի կիսաճանապարհին գտնվում է սակավաջուր Մեծամորի լիճը (նախկինում Այղր լիճ)։ Հարավային կողմից եղեգնուտով և ոչ մեծ անտառակով շրջապատված լիճը մի հարմար անկյուն է հանգստի, խնջույքների և էքսկուրսիաների համար։

Արագած լեռան հալոցքներից առաջացած բազմաթիվ ստորերկրյա աղբյուրները հանդիսանում են լճին ջուր մատակարարող միակ բազան։ Լիճը հիմնականում օգտագործվում է բարձրադիր հողերի ոռոգման համար։ Ջուրն այստեղից բարձրացվում է լայնարձակ սարահարթի վրա՝ ջրապոմպերի օգնությամբ, որոնք դրված են լճի հարավային ափին։

Լճի ափերի եղեգնուտներում բուծվում են կուղբեր, որոնք մեծ քանակությամբ դուրս են տարվում երկրի մի շարք բուծարանները։

Այստեղ, Արարատյան հովտում, Մեծամորի լճից ոչ հեռու մոտ ժամանակներս կկառուցվի Սովետական Միությունում առաջին ջերմակայանը, որը հնարավորություն կտա օգտագործել արևի էներգիան արդյունաբերական նպատակներով։

Հոկտեմբերյանի շրջանի գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը կարևոր տեղ են գրավում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ։ Շրջանի գյուղատնտեսությունը բազմատեսակ է, այստեղ յուրացված են շատ կիսաանապատային հողեր, որոնց վրա կազմակերպված են խոշոր սովխոզներ, կառուցված է Լենինի անվան մեծ ոռոգիչ ջրանցքը, որը ջուր է ստանում Արաքս գետից։ Խաղողագործությունը շրջանի գյուղատնտեսության կարեվոր ճյուղերից մեկն է։ Հոկտեմբերյանի շրջանին ընկնում է Հայաստանի մրգատու այգիների մեկ հինգերորդ մասը։ Տեխնիկական կուլտուրաների՝ բամբակի, ծխախոտի, խորդենու ցանքատարածությունները գրավում են այդ շրջանի բոլոր ցանքատարածությունների նշանակալից մասը։ Այստեղ կարևոր տեղ են տալիս նաև բանջարա-բոստանային կուլտուրաներին։ Անասնապահությունը ևս Հոկտեմբերյանի շրջանի գյուղատնտեսության հիմնական ճյուղերից մեկն է։ Հոկտեմբերյանի շրջանի շրջանային կենտրոնը Հոկտեմբերյան քաղաքն է՝ Սովետական Հայաստանի ամենաերիտասարդ քաղաքներից մեկը։ Տեղադրված լինելով Թբիլիսի—Երևան—Բաքու երկաթուղային ճանապարհի վրա, և խճուղային լայն ցանցով կապված լինելով հանրապետության մյուս շրջանների հետ, քաղաքն արագ կերպով աճում ու զարգանում է։ Քաղաքում կառուցված է Հայաստանի խոշորագույն պղպեղ-բանջարեղենի պահածոների գործարանը, որի արտադրանքն արտահանվում է Հայաստանի սահմաններից շատ հեռու։ Քաղաքի աչքի ընկնող ձեռնարկությունն է նաև բամբակաղտիչ գործարանը։ Այստեղ աշխատում է եթերայուղային գործարանը, որը խորդենուց եթերային յուղ է պատրաստում։ Հոկտեմբերյանում գործում են նաև խաղողի նախնական մշակման կետ և այլ ձեռնարկություններ։ Քաղաքի տնտեսության հետ զուգընթաց, զարգանում է նաև նրա շինարարությունը։ Հոկտեմբերյանում հանրակրթական հայկական ու ռուսական դպրոցներից բացի, գործում են նաև երաժշտական և սպորտային դպրոցներ, գյուղատնտեսության մեքենայացման ուսումնարան, շատ գրադարաններ, կինոթատրոններ, թատրոններ և այլ կուլտուր-լուսավորական հիմնարկներ։

## բ. Էջմիածին—Օշական—Աշտարակ

Էջմիածնից ճյուղավորվում են չորս բարեկարգ խճուղիներ։ Եթե ընտրենք հյուսիսային ճյուղը, ապա նա մեզ կբերի պատմական մի ոչ մեծ գյուղ՝ Օշական, ուր հանգչում է մեզ սրտեն ծանոթ, հայերեն գրերի նշանավոր ստեղծող Մեսրոպ Մաշտոցի աճյունը։

Օշականից հինգ կիլոմետրի վրա, Քասախ գետի ափին է գտնվում Աշտարակի շրջանային կենտրոնը՝ Աշտարակ գյուղը։ Աշտարակը Սովետական Հայաստանի հիանալի վայրերից է։ Դա վառ արևի ու զով գիշերների, հրաշալի մրգերի ու խաղողի փարթամ այգիների, հնագույն հուշարձանների և ժամանակակից սովետական գյուղի գեղեցիկ մի օրինակ է։ Եվ իզուր չէ ժողովուրդն Աշտարակն անվանում Հայաստանի մրգերի ու խաղողի այգի։ Այստեղ ամռան շոգից հոգնած ճամփորդին կհյուրասիրեն հյութեղ դեղձով ու զմրուխտափայլ խաղողով, քաղցրահամ ու հնամյա թունդ գինիներով։ Իսկ ինչպիսի՜ ուտեստներ են պատրաստում աշտարակցի կանայք խաղողի անմահական հյութից (դոշաբից) ու զանազան մրգերից... էլ չեմ խոսում Աշտարակի չոր մրգերի մասին։

Աշտարակում են ծնվել հայ ժողովրդի անվանի գրողներ Սմբատ Շահազիզն ու Պերճ Պռոշյանը, XIX դարի եկեղեցական ու քաղաքական հայտնի գործիչ Ներսես Աշտարակեցին։ Աշտարակը հայտնի է նաև իր բազմաթիվ ճարտարապետական կառույցներով։ Այստեղ հին հուշարձանների սիրահարը կգտնի և՛ բրոնզե դարաշրջանի շրջանաձև դասավորված պաշտամունքի քարեր, և՛ XVII դարի ինժեներական նշանավոր կառույցներ, ինչպես Քասախ գետի վրա գցված եռակամար նշանավոր կամուրջը և այլն։ Աշտարակի նորակառույցների մեջ փայլում է սակայն նոր կամուրջը, որը շատ ու շատ է դյուրացնում հրթիռներ գյուղի Աշտարակ։ Աշտարակի մեզ հասած ճարտարապետական հուշարձաններից հետաքրքրական է V դարի Միրանավոր եռանավ բազիլիկան, որի պատերի վրա կան որմնանկարների մնացորդներ, Կարմրավոր փոքրիկ եկեղեցին (զանգակատունը) խաչաձև կոմպոզիցիայով։ Նա VII դարի համար բնորոշ ճարտարապետական մանրամասնություններ և գրություններով ծածկված խաչքարեր ունի։

Լավ է պահպանվել նաև 1281 թ. կառուցված Մարիննե (կամ՝ Մարիամ) եկեղեցին, որը գտնվում է մի բլրակի վրա և հայկական ճարտարապետության համար բավականին անսովոր ուղղաձիգ վերընթաց կոմպոզիցիա ունի։ Մարիննեն աչքի է ընկնում իր սլացիկ ու շքեղ կառուցվածքով։ Պահպանվել և լավ երևում է եկեղեցու հարավային ճակատին փորագրված արևի ժամացույցը։

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Աշտարակում մեծ թվով պահպանված խաչքարերը (VIII դար), որոնք հուշագրային ճարտարապետության յուրատեսակ օրինակներ են։



## գ. Աշտարակ—Բյուրական—Արագած

Աշտարակից 11 կմ դեպի վեր՝ ծովի մակերևույթից 1580 մ բարձր, Արագածի ստորոտում գտնվում է Բյուրական ամառանոցային գյուղը։ Կայծկլտացող բյուրավոր աստղերով ցողված կապույտ երկնակամարը գիշերները կախվում է նիրհող երկրի վրա, օդը մաքուր է ու թափանցիկ, ինչպես Արագածի արծաթափայլ աղբյուրների հայելին։ Այստեղ է գտնվում ամբողջ աշխարհում հռչակված Հայկական ՍՍՌ ԳԱ Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանը (հիմնված է 1946 թ.)։ Աստղադիտարանում գիտական մեծ աշխատանք է վարում հայ գիտնականների կոլեկտիվը՝ Վ. Հ. Համբարձումյանի գլխավորությամբ։ Այստեղ կատարվում են աստղային ասոցիացիաների շատ հետաքրքիր դիտումներ։ Բյուրականի աստղադիտարանի նոր հայտնագործությունները գիտնականներին հնարավորություն են տալիս գտնելու աստղերի ծագման պրոբլեմը, լուծելու նոր ուղիներ և հաստատելու, որ մինչև այժմ էլ շարունակվում է նոր աստղերի կազմավորման անընդհատ պրոցեսը։

Բյուրականի շրջակայքում կարելի է դիտել նաև մի շարք հնադարյան հուշարձաններ։ Հետաքրքրական է, օրինակ, կիսավեր ձևով մեզ հասած VII դարի Արտավազիկ քարե եկեղեցին՝ ամբողջական զանգակատնով։

Բյուրականից կարելի է տուրիստական արշավի գնալ դեպի քառագագաթ Արագածի բարձունքները։ Ճանապարհն այստեղ անցնում է զանգրատերև կաղնուտի մոտ գտնվող Անտառուտ գյուղի միջով։ Բյուրականից 4 կմ վրա, Ամբերդ և Արկաշեն գետերի միջև բարձր ժայռի վրա խոժոռ բարձրանում է VII դարի մի մեծ ամրոց։ Կարմիր քարի ժայռաբեկորներից կառուցված ուղղաձիգ պատերը, աշտարակներն ու սպանդանոցները մինչև այժմ պահպանում են ամրոցի բնակիչների ու ռազմիկների՝ օտարերկրյա զավթիչների հետ ունեցած հերոսական մարտերի հետքերը։ Այստեղ հենց գտնվում է փառաբանված զորապետ Վահրամ Պահլավունու՝ 1026 թ. կառուցած եկեղեցին։ Ինը դար առաջ շինված եկեղեցին իր ձևերի խստությամբ ու չափավորությամբ, որ լավ ներդաշնակում է շրջապատի ժայռերի դաժան բնությանը, թողնում է շատ խոր տպավորություն։ Այս հուշարձանի գրեթե միակ դեկորատիվ մանրամասնը մուտքի վրայի կիսակլոր կամարն է, որը հենվում

վում է սրբատաշ փինջաձև սյուների վրա, իսկ գմբեթի պատերը կազմված են գեղեցիկ զույգ սյուներից։

Ամրոցից ոչ հեռու՝ հետաքրքրվող հայացքը կտիսնի քարից տաշված ձկնաձև արարածներ, այսպես կոչված «վիշապներ»՝ հին աստվածությունների, ջրի պաշտպանների քանդակները։

Ամբերդ և Արկաշեն գյուղերի կիրճերի երկարությամբ անվերջ վեր բարձրանալով, լեռնային կածանն այստեղից տանում է դեպի բարձրադիր Կարա-գյոլ լիճը։ Լիճը ճամփորդի զարմացած աչքերի առջև հայելու պես փայլատակում է հանկարծակի, անսպասելիորեն։ Ափերի մոտ՝ բյուրեղապակու պես թափանցիկ, իսկ մեջտեղում կապույտ-կապույտ լիճը վառ ապարանջանի մեջ հագցրված փիրուզի տպավորություն է թողնում։ Ծովի մակերևույթից 3195 մ բարձրության վրա այս հրաշալի լեռնագագաթի եզրին տարածվել է Հայկական ՍՍՌ ԳԱ Ֆիզիկայի ինստիտուտի մշտապես գործող բարձր լեռնային կայանը։

Այստեղ գիտնական-ֆիզիկոսների կոլեկտիվը, ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանյանի ղեկավարությամբ, վարում է հետաքրքիր աշխատանք՝ ավելի ու ավելի թափանցելով կոսմիկական ճառագայթների հյուսե մասնիկների գաղտնիքների մեջ, որոնց հետազոտման համար այստեղ տեղադրված են հսկա մագնիսներ։

Լճի հակառակ ափին կառուցված է Արագածի օդերևութաբանական կայանը։

Այստեղից հեռու չէ հրաբխի խառնարանը, որին ասես ժամապահների պես պահպանում են Արագածի չորս գագաթները։ Լճին ամենամոտ գագաթը հարավայինն է, որտեղից երևում է լեռնապարերի ու դաշտերի հսկայական պանորաման՝ Կովկասյան լեռնաշղթայից մինչև Արարատը, Սևանա լճից մինչև Սովետական Հայաստանի արևմտյան սահմանները։ Իսկ նայողի անմիջապես ոտքերի տակ խառնարանի լայն երախն է, որի մեջ գլխապտուցյուր բարձրությունից գահավիժում են հալվող ջրերի բազմաթիվ հեղեղները, որոնք այնուհետև կազմում են լեռնային կատաղի գետեր։



## ԵՐԵՎԱՆ—ԱՐԶՆԻ

Ե

րևան—Սևան խճուղու վրա տեղադրված է Կոտայքի շրջանի կենտրոն Քանաքեռը, որը համարվում է մայրաքաղաքի հյուսիսային արվարձանը։ Նախկին աննշան ու հետամնաց գյուղից Քանաքեռն այժմ աճել և դարձել է ռեսպուբլիկայի տնտեսական ու կուլտուրական նշանավոր կենտրոններից մեկը։ Այստեղ կառուցված են խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում ռեսպուբլիկայի հիդրոկայաններից մեկը՝ Քանաքեռգէսը, որը էներգիա է մատակարարում Երևանի ձեռնարկություններին՝ ալյումինի, էլեկտրալամպերի, գինու և լիմոնադի գործարաններին և կոշիկի ֆաբրիկային։

Սակայն Քանաքեռը ամեն հայի սրտին մոտ է նրանով, որ այստեղ ծնվել ու ապրել է XIX դարի առաջին կեսի մեծ լուսավորիչ ու դեմոկրատ, հայ նոր գրականության հիմնադիր, աշխարհաբար լեզվի առաջին նշանավոր պաշտպան, խոշոր մանկավարժ ու գիտնական Խաչատուր Աբովյանը։ Շատ մեծ են Աբովյանի՝ տաղանդավոր գրողի ու մեծ քաղաքացու ծառայությունները երախտապարտ հայ ժողովրդի առաջ։

Խաչատուր Աբովյանն իր ողջ կյանքը նվիրաբերել է հայ ժողովրդի ազատագրության ու լուսավորության գործին։ Իր ստեղծագործություններում նա հայ ժողովրդին ռուս ժողովրդի հետ

բարեկամանալու կոչ էր անում՝ դրանում տեսնելով պարսկական սարդարների բռնակալությունից ազատագրվելու միակ ելքը։

Հայ ժողովուրդը խորապես հարգում է իր հավատարիմ զավակի հիշատակը։ Քանաքեռում խնամքով պահպանվում են երկու փոքր սենյակներ, որտեղ ծնվել ու ապրել է Աբովյանը։ Տնային ապասեղենի փոքրաթիվ համեստ իրերը խոր կերպով հուզում են այցելուին, տեղափոխում նրան այն մութ ժամանակները, երբ նշանավոր հայրենասերը, ապրելով այս համեստ կացարանում, ստեղծագործում էր հարազատ ժողովրդի բարօրության համար։ Հենց այստեղ կազմակերպված է Խ. Աբովյանի թանգարանը։ Երկու հարմարավետ կահավորված սրահներ պատմում են լուսավորիչ-գրողի բուռն, անհանգիստ կյանքի և անխոնջ ու բազմակողմանի գործունեության մասին։ Այցելուն այստեղ մոտիկից կծանոթանա Խ. Աբովյանի գեղարվեստական ստեղծագործություններին և գիտական աշխատություններին։ Էքսպոնատների թվում են գրողի «Վերք Հայաստանի» նշանավոր վեպը և հայերի համար առաջին ռուսերեն քերականությունը։

Տուն-թանգարանի բակում, ոչ բարձր պատվանդանի վրա դրված է մեծ լուսավորչի քարի կիսանդրին (քանդակագործ՝ Արա Սարգսյան)։

Քանաքեռում գտնվում է Պատանի տուրիստի ռեսպուբլիկական բազան, որը ռեսպուբլիկայի շրջանային կենտրոններում ունի իր գավառագիտական կետերը, որոնք կազմակերպում են ավտոմոբիլային էքսկուրսիաներ դեպի Հայաստանի տարբեր քաղաքներն ու տեսարժան վայրերը, ինչպես նաև հետիոտն տուրիստական արշավներ տեղերում։ Մանկական տուրիստական բազայի ծառայություններից օգտվում են ոչ միայն Հայաստանի դպրոցականները, այլև երկրի այլ ռեսպուբլիկաներից այստեղ եկած պատանիներն ու աղջիկները։

Ճանապարհը Քանաքեռից շարունակվում է դեպի հյուսիս, դեպի Հրազդանի գեղատեսիլ ձորը, որտեղ գտնվում է Հայաստանի լավագույն առողջարան Արզնին։

Արզնի առողջարանը գտնվում է Երևանից հյուսիս 17 կմ վրա։ Արզնին տեղադրված է ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա, Հրազդան գետի խոր ձորում։

Երևան—Սևան խճուղով 15 կմ անցնելով էլար գյուղի երկաթուղային կայարանից այն կողմ՝ դուք կտրուկ շրջվում եք դեպի ձախ ու ձեր ճամփան շարունակում ավելի նեղ, բայց նույնպես



ասֆալտապատ խճուղով։ Ճանապարհի կողքերին երկու և չորս շարքով ձգվում են երիտասարդ ծառերի տնկիները, որոնց եռևում տարածվում են մրգատու և խաղողի այգիներն ու բանջարանոցները։

Երևանյան խճուղուց 6 կիլոմետրի վրա դեպի աջ կտրուկ շրջադարձը ձեզ անսպասելիորեն դուրս է բերում գլխապտուտ խոռոչի բուն։ Այնտեղ՝ ներքևում, ձեր ոտքերի տակ, կիրճի հատակին բաղալտյա ուղղաձիգ պատերի մեջ սեղմված որոտացող Հրազդանի երկու ափերին ծվարել են խիտ ծառուտների մեջ կորած քառակուսի տնակները։ Դա էլ հենց Արզնին է, Սովետական Միության լավագույն առողջարաններից մեկը։

Կլիման այստեղ բարեխառն է, ձմեռը համեմատաբար ցուրտ է, ամառը՝ չափավոր տաք։ Տեղանքին բնորոշ է արևային օրերի մեծ քանակ և արևային բարձր ճառագայթում (ռադիացիա)։ Տարվա ամենալավ ժամանակն այստեղ համարվում է ամառվա վերջը և գեղեցիկ ու երկարատև աշունը։

Արզնիի հանքաջրերի բուժիչ հատկությունները հայտնի էին դեռևս շատ հարյուրամյակներ առաջ։ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումից հետո այս հանքաղբյուրները գրավեցին ցարական կառավարության ուշադրությունը։ Արզնիի ջրերի առաջին քիմիական անալիզը կատարվել է 1828 թ., գեներալ Պասկևիչի կարգադրությամբ։

Սակայն Արզնի առողջարանը պաշտոնապես սկսել է գործել միայն 100 տարի հետո, Սովետական իշխանության օրոք, 1925 թվականից։

Արզնիի աղբյուրների հանքային ջրերը պատկանում են ածխաթթվա-գլաուբերային աղահողային ջրերի տիպին։ Դրանք մոտենում են Գերմանիայի Նաուգեմյան և Վիսբադենի նշանավոր աղբյուրներին, իսկ գազային կազմով մոտենում են Կիսլովոդսկի նարզանին։ Մնացած բաղադրիչներով Արզնի կուրորտի ջրախումբը հիշեցնում է № 17 էսենտուկիին։

Արզնին գլխավորապես առաջ է քաշվում որպես սրտանոթային և ստամոքսա-աղիքային հիվանդությունների բուժարան։

Առողջարանը գործում է կլոր տարին։

Այստեղ՝ հենց Հրազդանի կիրճում, կառուցված է գազամշակման գործարան, որտեղ խմելու հանքային ջուրը լցվում է շշերի մեջ, իսկ ազատվող բնական ածխաթթու գազը խտացվում է և

օգտագործվում ժողովրդական տնտեսության մեջ ոչ միայն Հայաստանում, այլ նաև նրա սահմաններից դուրս։

Այստեղից ոչ հեռու աշխատում է շշերի գործարանը։ Գործարանն աշխատում է տեղական հումքով՝ բնական ապակու (օբսիդիանի), պեմզայի, հրաբխային մոխրի հարուստ հանքակուտակումներով։

Առուջարանի մոտերքում գտնվում է Արզնիգէսը՝ Սևան-Հրազդան կասկադի խոշոր հանգույցներից մեկը։





## ԵՐԵՎԱՆ—ԾԱՂԿԱԶՈՐ

Ծաղկաձորը Հայաստանի հրաշագեղ անկյուններից մեկն է, որը գտնվում է Երևանից 47 կմ վրա։

Երեք կողմից Ծաղկունյաց լեռներով շրջապատված այդ ամառանոցը տեղավորված է ծովի մակերևույթից 1810 մ բարձրության վրա, գեղեցիկ մի անտառահովտում։ Լեռնային ուրախ գետակը, ծաղիկների բուրմունքով ներծծված թափանցիկ օդը, սոճերախիտ անտառը, գետնի տակից դուրս ժայթքող «թթու ջրի» աղբյուրները, որոնք հագեցված են բնական գազով, այս ամենը Ծաղկաձորը դարձնում են հանգստի և զվարճանքի մի հիանալի վայր։

Ծաղկաձորում տեղավորված են ՀԱՄԿԱ-ի հանգստյան տները, Հայաստանի նկարիչների միության ստեղծագործական տունը, Գրողների միության հանգստի տունը և այլն։ Այստեղ ամեն տարի կազմակերպվում են սիմֆոնիական ճամբարներ, որտեղ հազարավոր տղաներ ու աղջիկներ անց են կացնում իրենց ամառային հանգիստը։

Ծաղկաձորի հնություններից մեջ փայլուն տեղ է գրավում XI դարի հայ ճարտարապետության լավագույն կոթողներից մեկը՝ Կեչառիսի վանքը։

Ծաղկաձորից կարելի է էքսկուրսիայի գնալ դեպի Թեղենիս լեռան (ծովի մակերևույթից 2821 մ բարձր) գագաթները, որտեղից երևում է Հայաստանի տարածությունների դեղատեսիլ համայնապատկերը (պանորաման)։



## ԵՐԵՎԱՆ—ԳԱՌՆԻ—ԳԵՂԱՐԴ



Ավազան փողոցի ծայրից, Աբովյանի ծաղկազարդ փոքրիկ հրապարակից, Գետառի կանաչապատ ափերով դեպի հյուսիս է ձգվում մի ասֆալտապատ խճուղի, որը Երևանը միացնում է Սևանին։ Երբ առավոտյան՝ քաղաքի հարավային ծայրամասերը լուսավորվում են արեգակի առաջին շողերով, ճանապարհի այն մասը, որն Աբովյանի հրապարակից սկսած՝ համարյա անմիջապես սուզվում է Ավանի՝ այգիներով, մրգատու ծառերով, ծաղկանոցներով ու բանջարանոցներով հարուստ ձորի մեջ, դեռևս շնչում է գիշերային զովությամբ։ Ուղևորը, մանավանդ եթե նա առաջին անգամ է անցնում այդտեղով, անմիջապես կլանվում է Ավանի ձորի գեղեցկություններով. ձորի երկու կողմերում, իրար հետ մրցելով, վեր են խոյանում Նորքի և Քանաքեռի բարձրությունները։ Նրանք այնքան են իրար մոտեցած, որ Գետառի ընթացքի համար գրեթե տեղ չեն թողնում։ Բնական այդ ժայռերը դարեր շարունակ կաշկանդել են լեռնային խենթ գետակին։ Ամառամեջ-նան սրընթաց կերպով անցնելով երկաթուղու բազմակամար կամրջի տակով, մի քանի րոպե հետո իր եռեռում է թողնում Երևանի գազանանոցի ու բուսաբանական այգու գեղեցիկ պանորամաները, թեքվում է դեպի աջ և հինավուրց Ավան գյուղի միջով ուղղվում դեպի Գառնի։

Ավանը Հայաստանի ամենահին բնակավայրերից և երբեմնի

կուլտուրական ու կրոնական կենտրոններից մեկն է եղել։ VI դարի վերջերին, երբ Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև, Ավան գյուղաքաղաքն ընկավ բյուզանդական մասը, որտեղ և ստեղծվեց առանձին հայկական կաթողիկոսություն։ Ահա այդ ժամանակվանից էլ Ավանի դերն սկսում է բարձրանալ, գյուղում կառուցվում են նոր շենքեր ու եկեղեցիներ, որոնք համարվում են հայ հին ճարտարապետության լավագույն ու արժեքավոր կոթողները։ Այցելուի ուշադրությունը կգրավի, անշուշտ, Ավանի եկեղեցին, որը կառուցել է Հովհան Բագարանցի (590—611 թթ.) կաթողիկոսը։ Այս եկեղեցին, որն այժմ կիսաքանդված վիճակում է գտնվում, աչքի է ընկնում ինչպես իր մեծությամբ, այնպես էլ կառուցման ձևով։ Եկեղեցին ունեցել է խաչաձև հատակագիծ և հինգ գմբեթներ, որոնցից մեծը կենտրոնում, իսկ մյուս չորս փոքրերը՝ անկյուններում։ Այս եկեղեցին ընդհանուր առմամբ կառուցված է էջմիածնի Մայր տաճարի նմանությամբ։ Ավանի եկեղեցին համարվում է Հայաստանում եղած գմբեթավոր եկեղեցիներից ամենահինը։ Հետաքրքիր է դիտել նաև գյուղի հին գերեզմանատունը, որտեղ կան բազմաթիվ քանդակազարդ դամբանաքարեր ու խաչքարեր, ինչպես նաև գյուղի շրջակայքում եղած հուշարձանները։

Սովետական իշխանության հաստատումից հետո, և հատկապես վերջին մեկ ու կես տարվա ընթացքում, Ավանը հիմնովին վերափոխվել է։ Հին ու խարխուլ հողե տանիքներով տնակների փոխարեն, գյուղի տարբեր մասերում կառուցվել ու կառուցվում են միհարկ ու երկհարկանի բազմաթիվ ու գեղեցիկ առանձնատներ՝ իրենց ինքնատիպ ու հմայիչ ճարտարապետական ոճով։ Վերջին տարիներս մեր երկրաբանների մեղվաջան աշխատանքի շնորհիվ Ավանում և նրա շրջակայքում հայտնաբերվեցին քարաղի ստորերկրյա հսկայական պաշարներ։ Ավանի քարաղի ավազանը գյուղի զարգացման լայն ու լուսավոր ապագա է խոստանում։ Արդեն գյուղի շուրջը վեր են բարձրացել բազմաթիվ ու բազմահարկ բնակելի ու հասարակական գեղեցիկ շենքեր։ Մոտ ապագայում մեր երկիրը կստանա Ավանի լավորակ աղը։ Ավանից հետո, ասֆալտապատ գեղեցիկ ճանապարհն անցնելով էլի մի քանի գյուղերի միջով, շուտով ձեզ հասցնում է Գառնի։

Գառնին, որը հնում մտնում էր Այրարատ աշխարհի Մաղաղ գավառի մեջ, Արշակունի թագավորների ու հայ ազնվականների սիրած ամառանոցն ու անառիկ բերդերից մեկն էր։ Այժմ Սովետական Հայաստանի Կոտայքի շրջանի մարդաշատ, հարուստ ու գեղեցիկ բնակավայրերից է համարվում Գառնին, որն աչքի է ընկնում հին ու միջնադարյան հայկական ճարտարապետական կոթողների ու հնությունների բազմազանությամբ։ Մինչև այժմ էլ Արտաշատյան դաշտի բնակավայրերի մի զգալի մասը իր խմելու ջուրը ստանում է Գառնիից, իսկ Արտաշատի շրջանի այգիներն ու ցանքատարածությունները ոռոգվում են Գառնիի մոտակայքից սկիզբ առնող Ազատ գետով։

Գառնին մինչև 1940-ական թվականները հայտնի էր իր բերդով և Տրդատի կառուցած տաճարով։ Սակայն 1949 թվականից՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից ձեռնարկված սիստեմատիկ պեղումները պարզեցին, որ Գառնին ու նրա տերիտորիան բնակելի են եղել դեռ շատ խոր անցյալում։ Այստեղ հայտնաբերված մեծ քանակությամբ քարե, օբսիդիանե, ոսկրյա, պղնձյա ու երկաթյա զենքերը, արտադրության գործիքներն ու զարդերը, ապա նաև կարմիր ու սև կերամիկայի կժերն ու սափորները, տարբեր գույների ապակյա նուրբ սրվակները, ոսկուց և այլ մետաղներից պատրաստված զարդերը ցույց են տալիս, որ կուլտուրական կյանքը Գառնիում զարգացած է եղել դեռևս էնեոլիթի շրջանից սկսած, որ Գառնիի հին բնակիչները իրենց ժամանակ ոչ միայն առևտրական ու կուլտուրական սերտ կապերի մեջ են եղել հարևան ու հեռավոր երկրների հետ, այլ իրենք հմտացած էին արհեստների մի քանի ճյուղերի մեջ, դրանք հասցնելով արտակարգ հմտության ու նրբության։ Գտնված իրերի բազմազանությունը վկայում է այն մասին, որ էնեոլիթի մարդը Գառնիում զբաղվել է երկրագործությամբ, անասնապահությամբ ու որսորդությամբ։ Հետագա դարերում հայերը բարձր գնահատելով Գառնիի բնականից անառիկ դիրքն ու բարենպաստ կլիման, շարունակել են ամրացնել այն ու խտացնել նրա բնակիչների շարքերը։

Գառնիի բերդն առաջին անգամ հիշատակում է Վաղ կայսրության շրջանի հռոմեական նշանավոր պատմիչ Տակիտոս Կոռնելիուսը (I—II դդ.), մեր դարաշրջանի 51—52 թվականների՝ Հայաստանի համար քաղաքական խառը շրջանի դեպքերի առնչությամբ։ Մեր դարաշրջանի I դարի 70-ական թվականներին Հայոց թագավոր Տրդատ I-ը Գառնիի բերդն ամրացրեց ու հարստացրեց նոր կառուցումներով ու շինություններով, այն դարձնելով Արշակունյաց Հայաստանի անառիկ ու խոշոր բերդերից մեկը,

որտեղ նատում էր արքայական ուժեղ կայազորը։ Տրդատ I-ի այս խոշոր շինարարական աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին, որին լրացնում է՝ Գառնիում հայտնաբերված՝ Տրդատի հունարեն լեզվով արձանագրությունը։

Գառնիի բերդի ավերակները գտնվում են գյուղի հարավային ծայրում մի հռանկյունաձև տափարակ հարթության վրա, որը բռնում է մոտ երեք հեկտար տարածություն։ Բերդի երկու կողմերը եզրում են Ազատ գետի անդնդախոր ձորերը, որոնց գրեթե ուղղաձիգ, ժայռոտ կողերը անմատչելի էին դարձնում ամրոցը բոլոր տեսակի հարձակումների ժամանակ։ Բերդը այդ ձորերից հաշված՝ գտնվում է մոտ 500 մետր բարձրության վրա։ Գառնիի բերդի հարավ և հարավ-արևելյան մասերն ամրացված են ամրակուռ պարիսպներով, որոնց բարձրությունը իր ժամանակին հասել է մոտ 25 մետրի։ Բերդի միակ մուտքը, որը գտնվում էր այդ պարիսպների միջև, ամրացված է եղել երկու խոշոր ու անառիկ աշտարակներով, որոնք պարսպաշարքի վրա եղած նույնպիսի աշտարակների հետ միասին ամրոցին տվել են ավելի անառիկ ու անմատչելի կերպարանք։ Ճարտարապետական և ռազմական տեսակետից Գառնիի բերդը եզակիներից մեկն է Հայաստանում։ Նրա պարիսպները շարված են երբեմն 5—6 տոննա ծանրություն ունեցող խոշոր բազալտյա քարերով, որոնք հայ վարպետների ու բանվորների ձեռքի տակ այնպես են հղկվել ու մշակվել, որ առանց շաղախի շարված վիճակում նրանց միջև գրեթե արանք չի մնացել։ Այդ քարերը ավելի անշարժ ու ամուր դարձնելու համար, իրար են միացվել հատուկ երկաթյա գամերով, որոնք հագցվել են քարերից յուրաքանչյուրի մեջ և ամրացվել արճճի հալոցքով։ Ուսումնասիրությունները պարզում են, որ բերդը կառուցված է եղել դեռևս մեր դարաշրջանից առաջ III դարում, որից հետո, ժամանակ առ ժամանակ ավերվելով, ենթարկվել է վերանորոգման ու վերաշինման։ Ավերումներից հետո, գյուղի բնակիչները նրա քարերը օգտագործել են շինարարական և այլ նպատակների համար։ Պարսիկների ու արաբների կողմից բերդը ավերվելուց հետո, կրկին վերականգնվում է IX դարում, Բագրատունիների թագավորության ժամանակ ու դարձվում խոշոր զորակայան։ XIII դարում Գառնիի բերդը դառնում է Զաքարյանների նշանավոր ամրությունը, իսկ XV—XVII դարում նա որպես այդպիսին կորցնում է իր նշանակությունը և շարքից դուրս գալիս։



Եթե Գառնիի բերդի պարիսպներն ու աշտարակները վկայում են ռազմական արվեստի բարձր զարգացումը Հին Հայաստանում, ապա բերդի ձորաբերանին մոտ տարածության վրա երբեմնի կանգուն, իսկ այժմ ավերակ հեթանոսական տաճարը՝ որպես արվեստի կոթող եզակի է ամբողջ Հայաստանում։ Տաճարը կառուցվել է մեր թվականության 70-ական թվականներին Տրդատ I-ի նախաձեռնությամբ ու նվիրվել է թագավորի քրոջ՝ Խոսրովիդուխտի հիշատակին։ Տաճարը կառուցվել է հին հայկական ճարտարապետական ոճի ու հունա-հռոմեական կառուցողական արվեստի նուրբ ու ճաշակավոր միահյուսմամբ։ Շենքը բարձրանում է երկաստիճան պատվանդանի վրա, որը նրան տալիս է ավելի մեծ վեհություն ու հանդիսավորություն։ Շենքի ճակատային մասի ամբողջ երկարությամբ շարված քարե աստիճանները առաջնորդում են դեպի նրա միակ մուտքը, որը բացվում է մի հատուկ սրահակի մեջ, որն առանձին դռնով միացած է եղել տաճարի ներսի մասի հետ։ Տաճարը պատվանդանի վրա շրջապատված է եղել 24 բազալտյա հաստ ու բարձր սյուներով, որոնք իրենց վերին մասերում ունեցած խոյակների օգնությամբ պահել են կտուրի ծածկը։ Շենքի հատկապես պատվանդանային մասերը ամրացված են կրաշաղախով և երկաթյա գամերով, արճճի օգնությամբ։ Տաճարի կառուցողները իրենց ժամանակին հաղթահարելով տեխնիկական խոշոր դժվարություններ ու գործադրելով հայկական ճարտարապետական արվեստի դարավոր փորձը, կերտել են մի այնպիսի հուշարձան, որը այժմ էլ զարմանք է պատճառում դիտողին։ Ամբողջ կառուցումը կատարվել է խոշոր մեծության բազալտյա քարերի միջոցով, որոնցից ամենամեծը կշռում է մոտավորապես 5 տոննա։ Այժմ Գառնիի հեթանոսական տաճարի միայն պատվանդանային մասն է կանգուն, շենքի մյուս մասերը փլված են, իսկ նրա քարերը հազարյա նույնությամբ թափված են գետնին։

Գառնիի հեթանոսական տաճարի խոյակները և կառնիզները զարմանալի վարպետությամբ ու հմտությամբ զարդարված են բուսական օրնամենտներով և բավականին ընդգծված խորաքանդակներով։

Գառնի գյուղից 3—4 կիլոմետր դեպի հյուսիս, Ազատ գետի ձախափնյա մացառներով ու թփերով ծածկված մի դեղատեսիլ բլրի վրա գտնվում է XI դարի հայկական վանքերից մեկը՝ Հավուց-Թառը, որը երբեմն կոչվել է նաև Հայոց-Թառ։ Վանքի շրջակայքում նշմարելի են գյուղի ավերակների հետքեր։ XI դարի սկզբներին

նշանավոր հայ փիլիսոփա և բանաստեղծ Գրիգոր Մագիստրոս Պահլավունի իշխանը այն նորոգում և շենացնում է որպես հոգևոր հաստատություն: Վանքի հատուկ օթևաններում ապրել են նրա միաբանության անդամները, վանքի շինությունը և օժանդակ կառուցվածքները խիտ քայքայված ու քանդված են, նրա շրջակայքում և շինքի կանգուն մասերի վրա պահպանվել են տարբեր ժամանակներում գրված արձանագրություններ, որոնք խոսում են շենքի վերակառուցման և նրան վերաբերող այլ հարցերի մասին: Հավուց-Թառի վանքը ընդմիջումներով իր գոյությունը պահպանել է հավանաբար մինչև XVIII դարը:

Հավուց-Թառից հյուսիս, Ազատ գետի ակունքներում, ինչպես նաև Գեղամա լեռների վրա գիտնականների ուշադրությունը գրավել են 20-ից ավելի ահագին մեծության քարակոթողներ, որոնց հիմնականում տրված է ձկան կերպարանք: Տեղացիները, որոնց վաղուց է ծանոթ եղել այդ քարակոթողների գոյությունը, նրանց կոչել են վիշապներ, որպիսիք ժողովրդի մեջ հին ժամանակներում պատկերացվել են ձկների կերպարանքով: Այս քարակոթողներից ամենամեծն ունի 5 մետր երկարություն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս տոհմատիրական ժամանակներից սկսած՝ Հայաստանի նախաբնիկները, որպես հողագործներ, մեծ նշանակություն են տվել ջրին ու ստեղծած են եղել արհեստական ջրառատման սիստեմներ: Եվ ահա տոհմատիրական շրջանում մարդը խորը չափով կախված լինելով ջրից, հարկադրված է եղել պաշտել այն ու իր համար ստեղծել ջրի աստվածություններ: Հենց այդպիսիք են այսպես կոչվող վիշապները, որոնք դրվել ու պաշտվել են Գեղամա լեռների ստորոտներում, որտեղից սառնորակ ջուր էր ստանում ամառվա շոգ օրերին Արարատյան դաշտի բնակիչների մեծ մասը:

Ջրի պաշտամունքի հետ է կապված նաև Այրի վանքի գոյությունը, որը XIII դարից սկսած կոչվում է նաև Գեղարդա վանք:

Ոլորապտույտ ճանապարհը, որը Գառնի գյուղից տանում է դեպի հյուսիս, ասֆալտապատ է, սակայն ունի բազմաթիվ վերելքներ ու վայրէջքներ: Անցորդը, որը առաջին անգամն է լինում այդտեղ, սկզբում հիասթափվում է և՛ ճանապարհից, և՛ նրա շրջակայքի համարյա լերկ բլուրներից ու ժայռերից և հետագրգրությունից զրկված իր հայացքն ուղղում է մերթ դեպի հարավ՝ Գառնիի պանորաման, մերթ դեպի դիմացի բլուրի վրա ցցված Հավուց-Թառի մենավոր ավերակներն ու Գեղամա լեռների կանաչին տվող



փեշերը: Սակայն այդ երկար չի տևում: Ավտոմեքենան հաղթահարելով 10—12 կիլոմետրանոց լեռնային ճանապարհը, թեքվում է դեպի վերջին ոլորապտույտը: Եվ ահա մարդու աչքերի առաջ միանգամայն անսպասելիորեն բացվում է մի հիասքանչ տեսարան: Այստեղ՝ Գեղամա լեռների հարավային ստորոտներում, բնությունը զարդարեր առաջ կերտել է թփուտներով, կանաչով ու ծառերով զարդարված մի գողտրիկ ձորակ, որտեղից հոսող լեռնային բազմաշաղրությունը, որից անշուշտ չի վրիպում ձախակողմյան բարձրաբերձ և ուղղահայաց ժայռը իր մեծ ու փոքր քարայրներով, որոնք մի ժամանակ նախամարդու ապաստարաններն էին և լեռների կանաչ, ծաղկազարդ փեշերն ու նրանց բարձրունքների վրա ամառվա շոգին տեղ-տեղ սպիտակին տվող ձյան արծաթափայլ շերտերը: Այս բնական գեղեցկությունների հանգույցն է կազմում ծառերի ու օժանդակ շենքերի միջից հազիվ երևացող հայկական միջնադարյան արվեստի գլուխ-գործոցներից մեկը՝ Գեղարդա կամ Այրի վանքի ճարտարապետական անսամբլը: Գեղարդ հայերեն նշանակում է նիզակ: Քրիստոնեական ավանդությունն ասում է, որ իբր այստեղ է պահվել այն նիզակը, որով խոցել են Քրիստոսի կողը, և դրա համար էլ վանքը կոչվել է Գեղարդա վանք: Իսկ Այրի վանք է կոչվել այն պատճառով, որ վանքի շինքերը հին ու միջին դարերում մեծ մասամբ կառուցված են եղել բնական այրերի՝ քարայրների մեջ:

Գեղարդա վանքի հիմնադրման ճշգրիտ թվականը հայտնի չէ: Նրա հին շենքերի մնացորդներից քիչ հետքեր են մնացել: Այժմ պահպանված վանքի ճարտարապետական կոմպլեքսը կառուցվել է հիմնականում XIII դարի Խաղբակյան Պռոշ իշխանի նախաձեռնությամբ ու միջոցներով: Վանքի ամբողջ կառուցվածքը չորս կողմից շրջապատված է եղել բարձր ու ամուր պարիսպներով: Անսամբլի գլխավոր շենքերից է 1215 թվականին Զաքարե և Իվանե Զաքարյանների կողմից կառուցված խաչաձև հատակագիծ ունեցող եկեղեցին: Այս շենքն ամբողջապես կոթնած է ժայռին և միայն շատ մոտիկից կարելի է տեսնել այն իր ողջ գեղեցկությամբ: Շենքի չորս անկյուններում կան երկհարկանի խորաններ, իսկ բարձր ու գեղեցիկ գմբեթը նստած է ութ կամարների վրա, որոնցից յուրաքանչյուրի մեջ բացված մի-մի նեղ լուսամուտները ծառայում են որպես լույսի աղբյուր: Գմբեթակիր քարե սյուների

խոյակները պատկերացնում են կախված դիրք ունեցող գինու և ջրի պուլիկներ: Եկեղեցին ունի երկու դուռ: Նրա հարավային մուտքի շուրջը, գրսի կողմից ամբողջապես քանդակազարդված է նռան և խաղողի օրնամենտներով և ունի արտակարգ գեղեցկություն: Այս դռան վերևի մասում դրված է աույծի մի բարձրաքանդակ, որը շեշտակիորեն հարձակվել է ցուլի վրա: Գլխավոր եկեղեցին թեև կառուցվել է XIII դարում, սակայն նրա ճարտարապետը մեծ չափով և հարազատորեն օգտագործել է IX—XI դարերի հայկական ճարտարապետության սկզբունքները, որն էլ ավելի է բարձրացնում շենքի արժեքը:

Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում եկեղեցու արևմտյան կողմում գտնվող հսկայական գավիթ-ժամատունը, որը կառուցել է Պռոշ իշխանը 1283 թվականին: Այս շինությունը կենտրոնական մասում ունի չորս գեղեցիկ որմնասյուներ, որոնց վրա են իջնում առաստաղը պահող գեղեցիկ կամարները: Գավթի առաստաղի վրա կառուցողները թողել են մի բավականին լայն անցք լույսի ու թարմ օդի համար: Այն հիշեցնում է հայկական երդիկը: Նրա շուրջը նախշված է նուրբ ու գեղեցիկ քանդակներով: Այս շենքի ներսի մասը զարդարված է խորաններով ու զույնզգույն նրբերանգ քարերով: Ժամատան ներսում դրված են XIII—XIV դարերի երկու խաչքարեր: Այս կարգի գավիթ-ժամատները Հայաստանում մասսայաբար սկսել են կառուցվել XII—XIII դարերից և նրանք ծառայել են հավանաբար ոչ այնքան կրոնական, որքան աշխարհիկ նպատակների համար: Այստեղ տեղի էին ունենում հավաքույթներ, կարևոր խորհրդակցություններ, դատավարություններ, ժողովներ և այլն: Երբեմն էլ գավիթները ձեռագրատան և գրիչների ու գիտնականների պարապմունքների սենյակների դեր էին կատարում:

Գեղարդի վանքի ճարտարապետական կոմպլեքսը, սակայն, հռչակված է իր մյուս շինություններով, որոնք ամբողջապես փորված են ժայռերի հսկայական քարաբեկորների մեջ: Այս շինությունները դրսից միանգամայն աննկատելի են և միայն ներսում են նրանք հոյակապ ու աննկրկնելի: Մարդ մի պահ ապշում է ճարտարապետի հանճարեղ մտահղացման և կառուցող վարպետների համառության, համբերության ու հետևողական աշխատանքի վրա: Ենթադրում են, որ այս տաճարի տեղում հին ժամանակներում եղել է բնական այր, որտեղից բխող աղբյուրը ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում համարվել է «սրբազան»:



Հուշարձանի ներսում կերտված ութ սյուների վրա հենվում է գմբեթի մասը, իսկ սյուները միանում են կամարներով, որոնք իրար խաչաձևում են, առաջացնելով միայն ճարտարապետ Գալձաքի ճաշակին հատուկ անչափ գեղեցիկ մի պատկեր: Վիմափոր այս տաճարի պատերի վրա կան վագրի, արծվի և առասպելական կենդանիների զարդաքանդակներ ու արձանագրություններ: Օրվա մեծ մասը տաճարի ներսում տիրում է կիսախավարը: Եվ միայն օրվա կեսին, երբ արեգակը բարձրանում է գենիթ, շենքի վերևի մասից ներս թափանցող լույսի շիթերը անմիջապես փոխում են պատկերը: Այդ ժամանակ լույսի և սուլերի օրենքով սյուները, կամարներն ու քանդակները կենդանանում և ավելի շքեղ ու հոյակապ են դառնում, իսկ պատերին եղած կենդանիների սիլուետները կարծեք կյանք են առնում ու շարժվում: Եվ երբ կարճատև լույսը կրկին անցնում է, առջևում գծագրվում է մի դուռ, որն առաջնորդում է ձեզ դեպի երկրորդ վիմափոր եկեղեցին:

Այս եկեղեցին, որն անվանված է ս. Աստվածածին, համարվում է Գեղարդի վիմափոր շինվածքներից ամենաշքեղն ու հոյակապը: Նա նույնպես կառուցվել է Պռոշ իշխանի ժամանակ: Ս. Աստվածածինը բուն եկեղեցուց բացի ունի նաև գավիթ: Գավիթ մտնելուն պես, մարդու ուշադրությունը ակամայից բևեռվում է դիմացի պատի քանդակների վրա, որոնք կատարված են արտակարգ ճաշակով: Այդ բարձրաքանդակը պատկերում է երկու շղթայված աույծների, որոնց սանձահարում է եզան գլուխը՝ իր բերանում ունենալով նրանց շղթան: Աույծներից ներքև երևում է թևատարած արծիվը՝ գառը ճանկերի մեջ: Գավթին կից եկեղեցին 8 մետր 40 սմ երկարությամբ և 6 մետր 70 սմ լայնությամբ ունի ներքին գմբեթ, որը գեղեցիկ կամարներով բաժանված է 12 մասի: Գմբեթը, կարնիզները և ներսի բոլոր բաց տեղերը զարդաքանդակված են բուսական և երկրաչափական նախշերով, որոնց մեջ իր պատվավոր տեղն է գրավում նուռը: Բուն եկեղեցին առաջին հայացքից թվում է դրսի աշխարհից խիստ մեկուսացված մի ընդան: Առաջին երկյուղալի րոպեների ազդեցությունը անմիջապես կորչում է, երբ գմբեթի լուսամուտից թափանցող լույսի ազդեցությամբ սկսում ես զրուցել կողքինիդ հետ. և ի՞նչ, շենքի անզուգական ակուստիկական հատկությունները անմիջապես թնդացնում են քո խոսքը նրա կամարների ու գմբեթի տակ: Այստեղ է հենց կայանում կառուցող ճարտարապետի հանճարը: Մռայլ տպավորությունդ իսկույն փոփոխվում է հիացմունքի, և դու մի վայրկյան պատկե-

բացնում ես քեզ XIII դարը ու տեսնում, թե ինչպես տաճարի հոյակապ կամարների տակ կանգնած երգչախումբը թնդացնում է հայոց երգն ու երաժշտությունը։ Դու սթափվում ես միայն այն ժամանակ, երբ մի պահ կարծում ես, թե Կոմիտասն է կարկաչում քեզ այնքան հուզող «Անտունին»։

Գեղարդի վիմափոր շինությունների և ընդհանրապես հայկական վիմափոր արվեստի ամենամեծ կառուցումը Պռոշի որդի Պապակի և վերջինիս կնոջ՝ Ռուզուքանի նախաձեռնությամբ 1288 թվականին կառուցված տապանատունն է։ Մեծ գավթին կից 9 մ 65 սմ երկարությամբ և 2 մ 85 սմ լայնությամբ վիմափոր միջանցքի վերջից մի դուռ բացվում է դեպի Պապակի ու նրա կնոջ տապանատունը։ Այս շենքը թեև իր ճարտարապետությամբ ոչնչով չի տարբերվում նախորդ իր նմաններից, բայց հոյակապ է ու գերող՝ շնորհիվ ընդարձակության։ Տապանատան երկարությունն է 13 մ 5 սմ, լայնությունը՝ 13 մ 3 սմ, ձգված է արևելքից արևմուտք ուղղությամբ, չորս անկյունները լցնում են մեկական հաստահեղույս քարե սյուները, որոնց քանդակազարդ, մեծ խոյակների վրա իջնող կամարները պահում են շենքի գմբեթը։ Շենքի ներսը լուսավորվում է վերևից, բացված երդիկի միջոցով։

Գեղարդա ձորում վանքի վերերկրյա և ստորերկրյա շենքերից բացի կան նաև ուրիշ հետաքրքիր էքսպոնատներ՝ ժայռափոր սենյակներ, մատուռներ, այրեր, բնակարաններ և այլն։ Այս կարգի բնակարաններից մեկում է ապրել XIII դարի հայ նշանավոր պատմիչ Մխիթար Այրիվանեցին։

Կարճատև հանգստից ու նախաճաշից հետո, դուք թողնում եք Գեղարդը և շտապում ժամ առաջ ծանոթանալու Հայաստանի՝ այդ բնական թանգարանի ու նրա տաղանդավոր ժողովրդի կուլտուրական մեծ ժառանգության մյուս գեղեցկություններին։



## ԵՐԵՎԱՆ—ԴՎԻՆ



Երևանից հարավ-արևելյան ուղղությամբ ձգվող լայն ու ասֆալտապատ խճուղին համարյա մինչև Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկի՝ Դվինի տեղադրավայրը ընթանում է այս երկրային դրախտով։ Ճանապարհը անցնում է Արտաշատի շրջանի մի ամբողջ շարք գյուղերի միջով, որոնց ոչ միայն խաղողի այգիներն ու մրգաստանները, այլև տներն էլ են կազմում մեկը մյուսի շարունակությունը, գոյացնելով մի անվերջանալի թվացող գեղեցիկ շարք։ Ճանապարհը դեռ Արտաշատ չհասած, Դալար գյուղի մի-

և հին ժամանակներից սկսած Արարատյան դաշտը հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական կյանքում խոշոր դեր է կատարել։ Աշնան ամիսներին հաճելի է ուղևորություն կատարել այդտեղով։ Մի տեղ, ճանապարհի եզրին թփերի մեջ ձեր ուշադրությունը գրավում են մեծ ու փոքր ձմերուկները և գույնզգույն սեխերը, մի ուրիշ տեղ կարմրին են տալիս հյութեղ նռների նման այնքան են խոնարհվել, որ թվում է՝ ուր որ է պիտի կոտրվին։ Այս բոլոր բարիքների մեջ իրենց պատվավոր տեղն են գրավում Հայաստանի հռչակված խաղողի՝ աշնանային բազմերանգությամբ պճնված այգիները։

ջով ուղիղ անկյան տակ թեքվում է դեպի հյուսիս-արևելք և կտրելով Երևան—Բաքու երկաթուղին, գրեթե ուղիղ դծով շարունակվում է մինչև Հայաստանի երբեմնի մայրաքաղաքի տեղադրավայրը: Արտաշատի խճուղուց բաժանվելուց մի քանի րոպե անց, ուղևորի առաջ բացվում է մի հսկայական տափարակ տարածություն, որի այս ու այն մասերում երևում են մի քանի գյուղեր ու բնակավայրեր, որոնց սահմաններում տեղ-տեղ նշմարվող հին պարիսպների բլրաձև մնացորդները զգացնել են տալիս, որ այստեղ մարդը բնակություն է հաստատել դեռ վաղ ժամանակներում: Քիչ հետո ավտոմեքենան կանգ է առնում հին քաղաքատեղի կենտրոնում գտնվող մի բլրի ստորոտում, որտեղից սկսվում է առաջին ծանոթությունը միջնադարյան այդ հռչակավոր քաղաքի պատմության ու նրա կուլտուրայի հետ:

Թեև ժամանակը և բարբարոսի ավերող ձեռքը վաղուց է, որ այդ քաղաքը համարյա ամբողջապես ջնջել են երկրի երեսից, սակայն Սովետական իշխանության տարիներին պատմաբանների ու հնագետների քրտնաջան աշխատանքի շնորհիվ հողի խոր շերտերի տակից դուրս են հանվել նրա երբեմնի շքեղ ու հոյակապ շենքերի ավերակներն ու քաղաքի կենցաղին և կուլտուրային վերաբերող նյութերի մնացորդները:

Դվինը որպես բնակավայր ու քաղաք հիշատակվում է հայկական, վրացական, հունական, ասորական և արաբական մատենագրերի կողմից: Այժմ պարզվում է, որ Դվինը բնակելի է եղել դեռևս էնեոլիթի շրջանում և նրա անունը, ենթադրում են, ծագել է այդտեղ ապրող ցեղի կամ տոհմի անունից: V դարի հայ պատմիչներ Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու վկայությամբ Դվինը Հայաստանի մայրաքաղաք դարձավ IV դարի առաջին տասնամյակներից սկսած՝ Խոսրով I Արշակունի թագավորի օրոք: Նույն հեղինակներն ասում են, որ քաղաքի օդն ու կլիման առողջարար դարձնելու համար Խոսրով I-ը նրա շրջակայքում, մի հսկայական տարածության վրա տնկել տվեց արհեստական անտառներ: Դվինը իր շրջակայքով, այնուհետև կազմում էր Ուտան գավառը և մտնում Մեծ Հայքի Այրարատ աշխարհի մեջ: 429 թվականին, հայկական Արշակունիների թագավորական դինաստիայի կործանումից հետո, Դվինը դարձվեց պարսկական մարզպանների վարչա-քաղաքական կենտրոնը: Քաղաքն իր այդ ֆունկցիան պահպանեց նաև արաբական տիրապետության ժամանակ մինչև VIII դարի վերջին տասնամյակները: Արաբական խալիֆայությունն այդ ժամանակ



Դվինը դարձրեց Արմենիա վարչական միավորի՝ այսինքն Արևելյան Վրաստանի, Աղվանքի (Ադրբեջան) ու Հայաստանի մայրաքաղաքը: VIII դարի վերջերից Դվինն իր մայրաքաղաքային այդպիսի լայն նշանակությունը կորցրեց և կամաց-կամաց դարձավ արաբական մի փոքրիկ ամիրայության կամ ոստիկանության կենտրոնը:

Բագրատունիների կողմից Հայաստանի քաղաքական անկախության ու ինքնուրույնության վերականգնման ժամանակ (886 թվական) Դվինը Բագրատունիների տիրապետությանը միացնելու ուղղությամբ կատարված փորձերը դրական արդյունք չտվին, և այդ քաղաքը մինչև իր անկումը (XIII դար), աստիճանաբար ավերվելով ու կործանվելով, մնաց մերթ հայ, մերթ օտար ֆեոդալների ձեռքին: Հին քաղաքի անունը պահպանել են այժմ նրա տերիտորիայում գտնվող Արտաշատի շրջանի երկու գյուղեր՝ Վերին Դվինը և Ներքին Դվինը: Դվինը XIII դարում շարքից դուրս գալուց հետո ենթարկվել է նաև նրա շրջակայքի բնակիչների քանդումներին: Գյուղացիները դարեր շարունակ քաղաքի ավերակներից շինարարական նպատակներով դուրս են տարել ավերված շենքերի քարերը, իսկ պարիսպների հողը օգտագործել այգիների ու վարելահողերի պարարտացման համար: Պարզ է, որ այսպիսի քանդումների հետևանքով տարվել կամ ցրիվ են տրվել նաև Դվինի հնագիտական նշանակություն ունեցող իրերը՝ դրամները, արձանագրությունները, զենքերի ու արտադրության գործիքների մնացորդները: Սակայն տարիների հնագիտական աշխատանքները շատ բան են պարզել պատմագիտության համար՝ կապված քաղաքի ու նրա կուլտուրայի պատմության հետ:

Դվինի համարյա կենտրոնական մասում գտնվող բլուրը շրջապատի հարթության հետ համեմատած 30 մետրով ավելի բարձր է: Դրա համար էլ դեռևս հին ժամանակներում մարդը բնակություն հաստատելով նրա վրա, հաշվի է առել առաջին հերթին պաշտպանական հանգամանքները: Բլուրի գագաթային մասը հարթ է և ունի մոտավորապես 4000 քառակուսի մետր տարածություն: Նրա արևելյան լանջի վրա ցիկլոպյան պատերի հսկայական շարվածքները ենթադրել են տալիս, որ բլուրը դեռևս հնագույն ժամանակներում հատուկ պատվարով առանձնացված է եղել լանջի ստորին մասից: Հետագայում բլուրի հարթության վրա կառուցվել են պալատական շենքեր ու օժանդակ կառուցումներ, որտեղ Դվինի քաղաք դառնալուց հետո բնակվել են Արշակունի թագավորները, պարսիկ մարզպանները, արաբ ոստիկանները և ուշ ժամանակների

հայ և օտար իշխանավորները։ Ժամանակի ընթացքում Դվինի բերդն ընդարձակվել է, և բերի գագաթային մասի հարակից փեշերի վրա կառուցվել են նորանոր ամրություններ ու շենքեր։ Այսպիսով՝ քաղաքային միջնաբերդն ամբողջությամբ վերցրած՝ ընդգրկած է եղել մոտավորապես 10 հեկտար տարածություն, շրջապատված կավե հաստահեղույս ու բարձր պարիսպներով։ Բերդի տարբեր մասերում են տեղավորված եղել զորքն ու սպայակազմը, իշխանական դասը և այլ պաշտոնյաներ։ Դվինի բերդի տերիտորիայում, նույնիսկ գետնի երեսին թափված են պատմական տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող կավե թրծած աղյուսների, հասարակ և նախշած խեցեղենի, տուֆի ու բազալտի բազմաթիվ տեսակներ։ Միջնաբերդի ստորին մասը կամ ինչպես ասում են՝ Ստորին բերդը քաղաքից անջատված է եղել բարձր ու ամուր կավե պարսպաշարով, որի փլվածքից այժմ տեղում պահպանվել են միայն նրանցից գոյացած բլուրները, որոնց բարձրադիր մասերը ժամանակին կազմել են պարսպի բուրգերը։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Դվինի միջնաբերդի պարիսպներն ունեցել են կիսաբոլոր բուրգեր և չորս անկյուններում՝ մեկական մեծ բոլորաձև աշտարակներ։ Պարիսպների և բուրգերի փլվածքներից գոյացած մեծ բլուրների հսկայածավալ մնացորդները, որոնք առաջին հայացքից սովորական ու բնական բլուրներից ոչնչով չեն տարբերվում, կարծել են տալիս, որ բերդի պարիսպներն իրենց կանգուն վիճակում ունեցել են 12—15 մետր հաստություն և 15—20 մետր բարձրություն, իսկ նրանց բուրգերն ու աշտարակները եղել են ավելի հաստ ու բարձր։ Բերդի հյուսիս-արևմտյան մասի եռանկյունաձև հարթությունը հնում հանդիսացել է զորաժողովի վայր ու զինվորական վարժությունների հրապարակ, ուր պատերազմների ժամանակ հավաքվում էին նաև նախարարական գնդերը։ Մոտավորապես XII դարից հետո այդ նույն տեղում է գտնվել քաղաքի գլխավոր շուկան և օտարերկրյա առևտրականների քարավանների կայանը։ Ստորին բերդի հարավ-արևմտյան պարսպաշարի երրորդ և չորրորդ բարձրադիր բուրգերի մեջ է գտնվել բերդի գլխավոր մուտքը, որը կառուցված է եղել սրբատաշ քարերով։ Միջնաբերդը շրջագծող պարիսպների յուրաքանչյուր 40 մետրի վրա կառուցված է եղել մեկական բուրգ։ Սակայն միջնաբերդի պաշտպանությունը ապահովված է եղել նաև ջրային հատուկ խրամատով, որն անհրաժեշտության դեպքում լցվել է Ազատ գետից անցկացված հատուկ արհեստական ջրանցքից հոսող ջրով։



Ջրի խրամատի լայնությունը բերդի շրջապատում հասել է 30-ից մինչև 70 մետրի, իսկ խորությունը՝ 5—6 մետրի։ Քաղաքը բերդի հետ կապ է պահպանել մի քանի կամուրջների միջոցով, որոնք ձգված են եղել խրամատի վրայով։ Քաղաքի կենտրոնական թաղամասը բերդի հետ կապող միակամար կամուրջը մասնագետների ասելով ունեցել է 30 մետր երկարություն։ Բացի այս կամուրջից, քաղաքն ունեցել է նաև մի քանի մեծ ու փոքր կամուրջներ, որոնց մեծ մասի հետքերը դժբախտաբար չեն նշմարվում։

Հայոց Արշակունի թագավորների և նախարարների՝ Դվինի բերդի տերիտորիայում հաստատվելուց կարճ ժամանակ հետո, բերդից դուրս եղած բնակավայրն արագորեն ընդարձակվել, վերածվել է մեծ քաղաքի, որի բնակչության թիվը երբեմն հասել է 100 000-ի։

Բերդի տերիտորիայից դեպի հարավ-արևմուտք գտնվել է քաղաքի ամենահին մասը՝ կենտրոնական թաղը, որը պաշտպանական նպատակներով ունեցել է իր թաղային պարիսպը 5 մետրից ավելի հաստությամբ։ Այդ թաղի կենտրոնական մասում են գտնվել Կաթողիկե եկեղեցին, բազիլիկ տաճարը և կաթողիկոսի պալատն ու հավանաբար նաև իշխանների, վաճառականների և քաղաքի բարձր խավերի շենքերն ու պալատները։ Կենտրոնական թաղից հարավ՝ քաղաքի մյուս թաղերն ու արվարձաններն են, որոնք նույնպես շրջապատված են եղել առանձին պարիսպներով։

Գտնվելով այն ժամանակվա միջազգային նշանակություն ունեցող առևտրական տարանցիկ ճանապարհների վրա, Դվինը ոչ միայն աստիճանաբար մեծացել է, այլև ընդգրկվել միջազգային առևտրի մեջ, այս ասպարեզում կատարելով ակտիվ դեր։ Գտնված բազմաթիվ իրերը ցույց են տալիս, որ Դվինում զարգացած են եղել դաշնությունն ու երկրագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, բրուտությունը, ղինագործությունը, գորգագործությունն ու այլ արհեստներ։ Դվինի հմուտ վարպետների ու արհեստավորների պատրաստած զենքերը, կավից ու հախճապակուց պատրաստված բազմապիսի կենցաղային իրերը, ամաններն, սրբակներն ու սափորները, տեսակ-տեսակ ոսկյա և արծաթյա նուրբ զարդերը, գունազարդ և նրբաճաշակ գորգերը, բազկաթոռների ու թիկնաթոռների համար արտադրված գործվածքները հայտնի են եղել ոչ միայն ներքին շուկայում, այլև հարևան ու հեռավոր երկրներում։ Դրա համար է, որ քաղաքն իր ծաղկած շրջանում հանդիսանում էր Արևելքի խոշոր առևտրական կենտրոններից մեկը, ուր

ապրանքափոխանակության և առևտրի համար հավաքվում էին բազմաթիվ երկրների առևտրականները։ Դվինում արտադրված ապրանքների, գորգերի և գործվածքների մասին հիացմունքով են խոսում նույնիսկ օտար հեղինակները։ Նրանք հայկական գործվածքները համարում են ամենալավագույնները աշխարհում։

Միջնադարյան այս մեծ ու նշանավոր քաղաքի տերիտորիան այժմ զբաղեցնում են Արտաշատի շրջանի Վերին Դվին, Ներքին Դվին, Հողաբերդ, Վերին Արտաշատ, Բզովան, Նորաշեն, Այգեստան գյուղերն իրենց հանդերով, այգիներով ու դաշտերով՝ միասին վերցրած։



## 6. ԵՐԵՎԱՆ—ԼԵՆԻՆԱԿԱՆ

Ա

եպի ռեսպուբլիկայի երկրորդ խոշոր քաղաքը՝ Լենինական, կարելի է գնալ երկաթուղային և խճուղային ճանապարհներով. նախընտրելի է առաջինը։ Երկաթուղով Երևանից Լենինական կարելի է հասնել 4—5 ժամում։

Լենինականը Հայաստանի ամենահնագույն բնակավայրերից մեկն է։ Նրա մասին եղած տեղեկությունները վերաբերում են դեռևս մեր թվականությունից առաջ 1-ին հազարամյակին։

Հայկական պատմական գրականության մեջ Լենինականը հին ժամանակներում կոչվել է Կումայրի, ապա նաև Գյումրի։ XIX դարում այն վերանվանվեց Ալեքսանդրապոլ, իսկ 1924 թվականից՝ Լենինական, ի հիշատակ Մեծ Լենինի։

Մինչև XIX դարի առաջին տասնամյակները Լենինականը եղել է մի փոքրիկ բնակավայր և զարգացման ու ընդարձակվելու հեռանկարներ չի ունեցել, որովհետև նա անընդհատ իր վրա է կրել պարսիկների և թուրքերի ամայացնող ու ոչնչացնող սրշավանքների ամբողջ ծանրությունը։

1801 թվականին Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո, Ռուսական կայսրությունը որոշակի քայլերի դիմեց նաև Հայաստանը պարսկա-թուրքական լծից ազատելու ուղղությամբ, որը իրականացվեց 1826—1828 թվականների ռուս-պարսկական և

1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմների հաջող ավարտից հետո, երբ Արևելյան Հայաստանը, դրա հետ նաև Շիրակի դաշտավայրն ու Լենինականն անցան Ռուսաստանին: Լենինականը, որը մինչև այդ փոքրիկ մի բարձունքի վրա ամփոփված բնակավայր էր, ընդարձակվից և դարձավ Հայաստանում ռուսական բանակի առաջապահ ամրոցներից մեկը թուրքական սահմանագծին: Նրա շուրջը, քաղաքի հարավային մասի ընդարձակ հարթության վրա իրենց բնակությունը հաստատեցին Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններից եկած գաղթական հայերը, որոնք պատերազմներից հետո տեղափոխվել էին ռուսական տերիտորիան: Լենինականի ազգաբնակչությունը աճեց հատկապես Կարսից և Էրզրումից ներգաղթած հողագործ, արհեստավոր և առևտրական հայ ընտանիքների հաշվին: Այնպես որ արդեն 1845—1846 թվականներին Լենինականն ուներ 16 337 բնակիչ, որի ճնշող մասը կազմում էին հայերը:

XIX դարի կեսերին Լենինականը թեև չուներ կառուցման հատուկ պլան, բայց քաղաքն աճում էր կանոնավոր կերպով: Փողոցները ձգվում էին ուղիղ, շախմատաձև, տները թեև մեծ մասամբ միահարկ էին ու տափակ տանիքներով, բայց ունեին յուրահատուկ ճարտարապետություն: Սև տուֆը, որով հարուստ էր քաղաքի շրջակայքը, քաղաքի շնորհալի կառուցող վարպետների ձեռքի տակ մշակվում և քանդակազարդվում էր: Առանձնապես տարածված էր շենքերի կառնիզների և լուսամուտների ու դռների վերին շարվածքների քանդակազարդումը: Լենինականի այն ժամանակվա կառուցողական արվեստի ամբողջ համակարգը խտացված է հատկապես մի քանի շինությունների վրա, որոնցից առանձնապես գեղեցիկ ու վեհաշուք են ս. Փրկիչ, ս. Ամենափրկիչ եկեղեցիներն ու այլ շենքեր, որոնց մեջ վարպետությամբ են օգտագործված նաև Անիի ճարտարապետական ոճի որոշ գծեր:

Ռուսական տիրապետության շրջանում Լենինականը բարգավաճելու և ընդարձակվելու նոր հնարավորություններ ստացավ: Դա զգալորեն շոշափելի դարձավ հատկապես XIX դարի վերջից, երբ 1898 թվականին քաղաքը երկաթուղով կապվեց Թիֆլիսի, իսկ 1903 թվականին՝ Երևանի հետ: Երկաթուղու մի ճյուղն էլ Լենինականից անցնում էր դեպի Կարս ու Սարիղամիշ: XIX դարի վերջերին Լենինականն ուներ մոտ 25 000 բնակիչ: Քաղաքի բնակչության աճի հետ մեկտեղ, զարգանում էին նաև առևտուրն ու արհեստները: XX դարի սկզբներին Լենինականում թեև խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չկային, բայց ավելի քան 30 փոքր ձեռնարկություններ արտադրում էին զանազան ապրանքներ, ինչպես օճառ, կաշի, չուգուն, դարեջուր, աղյուս և այլն: XIX դարի կեսերին Լենինականում գործել են մի քանի մասնավոր և այլ կարգի դպրոցներ, որոնք հետու էին քաղաքի բնակչության կրթական պահանջները բավարարելուց, իսկ 1899 թվականից սկսած այստեղ հրատարակվող մի քանի թերթերն ու հանդեսները կարդացվում էին փոքր մաս կազմող դրագետների կողմից: Այդ ժամանակ քաղաքն ունեցել է նաև մշտական թատերական խումբ, որի հետ երբեմն-երբեմն հանդես են եկել նաև հայ բեմի ականավոր ներկայացուցիչները՝ Գ. Զմշկյանը, Պ. Ադամյանը, Սիրանույշը, Վ. Փափազյանը, Հ. Աբելյանը և մյուսները: Քաղաքի կուլտուրական կյանքում աչքի ընկնող դեր են կատարել նաև հայ գուսաններ Ջիվանին, Ֆահրադը, Շերամը, Ջամալին և մյուսները:

XX դարի սկզբներին, ռուսական աճող հեղափոխական խմորումների ազդեցության տակ, Լենինականը նույնպես ապրում է իր քաղաքական զարթոնքը: 1902—1903 թվականներին քաղաքում ստեղծվում են առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակները, որոնց հեղափոխական աշխատանքներն անխզելիորեն կապված էին ամբողջ Անդրկովկասի բանվորական շարժումների հետ: Մեծ է եղել Լենինականի աշխատավորների դերը 1920 թվականին Հայաստանում Սովետական իշխանության համար մղված պայքարում:

1920 թվականի նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելուց մի քանի ամիս հետո, Լենինականը նա անցավ նրա կազմի մեջ: Իսկ մինչև այդ, որոշ ժամանակ այնտեղ իշխում էին թուրքական զավթիչները, որոնք օգտվելով Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի թուլությունից և Սովետական Ռուսաստանի նկատմամբ նրանց բռնած թշնամական դիրքից, օկուպացրել էին քաղաքը:

Անցած 39 տարիների ընթացքում հին Ալեքսանդրապոլից պահպանվել են միայն տխուր հիշողություններ: Սովետական Հայաստանի շատ քաղաքների հետ, առանձնապես ծաղկել ու բարգավաճել է Լենինականը: Շիրակի արգավանդ ու կանաչազարդ հարթության վրա իր արդյունաբերական, հասարակական ու ուսումնական շինություններով, գեղեցիկ, ծառազարդ ու ասֆալտապատ փողոցներով, պլանաչափ, բազմագույն և բազմահարկ, հայկական դյութիչ ճարտարապետությամբ կառուցված բնակելի տներով այժմ ծնունդ է առել Հայաստանի արդյունաբերական և

կուլտուրական խոշոր կենտրոններից մեկը՝ հոյակապ ու նորաշեն քաղաք Լենինականը։

Լենինականի երկաթուղային կայարանին կից հրապարակից մի լայն ու ասֆալտապատ փողոց տանում է ուղիղ քաղաքի կենտրոնը՝ Լենինի անվան հրապարակը։ Անծանոթը դժվարությամբ կհավատա, որ ընդամենը մի քանի տարի առաջ քաղաքի այդ մասն իրենից ներկայացնում էր անհավասար, խորդ ու բորդ, ճահճացած մի տերիտորիա, որտեղ կուտակվում էր քաղաքի աղբը։ Եվ միայն Լենինականի երիտասարդության նախաձեռնությամբ, շատ կարճ ժամանակում այդ տարածությունը մաքրվեց, չորացվեց ու հարթեցվեց։ Եվ այսօր քաղաքի այդ մասը բոլորովին այլ պատկեր է ներկայացնում իրենից։ Հրապարակի շուրջը կողք-կողքի բարձրացել են ունիվերմագի, պարտիայի Լենինականի քաղաքային կոմիտեի, տեքստիլ կոմբինատի և Քարհանքերի վարչության բնակելի, բազմահարկ ու բազմերանգ շենքերը։ Հրապարակում վեր է խոյանում Լենինի մոնումենտ-արձանը։

1928 թվականին աշխատանքային մեծ խանդավառությամբ Լենինականի երիտասարդությունը ձեռնամուխ եղավ նաև ներկայիս Ստեփան Շահումյանի անվան կուլտուրայի և հանգստի պարկի շինարարությանը։ Եվ անցան տարիները, ու այսօր Ստ. Շահումյանի անվան պարկը դարձել է քաղաքի աշխատավորների հանգստի ամենասիրելի վայրերից մեկը։ Սովետական իշխանության տարիներին մեծ աշխատանք է կատարվել նաև Լենինականի կուլտուրական կյանքի վերափոխման ուղղությամբ։ Այժմ Լենինականում գործում են 26 մասսայական, 7 բանվորիտ, մեկ դիշերօթիկ դպրոցներ և 6 տեխնիկում։ Հայրենական Մեծ պատերազմից հետո Լենինականում բացվեց նաև Մ. Նալբանդյանի անվան Պետական մանկավարժական ինստիտուտը, որը լավորակ ուսուցչական կադրեր է տալիս քաղաքին ու մեր ռեսպուբլիկային։ Քաղաքի կուլտուրական հիմնարկների շարքում մեծ տեղ են գրավում բազմաթիվ բանվորական ակումբները, գրադարաններն ու կինոթատրոնները։ Լենինականի երիտասարդները իրենց երաժշտական ու արվեստագիտական կրթությունն են ստանում Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում և Մերկուրովի անվան նկարչական դպրոցում։ Լենինականցիների գեղարվեստական ճաշակի բարձրացման գործում զգալի է Ա. Մռավյանի անվան Պետական դրամատիկ թատրոնի դերը։

Նախահեղափոխական շրջանի Լենինականի մի քանի տասնյակ փոքր արհեստանոցների փոխարեն, այսօր այնտեղ վեր են խոյանում բազմաթիվ խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք հագեցված են տեխնիկայի վերջին խոսքով կառուցված նորագույն սարքավորումներով։ Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի որոշ տեսակները իրենց բարձր որակով հայտնի են նաև Հայաստանի սահմաններից դուրս։ Գյումրեցին անցյալում՝ Լենինականի արդյունաբերության այսպիսի մակարդակի մասին երազել անգամ չէր կարող։ Քաղաքում հնգամյակների ընթացքում շարք են մտել ավելի քան 50 արդյունաբերական ձեռնարկություններ։ Լենինականի տարբեր մասերում վեր են խոյացել Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի, մանվածքային և գուլպա-տրիկոտաժի ֆաբրիկաների գեղեցիկ, ժամանակակից շենքերը։ Տնայնագործական հին ու պրիմիտիվ արհեստանոցներին փոխարինելու են եկել Չկալովի անվան կարի, կոշիկի, կահույքի ֆաբրիկաները, հեծանիվի, Շահումյանի անվան մահճակալների, մեխանիկական, ապակու և այլ գործարաններն ու ձեռնարկությունները։ Արդյունաբերության հզոր վերելքը Լենինականում պատկերացնելու համար բավական է բերել հետևյալ թվական համեմատությունը. 1921 թվականին Ալեքսանդրապոլի 31 արհեստագործական ձեռնարկություններում աշխատում էր շուրջ 200 բանվոր, իսկ այսօր արդյունաբերական Լենինականում ամեն օր մեքենաների և դազգահների մոտ է կանգնում 20 000 մարդ։ Լենինականի հեծանիվի գործարանն ունի ընդամենը մեկ տասնամյակի պատմություն և այդ համեմատաբար կարճատև ժամանակում նա իր համար ստեղծել է մեծ համբավ՝ Եվրոպայից սկսած մինչև Հարավային Ամերիկայի երկրները, որտեղից գործարանի հասցեով բազմաթիվ գովասանական նամակներ են ստացվում։ Հեծանիվի գործարանն այժմ օրական արտադրում է 600 մանկական գեղեցիկ ու բարձրորակ հեծանիվներ։ Իր տեխնիկայով և արտադրանքով ամբողջ ռեսպուբլիկայում հայտնի է Լենինականի մսի-պահածոների գործարանը, որը Հայաստանին ամեն օր մատակարարում է տարբեր տեսակների երշիկեղեն, պահածոներ և այլ մսամթերքներ։

Շուտով կսկսեն իրենց արտադրանքը տալ նաև ապակու գործարանի բյուրեղապակու ցեխը և տրիկոտաժեղենի նոր ֆաբրիկան։ Լենինականը Սովետական Հայաստանին և մեր մեծ Միությանը մատակարարում է բազմապիսի ապրանքներ, ինչպես նուրբ և մշակված գործվածքներ, կապրոնի գուլպաներ, քարտաշ մե-

քենաներ, սղոցող հաստոցներ, պեմզաբլոկ, կիր, ալյումինե և ցինկապատ ամաններ, նիկելապատ մահճակալներ, հեծանիվներ, միս ու երշիկեղեն և այլն։

Այցելուն Լենինականին ծանոթանալուց հետո, հարուստ ու բազմազան հիշողություններ է տանում հետը, անշուշտ, կրկնապատկելով իր սերն ու համակրանքը դեպի տոկուն, աշխատասեր ու ստեղծագործ հայ ժողովուրդը։

Լենինականից տեղական էքսկուրսիա կարելի է կատարել դեպի Արթիկ քաղաքը։

## ա. Լենինական—Արթիկ

1928 թվականին ձեռնարկվեց Լենինական—Արթիկ երկաթգծի կառուցումը։ Այս երկաթուղով Լենինականը կապվեց Արթիկի վարչական շրջանի կենտրոն Արթիկ քաղաքի հետ։ Արագածի արևմտյան լանջին ընկած Հայաստանի այդ հինավուրց բնակավայրը, 20-ական թվականներից սկսած, մեր ռեսպուբլիկայի համար ստացավ նոր ու առաջնակարգ նշանակություն։ Հայաստանում ժամ առ ժամ ծավալվող շինարարությունն ստեղծում էր նաև շինարարական բազմապիսի նյութերի մեծ պահանջ։ Եվ ահա Արթիկին վիճակված էր այս ասպարեզում ստանձնելու մեծ ու պատվավոր պարտականություն։ Հայաստանը, ինչպես հայտնի է, դեռ շատ հին ժամանակներից հռչակված է եղել իր շինարարական բազմատեսակ քարերով՝ տուֆով, մարմարով, գրանիտով, բազալտով, ֆիլզիտով և այլն։ Սակայն այս շինաքարերից ոչ մեկն այնպիսի լայն կիրառում չունի այժմ, ինչպես Արթիկի հռչակավոր վարդագույն տուֆը։ Դրա պատճառը կայանում է նրանում, որ Արթիկի տուֆը թեթև է, հեշտ է մշակվում, դիմացկուն է և անչափ գունագեղ։ Ո՛չ մի շեն դյուրթում մեր ռեսպուբլիկայի տարբեր վայրերում Արթիկի տուֆից կերտված հազարավոր ու հազարավոր շենքերը՝ իրենց ժպտուն հմայքով։ Արթիկի տուֆը մեծ հռչակ ունի նաև մեր ռեսպուբլիկայի սահմաններից հեռու։ Նրա անսպառ պաշարներից գրեթե հավասարապես օգտվում են նաև հարևան Վրաստանն ու Ադրբեջանը։ Արթիկի տուֆից կառուցված շենքեր կան նաև Մոսկվայում և մեր միության այլ քաղաքներում։ Հիանալի այս շինաքարը ուղարկվել է նաև Ամերիկայի մայր ցամաքը՝ շենքեր կառուցելու համար։ Արթիկի քարհանքերի աշխատանքի մեքենայացման ու եղած մեքենաների կատարելագործման և նորերի ստեղծման շնորհիվ, օրավուր բարձրանում է աշխատանքի արտադրողականությունն ու ընդարձակվում է օգտագործելի տարածությունը քարհանքերի շրջանում։ Վերջին երկու տասնամյակների ընթացքում Արթիկ քաղաքի բուն աճը գրեթե մոռացնել են տվել նրա հին բնակավայր լինելու հանգամանքը։ Սակայն, այնուամենայնիվ բազմաթիվ անհատական նոր տների, բնակելի ու վարչական գեղեցիկ շենքերի մեջ այցելուի ուշադրությունն են գրավում նաև Արթիկի հին կոթողները։ Արթիկի և նրա շրջակայքի հուշարձաններից առանձնապես ուշադրության արժանի են մի քանիսը։ Արթիկի փոքր եկեղեցին, որը կառուցվել է VI դարում, համարվում է հայկական ճարտարապետության լավագույն կոթողներից մեկը։ Նրա մեջ մեծ վարպետությամբ ու ճաշակով խառացված են V—VI դարերի հայկական ճարտարապետության լավագույն գծերը։ Հոյակապ է հատկապես Արթիկի մեծ եկեղեցին, որի գմբեթային մասը վաղուց ի վեր քանդված է, իսկ մինչև գմբեթը եղած շարվածքը այնքան բարձր ու վեհաշուք է, որ պատերի վրա եղած արձանագրությունները ներքևից գրեթե աննկատելի են։ Այս եկեղեցուց ոչ հեռու գտնվում է V դարից մնացած միջին մեծության մի եկեղեցի ևս։ Քաղաքի մոտ է գտնվում նաև VII դարի կոթող Էմպատավանք եկեղեցին։ Արթիկի շուրջը կան նախաքրիստոնեական շրջանին վերաբերող բնակավայրերի հետքեր ևս։

## բ. Լենինական—Ալավերդի

Լենինականի կայարանից սկսած, գնացքը համարյա անմիջապես ընկնում է մի ոլորապտույտ ճանապարհ և, փաթաթվելով բլուրների ու լեռների փեշերին, ծանր հևոցով սկսում է մագլցել դեպի վեր, որպեսզի իր հետաքրքրասեր ուղևորներին ժամ առաջ ծանոթացնի Հայաստանի լեռնոտ մի երկրամասի՝ Լոռվա հիասքանչ բնությանն ու նրա հին ու նոր հիշատակների հետ։

Լեռնային դժվարին ճանապարհը մի քանի ժամում հաղթահարելուց հետո, գնացքն իր ետևում թողնելով կիրովական քաղաքն ու շատ բնակավայրեր, ծանր տնքոցով կանգ է առնում Ալավերդի քաղաքի կայարանում։ Այստեղից էլ սկսվում է ուղևորի ծանոթությունը քաղաքի ու նրա շրջակայքում եղած տեսարժան վայրերի հետ։

Ալավերդին, որն անմիջապես կից է երկաթուղու կայարանին, տեղավորված է Դեբեդ գետի երկու ափերի խորդ ու բորդ տարա-

ծության և քաղաքը գրեթե չորս կողմից շրջապատող բարձրաբերձ, համարյա լերկ ու անառիկ ժայռերի փեշերի վրա։ Ի՞նչն է գայթակղել Հայաստանի հին բնակիչներին բնակություն հաստատելու լեռների մեջ սեղմված այդ վայրում, ակամայից հարց ես տալիս ինքդ քեզ։ Այդ հարցի պատասխանը դու գտնում ես այն ժամանակ, երբ մի հայացք ես գցում քաղաքի վրա։ Քո ուշադրությունն անմիջապես գրավում են քաղաքի վրա տարբեր կողմերից բարձրացող գործարանային թանձր ծխի քուլաները։ Ալավերդին Հայկական ՍՍՌ Ալավերդու շրջանի կենտրոնն է՝ Հայաստանի ու ՍՍՌՄ-ի պղնձի արդյունաբերության հնագույն կենտրոններից մեկը։ Սովետական իշխանության տարիներին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները խոշորացվեցին, ընդարձակվեցին և ամբողջությամբ վերափոխվելով, հագեցվեցին նորագույն սարքավորումներով։ Արդյունաբերության ընդարձակման հետ միասին, խոշոր չափով մեծացել ու ընդարձակվել է նաև քաղաքը։ Այստեղ կառուցվել են հրակայուն աղյուսի, սուպերֆոսֆատի և մի քանի այլ գործարաններ։ Այժմ Ալավերդում արտադրվում են ցինկի բելիլա, տրիկոտաժային ապրանքներ և այլն։ Նախկին անհյուրընկալ, խուլ և փոքրիկ Ալավերդին այժմ դարձել է Հայաստանի գունավոր մետալուրգիայի և հատկապես պղնձի արդյունահանման խոշոր կենտրոնը՝ իր քաղաքային բուն եռուզեռով։ Ալավերդում այժմ կա ջրմուղ և կոյուղի, փողոցներից շատերն ասֆալտապատված են։ Մեծ աշխատանք է տարվում նրա կանաչապատման ուղղությամբ։ Մինչև այժմ Ալավերդում տնկվել են ավելի քան 20 000 դեկորատիվ ծառեր։ Քաղաքն ունի կինոթատրոն, բանվորական ակոմբ, երաժշտական դպրոց, պտղա-բանջարաբուծական տեխնիկում և կուլտուրական ու հասարակական այլ հաստատություններ։ Ալավերդու ավտոբուսային պարկը ապահովում է նրա մշտական ու կանոնավոր կապը շրջակա գյուղերի, Երևանի և ռեսպուբլիկայի մյուս կենտրոնների հետ։ Անհամեմատորեն բարելավվել են նաև քաղաքի բանվոր-ծառայողների, աղգաբնակչության կենցաղային-բնակարանային պայմանները։ Ալավերդցիների մեծ մասն այժմ ապահովված է նոր ու բարեկարգ բնակարաններով։

Քաղաքի միանգամայն հակառակ պատկերն է ներկայացնում նրա շրջակայքը։ Ալավերդու շրջանը, որի բարձրաբերձ լեռները ծածկված են խիտ անտառներով ու թփուտներով, իսկ կարկաչահոս աղբյուրներով ու առվակներով այնքան հարուստ ձորակներն ու հովիտները տարվա մեծ մասը հագնում են իրենց կանաչ զգեստները և գույնզգույն ծաղիկների ու վարթամ բուսականության անուշահոտ բուրմունքով լցնում շրջակայքը, իր սահմաններով հանդերձյա ընդգրկում է Հին Հայաստանի Գուգարք աշխարհի Ձորոփոր գավառի տերիտորիան։ Միջին դարերում ամբողջ Գուգարքը, դրա մեջ նաև Ձորոփորը, ոչ միայն հայտնի էր իր ճոխ ու հարուստ բուսականությամբ, այլև պես-պես հնություններով և պատմական մեծարժեք կոթողներով։ Միջին դարերում այստեղ եղել են գրականության, արվեստի և դիտության տարբեր ճյուղերի շատ կենտրոններ, որոնց մեջ, սակայն, առանձնապես մեծ հռչակ են վայելում Սանահինն ու Հաղպատի վանքերը, որտեղ տարբեր ժամանակներում ապրել ու ստեղծագործել են բազմաթիվ հայ գիտնականներ։

## գ. Ալավերդի—Սանահին—Հաղպատ—Ախթալա

Խիստ հաճելի է առավոտյան վաղ, երբ արևի ոսկեշող շողարշը ափռված է լինում Ալավերդու շրջակայքի բարձրաբերձ ժայռերի կատարներին, և քաղաքը նիրհում է քաղցր քնի մեջ, ճանապարհ ընկնել դեպի մոտակա Սանահին գյուղը։ Անցնելով գեթս XIII դարից կանգուն, Դեբեդ գետի վրայի կամուրջով խճուղին, բազմաթիվ ոլորտապտույտներով բարձրանալով քաղաքի դեմ-դիմաց գտնվող, գրեթե ուղղաձիգ ժայռը, հասնում եք Սանահին։ Դեբեդ գետի աջափնյան բարձրադիր սարահարթի վրա գտնվող այս գյուղը իր հնություններով հայտնի է դեռևս հին ժամանակներից։ Սանահնի հռչակավոր վանքը իր հարակից շինություններով նկատելի է դեռ գյուղին չհասած՝ իր սրածայր ու բարձր գմբեթներով։

Սանահնի վանքի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ։ Պատմական աղբյուրներից իմանում ենք, որ X դարի կեսերին Հունաստանից եկած հայ կրոնավորները շենացնում են այն ու հաստատում նոր միաբանություն։

Սանահնի վանքը իրենից ներկայացնում է ճարտարապետական բարդ կոմպլեքս։ Նա ունի հինգ եկեղեցի, գրադարան-մատենադարան և օժանդակ այլ կառույցներ, դպրոց, հյուրանոց և այլն։ Գլխավոր եկեղեցին կառուցվել է Հայոց Խոսրովանուշ թագուհու կողմից 967—972 թվականներին։ Այս շենքն ունի ներսից խաչաձև հատակագիծ, որը դրսի կողմից աննկատելի է մնում։ Եկեղեցու պատերը ներսից սվաղված են, որոնց վրա տեղ-տեղ պահպանվել են հին որմնանկարների և արձանագրությունների

հետքեր: Արտաքին պատերի դեկորատիվ կամարաշարքը պահող քարե սյուների խոյակները և խարիսխները ունեն բուսական և կենդանական բնույթի զեղեցիկ քանդակներ: Ինչպես այս, այնպես էլ վանքի կոմպլեքսի մեջ մտնող մյուս մասերը պարբերաբար ենթարկվել են վերանորոգման, սկսած XII դարից՝ մինչև 1940-ական թվականները:

Ճարտարապետական տեսակետից կարևոր արժեք է ներկայացնում նույն Գլխավոր կամ Ամենափրկիչ եկեղեցուն կից Գավիթ-ժամատունը, որը կառուցվել է 1185 թվականին: Այս շենքը քառակուսի մի ընդարձակ դահլիճ է, որի ծածկը հանգչում է չորս մեծ, քանդակներով հարուստ խարիսխների ու խոյակներ ունեցող քարե խոշոր սյուների վրա: Գավթի ներսում կան տարբեր ժամանակներին վերաբերող շատ արձանագրություններ ու տապանաքարեր:

XIII դարում է կառուցվել եկեղեցու արևմտյան կողմում գտնվող նախագավիթը, որի թաղակապ տանիքը պահող վեց սյուներն իրենց կամարաձև միացման տեղերում գոյացնում են երեք կամարասրահներ: Այստեղ կան շատ արձանագրություններ և մի քանի շքեղ ու քանդակազարդ խաչքարեր: Սանահնի Ամենափրկիչ և Աստվածածին եկեղեցիների արանքում է գտնվում XI դարում կառուցված՝ վանքի բարձրագույն դպրոցի շենքը, որը կոչվում է Մագիստրոսի ճեմարան: Ճեմարանն այսպես է կոչվել XI դարի հայ նշանավոր փիլիսոփա, գրող ու մտածող Գրիգոր Մագիստրոսի անունով, որն իր ժամանակին եղել է դպրոցի դասախոսներից մեկը, և տարիներ շարունակ նրա մոտ սովորել են շատերը: Այս շենքն ունի երկար սրահի ձև, որի տանիքը հենվում է կամարներով իրար միացած բազմաթիվ որմնասյուների վրա: Սանահնի ճարտարապետական կոմպլեքսի ամենահին կառուցամասերից մեկը համարվում է ս. Գրիգոր եկեղեցին: Նա դրսից ունի կլոր, իսկ ներսից՝ խաչաձև հատակագիծ: Ինչպես Սանահնի ճարտարապետական մյուս հնություններն, այնպես էլ ս. Գրիգոր եկեղեցին կառուցված է կապտավուն բազալտի սրբատաշ քարերով: Եկեղեցու արտաքին պատերը զարդարված են կիսակլոր որմնասյուներով, որոնք իրար են միանում որմնակամարներով և ունեն քանդակազարդ խոյակներ ու խարիսխներ: Շենքի ներսը երբեմն զարդանկարված է եղել: Պահպանված են նկարների որոշ հետքերը և պատերի վրայի վիմական արձանագրությունները: 1063 թվականին ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային կողմում կառուցվել է Գրադարան-մատենադարանի քառակուսի հատակագիծ ունեցող շենքը, որի ներսի



սյուներն ու խոյակները զարդարված են նրբաքանդակներով: Մատենադարանի ներսում, պատերի մեջ սարքված են հատուկ խորշեր, որտեղ դասավորվել են մատենադարանի բազմաթիվ ձեռագրերն ու թղթերը: Գրադարանը լուսավորվել է առաստաղի վրա եղած փոքրիկ կլոր անցքով:

Սանահնի Ամենափրկիչ եկեղեցուց հարավ-արևմուտք, մի փոքրիկ բարձրադիր վայրում է կառուցված Սպասալարների դամբարանը: Սա մի կիսագետնափոր, բազալտե սրբատաշ քարերով շարված կամարակապ ծածկով շենք է, որի արևելյան մասում 1189 թվականին հայ նշանավոր զորավարներ Զաքարե և Իվանե Զաքարյանները կառուցել են իրենց հոր՝ Սարգիս Ամիրսպասալարի դամբարանը, որի մոտ հետագայում ամփոփվել է նաև Զաքարեի աճյունը: Սանահնում հետաքրքրություն արժանի է նաև գյուղի հարավ-արևմտյան ծայրին գտնվող աղբյուրը, որը կառուցվել է XII դարի վերջերին Զաքարե և Իվանե Զաքարյանների կողմից: Աղբ-Աղբյուրի կառուցող ճարտարապետն է եղել Մխիթարը: Աղբյուրն իրենից ներկայացնում է սրահանման մի շենք, որը երեք կողմից ունի պատեր: Ներսից, պատերին կից սարքվել են հատուկ քարե ավազաններ, որոնց մեջ թափվում է Զաթին-դաղ սարից՝ բծած կավե խողովակներով հոսող սառնորակ և վճիտ, խմելու ջուրը:

Այստեղ թվարկվեցին Սանահնում գտնվող պատմական հուշարձաններից միայն մի քանիսը: Այցելուն գյուղում և գյուղից դուրս, գրեթե յուրաքանչյուր քայլափոխում կարող է հանդիպել պատմական տարբեր ժամանակների բազմապիսի հուշարձանների: Սանահնի շրջանում կան շատ քարայրեր, ուր երբեմն նախնիները ապաստանել է ու պաշտպանել իր գոյությունը, հին բնակարդի ավերակներ, մատուռներ, եկեղեցիներ և այլ ու այլ կառույցներ, հուշարձաններ: Թողնելով այս բոլորի կարգի շինություններ, ավտոբուսը ձեզ հասցնում է մոտավորապես մեկ ուրիշ անդամվա, Հաղպատ գյուղը, որը գտնվում է Երկաթուղու կայարանից մի քանի կիլոմետրի վրա, դեպի արևելք:

Հաղպատն իր դիրքով համարյա նման է Սանահնին: Նա տարածվում է երեք կողմից մեծ ու անդնդախոր ձորերով հեղեղված մի ընդարձակ ու բարձրադիր սարահարթի վրա, որին արծուն պահապանների նման օր ու գիշեր հսկում են գյուղի արևելյան կողմում վեր բարձրացած Սուրբ Լուսավորիչ և Տերունական լեռների անտառապատ գագաթները: Գյուղի անառիկ դիրքը հին ժամանակներում

րում շատ անգամ է նրան փրկել օտար ցեղերի ու ասպատակող հորդաների ավերածութիւններից։

Հաղպատը և նրա շրջակայքը նույնպես հարուստ են հին ու արժեքավոր հուշարձաններով՝ բերդերով, վանքերով, եկեղեցիներով, քնակավայրերով, խաչքարերով և ուշադրության արժանի բազմաթիվ հնութիւններով։ Սանահնի և Հայաստանի միջնադարյան մյուս վանքերի նման, Հաղպատի վանքը նույնպես հնում ունեցել է ընդարձակ կալվածքներ։ Իր կալվածքներից ստացած եկամուտները հնարավորություն են տվել նրան ունենալու բազմամարդ միաբանություն և ժամանակի ընթացքում ընդարձակելու վանքն ու նրան կից շինությունները։ Վանքի բարգավաճմամբ շահագրգռված հոգևոր ու աշխարհիկ անձնավորությունները նրա շքեղության և փառահեղության համար համարյա չեն խնայել ոչ մի միջոց։ Իր ունեցած տնտեսական միջոցներով և ընդարձակ հնարավորություններով Հաղպատը, հատկապես XII—XIII դարերում համարվում էր Հայաստանի շատ թե քիչ ապահով վայրերից մեկը։ Այդ բանին մեծապես նպաստում էր նաև հարևան վրացական թագավորության ռազմական հզորացումն ու սելջուկյան տիրապետության դեմ հայերի ու վրացիների մղած համատեղ և հաջող պայքարը, որի շնորհիվ Հայաստանի հյուսիսային շրջաններն առաջիններն էին, որ ազատագրվեցին սելջուկների ոչնչացնող տիրապետությունից և անցան հայ ֆեոդալների ձեռքը։ XII դարի վերջերին և XIII դարի սկզբներին Հաղպատն ու նրա շրջակայքը ևս մաքրվեցին սելջուկներից։ Քաղաքական տեսակետից ստեղծված, համեմատաբար խաղաղ ժամանակները շատ կարևոր նշանակություն են ունենում Հաղպատի՝ որպես միջնադարյան հայ գրչության և գիտության կարևոր օջախներից մեկի, բարգավաճելու համար։ Այդ ժամանակաշրջանից սկսած Հաղպատի միաբանության գործունեությունը էլ ավելի է բեղմնավոր դառնում։ Վանքը լայն կապեր է հաստատում Հայաստանի մյուս նշանավոր գրչության կենտրոնների հետ։ Նրա միաբանների մեջ հանդես են գալիս գիտության ու գրականության խոշոր դեմքեր, որոնք մեծ դեր են կատարում նաև հայերեն ձեռագրերի արտագրման ու տարածման շնորհալի աշխատանքում։

Հաղպատի վանքը, որպես ճարտարապետական բարձրարժեք հուշարձան, իր կոմպլեքսային կառուցվածքով նման է Սանահնի և նույն ժամանակների Հայաստանի մյուս վանքերին։ Նա նույնպես ունի մի քանի եկեղեցիներ, ժամատներ, մատուռներ և հարակից



այլ կառուցվածքներ։ Այստեղ միայն պետք է ավելացնել, որ Սովետական Հայաստանի տերիտորիայում այժմ գոյություն ունեցող պատմական հուշարձանների մեջ Հաղպատի վանքը փայլում է մի առանձին շուքով ու վեհությամբ, և դժվար թե, թեկուզ մեկ անգամ այդ հուշարձանը տեսնողը այլևս մոռանա նրա՝ ամբողջական կոմպլեքսի մեջ այնքան հարմոնիկ ու մանրանկարչական պեղանտությամբ կերտված առանձին դետալներն ու ճարտարապետական նուրբ մտահղացումների առարկայական պատկերը։ Հաղպատը դիտողը, առաջին իսկ հայացքից կարծեք համոզվում է մի բանում, որ նրա կառուցող տաղանդավոր վարպետներն իրենց հմտությամբ ու ճաշակի արտակարգ նրբազգացությամբ աշխատել են մրցել գյուղը շրջապատող բնության գեղեցկությունների հետ։ Հաղպատցիները բարձր գնահատելով իրենց ստեղծագործությունները, ժամանակին ամբողջ վանքը շրջապատել են հաստահեղույս պարսպով, որը վանքի շինությունները պաշտպանել է ավերիչ հարձակումների վտանգից։

Վանքի հուշարձանների մեջ գլխավորը ս. Նշան եկեղեցին է, որը մյուս շինությունների մեջ գրավում է համարյա կենտրոնական տեղը։ Այս եկեղեցու շինարարության հիմքը դրել է Հայոց Խոսրովանույշ թագուհին 972 թվականին, իսկ կառուցումն ավարտել են նրա որդիները 991 թվականին։ Եկեղեցին արտաքուստ քառանկյունու ձև ունի, իսկ ներսից՝ խաչաձև։ Դահլիճանման մեծ շենքի վրա հանգչում է բարձր գմբեթը։ Շենքը ներսում ունի բարձր բեմ, իսկ անկյուններում՝ կրկնահարկ խորաններ։ Ներսի սվաղած պատերի վրա պահպանված են որմնանկարների և արձանագրությունների հետքերը։ Ս. Նշան եկեղեցու արևմտյան և հյուսիսային կողմերից բացվող երկու դռները առնված են քառակուսի շրջանակների մեջ, որոնք դրսի կողմից զարդարված են գեղեցիկ քանդակներով։ Եկեղեցու արևմտյան կողմին կից, ուշ շրջանում կառուցվել է գավիթը, որն իրենից ներկայացնում է մի ընդարձակ սրահ։ Գավթի ներսում դտնվող հրկու ամբողջական և տասը կիսասյուները խաչաձև կամարներով գոյացնում են նրա գմբեթն ու առաստաղը։ Կամարների, խոյակների և դռների շրջանակների նուրբ քանդակներով հարուստ այս եկեղեցին հնում միաժամանակ հանդիսացել է Լոռվա թագավորների, թագուհիների և ազնվազարմ իշխանների պանթեոնը։ Եկեղեցու հատակը ամբողջությամբ ծածկված է գերեզմանաքարերով։

Հաղպատի հուշարձանների մեջ առանձին հետաքրքրություն

է ներկայացնում Համազասպ ժամատունը, որը կառուցել է վանքի վանահայր Համազասպ եպիսկոպոսը 1257 թվականին: Այս շենքը գտնվում է Աստվածածին եկեղեցու արևելյան կողմում: Մատենադարանների կարծիքով Համազասպ եկեղեցին հենց պետք է վանքի հոգևոր դպրոցը եղած լինի, որտեղ ուսանել են վանքում սովորողները: Այս շենքի ընդարձակ, դահլիճանման ներսը հարուստ է սյուներով և կամարներով, որոնք նույնպես, որպես կանոն, զարդարված են քանդակներով ու նախշերով: Վանքի հոգևոր դպրոցի հարավային կողմում է գտնվում Գրատուն-Մատենադարանը, որը հիշեցնում է Սանահնում եղած, նույն նպատակի համար կառուցած շենքը: Դրանից հետո այցելուի ուշադրությունը գրավում է կամարածածկ սրահը իր գերեզմանաքարերով, մահարձաններով ու խաչարձաններով, որոնց մեջ իր նրբագույն քանդակներով ու շքեղությամբ անմիջապես աչքի է ընկնում Ամենափրկիչ խաչարձանը՝ կառուցված 1273 թվականին: Սրա վրա պատկերված է Քրիստոսի խաչելությունը իր մանրամասն ատրիբուտներով:

XIII դարին է վերաբերում նաև հուշարձանների պլեխավոր խմբից դեպի արևելք գտնվող զանգակատունը:

Թվարկված հուշարձանները, որոնք կազմում են Հաղպատի վանքի հիմնական շինությունները, ապահովության համար շրջապատված են պարիսպներով, որոնց կառուցման թվականը, սակայն, հայտնի չէ: Տեղում պահպանված մի քանի արձանագրություններից երևում է, որ XIII դարում այն վերանորոգվել ու վերակառուցվել է: Պարիսպները կառուցված են սրբատաշ և անտաշ քարերով. օգտագործվել են նաև թրծած աղյուս և կրաշաղախ: Հաղպատի վանքի պարսպի վրա տեղ-տեղ կան բրգաձև աշտարակներ: Պարսպի գլխավոր և կամարակապ մուտքը գտնվում է արևմտյան կողմում:

Վանքի պարիսպների ներսում է գտնվում նաև գերեզմանոցը, որի տապանաքարերը հղկված և մշակված են: Տապանաքարերի վրա եղած արձանագրությունները վերաբերում են XII—XIX դարերին: Հայ միջնադարյան եկեղեցական և գիտական ու քաղաքական շատ գործիչների հետ այստեղ է գտնվում նաև XII դարի հայ նշանավոր մաթեմատիկոս, տոմարագետ ու բանաստեղծ Հովհաննես Իմաստասերի գերեզմանը: Վանքի պարիսպներից դուրս եկեղեցական և աշխարհիկ բնույթի մի քանի կառուցումների մեջ կարևոր է նաև Հաղպատի աղբյուրը, որը կառուցվել է 1258 թվականին: Սրահանման այս շենքի հարավային կողմում գտնվող



երկու սյուները նրա ճակատը բաժանում են կամարաձև երեք բացվածքների: Աղբյուրի ներսում, պատերին կից դրված քարե ավազանները մշտապես լցվում են կավե խողովակներով հոսող ջրով:

Հաղպատի հնություններն և տեսարժան վայրերը չեն սահմանափակվում միայն դյուղում գտնվող վանքի ճարտարապետական կոմպլեքսով ու մյուս օժանդակ կառուցումներով: Սանահնի նման, Հաղպատի շրջակայքը նույնպես հարուստ է բազմապիսի հնություններով, որոնք սակայն դիտելու համար մեկ անգամ կատարած այցելությունը չի բավականացնի, ուստի դուք բավարարվում եք մայր մտնող արևի վերջին շողերի տակ մեկ անգամ ևս հիանալով ձեր առաջ փռված այդ բնական թանգարանով և հաճույքով հրաժեշտ եք տալիս Հաղպատին ու ճամփա ընկնում դեպի Ախթալա:

Ալավերդու շրջանի տերիտորիայում եղած բազմաթիվ ու բազմապիսի պատմական ու տեսարժան վայրերից է՛լ նաև Ախթալա գյուղը, որը գտնվում է Դեբեդ գետի աջ կողմում: Ախթալան հայտնի է եղել դեռևս X դարում իր անառիկ բերդով, եկեղեցիներով ու վանքերով: Գյուղի բնականից անառիկ դիրքը էլ՛ ավելի է ամրացվել արհեստական բրգավոր պարիսպներով, որոնց ներսում ժամանակին եղել են բազմապիսի օժանդակ շենքեր, բնակարաններ ու այլ կառուցումներ: Ախթալայի բերդի ներսում է գտնվում նաև գյուղի նշանավոր վանքը իր եկեղեցիներով ու այլ շինություններով: Ախթալայի վանքը կառուցվել է XII դարի վերջերին կամ XIII դարի սկզբներին՝ Իվանե Աթաբեկ Զաքարյանի կողմից: Այս վանքն աչքի է ընկնում իր գեղեցիկ քանդակներով և ինքնուրույն ոճով: Ախթալան ու նրա շրջակայքը համարվում են մեր ռեսպուբլիկայի աշխատավորների լավագույն հանգստյան վայրերից մեկը: Ամեն տարի Ախթալայի հանգստյան տանը իրենց արձակուրդն են անցկացնում և հանգստանում ռեսպուբլիկայի ու Միության շատ վայրերից եկած բանվորները, ծառայողները, ուսանողները և տարբեր մասնագիտության տեր մարդիկ:

Դեռևս Ալավերդի չհասած, Թումանյան (նախկին Քոլագերան) երկաթուղային կայարանից ոլորապտույտ մի ճանապարհ, անտառապատ լեռնալանջով ձգվելով դեպի հյուսիս-արևելք, ձեզ կտրող է հասցնել Դեբեդի աջափնյա սարահարթերից մեկը, որի վրա փռված է Հայաստանի գեղեցիկ ու նշանավոր մի գյուղ, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայրը՝ Թումանյանը, որը գտնվում է Ստեփանավան—Գյուլագարակ—Թումանյան երթուղու վրա:



## 7. ԵՐԵՎԱՆ—ՍԵՎԱՆ—ԴԻԼԻՋԱՆ—ԻՋԵՎԱՆ—ԲԵՐԴ

Երևան—Բերդ երթուղին Սովետական Հայաստանի ամենահետաքրքիր երթուղիներից մեկն է։ Նրանով փաստորեն ռեսպուբլիկայի տերիտորիան բաժանվում է երկու հավասար մասերի, եթե չհաշվենք Սևանա լճի գրաված տերիտորիան։ Այդ ճանապարհով անցնելիս հետաքրքրասերը տեսնում է բնական ամենազանազանակերպ պայմաններ՝ կիսաանապատներ, տափաստաններ, անտառներ, ալպյան արոտավայրեր և հեռվում, Արագածի ու Մեծ Մասիսի մերձգագաթային շրջանում, ճերմակին տվող հավերժական ձյան զանգվածներ։ Նա միաժամանակ տեսնում է ամենատարբեր ժամանակաշրջաններին վերաբերող կոթողներ՝ հին ու հնագույն բերդերի ու ամրոցների մնացորդներ, միջնադարյան մամռակալած պատերով կիսավեր կամ կանգուն վանքեր, մեր լուսավոր օրերի արգասիք հսկա հիդրոէլեկտրակայաններ, բարեկարգ ավաններ ու քաղաքներ, առողջարաններ ու հանգստի տներ, կոլտնտեսություններ ու սովխոզներ, նա տեսնում է մեր լեռնային գեղեցկուհին՝ չքնաղ Սևանը, շատ ու շատ գրողների, բանաստեղծների, նկարիչների և բնությունը սիրող այլ մարդկանց սիրուհուն։

Ամբողջ երթուղին բաժանելով երեք հատվածի և հետևելով ճանապարհի ընթացքին՝ փորձենք ճանապարհորդի ուշադրությանը





Դիլիջան

արժանացնել դրանք կամ մոտակայքում ընկած հիշարժան վայրերը։

*1)* Երևան—Սևան (66 կմ)։ Ավտոմեքենան Երևան քաղաքի Աբովյան կամ Տերյան փողոցով դուրս գալով, մտնում է ասֆալտապատ, լայն ու անտառազարդ ճանապարհը, որը տանում է դեպի վեր, դեպի Քանաքեռի սարահարթը։ Քանաքեռի բարձրությունից ուղևորի առջև բացվում է ամենահազվագյուտ տեսարաններից մեկը։ Ներքևում՝ նրա ոտքերի տակ, փռված է պճնազարդ Երևանն իր ծառաստաններով, պուրակներով, այնազարդ փողոցներով ու լայն պողոտաներով, բազմաթիվ գործարաններով, լայնարձակ հրապարակներով, ամենատարբեր երանգի ու գույնի քարակերտ կառույցներով ու տներով։ Այդտեղից հմայիչ է Երևանը մանավանդ գիշերը, երբ վառվում են նրա բազմահազար էլեկտրական լամպերը, և քաղաքը ամբողջովին ողողվում է լույսով։ Օրվա այդ ժամին Երևանը կարծես մի հրեղեն ամբողջություն լինի, գետին իջած աստղալից երկնքի մի հատված։ Քանաքեռի սարահարթով ավելի վեր բարձրանալով, ուղևորի առջև բացվում է մի նոր հորիզոն, որ ընդգրկում է ավելի լայն սահմաններ։ Հարավում Մեծ ու Փոքր Մասիսներն են մեջք-մեջքի տված, որոնց հյուսիսային սառոյտով արծաթյա գոտի է կապել Արաքսը, հյուսիս-արևմուտքում սառնորակ աղբյուրների և կապուտակ լճակների սարն է, գույնզգույն ծաղիկների թավիշով ծածկված Արագածը՝ դեպի վեր խոյացած իր վեհաշուք չորս կատարներով, իսկ արևելքում գրեթե միջօրեականի ուղղությամբ ձգված Գեղամա լեռնաշխարհն է իր ամպածածկ լեռնագագաթներով։ Քանաքեռի ամբողջ սարահարթը, որ մի ժամանակ անհրապույր և ամայի էր, այժմ դարձել է Երևանի բաղկացուցիչ մասը։ Այնտեղ տարածվում են «Հաղթանակ» զբոսայգին և Նոր Արաբկիր ու Նոր Զեյթուն նորաշեն ավանները, որոնք անմիջապես միացած են՝ վերջերս Երևանի մասը դարձած Քանաքեռ ավանի հետ։

Երևանից մինչև Սևան ճանապարհը շարունակ բարձրանում է ծովի մակերևույթի նկատմամբ ավելի ու ավելի դեպի վեր։ Քանաքեռից սկսած կլիմայական պայմանները աստիճանաբար փոխվում են, Արարատյան դաշտի և նրան անմիջապես շրջապատող շրջանների ամառվա շոգը փոխարինվում է ավելի զով եղանակով, զգացվում է Գեղամա և Արագած լեռներից իջնող բուրավետ ու զով օդի ազդեցությունը. օդը գնալով սառչում է, և Սևանում եղանակներն այնքան են ցրտում, որ նույնիսկ ամառը երբեմն հարկ է լի-

նում դուրս գալ կոստյումով։ Կլիմայական պայմանների հետ միասին փոխվում է նաև տեղանքի լանդշաֆտը. ուղևորը դուրս գալով կիսաանապատից, մի քանի րոպե անց հասնում է լեռնային տափաստանները, որոնցից մի փոքր բարձր հանդիպ է դալիս մերձալպյան գոտին։ Ճանապարհը միշտ անցնում է Հրազդան (Զանգու) գետի ձախ կողմով, նրա հոսանքի հակառակ ուղղությամբ՝ ուղեկցվելով Սևանից Երևան ձգված բարձր լարվածություն ունեցող էլեկտրալարերով։ Մեքենան դուրս գալով Քանաքեռից, նախ մտնում է էլար, Ֆանտան, Ներքին Ախտա՝ Ախտալի շրջկենտրոնը, ապա հասնում Սևանա լճի հյուսիս-արևմտյան անկյուններից մեկում գտնվող Սևան ավանը, որը հանդիսանում է նույնանուն վարչական շրջանի կենտրոնը։

Երևան—Սևան խճուղու տարբեր հատվածներից սկսվում և դեպի հյուսիս-արևմուտք են դիմում երեք այլ ճանապարհներ, որոնցից առաջինը տանում է Արզնի առողջարանը, երկրորդը՝ Արզական մարմարի հանքավայրը, իսկ երրորդը՝ Ծաղկաձոր, մեր Բրիտանի մանուկների ամենասիրած վայրերից մեկը։ Երևանից մինչև Ախտա խճուղուն հետևում է նաև երկաթգիծը, որը հետագայում միացվելու է Թբիլիսի—Բաքու երկաթգծի Աղստաֆա կայարանին։

Ճանապարհի երկու կողմերում տարածվում են զանազան մշակույթների ցանքսերը, իսկ ավելի հեռու՝ դեպի արևելք, Գեղամա լեռների ալպյան մարգագետիններն են, արևմուտքում՝ Արագածը, Արայի լեռը, հյուսիսում՝ Ծաղկունյաց լեռների արևելյան վերջնաճյուղերը։ Գեղամա լեռնասիստեմին պատկանող Հագիս (2530 մ), Գութանսար (2303 մ) ու Մինակասար (2402 մ), իսկ արևմուտքում Արագած, Արայի լեռ ու Ծաղկունյաց լեռների մի քանի գագաթները փակում են հորիզոնը արևելքից ու արևմուտքից։

Երևանից Սևան գնալիս ուղևորը լիճը հեռվից չի կարող տեսնել, որովհետև լեռնային գեղեցկուհին ամփոփված է բարձրադիր ափերի մեջև։ Լիճը նրա առջև բացվում է անապասելիորեն, Սևան ավանը մտնելուց հետո։ Շատ ու շատ բանաստեղծներ ու գրողներ են գովերգել Սևանը, բազմաթիվ աշխարհագրագետներ, երկրաբաններ, ջրագետներ ու տնտեսագետներ զբաղվել են նրա ծագման, նկարագրման և տնտեսությանն ի սպաս դնելու հարցերով։

Հայ ժողովրդի և Հայկական լեռնաշխարհում նրան նախորդած ժողովուրդների համար հնագույն ժամանակներից ի վեր երկրագործությունն իր բազմաթիվ ճյուղերով եղել է ամենակարևոր զբաղմունքը։ Սակայն Հայաստանը Արևելքի հին, զարգացած այն երկրներից մեկն է, որտեղ ցամաքային կլիմայական պայմանների պատճառով նույնիսկ ամենաբերրի դաշտերում ու հովիտներում անհնար է եղել երկրագործությամբ զբաղվել, առանց արհեստական ոռոգման։ Այստեղ առանց ջրի ոչ մի մշակույթ չի կարելի աճեցնել, ջուրն է կյանք տալիս պապակ դաշտերին ու հովիտներին, ջուրը կենսական անհրաժեշտություն է, գոյության հիմնական պայմաններից մեկը։ Այդ է եղել պատճառը, որ ջուրը հին Հայաստանում դարձել է պաշտամունքի առարկա։ Հին առուների, արհեստական լճակների ու ջրամբարների մոտ քարաժայռերին քանդակված վիշապները, որոնք այնքան մեծ թիվ են կազմում Հայաստանի զանազան շրջաններում, ժողովրդական էպոսների մեջ զորավոր կաթնաղբյուրների և հավերժահարսերի գոյությունը, կրոնական մի քանի ծիսակատարություններ, այդ բոլորը կապված են ջրի պաշտամունքի հետ և հանդիսանում են նրա վերապրուկները։ Հին հայերը և նրանց նախորդած ժողովուրդները իրենց կենսական անհրաժեշտությունից ելնելով, անց են կացրել առուներ, կառուցել արհեստական լճակներ, ամբարտակներ։ Հայաստանի շատ շրջաններում կարելի է տեսնել հին ժամանակներում ստեղծված ոռոգման ցանցի հետքերը։ Այդպիսիները կարելի է տեսնել Արագածի հարավային ստորոտներին, Գեղամա լեռների արևմտյան լանջերին, Հոկտեմբերյանի շրջանում, Վանա լճի ավազանում, որտեղ մինչև օրս էլ գործում է ուրարտական ժամանակաշրջանում կառուցված 80 կմ երկարություն ունեցող Մենուայի ջրանցքը (այժմ Շամիրամ-սու) և այլուր։

Հայ ժողովրդի առանձին փայփայանքի առարկան է եղել Արարատյան արգավանդ դաշտը, հայկական պետականության և կուլտուրական ու տնտեսական կյանքի կենտրոնը։ Մինչև մոնղոլական ու դրան հաջորդած օտարերկրյա այլ տիրապետությունների ժամանակաշրջանը՝ Արարատյան դաշտը եղել է Հայաստանի ամենաբաղկած շրջանը, նրա մեծ մասը ենթակա էր արհեստական ոռոգման ու ծածկված է եղել այգիներով, բանջարանոցներով ու բոստաններով, բամբակի դաշտերով և հացահատիկային կուլտուրաների ցանքսերով։ Մոնղոլական, թուրք-թաթարական և թուրքական ու պարսկական ծանր լծի ու հարատև պատերազմների հետևանքով, դարեր շարունակ (XIII—XIX դդ.) ավերվել են Արարատյան դաշտում ստեղծված և ստեղծվող արհեստական ոռոգման ցանցերը. այդ ուղղությամբ ձեռնարկված մասնակի միջոցառումները արմատական բնույթ չեն ունեցել և չեն փոփոխել երկրի ընդ-

հանուր դրությունը։ Արարատյան դաշտում եղած ջրի պաշարները այնքան քիչ են, որ չեն կարող երաշտից փրկել արևակեզ հարթության մշակույթները, անհրաժեշտ էր ջրի նոր, ավելի հաստատուն և հորդ աղբյուրներ որոնել։ Արարատյան դաշտի համար իրրև ոռոգման աղբյուր կարող էր ծառայել նրանից ավելի քան 1000 մետր բարձր և 65—70 կմ հեռավորության վրա գտնվող Սևանա լիճն իր անուշահամ ջրերի դարավոր պաշարներով։ Արարատյան դաշտը ոռոգելու նպատակով Սևանա լճի ջրերն օգտագործելու միտքն առաջին անգամ ծագել է անցյալ դարի 40-ական թվականների վերջերին։ Այդ գաղափարի առաջքաշողներն ու կողմնակիցները գտնում էին, որ անհրաժեշտ է փակել Սևանա լճից սկիզբ առնող Հրազդան (Զանգու) գետի ելքը և ջրերը գետով բաց թողնել միայն ոռոգման կարիք զգացվող ամիսներին, այսինքն՝ տարվա ընթացքում Հրազդան գետով հոսող ջուրը կուտակել և բոլորը օգտագործել միայն ամառային ամիսներին։ Այդ եղանակով հնարավոր կգառնար ոռոգման ենթարկել Արարատյան հարթության ևս մի հատվածը, բայց նրա գրաված ընդարձակ տարածության համեմատությամբ ոռոգվող մասն, այնուամենայնիվ, կդրավեր չնչին տերիտորիա։ Այդ նախագծերը մնում էին անիրագործելի, բայց դրանց կապակցությամբ մեծանում է հետաքրքրությունը Սևանա լճի ուսումնասիրման բնագավառում։ Կազմակերպվում են մի շարք գիտական էքսպեդիցիաներ, որոնց աշխատանքներն ավարտվում են 1911 թ.։ Սևան-Հրազդան կասկադի պրոբլեմն այն ձևով, ինչ ձևով որ այժմ է դրված, առաջ քաշվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Պրոբլեմի գիտական ուսումնասիրման և հիմնավորման համար հսկայական միջոցներ է բաց թողնում Մ իության կառավարությունը։ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ կազմակերպվում է կոմպլեքսային գիտական էքսպեդիցիա, պրոբլեմը բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար։ 1931 թ. Սովետական Հայաստանի կառավարությունը հավանություն է տալիս Սևանա լճի ու Հրազդան գետի ջրերը էներգետիկ և ոռոգման նպատակներով օգտագործելու համար կազմված նախասկզբնական սխեմային և գործի դնում այն։ 1952 թ. սխեման վերանայվում է և որոշ փոփոխություններ մտցվում նրա առանձին դրույթների մեջ։ Ըստ այդ սխեմայի, պետք է անցկացվեն 17 ոռոգման առուներ, որոնք բոլորը միասին վերցրած՝ Արարատյան դաշտում ոռոգելու են 120 հազար հեկտար տարածություն։ Ավելի հետաքրքրական է սխեմայի էներգետիկ



մասը։ Նախատեսվում է կառուցել 9 հիդրոէլեկտրակայաններից բաղկացած կասկադ, որը պետք է ընդգրկի Հրազդան գետի ամբողջ անկումը, այսինքն՝ 1096 մետր։ Լճից դուրս եկող ամեն մի խորանարդ մետր ջուրը անցնելով բոլոր էլեկտրակայանների միջով, պետք է տա 2,2 կվ/ժամ էներգիա։ Պրոբլեմի ոռոգման և էներգետիկ՝ նշված ծավալի աշխատանքներն ապահովելու համար Սևանա լճից Հրազդանով դուրս եկող ջրի քանակը 110 մլն խորանարդ մետրից հասցվել է 700 մլն խորանարդ մետրի՝ հարատև ժամանակի համար, շնորհիվ լճի մակերեսի կրճատման և դրա հետևանքով էլ՝ գոլորշիացման նվազեցման։ Լճի մակարդակը 50 մետրով իջեցնելով՝ Մեծ Սևանը, որի տարածությունը հասնում է ավելի քան 1000 քառ. կմ-ի և որն անհամեմատ ավելի ծանծաղ է, քան Փոքր Սևանը, պետք է չորանա, և դրա հետևանքով լճում առաջանալու է նոր հավասարակշռություն։ Սևանա լճի ջրերի դարավոր պաշարը վերջանալուց հետո Սևան-Հրազդան կասկադի բոլոր ինը հիդրոկայանների թողարկած էլեկտրաէներգիան նախնականի հետ համեմատած կրճատվելու է մոտ 40%-ի չափով։ Իսկ կասկադի բոլոր հիդրոկայանների հզորությունը միասին վերցրած՝ լճի ջրերի դարավոր պաշարների օգտագործման պայմաններում կաճի անհամեմատ մեծ չափերով։ Կասկադի հիդրոկայանների մեջ հզորագույնը Գյումուշգեխն է, որի հզորությունը հասնում է 224 հազար կիլովատի։ Նա Անդրկովկասում իր հզորությամբ բռնում է երկրորդ տեղը, առաջին տեղը զիջելով Մինգեչաուրգեխին։ Գյումուշգեխը աշխարհի ամենամեծ ճնշումն ունեցող հիդրոկայաններից մեկն է։ Շահագործման հանձնված մյուս գեխերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Լճային գեխը, որը ստորերկրյա առանձնահատուկ տեղ ունի և գտնվում է անմիջապես Սևանի ափին՝ 105 մետր խորության վրա, Քանաքեռգեխը և այլն։

Վերոհիշյալ կասկադի հիդրոկայանների տուրբինները գործի դնող Սևանի ջրերը լճից դուրս են գալիս Հրազդան գետի ձոր, ստորև երկրյա հունով, այսինքն՝ թունելով։ Սևան-Հրազդան կասկադի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ նա անվերջ մշտապես միևնույն առատությունն ունեցող աղբյուրից՝ լճից, կարգավորիչի դեր պետք է խաղա Անդրկովկասյան միասնական էլեկտրացանցի մեջ։ Լճի ջրերի դարավոր պաշարներն առավել էֆեկտիվությամբ օգտագործելու համար, ՍՍՌՄ կառավարությունը որոշել է 1960 թ. ավարտել կասկադի դեռևս չավարտված

հիդրոկայանների կառուցումը և անցկացնել նախագծված ոռոգողական առուները։ Այդ պլանի կատարման համար երևանից մինչև Սևան՝ մոտ 70 կմ տարածության վրա ամենուրեք ծավալվել են շինարարական աշխատանքներ։ Շինարարական աշխատանքներ են կատարվում և՛ արդեն շահագործման հանձնված գեսերի շուրջն ընկած ավաններում, և՛ կառուցվող հիդրոկայաններում, և՛ ոռոգման ջրանցքների շրջանում։ Շահագործման հանձնված գեսերն իրենց ամբարտակներով ու նորակերտ ավաններով, նոր կառուցվող հիդրոկայաններն ու ջրանցքները իրենց շինարարական հրապարակներով հանդերձ, յուրաքանչյուրն առանձին-առանձին վերցրած՝ կարող է լինել էքսկուրսիայի օբյեկտ՝ հետաքրքրասերի և համապատասխան մասնագետների համար։

Սևանի պրոբլեմը բարդագույն պրոբլեմ է։ Էլեկտրաէներգիայից ու ոռոգումից բացի՝ նրա բազկացուցիչ մասերն են կազմում նաև ձկնորսության, նավագնացության, լճի մակարդակն իջնելու հետևանքով ջրից ազատված հողերի յուրացման և այլ բազմաթիվ հարցեր։ Պրոբլեմի խելացի և բազմակողմանի լուծումը պահանջում է և բազմակողմանի գիտական ուսումնասիրություն։ Տասնյակ տարիներ շարունակ գիտական մի շարք էքսպեդիցիաներ ու առանձին հետազոտողներ, մշտական գործող տասնյակ գիտակայաններ զբաղվել ու զբաղվում են Սևանի պրոբլեմի հետ կապված հարցերի ուսումնասիրությամբ։ Ուսումնասիրվում են լճի հատակի ռելիեֆը, կառուցվածքը, լեռնատեսակները, լճի ջրի բաղադրությունը, ջերմային ռեժիմը, գույնը, թափանցիկությունը, սառերկրյա ճանապարհով ունեցած կորուստը, գոլորշիացման պայմանները, լճի մակարդակի իջեցման հետևանքով նրա շրջակայքի բնա-կլիմայական և օդերևութաբանական պայմանների կրած փոփոխությունները և այլն, և այլն։ Ներկայումս ավելի ու ավելի լայն ժողովրդականություն են ձեռք բերում Մեծ Սևանը պահպանելու համար առաջքաշված զանազան նախագծեր։ Այդ նախագծերն իրականացնելու համար՝ միջոցներ են որոնում Հրազդանով դուրս եկող լճի ջրի դարձի՝ պաշարները կոմպենսացիայի հնարկելու, այլ գետեր արհեստական եղանակով Սևան ուղղելու ճանապարհով։ Լիճը պահպանելու համար ոմանք առաջարկում են Մարմարիկ գետը թունելով ուղղել դեպի լիճ, ոմանք՝ Ախտաև գետը, ոմանք՝ Արփան, ոմանք՝ Որոտանը, ոմանք առաջարկում են մի քանի գետակ միաժամանակ ուղղել Սևան, իսկ ոմանք էլ գտնում են, որ ձմռանը լճից բաց թողնվող ջուրը հասցնել նավազագույնի, պակասած էլեկտրաէներգիան



լրացնելով ջերմակայանների միջոցով։ Մեծ Սևանի վերացման գաղափարը այժմ արդեն անցել է պատմության դիրկը։ ՍՍՌՄ Մինիստրների Սովետը 1958 թ. մայիսի 30-ին, քննարկելով Հայկական ՍՍՌ էներգետիկ բազան ընդլայնելու ուղղությամբ ՀԿՊ ԿԿ և ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետի մշակած միջոցառումները, հատուկ որոշում ընդունեց մեր ռեսպուբլիկայի էներգետիկ տնտեսության հետագա զարգացման, Սևան-Հրազդան կասկադը ոռոգողական գրաֆիկի փոխադրելու, և Սևանա լիճը հնարավոր բարձր մակարդակի վրա պահելու մասին։ Այդ որոշման համաձայն՝ խիստ կերպով կրճատվելու է Սևանա լճից բաց թողնվող ջրի քանակը, արագացվելու է Աթարբեկյանի և Երևանի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը, իսկ կասկադի վերջին աստիճաններում՝ Արգավանդում և Նորագավիթում նախատեսված հիդրոէլեկտրակայանների կառուցումը՝ մերժվում է։ Ռեսպուբլիկայի զարգացող տնտեսության էներգետիկ պահանջի պակասը լրացվելու է Ադրբեջանական ՍՍՌ-ից գազամուղով բերվելիք բնական գազով աշխատող ջերմակայանների և ռեսպուբլիկայի լեռնային ջրերի վրա կառուցվելիք հիդրոէլեկտրակայանների միջոցով։

2) Կապուտակ Սևանից մինչև առողջարանների քաղաք Դիլիջան։ Սևանա լճի ամբողջ գեղեցկությունը երևում է Սևան ավանից մինչև Ծովագյուղ ձգված ճանապարհահատվածում, որը ընդամենը մի քանի կիլոմետր է։ Մեքենան դուրս գալով Սևան ավանից, նախ մտնում է Գոմաձոր ու Ցամաքաբերդ գյուղերը, ապա հասնում լճի հյուսիս-արևմտյան անկյունում գետեղված Ծովագյուղ գյուղը՝ նախկին Ջիբուխլուն, որի նահապետական պատկերն այնքան լավ նկարագրված է հայ վիպասան Մուրացանի կողմից։ Խճուղին այդ հատվածում շարունակ անցնում է Սևանա լճի բարձրադիր ափով, որը տեղ-տեղ առաջացնում է խոր անդունդներ։ Այստեղից ողջ Սևանը իր բազմերանգ կապույտով փռվում է ուղևորի առջև՝ երեք կողմերից պատած ցամաքով, իսկ հարավ-արևելքում միանում է հորիզոնին։ Հանդարտ ու պարզկա եղանակներին հայելի է Սևանա լիճը՝ գիշերը լուսնի, իսկ ցերեկը՝ արեգակի համար։

Զարմանալիորեն ջինջ են նրա անուշահամ ջրերը։ Օրվա որոշ պահերին լճի մակերևույթի իդեալական հանգստությունը խանգարում են միայն լողացողները, մակույկները, նավակները և ձկները, որոնց թվում և իշխանը՝ Սևանա լճի ամենահարազատ բնակիչը, նրա զարդը։ Բնականից Սևանա լճի համար էնդեմիկ համարվող այդ ձուկը ամենահամեղ ձկներից մեկն է։ Ցամաքաբերդի

մոտ, լճակից ոչ հեռու դուրս է ցցված Սևանա կղզին, որը լճի մակարդակի իջեցման հետևանքով այժմ նեղ պարանոցով կապվել է ցամաքի հետ, վերածվելով թերակղզու։ Փոքրիկ ու ժայռոտ է Սևանա կղզին, սակայն գեղեցիկ է ու հմայիչ։ Կղզու բարձրության վրա զետեղված է միջնադարյան Սևանա վանքը՝ բաղկացած երկու տաճարներից, որոնց ճարտարապետական կառուցվածքը և պատերին եղած հին ու նոր հիշատակությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Գեղամա երկրի մյուս նշանավոր վանքերի՝ Հավուց Թառի, Շողագայի և Մաքենիսի հետ միասին Սևանա վանքը խոշոր դեր է խաղացել միջնադարյան Հայաստանի կուլտուրական կյանքում։ Միջին դարերում այդ փոքրիկ կղզին իրենից ներկայացրել է ամրոց, նման Վանա լճի հարավային ափի մոտ գտնվող Աղթամար կղզուն, որտեղ քաղաքական աննպաստ պայմաններում հաճախ ապաստան էին գտնում շրջակայքի բնակիչները։ Սևանա կղզին և նրա ամրոցը առանձնապես հայտնի դարձան Աշոտ II-ի (Երկաթ մականուն ստացած) օրոք (914—928 թթ.), երբ այն դարձվեց անմատույց և Հայաստանում իր ծանր լուծը հաստատած Արաբական խալիֆայության դեմ բարձրացող հայ ժողովրդի ֆորպոստներից մեկը։ X դարի 20-ական թվականների սկզբներին, երկարատև ու անհավասար կռիվներից հետո՝ Սևանա կղզում ապաստանած Աշոտ II թագավորը վերադասավորելով իր փոքրիկ ուժերը, հանկարծակի ափ է դուրս գալիս և պարտության մատնում Բեշիր զորավարի հրամանատարության ներքո գտնվող արաբական ստվարաթիվ բանակը, որը պաշարել էր կղզին և ձգտում էր ջախջախել Աշոտ II-ի ջոկատը։ Սևանի այդ փոքրահեղ ու հաղթական ճակատամարտից հետո՝ Արևելյան Հայաստանի մեծ մասը մաքրվում է արաբներից, հայ ժողովուրդը վերականգնում է իր պետականությունը։

Սևանա ժայռոտ կղզու հյուսիս-արևմտյան ստորոտին փռված փոքրիկ հարթությունում, որը բավական ընդարձակվել է լճի իջեցման պատճառով, տեղադրված է Սովետական Հայաստանի Գրողների միության հանգստի տունը, որի մոտ գտնվում է օդերեվութաբանական և ջրադիտական կայան։ Կղզին շատ հարմար է գրողների համար հանգստի տուն լինելու, չէ որ այնտեղ բոլորի աչքերը լցվում են պոետականությամբ, բոլորը ընկղմվում են անուրջների մեջ, չէ որ Սևանա լիճն իր շրջակայքով ու կղզով մի հրաշալի պոեզիա է, կյանքի ու աշխատանքի հորդաբուխ աղբյուր։ Անկախ մասնագիտությունից և տարիքից՝ Սևանա կղզու այցելու-



ներից շատերն են երկար ժամանակ գամված մնացել նրա ժայռոտ կատարին և հայացքներն ուղղել դեպի լճի թովիչ հեռուները։

Թողնելով Սևանա կղզին ու ցամաքաբերդ գյուղը՝ ուղևորը շուտով հասնում է Ծովագյուղ, որը գտնվում է Զկնագետ գետի գետաբերանի շրջանում։ Այստեղից սկսվում է ուժեղ վերելք, և ավտոմեքենան բարեկարգ ու ասֆալտապատ խճուղով շեշտակի կերպով սլանում է դեպի վեր, որտեղից Սևանա լիճը երևում է իբրև երկնագույն հագուստով զարդարված մի գեղեցկուհի՝ չորս կողմից պատած լայն ու ճերմակ գոտով, որը ազդարարում է նրա նախկին սահմանները։ Ծովագյուղից դուրս գալուց մի քանի րոպե անց, ուղևորի տեսողությունից Սևանը անհետանում է, մի քանի րոպեից հետո մեքենան բարձրանում է մերձալպյան գոտին, և բնությունը միանգամից փոխվում է։ Այստեղ, Ծովագյուղից մի քանի կիլոմետր հյուսիս-արևմուտք, Սևանա լճի հյուսիսը պատող Արեգունի լեռնաշղթայի և արևմուտքից լայնական ուղղությամբ դեպի Զկնագետ ձգվող Փամբակի լեռնաշղթայի միջև գտնվում է Սևանի լեռնանցքը, որը ծովի մակերևույթից ունի ավելի քան 2100 մետր բարձրություն և իրենից ներկայացնում է բավական երկար ձգված մի թամբ։ Երևանից Բերդ տանող ամբողջ երթուղում Սևանի լեռնանցքը ամենաբարձր կետն է։ Նրա երկու կողմերում բարձրանում են Արեգունի և Փամբակի լեռնաշղթաները, որոնց բարձրադիր մասերը ծածկված են մերձալպյան փարթամ արոտավայրերով և հազարավոր գույնզգույն ու վառ ծաղիկներով։ Անցնելով Սևանա լեռնանցքը, ուղևորը հրաժեշտ է տալիս Արաքսի անտառազուրկ ավազանին և մտնում է Քուռի ավազանը, որն այդ մասերում ամբողջապես ծածկված է անտառներով։ Սևանի լեռնանցքից սկսած՝ խճուղին ոլորապտույտ իջնում է դեպի Աղստև գետի ձորը։ Այդ ոլորապտույտները, որ հայտնի են Դիլիջանի շրջադարձեր անունով, հասնում են մի քանի տասնյակի և ունեն մեծ թեքություն։ Ուղևորի վրա մեծ տպավորություն է թողնում խճուղու այդ հատվածը. նա անցնում է խիտ անտառների միջով, շեշտակի կերպով վեր խոյացած լեռան լանջով դեպի վար՝ մոտ 1000 մետր։ Շուտով վայրէջքը վերջանում է, և մեքենան մտնում է անտառապատ ձորը, որը սկզբում ունի հյուսիս-արևմտյան ուղղություն, ապա՝ հյուսիսային։ Ձորը մտնելուց հետո մի քանի րոպե անց մեքենան նախ մտնում է Գոլովինո գյուղը, ապա առողջարանների քաղաքը՝ գեղատեսիլ Դիլիջանը, որը նկարագրված խճուղով հաշված՝ Երևանից գտնվում է 107 կմ հեռավորության վրա։

Դիլիջան քաղաքը վարչականորեն մտնում է Հայկական ՍՍՌ Իջևանի շրջանի մեջ։ Նա ՍՍՌՄ ամենահարավային բնա-կլիմայական առողջարաններից մեկն է և ծովի մակերևույթից ունի 1258—1510 մետր բարձրություն։ Քաղաքը փռված է Աղստև գետի գեղատեսիլ ափերին, որոնք երկու կողմից սեղմված են բարձրադիր ու անտառապատ լեռների միջև։ Այստեղ Աղստևին են միանում լեռնային երկու փոքրիկ գետակներ՝ Գոլովինոն և Դիլիջանը, որոնք բավական հորդանում են գարնանը, երբ մեծ քանակությամբ անձրևներ են լինում։ Իր կլիմայական պայմաններով Դիլիջանը պատկանում է Անդրկովկասի՝ զով կլիմայով և զգալի խոնավությամբ աչքի ընկնող գոտուն։ Նրա կլիման բնորոշ է բարեխառն, տաք ամառով և չոր, համեմատաբար տաք ու արևոտ ձմեռով։ Օդի ջերմության միջին տարեկան տատանումը 22—25° է, միջին տարեկան ջերմությունը՝ 8,6°, ամենացուրտ ամսվա (հունվարի) միջին ջերմությունը՝ −1,8°, իսկ ամենատաք ամսվանը (օգոստոսի)՝ 18,6°։ Մթնոլորտային տեղումները հասնում են 610—622 մմ-ի, տեղումները մեծ մասամբ լինում են մայիս, հունիս և հուլիս ամիսներին, իսկ տարվա մյուս ամիսներին, չհաշված աշունը, գրեթե տեղումներ չեն լինում։ Քաղաքը շրջապատող ծաղկածածկ և անտառապատ լեռներից փչող լեռնահովտային քամիները, որոնք իրենց առանձնապես զգացնել են տալիս ամռանը, օդը դարձնում են զով, մաքուր և առողջարար։ Դիլիջանն իր մեղմ ձմեռով, պարզ և արևոտ օրերով, օդի ավելի քիչ խոնավությամբ գերազանցում է բարձր լեռնային առաջնակարգ շատ առողջարանների, այդ թվում և հանրահայտ Կիսլովոդսկին ու Աբասթումանին։ Կլիմայական այդպիսի նպաստավոր պայմանները, ծովի մակերևույթից ունեցած բավական մեծ բարձրությունը, անտառների ու շրջակայքի հանքային ջրերի առկայությունը, մաքուր օդը նախապայմաններ են հանդիսանում այստեղ թոքախտ և ոսկրախտ հիվանդություններով տառապողներին բուժելու համար։ Դիլիջանի շրջակայքում կան մի շարք հանքային ջրեր, որոնք բաժանվում են երկու խմբի՝ հիդրոկարբոնատ-նատրիումականի և հիդրոկարբոնատ-կալցիումականի։ Դրանցից առաջին խումբն ավելի հայտնի է և գտնվում է Դիլիջան քաղաքից արևմուտք 6 կմ հեռավորության վրա, Դիլիջան—Կիրովական խճուղուց երկու կիլոմետր հյուսիս, Բլդան գետի հովտում, որը երեք կողմից շրջապատված է հաճարի, կաղնու, տաճու և լորենու անտառներով ծածկված լեռներով։ Բլդանի հանքային հորդաբուխ աղբյուրները բազմիցս են թվարկվել են մանրազնին ուսումնասիրու-



թյան և իրենց բաղադրությամբ ու բուժիչ հատկություններով արժանացել բարձր գնահատականի։ Երկրորդ խմբին պատկանող հանքային ջրերը քաղաքից գտնվում են ավելի մեծ հեռավորության վրա (նրանից 12—15 կմ հարավ-արևմուտք), Ֆիոլետովո գյուղի շրջակայքում, Դիլիջան—Կիրովական խճուղու մոտ։ Հանքային աղբյուրների այս խմբի ուսումնասիրությունը սկսվել է մեր օրերում և ներկայումս այն շարունակվում է։

Նախասովետական ժամանակաշրջանի Դիլիջանը իրենից ներկայացնում էր սովորական գյուղ, բայց բարեհամբույր կլիմայական պայմանների և Աղստաֆա կայարանից ու Ղարաքիլիսայից (այժմ Կիրովական քաղաք, Հայկական ՍՍՌ) դեպի Երևան տանող ճանապարհների խաչմերուկում գտնվելու շնորհիվ՝ նա ձեռք էր բերել զգալի նշանակություն։ Այնտեղ ամառանոցներ ունեին ինչպես Երևանի նահանգի, այնպես էլ Թբիլիսիի և Բաքվի «ընշանավոր» շատ մարդիկ՝ կապիտալիստներ, աստիճանավորներ և այլն։ Երեվանից դեպի Աղստաֆա կայարան և Ղարաքիլիսա գնացող ուղևորները դադար էին առնում Դիլիջանում։ Իրրև ճանապարհային կայան՝ Դիլիջանում կային իջևանատներ, փոստային կետ, պահեստներ, զինվորական կայազոր։ Այնտեղ կային տարբեր մասնագիտություն ունեցող մի շարք արհեստավորներ, որոնք գրեթե սպասարկում էին ամառանոց եկած ժամանակավոր բնակիչներին և քաղաքով անցնող քարավաններին ու ուղևորներին։

Դիլիջան քաղաք-կուրորտը սովետական ժամանակաշրջանի ծնունդն է։ Հաշվի առնելով նրա գեղատեսիլ բնությունը, բնա-կլիմայական առողջարար պայմանները և հանքային բարձրորակ ջրերը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից միջոցներ ձեռնարկվեցին այն կուրորտային քաղաք դարձնելու համար։ Դիլիջանը Սովետական Հայաստանի առաջին կուրորտն է։ Իրրև կուրորտ նա սկսեց գործել 1924 թ., մինչդեռ հանրապետության մյուս երկու նշանավոր կուրորտները՝ Արզնին ու Ջերմուկը, շարք մտան՝ առաջինը՝ 1926 թ., իսկ երկրորդը՝ 1940 թ.։ Եղբայրական մյուս շատ հանրապետությունների նման՝ սովետական ժամանակաշրջանում Հայաստանում ևս լուրջ ուշադրություն է դարձվում և հսկայական միջոցներ տրամադրվում աշխատավորների առողջության պահպանման ու բուժման ամենատարբեր բնագավառներին։ Ահա այդ է եղել պատճառը, որ Դիլիջանը արագ կերպով աճել, զարգացել, բարեկարգվել և վեր է ածվել կուրորտային քաղաքի։ Ներկայումս նա ունի մի շարք առողջա-

րաններ և հանգստի տներ, որոնցում բուժվում կամ հանգստանում են Սովետական Հայաստանից և Սովետական Միության ամենատարբեր շրջաններից եկող շատ բանվորներ, կոլտնտեսականներ, գիտության, գրականության և արվեստի բնագավառի մշակներ: Ծառապատ և ծաղկազարդ փոքրիկ Դիլիջանը ունի հանքային ջրերի գործարան (որի թողարկած ջուրը շշերով ուղարկվում է ռեսպուբլիկայի և Միության տարբեր շրջաններ) կահույքի ֆաբրիկա, երկա միջնակարգ գպրոց և երաժշտական ուսումնարան: Նրա առողջարանները և հանգստի տները գործում են ամբողջ տարին: Սակայն Դիլիջանում աշխույժ է կյանքը հատկապես ամռանը, երբ բազմաթիվ բուժվողներից ու հանգստի տներում հանգստացողներից բացի, տարբեր տեղերից այստեղ են գալիս հազարավոր ամառանոցաբնակներ: Դիլիջանը բարեկարգ խճուղիներով կապված է Երևանի, Կիրովականի և Բաքու—Թբիլիսի երկաթուղու վրա գտնվող Աղստոփա կայարանի հետ: Հնությունները հարուստ է և՛ ինքը՝ Դիլիջանը, և՛ նրա շրջակայքը: Առանձնապես ուշադրության արժանի են միջնադարյան Հաղարծին վանքի ավերակները, որոնք գտնվում են քաղաքից հյուսիս-արևմուտք ուղիղ գծով 10—11 կմ հեռավորության վրա: Հաղարծինի ավերակները կարելի է գնալ երկու ճանապարհով, որոնցից մեկը լեռնային կածան է, ավելի կարճ (14 կմ) և դուրս է գալիս Դիլիջանից, իսկ մյուսը անջատվում է Իջևան տանող ճանապարհից՝ Հաղարծին և Աղստև գետերի միացման կետից և թեքվում դեպի Հաղարծինի ձորը, որտեղ նա փոխվում է սայլուղու և անցնում անտառապատ վայրերով մինչև վանք: Հաղարծինի հուշարձանները տեղադրված են սառնորակ աղբյուրներով հայտնի մի անտառապատ ու զառիթափ լեռան լանջին: Նրա ավերակները բաղկացած են իրար հետ շինված չորս մեծ ու փոքր եկեղեցիներից, որոնցից գլխավորը կառուցված է 1071 թ., գավիթից և սեղանատնից: Դրանք գտնվում են տարբեր վիճակում, ոմանք խարխլված են, ոմանք՝ փլված, իսկ ոմանք էլ կանգուն են: Պատերին կան տարբեր ժամանակներին վերաբերող մի շարք արձանագրություններ: Հաղարծինի ավերակները հետաքրքրություն են ներկայացնում և՛ ճարտարապետական, և՛ պատմական առումներով, ուստի դրանց ուսումնասիրությամբ զբաղվել և զբաղվում են շատ մասնագետներ:

3) Դիլիջան—Բերդ: Դիլիջանում խճուղին բաժանվում է երկու ճյուղի, որոնցից մեկը Ֆիոլետովոյի վրայով գնում է դեպի Կիրովական, իսկ մյուսը դիմում է դեպի հյուսիս-արևելք՝ դեպի Իջևան,



որը խճուղով հաշված՝ Երևանից գտնվում է 144 կմ հեռավորության վրա: Դիլիջան—Իջևան խճուղին ձգվում է Աղստև գետի ափերով և շարունակ իջնում է վար: Ճանապարհի արևմտյան կողմում նրան հետմընթաց շղթա են կազմում Իջևան լեռնաշղանգվածին պատկանող լեռնագագաթները, որոնք կտրված են ձորերով, իսկ արևելքում Մուրղուզի լեռնաշղթայի արևմտյան լեռնաճյուղերն են, որոնք աստիճանաբար իջնում են դեպի Աղստևի հովիտը: Ճանապարհի երկու կողմերում ձգվող բոլոր լեռները պատած են թանձրախիտ անտառներով: Լեռնային Աղստևի կոհակները, նրա ջրերի աղմուկը, որ ավելի փոքր թեքություններում վեր է ածվում լսողությունը շոյող մեղեդու, խճուղին շրջապատող գեղատեսիլ բնությունը, սովերախիտ անտառներն իրենց բազմատեսակ թռչունների դայլայլներով տրամադրում են ուղևորին և ճանապարհորդությունը դարձնում հաճելի: Ճանապարհին մեքենան անցնում է մի քանի բնակավայրերի միջով, որոնցից ամենանշանավորը Դիլիջանից 10—12 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Կույբիշև գյուղն է՝ շրջապատված անտառներով: Կույբիշև գյուղից քիչ անց, Աղստև գետի աջ կողմից նրան է միանում Գետիկ լեռնային գետը, որն իր սկիզբն է առնում Սևանա լճի հյուսիսային ափերով ձգվող Արեգունի և նրան զուգահեռ ավելի հյուսիսում ձգվող Մուրղուզի լեռնաշղթայի կազմած անկյունից: Նրա գետաբերանում, Իջևան տանող խճուղուց բաժանվում է մի այլ խճուղի և Գետիկի նեղ հովտով դիմում դեպի Կրասնոսելսկ՝ Կրասնոսելսկի շրջանի կենտրոնը: Բնական գեղեցկություններից բացի՝ ուղևորն այս ճանապարհին կարող է տեսնել հայկական միջնադարյան ճարտարապետության կարևոր կոթողներից մեկը՝ Նոր Գետիկի վանքը: Նոր Գետիկի վանքը գտնվում է Աղստև գետի աջ կողմում, նրա և Գետիկ գետի կազմած անկյունում, մի պոետական վայրում: Պատմական ստույգ հիշատակությունների համաձայն, մինչև Նոր Գետիկ վանքի կառուցումը Կայեն կամ Կայան գավառում, որն իր տերիտորիայով համապատասխանում էր այժմյան Հայկական ՍՍՌ Իջևանի և Կարմիրի շրջաններին, հայտնի կուլտուրայի կենտրոն էր հին Գետիկի վանքը՝ Սևանա լճից հյուսիս, Դիլիջանից ոչ հեռու գտնվող Արջանոց լեռների վրա, Աղստևի աջ կողմում: Հին Գետիկում երկար տարիներ ապրել և գործել է հայ մատենագրության խոշոր դեմքերից մեկը՝ հայկական հայտնի դատաստանագրքի հեղինակ և առակագիր Մխիթար Գոշը (1130—1213 թթ.): XII դարի վերջերին տեղի ունեցած սաստիկ երկրաշարժից կործանվում է հին Գետիկի վանքը, բայց նրա միա-

բանները չեն ցրվում և Մխիթար Գոշի խորհրդով Իվանե Զաքարյան իշխանից խնդրում են՝ նոր վանք կառուցելու համար իրենց տալ Տանձուտ կոչված վայրը։ Իվանեն բավարարում է նրանց խնդիրքը, և միաբանները՝ Գոշի անմիջական նախաձեռնությամբ ու մասնակցությամբ հիմնում են մի նոր վանք՝ Նոր Գետիկը։ Սկզբում այստեղ շինում են երկու փոքրիկ եկեղեցի, ապա՝ 1191—1196 թթ. կառուցում են մեծ եկեղեցին։ Ի պատիվ Մխիթար Գոշի՝ Նոր Գետիկի վանքը հաճախ կոչվում է նաև Գոշավանք, որը տեղացիները աղավաղելով դարձրել են Ղոշավանք։ Նա այժմ գտնվում է ավերված վիճակում, միայն կիսականգուն է մայր եկեղեցին՝ իր հոյակապ գմբեթով։ Վանքի ավերակները գտնվում են մի փոքրիկ հարթության վրա, որը երեք կողմերից պատած է անտառածածկ լեռներով, իսկ արևելյան կողմում ձգվում է մի նեղ հովիտ։ Եկեղեցիները կառուցված են հմուտ ճարտարապետական արվեստով, ընտիր սրբատաշ քարերով, որոնց շարվածքի կանոնավորությունը մեծ զարմանք է պատճառում դիտողին։ Նոր Գետիկի վանքը իրենից ներկայացնում է միջնադարյան հայկական ճարտարապետական մի բարդ կոմպլեքս։ Այդ կոմպլեքսի մեջ երեք եկեղեցիներից բացի մտնում են նաև օժանդակ զանազան կառույցներ։ Եկեղեցիների պատերին կան XII—XIII դարերին վերաբերող մի քանի արձանագրություններ, որոնցում հիշատակված են տվյալներ դրանց կառուցման ժամանակի և այլ դեպքերի վերաբերյալ։ Կիսականգուն և ավերված այդ եկեղեցիներն իրենց մամռակալած պատերով, գեղեզմանոցով, որտեղ թաղված է նաև Մխիթար Գոշը, հիմնահատակ ավերված օժանդակ կառույցներով, որոնց ավերակներն այժմ նվաճված են անտառի կողմից, բազմաբովանդակ վիմագիր արձանագրություններով՝ ուղևորին 700—800 տարի տանում են դեպի ետ, դեպի հայոց միջնադարը, երբ Նոր Գետիկն ու նրա նման մյուս վանքերը ֆեոդալական մեծ տպարատ լինելով հանդերձ՝ իրենց ձեռքն էին վերցրել երկրի ամբողջ հոգևոր կյանքը և հանդիսանում էին նրա կուլտուրայի օջախները։

Նոր Գետիկի վանքի ավերակներին ծանոթանալուց հետո ուղևորը շարունակելով իր ճանապարհը ավտոմեքենայով՝ շուտով հասնում է Իջևան ավանը, որը հանդիսանում է Հայկական ՍՍՌ Իջևանի շրջանի վարչական կենտրոնը։ Հազվագյուտ գեղեցիկ բնություն ունեցող Իջևանը արտաքնապես ոչնչով չի տարբերվում քաղաքից։ Աղստև գետի երկու ափերին տեղադրված այդ ավանը իր



ծառաստաններով ու բարեկարգ տներով հաճելի տպավորություն է թողնում ուղևորի վրա։ Նախասովետական շրջանում նա մի անշուք գյուղ էր, բայց լինելով Ազստաֆա—Երևան ճանապարհի վրա՝ որոշ նշանակություն էր ձեռք բերել իբրև կայան՝ իջևան (քարավանատուն)։ Այժմ լինելով շրջկենտրոն, Իջևանը արագ կերպով առաջադիմում է։ Ներկայումս նա ունի սղոցարան, ֆաներայի, կոմինդրաղյուսի գործարաններ, անտառային տնտեսություն։ Ունի երկու միջնակարգ և մեկ յոթնամյա դպրոցներ, կուլտուրայի տուն, կինոթատրոն, գրադարաններ, ստադիոն, բարեկարգ հյուրանոց և այլն։ Իջևանի շրջանն իր մեղմ ու համեմատաբար խոնավ կլիմայով միանգամայն նպաստավոր պայմաններ ունի մերձարևադարձային մի շարք կուլտուրաների աճման համար։ Այդ է պատճառը, որ Իջևանում կազմակերպվել է նռնենու, թզենու, ֆիստակենու, արմավենու և մերձարևադարձային այլ կուլտուրաների պետական խոշոր տնկարան, որը տնկիներ է մատակարարում ինչպես Իջևանի, այնպես էլ հանրապետության մի քանի այլ շրջաններին։ Իջևանի շրջանն ամբողջ հանրապետությունում հայտնի է իր ծխախոտագործությամբ։ Շրջանում ստեղծված են ոռոգման սիստեմներ։

Իջևանից՝ նկարագրվող երթուղու ծայրակետ հանդիսացող Բերդ կարելի է գնալ երկու ճանապարհով։ Դրանցից առաջինը, որ պետական առաջնակարգ ճանապարհ է, Դիլիջանից եկող խճուղու շարունակությունն է և Աղստև գետի հովտով գնում է մինչև Ադրբեջանական ՍՍՌ-ում գտնվող Ղազախ շրջկենտրոնը, ապա Թբիլիսի—Բաքու երկաթգծի Աղստաֆա ու Թոուզ կայարանները։ Թոուզ կայարանից Բաքու տանող այդ հիմնական խճուղուց անջատվում է Բերդ տանող ճանապարհը, որը անտառապատ լեռնահովիտներով դիմում է դեպի հարավ-արևմուտք։ Իսկ Թբիլիսի տանող հիմնական խճուղին անցնում է Ղազախով։ Իջևանից Բերդ տանող երկրորդ ճանապարհը, որը առաջինից մոտ երեք անգամ ավելի կարճ է, բայց որը սովորական գրունտային ճանապարհ է, Իջևանից ուղղակի դիմում է դեպի արևելք և լայնակի ուղղությամբ կտրում է Քուսի աջակողմյան վտակներ Աղստևի, Հախումի ու Տավուշի հովիտներն ու ջրբաժանները։ Իջևան—Բերդ այս ճանապարհը մոտավորապես 30 կմ է և անցնում է անտառապատ ու գեղատեսիլ վայրերով։

Բերդ գյուղը Հայկական ՍՍՌ Շամշադինի վարչական շրջանի կենտրոնն է։ Նա գտնվում է Տավուշ գետի ձախ ափին և բոլոր կող-

մերից պատած է անտառածածկ լեռներով։ Իր կլիմայական պայմաններով Շամշադինի շրջանը լիովին նմանվում է Իջևանի շրջանին։ Նա ունի համեմատաբար խոնավ և մեղմ կլիմա, ռելիեֆը լեռնային է, բայց գետերն ու ձորակները կտրտելով այն, առաջացրել են ցածրադիր արգավանդ հովիտներ։ Այդ հովիտներում հիմնականում մշակում են ծխախոտի ընտիր տեսակներ։ Բերդը ունի իր դպրոցները, գրադարանները, հյուրանոցը, շուկան, սպորտային խաղերի հրապարակը և այլն։ Նա ամբողջապես ծառազարդ է և ունի գրավիչ տեսարան։ Բերդի մոտ են գտնվում միջնադարյան հայկական Տավուշ բերդի ավերակները։ Պատմական Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Տավուշ գավառի գլխավոր բերդ Տավուշը IX—X դարերում ֆեոդալական Հայաստանի ամենահռչակված բերդերից մեկն էր։ Այստեղ նստող իշխանները իրենց այնքան ապահով և զորեղ էին համարում, որ մի քանի անգամ ապստամբություն են բարձրացրել հայ Բագրատունի թագավորների դեմ և փորձել են պահպանել իրենց ֆեոդալական առանձնությունը։ Սակայն Բագրատունի Աշոտ II թագավորը կոտրում է նրանց ֆեոդալական ըմբոստությունն ու դիմադրությունը և գրավում Տավուշ բերդը։ XI—XII դարերում այդ բերդը շարունակում է գոյություն ունենալ և գործել՝ գտնվելով նախ՝ Կյուրիկյան թագավորների, ապա՝ Զաքարյան իշխանների տիրապետության ներքո։ Մոնղոլների ծանր տիրապետության շրջանում՝ XIII—XIV դարերում Հայաստանի շատ ու շատ բերդերի հետ միասին ավերվում է նաև Տավուշը և վերածվում փլատակների։ Նրա ավերակները գտնվում են Բերդ գյուղի ծայրամասում, Տավուշ գետի աջ ափին շեշտակի կերպով վեր ցցված մի լեռան վրա, որի գագաթը կարելի է բարձրանալ միայն մի կողմից։ Լեռան զառիթափությունը և արհեստական ամրությունները Տավուշը դարձրել են անմատույց։ Նրա կառուցվածքները բռնել են լեռան ամբողջ կատարը։ Այժմ դրանք բոլորը, գրեթե առանց բացառության, թաղված են հողի հաստ շերտի տակ, սակայն առանձին տեղերում առաջացել են անցքեր, որոնց միջով հնարավոր է տեսնել բերդի այս կամ այն պատը, բուրգի որևէ մասը կամ այլ մանրամասնություններ։ Տավուշի ավերակները Հայաստանի այլ մասերում պահպանված մյուս բերդերի ավերակների նման անկենդան վկա են օտար նվաճողների դեմ մեր ժողովրդի մղած ազատագրական համառ ու արյունալի և կյանքի ու մահվան մարտերի։



ա. Դիլիջան—Կիրովական—Ստեփանավան

Ճանապարհը Դիլիջանից Կիրովական սկսվում է մի փոքր կամրջով՝ Աղստև գետի վրա։ Այնուհետև ճանապարհն անցնում է Պապանինո գյուղով՝ կազմելով նրա կենտրոնական փողոցը։ Պապանինոն Իջևանի շրջանի հարուստ գյուղերից է, ճանապարհի երկու կողմերով ձգվող հարմար ու բարեկարգ տներով։ Յուրաքանչյուր տնակ այստեղ շրջապատված է փոքրիկ մրգատու այգով, որը գարնանը բոցավառվում է բալենու, խնձորենու, տանձենու, սալորենու, կեռասենու, դեղձենու ծառերով և ճոխ ու հոտավետ ծաղիկներով։

Այստեղից ոչ հեռու (Դիլիջանից 6 կմ վրա), Բլդան լեռնային գետի նեղ ձորում գտնվում են «Դիլիջան» ածխաթթվահիմնային աղբյուրները, որոնք մոտենում են Բորժոմիի և ֆրանսիական Վիշիի առողջարանների ջրերին։

Պապանինոյից հետո ճանապարհն անցնում է Աղստև գետի գեղատեսիլ ձորով՝ Բազումի (3016 մ ծովի մակերևույթից) և Փամբակի (3019 մ ծովի մակերևույթից) լեռնաշղթաների անտառապատ ճյուղավորումների միջով, մեկ իջնելով մինչև գետը, մեկ բարձրանալով վեր՝ խրվում է ձախափնյա ժայռերի մեջ։ Բարձր լեռների ծանր զանգվածներ են կախված ճանապարհի վրա։ Ճամփեզրյա լեռների թեք զառիթափները ծածկող կուսական անտառները կազմում են հսկայական մի վրան, որը տեղ-տեղ ճեղքվում է, բաց թողնելով դիլիջանյան պայծառ արևի ոսկե խուրձերը, մեկ էլ նորից միանում՝ կազմելով կանաչ հոյակապ մի թունել։ Թռչունների զրնգուն ճռվողյունը, լեռնային գետի ուրախ աղմուկը՝ մինչև Կիրովական ուղեկցելով ճամփորդին, լցնում են կիրճի թափանցիկ օդը։ Իջևանի բնաշխարհը Հայաստանի ամենագեղեցիկ վայրերից է։ Հայտնի է, թե ինչպիսի կախարդիչ տպավորություն է թողել այդ հովիտը Ա. Մ. Գորկու վրա, երբ նա 1928 թ. նոյեմբերին Դիլիջանով Երևան էր գնում. «Այո՛, զարմանալի գեղեցիկ էր,—վերհիշում է Ալեքսեյ Մաքսիմովիչը։ —Թվում է՝ լեռները գրկել ու շրջապատում են հովիտը՝ կենդանի արարածներին հատուկ սիրով ու քնքշությամբ։ 1500 մետր բարձրության վրա օդը արտակարգ մաքուր է ու թափանցիկ և կարծես ներկված լինի շողշողացող պայծառ թավշյա կապույտով։ Փափկությունը հովտի գերիշխող տպավորությունն է։ Նրա խոր հունը լցված է այգիների ճոխ կանաչով, և տները, կարծես, լողում են կանաչ ալիքներում, Գյոկչա լճի ուղ-

ղութեամբ։ Հարավային Անդրկովկասը ապշեցնում է իր գույների քազմազանութեամբ ու հարստութեամբ։ Այդ հովիտը ամենագեղեցիկներից մեկն է այնտեղ»։

Դիլիջանից 15 կիլոմետրի վրա, ճանապարհի այն մասում, ուր լեռներն ու անտառը նա են քաշվում, կազմելով մի ընդարձակ հովիտ, իսկ ճանապարհը ցածրանում է մինչև գետը, գտնվում է Ֆիոլետովո (նախկին Նիկիտինո) գյուղը։ Ֆիոլետովոն, ինչպես և Հայաստանի հյուսիսային շրջանների շատ ուրիշ գյուղեր (Լերմոնտովո, Ժդանով, Պուշկինո, Կույբիշև, Սարատովկա, Կալինինո և այլն), հիմնադրել են անցած դարի 40-ական թվականներին Տամբովի, Վորոնեժի, Սարատովի նահանգներից վերաբնակեցված մալականները։ Ցարական կառավարության կողմից այստեղ աքսորված մալականները սկզբում կառապանություն էին անում այդ ճանապարհներին։ Ավելի ուշ, իրենց աշխատասիրության շնորհիվ նրանք հող ունենալու իրավունք ձեռք բերեցին և վերջնականապես հաստատվեցին այս կողմերում։ Պահպանելով մայրենի լեզուն և իրենց սովորությունները, մալականներն այժմ համարվում են Հայաստանի այդ շրջանների բնակիչները։

Անցած դարի 80-ական թվականներին ընտանիքով Ֆիոլետովո գյուղ տեղափոխվեց Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) գավառի անտառապետ Վլադիմիր Կոնստանտինովիչ Մայակովսկին՝ ապագա պոետի հայրը։ Վ. Մայակովսկու քույրը՝ Լյուդմիլա Մայակովսկայան, հաճույքով է հիշում Հայաստանում անցկացրած տարիները։ «Մեր ընտանիքը և մանկությունը,— ասում է նա,— Հայաստանում շրջապատում էին բարձր լեռները։ Մեր հայրը կարծես ձուլված լիներ տեղի բնությանը։ Նա սիրում էր այն իր ողջ էությամբ»։

Այնուհետև ճանապարհն անցնում է Համզաչիման մեծ գյուղի միջով։ Մինչև այս ճանապարհի (Դիլիջան—Սևան—Երևան) կառուցումը, Երևանի ճանապարհն անցնում էր Փամբակի լեռնապարով՝ Համզաչիման—Միսխանա—Ախտա գծով։ Եվ եթե այժմ այստեղից ուշադիր նայելու լինենք այդ լեռների լանջերին, ապա կարելի է տեսնել հին ճանապարհի ոլորապտույտ ժապավենը։ Այդ ճանապարհը հասնում է մինչև լեռնաշղթայի գագաթը, որի ճեղքերում նույնիսկ ամռան ամենաշոգ ամիսներին չի հալչում ձյունը, անցնում նրա վրայով, այնուհետև հարավային լանջերով կարուկ իջնում մինչև լեռան ստորոտը և Ախտա քաղաքի մոտ միանում Երևան—Սևան—Դիլիջան—Կիրովական՝ նկարագրված մայրուղուն։



Հեն այս ճանապարհով էլ 1819 թ. Թիֆլիսից Երևան էր անցնում Ա. Ս. Գրիբոյեդովը։

Համզաչիմանից մեր ճանապարհը շարունակում է գնալ Աղստևի ձախ ափով և շուտով մեզ բերում է Լերմոնտովո գյուղը, որը տեղադրված է Աղստև ու Տանձուտ գետերի ջրբաժանի մոտ։ Լերմոնտովոն հետաքրքրական է նրանով, որ այստեղ կա սևամորթ աղվեսների բուծարան։ Բուծարանը գտնվում է գյուղից ոչ հեռու, Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերը ծածկող անտառների մեջ, մի զառիթափ ձորակում։

Լերմոնտովո գյուղից դուրս ճանապարհն անցնում է Տանձուտ գետի կիրճով և շինված է նրա ձախ ափին։ Այստեղ անտառը նորից ընդհատվում է ճանապարհին և ետ չի քաշվում մինչև Կիրովական։ Կիրովականից մի քանի կիլոմետր այս կողմ, Տանձուտ գետի հակառակ ափին, սկսվում են Խնձորուտ հսկա սովխոզի պտղատու այգիները, որոնք բռնում են 300 հեկտար տարածություն։ Այս սովխոզը մրգ է մատակարարում Երևանի պահածոյատուն։ Այս սովխոզը մրգ է մատակարարում Երևանի պահածոյատուն։ Խնձորուտից հետո սկսվում են Կիրովականի արվարձանները։

Կիրովականը (մինչև 1935 թ.՝ Ղարաքիլիսա) տեղադրված է Երևանից 150 կմ դեպի հյուսիս, Փամբակի գոգահովտում, Փամբակի և Բազումի լեռնաշղթաների միջև, ծովի մակերևույթից մոտ 1300 մետր բարձրության վրա, որտեղ Տանձուտ և Անձաձորիգետ գետերը միախառնվում են Փամբակի ջրերին։ Կիրովականի կլիման մեղմ է, ամառը զով, իսկ ձմեռը կարճատև ու ոչ խիստ։

Կիրովականը հիմնադրված է բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանի հինավուրց բնակավայրերի տեղում։ Կիրովականի շրջակայքում մինչև այժմ պահպանվում են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի ցիկլոպային կառուցումներ։ Այստեղի հնադարյան կուրգանների բարձր զարգացման մասին խոսում են բրոնզե վաղ տուրայի դարաշրջանի հարուստ գերեզմանաբլուրների պեղումների (1948) ժամանակ հայտնաբերված բազմաթիվ առարկաներ։ Այստեղ այլ առարկաների հետ միասին գտնված են ոսկյա, արծաթյա, պղնձյա կիկներ, զենքեր, բարձր որակի արտադրական գործիքներ և այլն)։ և բրոնզյա առարկաներ (փորագրված սկաուկերներով գավաթներ, քարե ուլունքներ, ոչ մեծ արծաթյա սափորներ, ոսկյա խողովակիկներ, զենքեր, բարձր որակի արտադրական գործիքներ և այլն)։

Մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը Կիրովականը աննշան մի վայր էր, որն իր կլիմայական պայմաններով գրավում էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հա-

բուստ ամառանոցաբնակներին: Այժմ Կիրովականը Սովետական Հայաստանի խոշոր արդյունաբերական և կուլտուրական կենտրոններից է: Նա իր մեծությամբ ռեսպուբլիկայի երրորդ քաղաքն է (Երևանից ու Լենինականից հետո): Կիրովականով է անցնում Թբիլիսի—Երևան երկաթուղին: Այստեղից տարբեր ուղղություններով ճյուղավորվում են հիանալի խճուղիներ, որոնք Կիրովականը միացնում են Լենինականի, Ստեփանավանի և Դիլիջանի հետ:

Սովետական իշխանության տարիներին Կիրովականը գյուղական վայրից վերածվեց բարձր զարգացած արդյունաբերությունն ունեցող խոշոր տնտեսական-կուլտուրական կենտրոնի: Պատմական ոչ մեծ ժամանակաշրջանում այստեղ զարգացավ քիմիական, տեքստիլ, մեքենաշինական և մանրի արդյունաբերությունը: Կիրովականի ձեռնարկությունները արտադրում են մոտ 160 տեսակի արտադրանք, որի մեծ մասն ունի համամիութենական նշանակություն: Առաջին հնգամյակի ծնունդն է հանդիսանում Ա. Մյասնիկյանի անվան քիմիական խոշոր կոմբինատը, որը աշխատում է Զորագետի գետի էլեկտրականությամբ: Կառուցվելով 1932 թվին՝ Կիրովականի քիմիական կոմբինատը Հայաստանում ծանր արդյունաբերության առաջին խոշոր ձեռնարկությունը եղավ: Այս կոմբինատի որոշ ցեխեր համարվում են ամենախոշորները Սովետական Միությունում: Կիրովականի մեքենաշինական գործարանը սարքավորանք է արտադրում երկրի յուղ ու պանիր մշակող գործարանների համար: Կիրովականի տրիկոտաժի, մանածագործական և կոդրի ֆաբրիկանների արտադրանքը հայտնի է ռեսպուբլիկայի սահմաններից շատ հեռու: Քաղաքի արդյունաբերության տեքստիլ ձեռնարկությունները աշխատում են Լենինականի մանվածքով: Կարևոր նշանակություն ունի նաև մորթու և մուշտակի ֆաբրիկան, որը պատրաստում է կիսամուշտակներ: Կիրովականի սննդարդյունաբերությունը ներկայացված է կարագի ու պանրի գործարաններով, մսի կոմբինատով և այլն: Կիրովականում է հիմնադրված գործիքաշինական արդյունաբերությունը: Այսպես. 1958 թվականին այստեղ շարք մտավ «Ավտոմատիկա» գործարանը, որը շուտով կսկսի էլեկտրոնա-ինդուկցիոն ավտոմատիկ սարքերի մասսայական թողարկումը:

Արդյունաբերությունից հետ չի ընկնում նաև քաղաքի կուլտուրական շինարարությունը: Այստեղ տարածված է կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց: Կիրովականն ունի հանրակրթական ու մասնագիտական տասնյակ դպրոցներ, տեխնիկում-



ներ և ուսումնարաններ: Քաղաքում կան բազմաթիվ գրադարաններ, կինոթատրոն, ակումբներ, դրամատիկական թատրոն, Կուլտուրայի տուն, Պիոներների տուն և այլն: Կիրովականն ունի երեվանյան տուրիստական բազայի ֆիլիալ, որը էքսկուրսիաներ է կազմակերպում դեպի քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, Բուսաբանական այգին, ինչպես նաև հետիոտն էքսկուրսիաներ քաղաքից դուրս դեպի հինավուրց գերեզմանոցները, շրջակա անտառները, գիտակը և այլն:

Շինարարությունը քաղաքում ընթանում է ավելի ու ավելի արագ տեմպով: Վերջին տարիներին այստեղ կառուցվել են շատ նոր փողոցներ ու հրապարակներ, շրջապատված գեղեցիկ երեքչորս հարկանի քարե շենքերով: Քաղաքի փողոցներն ու հրապարակները կանաչապատված են և ծածկված ասֆալտով: Քաղաքն ունի կուլտուրայի ու հանգստի մեծ զբոսայգի, շատ պուրակներ ու ծաղկանոցներ: Քաղաքի հասարակական կենտրոնը Ս. Մ. Կիրովի անվան հրապարակն է, որտեղ վարդագույն ու կարմիր տուֆից կառուցված են վարչական մեծ շենքեր: Հրապարակի վրա բարձրանում է Ս. Մ. Կիրովի մոնումենտալ հուշարձանը (քանդակագործ՝ Ա. Մ. Սարգսյան, 1942): Գրանիտե պատվանդանի վրա, շրջակա լեռները ծածկող թավշյա կանաչի ֆոնից հոյակապորեն առանձնանում է բազալտե մոնումենտալ ֆիգուրան: Հրապարակը կտրում է քաղաքի գլխավոր մայրուղին՝ Ստալինի անվան պողոտան, որտեղ կառուցված են բազմաթիվ բնակելի, հասարակական ու վարչական շենքեր: Քաղաքը շարունակում է բուռն կերպով աճել ու զարգանալ, աստիճանաբար դուրս մղելով հինը, խախտուրը:

Տեղանքի հմայիչ գեղեցկությունը, մաքուր օդը, արևի լույսի առատությունը, մեղմ ձմեռը և զով ամառը Կիրովականը դարձնում են ամառանոցային վայր: Այստեղ ամառանոց են գալիս Հայաստանի տարբեր շրջաններից: Այստեղ են անցկացնում իրենց ամառային հանգիստը նաև եղբայրական Վրաստանի ու Ադրբեջանի շատ աշխատավորներ: Կիրովականում գործում է ՀԱՄԿԽ-ի «Հայաստան» առողջարանը, որը տեղադրված է քաղաքից դուրս Տանձուտ, Վանաձորիգետ և Փամբակ գետերի միախառնման գեղատեսիլ ձոր, անտառով շրջապատված: Կիրովականի անտառով, խիտ անտառով շրջապատված: Կիրովականի անտառներում ամառանը կազմակերպվում են տասնյակ պիոներական ճամբարներ, որտեղ ամեն տարի իրենց ամառային հանգիստն են անցկացնում ռեսպուբլիկայի հազարավոր դպրոցականներ:

Կիրովականից սկսվում է Լենինականի խճուղին, որը սկզբում անցնում է Կիրովականից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող ժդանով գյուղի միջով, ապա ճյուղավորվում: Լենինական տանող ճյուղը թեքվում է ձախ, դեպի արևմուտք և անցնում է Կիրովական—Լենինական երկաթգծի շարունակությամբ, մյուսը՝ աջ, դեպի Ստեփանավան: Մինչև Բզովդալ գյուղը, որը տեղադրված է քաղաքից 8 կմ վրա, ճանապարհի երկարությամբ հոսող գետակի մոտ, ճանապարհը համեմատաբար հեշտ է, առանց մեծ վերելքների ու ոլորապտույտների: Բզովդալը Պուշկինի (Բզովդալի) լեռնանցքի սկիզբն է: Այստեղից սկսվում է 15 կմ երկարությամբ ոլորապտույտ զառիվերը: Ճանապարհը ոլորվում է Բազումի լեռնաշղթայի հարավային անտառազուրկ լանջերով, կազմելով բազմաստիճան հարկեր: Հեռու ներքևում՝ խորը կիրճի մեջ, հազիվ երևում է գետակի ծուռումուռ թելը: Իսկ ավելի հեռու՝ հարավում, օդի թափանցիկ քողի միջով թույլ գծագրվում է Կիրովականը, որը տեղավորված է խոր գոգահովտում: Տպավորությունը հատկապես ուժեղ է լինում, երբ քաղաքին նայում ես այս բարձր տեղանքից: Ճանապարհի վերջին շրջադարձում գտնվում է Պուշկինի լեռնանցքի ամենաբարձր շրջադարձային կետը: Պուշկինի լեռնանցքը գտնվում է Բազումի լեռնաշղթայի արևմտյան մասում՝ ծովի մակերևույթից 2038 մետր բարձրության վրա: Այդ լեռնանցքը երկրորդն է Սևանի (Սեմյոնովկայի) լեռնանցքից հետո, իսկ վերջինս Երևան—Ստեփանավան ճանապարհի ամենաբարձր կետն է:

1829 թվին Էրզրում գնալիս այս լեռնանցքով (այն ժամանակ Բզովդալի) ձիով անցել է Ա. Ս. Պուշկինը: Այդ ժամանակ էլ պոետը հանդիպեց Պարսկաստանում սպանված Ա. Ս. Գրիբոյեդովի դիակին: Այս հիշարժան հանդիպումը Պուշկինը նկարագրում է իր հայտնի «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» ստեղծագործության մեջ. «Մի քանի րոպե հանգստանալով,— գրում է պոետը,— ես շարունակեցի ճամփաս և գետի բարձր ափին դիմացս տեսա Գերգեռի ամրոցը: Երեք վտակներ՝ աղմուկով ու փրփրալից գահավիժում էին բարձր ափից: Ես անցա գետը: Սայլին լծված երկու եզներ բարձրանում էին թեք ճանապարհով: Մի քանի վրացիներ ուղեկցում էին սայլը: Որտեղի՞ց եք գալիս,—հարցրեցի ես նրանց: —Թեհրանից:— Ի՞նչ եք տանում:— Գրիբոյեդինն:— Դա սպանված Գրիբոյեդովի մարմինն էր, որին տանում էին Թիֆլիս: Չէի կարծում, թե երբևիցե կհանդիպեմ մեր Գրիբոյեդովին»:

1937 թվին, Պուշկինի մահվան 100-ամյակի առթիվ Բզովդալի



լեռնանցքը վերանվանվեց Պուշկինյան: Իսկ նշանավոր հանդիպման տեղից ոչ հեռու, ճանապարհի վրա, բարձր լեռան եզրին դրվեց բրոնզյա բարելիեֆով աղբյուր-հուշարձան, որի վրա պատկերված է այդ հանդիպումը:

Այս լեռնանցքից դեպի հյուսիս բացվում է Լոռու հովտի կանաչ տարածությունների հիասքանչ տեսարանը, որը Ստեփանավանի վարչական շրջանի մի մասն է: Ամբողջ հովիտը ծածկված է գյուղերով, որոնք իրենց կղմինդրե կտուրներով կարմրին են տալիս համատարած կանաչի մեջ:

Ստեփանավանի շրջանը կամ Լոռին ռեսպուբլիկայի ծայր հյուսիսն է Վրաստանի սահմանի մոտ: Լոռին բոլոր կողմերից շրջափակված է Կեչուտի (Խոնավ), Բազումի (Բզովդալի) և Վիրահայոց լեռների զանգվածներով, որոնք բարձրանում են մինչև 2500—3000 մետր և տեղանքին տալիս են հարավ-արևելքում մի փոքր ձգվող ու նեղացող տափարակ գոգահովտի տեսք: Արևմուտքից արևելք ամբողջ շրջանով հոսում է Ջորագետը, որի մեջ ձախից ու աջից թափվում են գետի բազմաթիվ վտակները: Ջորագետն իր ներքին հոսանքում՝ Ալավերդու վարչական շրջանի տերիտորիայում, թափվում է Փամբակ գետը, կազմելով ջրառատ Դեբեդը:

Լոռու կլիման շատ խիստ չէ, տարեկան 6—8 աստիճան միջին ջերմությամբ: Ձմեռն այստեղ համեմատաբար ցուրտ չէ, իսկ ամառը զով է: Շրջակա լեռները Լոռին պաշտպանում են Ղարսի սարման

կան), երկարատև անասնամանիք եղանակները այստեղ ապահովում են կարտոֆիլի և շաքարի ճակնդեղի, հացահատիկային և ձիթապտղային կուլտուրաների բարձր բերքը։

Շրջանի տափաստաններն ու լեռնային արոտավայրերը անասնապահության զարգացման հիմնական բազան են և ունեն տնտեսական կարևոր նշանակություն։ Սակայն Լոռիում ավելի ու ավելի լայն զարգացում է ստանում դաշտային կերահայթայթումը։ Լոռու ցանքատարածությունների մոտ 24 տոկոսը հատկացված է եգիպտացորենին, տարեկան և բազմամյա խոտերին, կերային արմատապտուղներին։ Լոռիում կա խոշոր ցեղային անասնապահական սովխոզ, որը բազմացնում է խոշոր եղջերավոր անասունների շվեդական ցեղը և ցեղային արտադրողներ աճեցնելու համար ամբողջ ռեսպուբլիկան ապահովում է նրա մատղաշներով։ Յուղի և պանրի արդյունաբերությունը շրջանի գյուղատնտեսության հիմնական ճյուղն է։ Պանրագործությունն այստեղ ունի հարյուրամյա տրադիցիաներ։ Դեռևս անցած դարի 60-ական թվականներին այստեղ Շվեյցարիայից ուղարկվել էին վարպետ պանրագործներ, որոնք Հայաստանում շվեյցարական պանրի արտադրության սկիզբը դրեցին։ Այն ժամանակվանից սկսած շվեյցարական պանիրը ուղարկվում է երկրի սահմաններից դուրս։ Այժմ շրջանում գործում են յուղի-պանրի տասնյակ գործարաններ։ Դրանց թվում հատկապես հռչակված է Կալինինո գյուղի մեքենայացված գործարանը, որն ամենախոշորներից մեկն է ՍՍՌՄ-ում։

Լոռու շրջանային կենտրոնը՝ Ստեփանավան ամառանոցային քաղաքն է։ Ստեփանավանը (նախկին Ջալալօղլի) Լոռու խոշորագույն բնակելի կենտրոնն է։ Քաղաքը տեղադրված է Լոռու հովտում, Ջորագետի աջ ափին, ծովի մակերևույթից 1400 մետր բարձրության վրա։ Հյուսիսից նա օղակվում է Ջորագետով, իսկ հարավից քաղաքին է մոտենում իր կազմով բազմատեսակ անտառը, որը կարտվում է բազմաթիվ քչքչան առվակներով։

Ստեփանավանն ունի մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ, դրանց թվում՝ գուլպա-տրիկոտաժեղենի ֆաբրիկան, օսլայի գործարանը, յուղի-պանրի գործարանը։ Քաղաքում կան կուլտուր-լուսավորական հիմնարկներ։ Գործում է Ստեփան Գեվորգի Շահումյանի տուն-թանգարանը, որտեղ, մինչև հեղափոխությունը, որոշ ժամանակ ապրել է Շահումյանը, և որի անունով էլ կոչվում է Ստեփանավան քաղաքը։ Կլիմայական առողջ պայմանները և գեղատեսիլ բնաշխարհը ամեն տարի այստեղ են գրավում



հազարավոր հանգստացողների՝ Երևանից, Թբիլիսիից և Անդրկովկասի այլ քաղաքներից։ Ստեփանավանով է անցնում Երևան—Թբիլիսի գեղեցիկ մագիստրալային խճուղին։ Ստեփանավանը խճուղային ճանապարհով միացվում է նաև Լենինականին՝ Սովետական Հայաստանի երկրորդ խոշոր արդյունաբերական և կուլտուրական կենտրոնին։

Պուշկինի լեռնանցքից այն կողմ, ճանապարհի երկու կողմերում, լանջերից ներքև և մինչև լեռնաշղթայի բարձունքները, լեռները ծածկված են մարդահասակ ալպիական և մերձալպիական մարգագետիններով, որոնք գարնանն ու ամռանը օդը լցնում են խոտերի ու ծաղիկների թարմ բուրմունքով։ Ալպիական մարգագետինների ներից ներքև սկսվում է անտառը, որը ծածկում է Բազումի լեռնաշղթայի լանջերը մինչև նրանց սառոռտները։

### բ. Ստեփանավան—Գյուլագարակ—Թումանյան

Անցնելով մարգագետինները, հարյուրամյա հզոր ծառերի ճոխ զանգվածներով ստվերված, ճանապարհը զիգզագներով իջնում է դեպի Գյառգյառ լեռնային գետը։ Այդ գետակի վրա, մրգատու այգիների կանաչներով ողողված, գտնվում է Գյառգյառ գյուղը, որի մասին նույնպես հիշատակում է մեծ բանաստեղծը իր «Ճանապարհորդության դեպի էրզրում» ստեղծագործության մեջ։ Գյառգյառին անմիջապես մոտիկ գտնվում է շրջանի խոշոր գյուղերից մեկը՝ Գյուլագարակը (Ստեփանավանից 8 կիլոմետրի վրա), որի մոտից Երևան—Ստեփանավան հիմնական ճանապարհից դեպի աջ թեքվում է դեպի Թումանյան երկաթուղային կայարան տանող ճյուղը։

Գյուլագարակից 2—3 կիլոմետր դեպի Բազումի լեռնաշղթայի հարավային ճյուղերը, ծովի մակերևույթից 1500 մետր բարձրության վրա, շրջապատված փարթամ ու բարձր սոսիներով, ծվարել է «Գյուլագարակ» («Սոսնյակի») մանկական առողջարանը։

Այդ առողջարանը երկրի լավագույն լեռնա-կլիմայական կայաններից է։ Բարձր օդը՝ լցված սոսիների անտառի և նրա յաններից է։ Բարձր օդը՝ լցված սոսիների անտառի և նրա-

խոր ու նեղ ձորակ 150 մ բարձրությամբ զառիթափ ափերով: Այնուհետև ճանապարհը նորից մտնում է անտառի մեջ և անցնում կիրճի բերանով, որն աստիճանաբար լայնանում է, կազմելով լայն հովիտ: Այստեղ՝ հենց գետի ափին, կանաչ բարձրության վրա պահպանվել է X—XIII դարերի ճարտարապետական հուշարձանների մի հետաքրքրական կոմպլեքս:

Գյուլագարակից 22 կմ-ի վրա Լոռու կիրճի խոր հատակում տեղադրված է Թումանյան (նախկին՝ Քոլագերան) երկաթուղային կայարանը: Այստեղ էլ հենց, առափնյա լեռան անտառապատ լանջին, Փամբակ գետի վրա, սպիտակին է տալիս Թումանյանի տուրիստական բազայի (Երևանի տուրբազայի ֆիլիալ) առանձնատունը, որն սպասարկում է 61-րդ տուրիստական երթուղուն: Թումանյանի տուրբազան էքսկուրսիաներ է կազմակերպում դեպի շրջակա անտառները, Ջորագետի գեսը (կառուցված 1933 թ.): Ջորագեսը տեղադրված է երկաթուղային կայարանից և տուրբազայից 3 կմ-ի վրա, Ջորագետի և Փամբակի միախառնման տեղում: Դա շրջանի ամենահզոր էլեկտրակայանն է: Այն կապված է Կիրովական և Ալավերդի քաղաքների հետ՝ բարձր լարման հաղորդալարերով և հանդիսանում է այդ քաղաքների արդյունաբերության զարգացման էլեկտրաանուցման կարևորագույն աղբյուրը:

Կիրճի վրա, Լոռու սարահարթում տեղադրված է Թումանյան (նախկին Դսեղ) խոշոր գյուղը, որն ունի 5000 բնակիչ: Թումանյանը հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայրն է: Այստեղ կարելի է գալ կիրճի լանջով գալարվող ճանապարհով, կարելի է գնալ նաև ոտքով, մութ և ղով անտառի մեջ թեք ժայռերով բարձրացող արահետով:

Թումանյան գյուղում այն տանը, որտեղ ապրել են բանաստեղծի ծնողները, և անցել են նրա մանկության տարիները, կազմակերպված է Հովհ. Թումանյանի տուն-թանգարանը: Տուն-թանգարանի բակում վառ ծաղիկների մեջ, գրանիտյա պատվանդանի վրա կանգնեցված է Հովհ. Թումանյանի կիսանդրին (քանդակագործ՝ Ուրարտու): Թանգարանում ցուցադրվող ձեռագրերը, լուսանկարները, գրքերը, ամսագրերը պատմում են մեծ բանաստեղծի կյանքի և գրական-հասարակական գործունեության մասին:

Թումանյան գյուղի մոտ են գտնվում հրակայուն կավերի հանքավայրերը, որոնց բազայի վրա աշխատում է հենց այստեղ կառուցված հրակայուն աղյուսի գործարանը: Գործարանը շահագործման է հանձնվել 1952 թվին: Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանը կարևոր նշանակություն ունի Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի արդյունաբերական շինարարության համար: Այդ գործարանի արտադրանքը ուղարկվում է Հայաստանի (Ալավերդի, Լենինական), Վրաստանի (Ռուսթավի, Ջեստաֆոնի), Ադրբեջանի (Բաքու), Հյուսիսային Կովկասի (Ռոստով, Գրոզնի, Կրասնոդարի) կենտրոնները, ինչպես նաև Ռուսաստանի Ֆեդերացիայի մի շարք հարավային ձեռնարկություններ:

Թումանյանն ու նրա շրջակայքը հարուստ են նաև պատմական հնություններով: Այստեղ գրեթե ամեն քայլափոխին կարելի է հանդիպել միջնադարյան վանքերի, եկեղեցիների, դամբարանների, հուշարձան-կոթողների, հին բնակավայրերի հետքերի և այլն, որոնք մի առանձին գեղեցկություն ու հմայք են տալիս ոչ միայն Թումանյանին, այլև ամբողջ Ալավերդու շրջանին՝ որպես բնական մի թանգարան:



## 8. ԵՐԵՎԱՆ—ՍԵՎԱՆ—ՄԱՐՏՈՒՆԻ—ԵՂԵԳՆԱՁՈՐ—ՋԵՐՄՈՒԿ



Երմուկ ամառանոցը սովորաբար կարելի է գնալ ավտոմեքենայով՝ Երևան—Արտաշատ — Արարատ — Բաշ-Նորաշեն — Եղեգնաձոր ճանապարհով, որն այժմ Ջերմուկը Երևանի հետ կապող ամենաբարեկարգ ու կարճ ուղին է։ Սակայն գերադասում ենք էքսկուրսանտին Ջերմուկ տանել ոչ թե այդ, այլ Երևան—Սևան—Մարտունի—Հայոց ձորի լեռնանցք—Եղեգնաձոր ուղղությամբ, որն ունի իր ուրույն հետաքրքրությունը և համեմատաբար քիչ հատվածներում է համընկնում նկարագրման ենթակա այլ երթուղիների հետ։ Այդ ամբողջ ճանապարհը կարելի է բաժանել չորս հատվածի՝ Երևան—Սևան, Սևան—Մարտունի, Մարտունի—Եղեգնաձոր և Եղեգնաձոր—Ջերմուկ։ Երևան—Սևան հատվածի նկարագիրը տրված է Երևան—Սևան—Դիլիջան—Բերդ վերնագրի տակ և հարկ չկա նորից կրկնել։ Ուստի այժմ ներկայացնենք նշված ճանապարհների մյուս երեք հատվածները՝ հաջորդական կարգով, սկզբնակետ ընդունելով Սևան ավանը, որի մասին արդեն ասվել է։

*ա)* **Սևան—Մարտունի.**—Երևան—Աղստաֆա խճուղուց Սևան ավանում անջատվում և Սևանա լճի ափերով դեպի հարավ-արևելք է գնում Նոր Բայազետ ու Մարտունի տանող ասֆալտապատ ճանապարհը, որը չնայած տեղի ձմեռային խիստ ու դաժան կլիմային՝ անխափան գործում է ամբողջ տարին։ Սևան—Մարտունի ճանապարհը, բացառությամբ Նոր Բայազետ քաղաքի մոտ ընկած հատվածի, ամբողջապես ձգվում է լճի ափերով։ Նրա հյուսիս-արևելյան կողմում Սևանի լազուր հայելին է, իսկ հարավ-արևելյան կողմում՝ Գեղամա ու Վարդենիսի ծաղկազարդ լեռները, որոնք դեպի լիճը ցածրանալով, վեր են ածվում մանր բլուրների և հողմահարման հետևանքով առաջացած քարակույտերի։ Լճի հյուսիս-արևելքում հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ ձգվում են Սևանը պատնեշող Արեգունի և Սևանի լեռները։ Եվ ահա Գեղամա, Վարդենիսի, Սևանի և Արեգունի լեռները իրենց մեջ գրկում են հոանկյունաձև մի գոգավորություն, որի ցածրադիր մասում տեղադրված է Սևանա լիճը։ Հնագույն ժամանակներում Սևանա լճի ավազանը շրջապատված է եղել թանձրախիտ անտառներով և նրա կլիման եղել է ավելի մեղմ։ Այժմ այնտեղ անտառները բացակայում են, միայն լճի հյուսիս-արևելյան կողմում, Սևանա լեռների հարավհայաց լանջերին հանդիպում են առանձին թփուտներ, որոնք վաղեմի անտառների մնացորդներն են և չեն փոխում ընդհանուր դրությունը։ Անտառների առկայությունը կկրկնապատկեր Սևանա լճի գեղեցկությունը, թեպետև նա առանց այդ էլ դյութիչ է ...գեղեցկուհուն չպետք է վերնազգեստով որոշել։ Սևանը՝ շրջակայքի լեռներով, ափերին փռված նեղ հովիտներով ու դաշտերով, որոնք կտրտված են Սևան թափվող երեք տասնյակի հասնող լեռնային աղմկարար գետերով ու գետակներով, իրենից ներկայացնում է մի ուրույն բնաշխարհ՝ իր յուրահատուկ բնա-կլիմայական և հողաբուսական պայմաններով հանդերձ։ Շրջակայքի բնա-կլիմայական պայմանների վրա Սևանա լիճը թողնում է զգալի ազդեցություն՝ պայմանների վրա Սևանա լիճը թողնում է զգալի ազդեցություն՝ նշանակալի չափով իրար մոտեցնելով օդի բարեխառնության ծայրակետերը։ Ավազանի բարձր դիրքը, արևոտ լինելը, առողջարար օդը և լճի առկայությունը նպաստավոր պայմաններ են հանդիսանում Սևանի ափերին լեռնային-կլիմայական առողջարաններ և հանգստի տներ հիմնելու համար։

Սևանա լճի ավազանը ամենահին բնակեցված շրջաններից մեկն է։ Մարդկային կյանքը հնագույն ժամանակներից ի վեր այդ փոքրիկ երկրում երբեք չի ընդհատվել։ Ուրարտական ժամանակաշրջանում նա կազմում էր ուրարտացիների պետության մասը։ Լինելով վերջինիս ծայրանահանգներից մեկը, այնտեղ ուրարտացիները կառուցել են մի շարք բերդեր կամ բերդաքաղաքներ, ինչպես սովորաբար կոչվում են ուրարտական ամրացված բնակավայրերը։ Ուրարտական ժամանակաշրջանի նյութական կուլտուր

րայի մնացորդների ենք հանդիպում լճի հարավային ափի ամբողջ երկայնքով։ Այստեղ նշմարվում են ուրարտական մի քանի քաղաքների հետքեր, արձանագրություններ, գերեզմաններ և այլն։ Հայտնաբերված են նաև նախաուրարտական ժամանակաշրջանի նյութական կուլտուրայի մնացորդներ՝ բնակավայրերի հետքեր, գերեզմաններ, ճանապարհներ։ Դրանք վերաբերում են մեր թվականությունից առաջ երրորդ-երկրորդ հազարամյակներին, գերազանցապես ծածկված էին լճով և ցամաք են դուրս եկել լճի մակարդակի իջեցման շնորհիվ։

Ներկայումս Սևանա լճի ավազանը, որ ամբողջապես մտնում է Հայկական ՍՍՌ-ի մեջ, մասնատված է երեք վարչական շրջանների՝ Նոր Բայազետի (հարավ-արևմտյան կողմում), Մարտունու (հարավային կողմում) և Բասարգեչարի (հարավ-արևելյան կողմում)՝ շրջված Սևանի և Կարմիրի շրջանները, որոնց տերիտորիաների մի մասը ևս պատկանում է Սևանի ավազանին։ Բոլոր ժամանակներն առանց բացառության՝ արժանահիշատակ իրենց հետքն են թողել Սևանի ավազանում։ Այստեղ կարելի է տեսնել և՛ հնագույն, և՛ հին, և՛ միջնադարը, և՛ Նոր ու նորագույն ժամանակները հիշեցնող կոթողներ, արձանագրություններ, տարբեր տիպի ու ծավալի բնակավայրերի ավերակներ, մեր օրերի գյուղեր, ավաններ և այլն, և այլն։

Սևան ավանից մինչև Նոր Բայազետ քաղաքը խճուղին անցնում է Լճաշեն, Զկալովկա, Մուխան, Լճափ և Այրիվան գյուղերի միջով։ Այրիվան գյուղի մոտով անցնելուց հետո շուտով խճուղին ընդհատ մոտենում է լճին և շփվում նրա հայելու հետ, ապա Նորագույզ թերակղզու շրջանում բավական հեռանում է նրանից և շուտով մտնում Նոր Բայազետ քաղաքը։

Նոր Բայազետ քաղաքը գտնվում է Նորագույզ թերակղզու թիկունքում, լճից 6—7 կմ հեռավորության վրա, Գավառագետի ստորին հոսանքում։

Նոր Բայազետի տեղում կամ թերևս նրա շրջակայքում ամրացված բնակավայր է եղել դեռևս ուրարտական ժամանակաշրջանում, մեզանից ավելի քան 2700 տարի առաջ։ Այդ են վկայում քաղաքի շրջակայքում եղած ուրարտական բերդի ու բնակավայրի ավերակները, որոնք բազմիցս արժանացել են այս կամ այն ուսումնասիրողի ուշադրությանը։ Դարեր շարունակ Բայազետի տեղում եղած բնակավայրի մասին որևէ հիշատակություն չկա ոչ մեր և ոչ էլ օտար հեղինակների մոտ։



XIV—XV դդ. նրա տեղում առաջացել էր Գավառ առևտրական փոքրիկ ավանը, որի գոյությունը գրեթե բացառապես պայմանավորված էր տարանցիկ առևտրով։ Նա իր բնույթով այդ ժամանակներում նման էր Արաքսի հովտում, գլխավոր տարանցիկ առևտրի հանապարհի վրա առաջացած Ջուղա փոքրիկ քաղաքին և Ագուլիս ավանին, որոնք, սակայն, ի տարբերություն Գավառի, դարձել էին ավելի մեծ մասշտաբի առևտրական կենտրոններ։ Հետագա շրջանում՝ ընդհուպ մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալը, Գավառը որևէ զարգացում չի ունենում, նա մնում է որպես սովորական գյուղ և առևտրական ավան։ Գավառի առևտուրը տոնավաճառային բնույթի էր։ Այստեղ առևտուրը աշխուժանում էր ամառանը, երբ Հայաստանի յայլաններն էին գալիս բազմաթիվ քոչվորներ՝ իրենց անասուններով։ Ամառանը կիրակի կամ տոն օրերին Գավառի շուկայում վաճառվում էին հազարավոր մանր և խոշոր եղջերավոր անասուններ, որոնց քշում տանում էին մեծ քաղաքների շուկաները։

Գավառը առաջադիմում և քաղաքի է վերածվում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո։ Նրա այդ զարգացումը պայմանավորված էր մի կողմից՝ նրանով, որ դարձել էր 1850 թ. կազմակերպված Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի վարչական կենտրոնը, իսկ մյուս կողմից՝ առևտրա-տնտեսական կյանքի աշխուժացմամբ։ Նրա տնտեսական կյանքի մեջ գլխավոր դեր էին խաղում առևտուրը, ձկնորսությունը և տեղական մասշտաբի արհեստագործությունը։ Նախկին Գավառը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո՝ դարձավ քաղաք և կոչվեց Նոր Բայազետ։ Արդեն քաղաքի վերածված գավառը Նոր Բայազետ է կոչվել այն պատճառով, որ այնտեղ բնակություն հաստատեցին Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից գաղթած շատ հայեր։ Նոր Բայազետ քաղաքի և համանուն գավառի աշխատավոր բնակչությունը փայլուն հետք է թողել Հայաստանի հեղափոխական շարժման պատմության մեջ։ Այնտեղի աշխատավոր բնակչությունը մեկ անգամ չէ, որ ըմբոստացել է տեղական կեղեքիչների և ցարական ինքնակալության դեմ։

Մեր օրերում հսկայական չափով առաջադիմել է Նոր Բայազետի շրջանի կենտրոն Նոր Բայազետ քաղաքը։ Նա ունի տրիկոտաժի և փայտամշակման ֆաբրիկաներ, յուղի, պանրի, հացի և մսի մեխանիկական գործարաններ, գորգագործություն, երկու միջնամեխանիկական գործարաններ, գորգագործություն, երկու միջնակարգ, մեկ յոթնամյա, երկու տարրական և մեկ երաժշտական դպրոց,

րոցներ, անասնաբուժական-անասնաբուծական տեխնիկում, մանկավարժական ուսումնարան, կուլտուրայի տներ, գրադարաններ, թատրոն, կինոթատրոն, ստադիոն, հյուրանոց, զբոսայգի, հիվանդանոց: Քաղաքի փողոցները բարեկարգվում և ծառազարդվում են: Կառուցվել են բազմաթիվ նոր, բարեկարգ տներ, որոնք զարդարում են քաղաքը: Քաղաքի և նրա շրջակայքի հնություններից արժանի են հիշատակության՝ քաղաքի կենտրոնում գտնվող հոյակապ եկեղեցին և քաղաքից ոչ հեռու գտնվող ուրարտական բերդաքաղաքի ու միջնադարյան Բերդկունք բնակավայրի ավերակները: Բերդկունքի ավերակները գտնվում են քաղաքից 6—6,5 կմ հյուսիս, Սևանա լճի ափին և գրավում են բավական ընդարձակ տարածություն: Նա ճանապարհային կարևոր կայան էր միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը Աղվանքի (Албания) մայրաքաղաք Պարտավի հետ միացնող հյուսիսային տարանցիկ գլխավոր ճանապարհի վրա, որը հարավային ճանապարհի համեմատությամբ ավելի հին էր և անցնում էր Հրազդան գետի հոսանքի ուղղությամբ ու Սևանա լճի հարավային ափերով՝ դիմում դեպի Թարթառ գետի հովիտը:

Նոր Բայազետ քաղաքը սքանչելի ամառանոց է: Նրա բարձր դիրքը, արևոտ օրերը, մաքուր օդը, լավորակ ջուրը գրավում են շատ ամառանոցաբնակների: Այդ պատճառով էլ Նոր Բայազետի բնակչությունը ամռան ամիսներին գրեթե կրկնապատկվում է:

Էքսկուրսանտի համար հատուկ հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև Նոր Բայազետ քաղաքի շրջակայքում գտնվող գյուղերի՝ Հացառատի, Բատիկյանի, Սարուխանի, Կարմիր գյուղի, Արծվաքարի և Նորադուղի կոլտնտեսություններն իրենց անասնաբուծական ֆերմաներով, տարբեր մշակույթների դաշտերով, օժանդակ տնտեսություններով և նիստ ու կացով: Այդ բոլոր տնտեսությունները կարելի է դնալ ավտոմեքենայով, ձիով կամ հետիոտն. դրանք Նոր Բայազետից գտնվում են ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա:

Նոր Բայազետ քաղաքին և նրա շրջակայքին ծանոթանալուց հետո պետք է ճանապարհը շարունակել խճուղով դեպի Մարտունի: Ավտոմեքենան Նոր Բայազետից դուրս գալով, դիմում է դեպի հարավ-արևելք և մի քանի րոպեից հետո մոտենում է լճափին: Մարտունու շրջանի երանոս գյուղի մոտից սկսած, որն ընկած է ճանապարհից 2 կմ աջ, խճուղին ձգվում է ընդհուպ լճափով:

**Մարտունի գյուղը Հայկական ՍՍՌ Մարտունի վարչական**



շրջանի կենտրոնն է: Նա տեղադրված է լճափին մոտ և Երևանից, խճուղով հաշված, գտնվում 140 կմ հեռավորության վրա: Նա ունի ձկան կոնսերվի գործարան և գորգագործություն: Այստեղ հանգուցվում են Նոր Բայազետից, Բասարգեչարից և Եղեգնաձորից եկող ճանապարհները: Ունի միջնակարգ դպրոց, կուլտուրայի տուն, գրադարան, կինոթատրոն, հյուրանոց: Էքսկուրսանտի համար Մարտունի գյուղն իր հին ու նոր կառույցներով, առաջավոր կոլտնտեսությամբ, շրջակայքի վայրերով, ծովահայաց գեղատեսիլ տեսարաններով, բնակչության առողջ տրադիցիաներով ու վերին աստիճանի հյուրասիրությամբ կարող է մեծ հետաքրքրություն ներկայացնել:

Սևանա լճի ավազանի հնությունների ու ժամանակակից հիշարժան վայրերի մասին ամբողջական գաղափար կազմելու համար ցանկալի է Մարտունին ելման կետ դարձնելով, կատարել տեղական և ավելի հեռավոր մի քանի էքսկուրսիաներ: Առանձնապես մեծ արդյունք կտա և բավականություն կպատճառի Մարտունի—Բասարգեչար խճուղու ուղղությամբ կատարվելիք ճանապարհորդությունը, որը պետք է զուգորդել տեղական մի շարք էքսկուրսիաներով: Այդ ճանապարհորդության ընթացքում էքսկուրսանտը կծանոթանա Սևանա լճի ու նրա հարավային ափերի բնությամբ զմայլվելուց և էսթետիկական մեծ հաճույք ստանալուց բացի՝ կծանոթանա ամենատարբեր ժամանակներին վերաբերող պատմական մի շարք վայրերի ավերակներին: Առանձնապես մեծ տպավորություն կթողնի Ծովինար գյուղի մոտ գտնվող ուրարտական ընդարձակ արձանագրությունը՝ քանդակված լճափին ընկած մի մեծ քարի վրա: Ավելի մեծ հետաքրքրություն ու հաճույք կպատճառի շուրջլճյա ճանապարհորդությունը ավտոմեքենայով: Մինչև լճի մակարդակի իջեցումը՝ ավտոմեքենայով այդպիսի ճանապարհորդություն կատարելն անհնար էր, որովհետև լճի հյուսիս-արևելյան ժայռոտ ափը ճանապարհազուրկ էր, իսկ այժմ այդտեղ լճի տակից դուրս եկած հարթ տարածությունը ծառայում է որպես ավտոմեքենայի ճանապարհ: Ուղևորը շուրջլճյա ճանապարհորդության ժամանակ կծանոթանա լճի մակարդակի իջեցման պատճառով ցամաք դուրս եկած նախաուրարտական ժամանակներին վերաբերող բնակավայրերի և նյութական կուլտուրայի մնացորդներին:

*բ)* **Մարտունի—Եղեգնաձոր.**—*Տեղական (կամ շուրջլճյա) ճանապարհորդություններ կատարելուց հետո էքսկուրսանտը վերադառնում է Մարտունի, դեպի Եղեգնաձոր տանող խճուղու ելակե-*

տը։ Շուտով նա ավտորուսով կամ այլ մեքենայով ուղևորվում է դեպի հարավ, հրաժեշտ տալով հյուրընկալ Մարտունուն և լայնուր Սևանին։

Խճուղին սկզբում ձգվում է Դաշտիդարասի գետի հովտով, ապա, մի փոքր թեքվելով դեպի հարավ-արևմուտք, մոտենում է Արգիճի գետին, որի աջակողմյան վտակներից մեկի վերնագավառում գտնվում է նկարագրվող երթուղու բարձրագույն կետը՝ Հայոց ձորի լեռնանցքը (հնում Սուլեմա)։ Սրա բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 2410 մ-ի։ Հայոց ձորի լեռնանցքը գտնվում է Սևանա լճի ավազանը հարավից փակող Վարդենիսի լեռնաշղթայի կենտրոնական մասում։

Լեռնանցքի մոտ տեղադրված է Յանրղի լեռնային օդերևութաբանական կայանը։ Այդ կայանն իր մշտական դիտումներով կարևոր տեղեկություններ է տալիս մթնոլորտային տեղումների, օդի ու հողի ջերմության և քամիների մասին, որոնք այնքան մշտական և արագընթաց են այդ մասերում։ Ձմռանը մի քանի ամիս շարունակ ձյան հաստ շերտի և բուք ու բորանի պատճառով լեռնանցքը փակվում է, հաղորդակցությունը դառնում անհնար։ Գեղեցիկ է լեռնանցքը ամռանը, երբ ձյունածածկից ազատված Վարդենիսի լեռները պատում են մերձալպյան գույնզգույն ծաղիկների գորգով և թարմ խոտի մուգ կանաչով։ Տարվա այդ շրջանում լեռնանցքին ու շրջակայքին առանձին կենդանություն է տալիս Յանրղի անասնապահական ֆերման։ Լեռնանցքի հյուսիսային լանջին, ճանապարհի վրա բխում է մի սառնորակ աղբյուր, որտեղ գրեթե բոլոր ուղևորները մի փոքր դադար են առնում, ապա բարձրանում լեռնանցքը։

Հայոց ձորի լեռնանցքը մի լայն լուսամուտ է. նրանով դեպի հյուսիս նայելիս դիտողի առջև փռվում է Սևանա ավազանն իր կապուտակ ու ջինջ երկնքով, իսկ դեպի հարավ, ներքևում Հայոց ձորի գոգավորությունն է՝ բարդված Արփա գետի և նրա վտակների բազմաթիվ հովիտներով ու ձորերով։

Լեռնանցքն անցնելուց հետո խճուղին զառիթափ ոլորապտույտով իջնում է դեպի պատմական հուշարձաններով հարուստ Հայոց ձոր։ Լեռնանցքից ընդամենը 2—2,5 կմ հեռավորության վրա, Վարդենիսի լեռնաշղթայի հարավհայաց բարձրադիր լանջին, խճուղու ձախ կողմում գտնվում են միջնադարյան Սուլեմա (հետագայում Սելիմ) հայտնի քարավանատան ավերակները, որոնց պահպանման համար ներկայումս առանձնահատուկ ուշադրություն է դարձ-



նում Հայկական ՍՍՌ Հնությունների պահպանման կոմիտեն, և նույնիսկ նախագիծ կա՝ այն, իբրև անցյալի թողած կարևոր ժառանգություն, ենթարկել ռեստավրացիայի։ Քարավանատան ավերակները Եղեգնաձորի շրջանի Աղբենդ գյուղից խճուղով հաշված՝ հեռու են 12 կմ, իսկ ոտքի կարճ ճանապարհով՝ 6 կմ։ Այդ քարավանատունը միջնադարյան Հայաստանի քաղաքացիական բնույթի ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից մեկն է համարվում։ Նա գտնվում էր տարանցիկ ճանապարհի վրա և առևտրական քարավանների ամենակարևոր հանգրվաններից մեկն էր։ Անուղղակի մի շարք հիշատակություններից երևում է, որ Սուլեմայի տեղում քարավանատուն է եղել տակավին IV—V դարերում, իսկ IX—X դարերում այն արդեն նշանավոր հանգրվան էր դարձել Դվին—Պարտավ բանուկ ճանապարհի վրա։ Սակայն այդ քարավանատունն այն կառուցվածքով, որի ավերակներն այժմ պահպանվել են, վերաբերում է ավելի ուշ ժամանակների (XIII—XIV դարերին)։

Սուլեմա քարավանատունը բաղկացած է երեք սրահից, որոնցից մեկը համարվում է հիմնական կամ մեծ սրահ, իսկ մյուս երկուսը փոքր սրահներ են և կատարել են օժանդակ դեր։ Մեծ սրահը կառուցվել է XIII դարում, իսկ փոքր սրահները, ինչպես ասված է քարավանատան վրա պահպանված արաբատառ արձանագրության մեջ, կառուցվել են 1332 թ.։ Բոլոր երեք սրահների հատակագիծը քառանկյունի է, ծածկը՝ թաղակապած բազալտի հսկա քարերից, պատերը՝ շարված սրբատաշ քարերով ու կրաշաղախով։ Ունեն մի շարք խորշեր, առանձին սենյակներ, որոնք բացվում են դեպի ընդհանուր սրահներ։ Սրահների պատերի ներսի կողմում կան տարբեր բովանդակության քանդակներ։ Առանձնապես գեղեցիկ է շքամուտքը. նրա դռան երկու կողմերում կան բարձրաքանդակներ, որոնցից արևելյան կողմինը ցուլ է, իսկ արևմտյան կողմինը՝ մարդու դեմքով առյուծ, որի վրա հարձակվում է մի օձ։

Սուլեմայից ոչ հեռու, Աղբենդ գյուղից մոտ 3 կմ հյուսիս, Մարտունի—Եղեգնաձոր ճանապարհի ձախ կողմում գտնվում է մի այլ քարավանատուն, որն իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագիծ ունեցող մի ընդարձակ սրահ, ցածրիկ պատերով և համեմատաբար լայնաթռիչք միակամար ծածկով։ Ենթադրվում է, որ այս քարավանատունը կառուցվել է Սուլեմայից ավելի վաղ՝ հավանաբար XII—XIII դարերում։

Աղբենդ գյուղի մոտ են գտնվում նաև Սուլեմա բերդի ավերակ-

ները։ Այդ բերդի մասին եղած առաջին հիշատակությունները վերաբերում են IV—V դարերին։ Մեզ հասած տեղեկություններից երևում է, որ նա համարվել է Սյունիքի նշանավոր բերդերից մեկը։ Այժմ նրա ավերակները հազիվ են նշմարվում։

Սուլեմա քարավանատան ու բերդի ավերակներին ծանոթանալուց հետո պետք է շարունակել ճանապարհորդությունը դեպի Եղեգնաձոր։ Մինչև Եղեգնաձոր մեքենան անցնում է նախ Սելիմչայի, ապա նրա մայր գետի՝ Արփայի աջակողմյան խոշորագույն վտակի՝ Եղեգիսի հովտով դեպի հարավ։ Ճանապարհին ուղևորը կարող է դադար առնել ու ծանոթանալ Քարագլուխ, Շատին և Գետափ գյուղերին, որոնք իրենց պատմական անցյալով և ներկա վիճակով կարող են հետաքրքրություն ներկայացնել։ Ճանապարհի այդ հատվածում, նրա աջ ու ձախ կողմերին տարբեր հեռավորության վրա ցրված են տարբեր ժամանակներին վերաբերող պատմական վայրերի ավերակներ։

Գետափ գյուղում Մարտունուց Եղեգնաձոր տանող խճուղուն է միանում Երևանից՝ Արտաշատով, Արարատով և Բաշնորաշենով եկող ուղին։ Այդ գյուղից մինչև Եղեգնաձոր ընդամենը 2 կմ է, և ավտոմեքենան նրանով անցնելով՝ 3—4 րոպեից հետո մտնում է Եղեգնաձոր՝ Հայկական ՍՍՌ Եղեգնաձորի շրջանի կենտրոնը։ Եղեգնաձոր գյուղը նախկինում կոչվում էր Քեշիշքենդ, ապա՝ Միկոյան։ Տեղադրված է Արփա գետի աջ կողմում, նրա սիստեմին պատկանող մի ձորակի բարձրադիր ափին։

Եղեգնաձորը բարեկարգ գյուղ է և դիտողի վրա փոքրիկ քաղաքի տպավորություն է թողնում։ Նա խճուղով կապված է Գորիսի, Մարտունու և Բաշնորաշենով՝ Երևանի հետ, իսկ ամենամոտ երկաթուղային կայարանից՝ Նորաշենից (Երևան—Ջուլֆա գծի վրա) հեռու է 70 կմ։ Նա ունի մեկ միջնակարգ դպրոց, գրադարաններ, կինոթատրոն, հյուրանոց։ Ռեսպուբլիկայում հայտնի են նրա պանրի գործարանն ու թռչնաբուծական-ինկուբատորային կայանը։ Եղեգնաձորի և նրա հարևան Ազիզբեկովի շրջանները, միասին վերցրած, հնում կոչվում էին Վայոց ձոր, իսկ այժմ՝ Հայոց ձոր։

Եղեգնաձոր գյուղը համապատասխանում է պատմական Խոտորալեզին, որի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է տակավին V դարին։ Հետագա դարերում նա նշանակալի որևէ դեր չի խաղացել։ Մասամբ թերևս այդ է պատճառը, որ նրանում պատմական որևէ հիշարժան վայր չկա, եթե նկատի չունենանք գյուղից ոչ հեռու գտնվող ամրոցի ավերակները, որին տեղացի-



ները Քյոշք են կոչում։ Պատմական հուշարձաններով հարուստ է Եղեգնաձորից 6—7 կմ հյուսիս-արևելք գտնվող Վերնաշեն (Բաշգյուղ) գյուղն իր շրջակայքով։ Այդ գյուղը կարելի է գնալ ոտքով, գրաստով կամ ավտոմեքենայով։ Նա տեղադրված է մի գեղատեսիլ վայրում և ամբողջապես շրջապատված է այգիներով։ Նրա անունն է կրում Հայկական ՍՍՌ-ում արտադրվող կիսաքաղցր գինիներից մեկը՝ «Վերնաշեն»-ը, որը արժանացել է բարձր գնահատականի ու մեդալի։ Վերնաշենն իր հիմնադրման օրից մինչև XVIII դարի կեսերը կոչվել է Սարկողովք կամ Սրկղունք։ Նրա սահմաններում են գտնվում Թանատեի կամ Թանատի, Սպիտակավոր Աստվածածնի և Արկյազի ս. Խաչ վանքերը, Բոլորաբերդ ամրոցը։ Դրանց ավերակները պահպանվել են և դրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին վերցրած՝ կարող է մի էքսկուրսիայի օբյեկտ հանդիսանալ։ Սակայն իր պատմական անցյալով և ճարտարապետական կառուցվածքով դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Թանատի վանքը, որը մինչև օրս էլ կանգուն վիճակում է, չնայած արդեն բավական քայքայված է։

Թանատի վանքի կառուցման ժամանակն անորոշ է։ Հիշատակվում է սկսած VIII դարից։ Սկզբում նրա տեղում եղել է մի մատուռ, իսկ 1279 թ. կառուցվում է մինչև օրս կանգուն մնացած գմբեթավոր եկեղեցին։ Վանքը բաղկացած է երկու եկեղեցիներից, գերեզմանատնից և ավերակների վերածված օժանդակ զանազան շենքերից։ Գլխավոր եկեղեցին, որ արձանագրությունների մեջ կոչված է ս. Ստեփանոս, կառուցվել է Պռոշ իշխանի օրոք՝ XIII դարում։ Նա գմբեթավոր է, արտաքուստ քառանկյունի, ներսից խաչաձև հատակագծով։ Պատերը շարված են բազալտե սրբատաշ մուգ- կապտավուն քարերով՝ կրաշաղախով։ Հարավային պատին բարձրաքանդակված է արևի ժամացույց, որից վեր մի թռչունի քանդակ է՝ իր ձագի հետ միասին։ Գմբեթի ներսի կողմից կան բարձրավայրի գազանների, թռչունների և ընտանի կենդանիների քանդակներ, իսկ հարավային պատի վրա քանդակված է Պռոշյան իշխանական տան խորհրդանշանը՝ թևատարած արծիվը՝ գառը ճանկերում բռնած։ Եկեղեցու վրա կան բազմաբովանդակ մի շարք վիմագիր արձանագրություններ, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում XIII—XIV դարերի զանազան իրադարձությունների մասին։ Վանքի երկրորդ եկեղեցին առաջինին կից է հյուսիսային կողմից և հավանաբար նրան ժամանակակից է։ Երկրորդ եկեղեցին ևս շարված է մուգ-կապտավուն բազալտի սրբատաշ հսկա քա-

բերից, կրաշաղախով։ Դուռը արևմտյան կողմից է և քանդակազարդ։ Այս եկեղեցին ավերակ վիճակում է։

Նշված պատմական վայրերին ծանոթանալուց հետո պետք է վերադառնալ Եղեգնաձոր և շարունակել ճանապարհորդությունը խճուղով, որը Գետափ և Եղեգնաձոր գյուղերի մոտից ուղղվում է դեպի արևելք և ընթանում Արփա գետի այգեշատ հովտով։

Եղեգնաձորից արևելք, խճուղով նրանից 7—8 կմ հեռու, Արփա գետի աջ կողմում, մի փոքրիկ գետակի վրա տեղադրված է Մալիշկա նշանավոր գյուղը, որը հայտնի է իր այգիներով և հարուստ կոլտնտեսությամբ։ Ուղևորը Մալիշկայում կարող է ծանոթանալ նրա բազմաճյուղ տնտեսությանը, որն աչքառու մեծ հաջողությունների է հասել մեր օրերում։ Մալիշկայից հարավ-արևելք 3—3 1/2 կմ հեռավորության վրա, Արփա գետի աջ ափին գտնվում են պատմական Մոզ քաղաքի հազիվ նշմարվող ավերակները։ Մոզի մասին հիշատակվում է V դարից՝ Վարդանանց պատերազմի առնչությամբ։ VIII դարում նա եղել է քաղաք։ Ըստ հիշատակության, 735 թ. տեղի ունեցած աղետաբեր երկրաշարժից այն կործանվել է, իսկ բնակչությունը՝ թվով 10 000, բնաջնջվել։ Հետագայում նա վերաշինվել է, սակայն նախկին փառքին չի հասել, այլ մնացել է իբրև սովորական բնակավայր։ Ենթադրվում է, որ Մոզը ոչ պակաս բնակավայր գոյության է ունեցել մինչև XVI դարը, իսկ նրանից ոչ հեռու գտնվող նույնանուն գյուղը նշանակված է նույնիսկ XIX դարի վերջերի և XX դարի սկզբների քարտեզներում։ Մոզի ավերակներն ու նրա շրջակայքի տարածությունները պատած են քարե կարկառներով, որոնց մեջ նկատելի են առանձին քարաշար պատերի մնացորդներ, ավերակ եկեղեցու և գերեզմանոցի հետքեր, պարիսպների մնացորդներ։

Դեպի վերնաշեն կատարած էքսկուրսիայից պետք է վերադառնալ Մալիշկա և խճուղով շարունակել ճանապարհը դեպի արևելք։ Մալիշկայից դուրս գալուց հետո՝ 40—45 րոպեում մեքենան հասնում է Արփա գետի և նրա ձախակողմյան Թերփ վտակի խառնարանը։ Այստեղ դեպի Սիսիան—Գորիս տանող գլխավոր խճուղուց բաժանվում է Ջերմուկի բարեկարգ ու ասֆալտապատ ճանապարհը, որը Արփա գետի ընթացքով դիմում է դեպի հյուսիս-արևելք։ Նշված գետերի խառնարանից մինչև Ջերմուկ ձգվող ճանապարհահատվածը անցնում է Սովետական Հայաստանի ամենագեղեցիկ շրջաններից մեկով։ Այստեղ Արփա գետը սեղմված է արևելքում ու արևմուտքում վեր խոյացած զառիվեր լեռների միջև, որոնցից արևմտյանները շատ տեղերում ծածկված են անտառներով։ Ճանապարհի երկու կողմերից լեռների կուրծքը ճեղքող և դեպի Արփայի նեղ ձորն իջնող գետակների ու սառնորակ աղբյուրների նյարդեր հանգստացնող վշշոցը, լեռնային Արփայի գոռում-գոչոմը, որ արձագանքում է վիհերում ու խոր ձորերում, սարալանջերի թարմ կանաչը, թփուտներն ու անտառները, թռչունների գայլայլը՝ այդ բոլորը միախառնվելով ստեղծում են լեռնային երկրին հատուկ մի անկրկնելի պատկեր, որն այնքան վառ ու հարատև մնում է ուղևորի հիշողության մեջ։ Ճանապարհի ամեն մի զիգզագում,— իսկ Ջերմուկ տանող ճանապարհը ունի բազմաթիվ զիգզագներ,— շրջապատի պատկերը փոխվում է, բնության տարրերը հանդես են գալիս այլ զուգորդությամբ։ Ճանապարհը շարունակ բարձրանում է դեպի վեր, և եթե Արփայի ու Թերփի միախառնվելու տեղում ուղևորը խիստ շոգ է զգում, ապա նույնիսկ մեկ ժամ չտևող ճանապարհորդությունից հետո նա հասնում է հով ու բարձրադիր Ջերմուկ կուրորտը։

Գրավիչ բնությունով հիանալուց բացի՝ Ջերմուկ տանող ճանապարհին ուղևորը կարող է տեսնել պատմական մի քանի հնություններ, որոնք իրենց տեղն ունեն հայ ճարտարապետության և կուլտուրայի պատմության մեջ։ Ուշադրության արժանի են հատկապես երկու խումբ հնություններ, որոնցից մեկը գտնվում է Եղեգնաձոր—Գորիս ճանապարհից, Ջերմուկ տանող խճուղով հաշված, 11—12 կմ հյուսիս-արևելք, իսկ մյուսը՝ Ջերմուկ չհասած, նրանից 5—6 կմ հեռավորության վրա։ Առաջին խումբը գտնվում է Գնդևազ գյուղում և նրա շրջակայքում, իսկ երկրորդը՝ Կեչուտում։ Երկու գյուղերն էլ ընկած են Ջերմուկ տանող ճանապարհի վրա, և դրանց պատմական վայրերին ծանոթանալու համար էքսկուրսանտից երկար ժամանակ ու մեծ ջանքեր չեն պահանջվի։

Ջերմուկը Հայաստանի երեք ամենանշանավոր կուրորտներից ամենաերիտասարդն ու ամենափայլուն ապագան ունեցողն է։ Նա իբրև կուրորտ շարք է մտել միայն 1940 թվականից և առայժմ գործում է սեզոնով (հունիսի սկզբներից մինչև հոկտեմբերի վերջը)։

Ջերմուկը վարչականորեն մտնում է Հայկական ՍՍՌ Ազիզբեկովի շրջանի մեջ։ Նա գտնվում է Արփա գետի վերին հոսանքում, կովի շրջանի մեջ։ Նա գտնվում է Արփա գետի վերին հոսանքում, ծովի մակերևույթից 2060—2070 մ բարձրության վրա։ Ջերմուկ կուրորտի գրաված տերիտորիան իրենից ներկայացնում է 300 մ լայնություն ունեցող մի փոքրիկ սարահարթ, որը երեք կողմից

շրջապատված է բարձր լեռներով և իր կենտրոնական մասում կտրված է Արփա գետի նեղ ու խոր կիրճով։ Արփայի այդ կիրճով Ջերմուկի տերիտորիան բաժանված է երկու մասի՝ հյուսիս-արևելյանի և հարավ-արևմտյանի։ Առաջինի բարձրությունը 2070 մետր է, զգալի չափով ծածկված է անտառներով և լեռնալանջերն Արփա գետի նկատմամբ ունեն մեղմ թեքություն։ Երկրորդ մասը գրավում է համեմատաբար ավելի մեծ տարածություն և զառիթափ իջնում է դեպի Արփայի ձորը։ Այստեղով անցնող փոքրիկ գետակը Արփայի հետ միանալու տեղում առաջացնում է 70 մետր բարձրություն ունեցող մի սքանչելի ջրվեժ, որտեղ գետակի ամբողջ ջուրը Արփա է իջնում գրեթե փոշիացած վիճակում։ Ջերմուկի ջրվեժը բուժվողների, էքսկուրսանտների և առհասարակ բոլոր այցելուների ամենասիրած վայրերից մեկն է։ Նա բնության հրաշալիք է և յուրաքանչյուրին հարկադրում է երկար ժամանակ անէանալ ու, գամված միևնույն տեղում՝ երկար ընկղմվել քաղցր անուրջների մեջ։

Ջերմուկ ամառանոցի կլիման դով է ու բավական խոնավ։ Այստեղ օդի տարեկան միջին ջերմությունը 3° է, հունվար ամսվա միջին ջերմաստիճանը՝ —6,8—7°, իսկ հուլիսինը՝ 16,2°, ջերմության տարեկան տատանումը հասնում է 24°-ի։ Ամռանը զով է, ցրտերը վրա են հասնում նոյեմբերի սկզբներից, իսկ գարունը բացվում է մարտի կեսերից, կամ ապրիլի սկզբներից։ Մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 550 և 600 մմ միջև, տեղումները մեծ մասամբ թափվում են մայիս և հունիս ամիսներին։ Հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, երբ ամառանոցում հոում է կյանքը, օրերը պարզկա են, արևոտ։ Ամառանոցի շրջակայքում, գերազանցապես Արփա գետի հովտում, զգալի տարածություն է գրավում անտառը (1200 հեկտար)։ Բնական անտառի վրա գումարվում են նաև նոր գցված փշատերև և տաղարթավոր ծառերի պուրակները, որոնք ծառայում են իբրև զբոսայգի՝ բուժվողների ու հանգստացողների համար։ Անտառից վեր, կուրորտը շրջապատող լեռների բարձրադիր լանջերին տարածվում են վառ ու բազմագույն ծաղիկների թավիշը՝ ալպյան մարգագետինները, որոնց բուրմունքը կեսօրից հետո լեռնահովտային մեղմ քամին բերում և տարածում է ամբողջ ձորահովտում։ Զով կլիմայական պայմանները, մաքուր ու առողջարար օդը, չափավոր խոնավությունը, փարթամ բուսածածկի ու անտառների առկայությունը, ծովի մակերևույթից ունեցած բարձր



դիրքը, սուր հակադրություններով արտահայտված գեղատեսիլ բնությունը՝ նրա բարձրաբերձ լեռները, անդնդախոր ձորերը, ջրվեժը, ամառանոցային փոքրիկ, բայց գեղեցիկ սարահարթը, գետերը՝ այդ բոլորը Ջերմուկը դարձնում են բարձր լեռնային, ամենաառաջնակարգ առողջարաններից մեկը։ Սակայն դրանք, այնուամենայնիվ, երկրորդ կարգի նախապայման են։ Ջերմուկի՝ առողջարան լինելու համար հիմնական նախապայմանը նրա հանքային տաք ջրերն են, որոնք իրենց ֆիզիկա-քիմիական հատկություններով նման են Չեխոսլովակիայի՝ համաշխարհային հռչակ ձեռք բերած Կարլովի-Վարիի (Կարլսբադ) աղբյուրներին և Սովետական Միության մեջ գրավում են ամենակալ տեղերից մեկը։

Ջերմուկում բնական հանքային տաք աղբյուրների թիվը հասնում է մոտ 40-ի։ Դրանցից բացի՝ հորատման միջոցով բաց են արվել նաև ջրերի հզոր ելքեր, որոնցով դուրս են ցայտում հսկայական քանակությամբ ջրեր։ Դրանց ջերմությունը հասնում է մինչև 64°-ի։ Հանքային աղբյուրների մեծ մասը գտնվում է Արփա գետի ձորում, նրա՝ մոտ 2,5 կիլոմետր երկարություն ունեցող մի հատվածում, աջ և ձախ ափերին, իսկ մի քանիսն էլ դուրս են բխում վածում, աջ և ձախ ափերին, իսկ մի քանիսն էլ դուրս են բխում սարահարթի վրա։ Աղբյուրները համարակալված են ըստ Արփա գետի ընթացքի՝ հյուսիսից հարավ ուղղությամբ։ Աղբյուրներից մի քանիսն իրենցից ներկայացնում են փոքրիկ ճեղքերից ծորող հանքային ջրերի աննշան շիթեր։ Ջերմուկում հաջողությամբ կարելի է բուժել մարսողական օրգանների, լյարդի, նյարդային համակարգության, շարժման օրգանների և մի քանի այլ հիվանդություններ։

Հայկական լեռնաշխարհում հանքային ջրեր, այդ թվում և ջերմուկներ շատ կան։ Բնակչությունը հնուց ի վեր տեղյակ է եղել դրանց բուժիչ հատկություններին և իրենց ցավերն ամոքելու համար դարեր շարունակ տնայնագործական եղանակով օգտվել այդ աղբյուրներից։ Այդպիսի հայտնի ջրերից էին՝ Վարշակի ջերմուկը, որը գտնվում է Արևմտյան Հայաստանում, Ալադաղ (հնում Ծաղկանց) լեռների հյուսիս-արևելյան լանջերին, Էրզրումի հանքային ջրերը, Արզնին, Տաթևի հանքային աղբյուրը, որի մոտ նույնիսկ պատրաստված է եղել և պահպանվել է վաննան, Ջերմուկը և այլն։ Ամռանը, երբ Հայոց ձորի և Վարդենիսի յայլաներն էին բարձրանում հազարավոր քոչվորներ իրենց անասուններով, ձմռան ամիսներին մարդազուրկ դարձած Ջերմուկը կենդանություն էր առնում, այստեղ հավաքվում էին տարբեր հիվանդություն ունեցող բազմա-

թիվ մարդիկ՝ իրենց ցավերը նրա ջրերով բուժելու համար։ Ջերմուկի ջրերի գիտական ուսումնասիրությունը սկսվում է XIX դարի 30-ական թվականներից և ոոռ? ընդհատումներով այն շարունակվում է մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։ Սակայն նրա բազմակողմանի ուսումնասիրությունը կատարվել է մեր օրերում։ Ջերմուկը Սովետական Հայաստանի ամենաերիտասարդ ամառանոցն է։ Նա։ սկսել է գործել 1940 թ.։ Կարճ ժամանակամիջոցում նախկին ամայի սարահարթում առաջացել է մի փոքրիկ, բայց գեղեցիկ կուրորտային քաղաք։ Նրա առողջարաններն իրենց խաղադաշտերով, ծաղկանոցներով ու ծառաստաններով, կառուցվածքով ու հարմարություններով առաջնակարգ են և լիովին բավարարում են բուժվող հիվանդների պահանջները։ Ամեն տարի Ջերմուկում սանատորիական և ամբուլատոր բուժում են ստանում հազարավոր աշխատավորներ, ինչպես Սովետական Հայաստանից, այնպես էլ Միության ամենատարբեր շրջաններից։ Սանատորիական սեզոնում Ջերմուկում կարելի է տեսնել երևանցիների, բաքվեցիների, թբիլիսցիների, մոսկվացիների, լենինգրադցիների, կիևցիների, տալինցիների և այլ շատ տեղերից եկածների։ Բուժվողներից բացի՝ Ջերմուկ են գալիս նաև հազարավոր հանգստացողներ, որոնց մի մասը բնակվում է գեղեցիկ շարքերով հաստատվող վրաններում։ Ամառանոցն ունի պոլիկլինիկա, վաննայի շենք, ջուր խմելու շքեղ սրահ, բարեկարգ ու հարմար հյուրանոց, կինոթատրոն։ Ջերմուկի ջուրը շշերով ուղարկվում է Միության ամենատարբեր շրջաններ և մեծ համբավ ունի։ Սակայն դրանք բոլորը չեն։ Ջերմուկը տակավին գտնվում է բուռն զարգացման շրջանում։ Այցելուն այնտեղ կտեսնի նոր կառուցվող առողջարանների շինարարական հրապարակներ, անտառատնկում, ծաղկանոցների ու խաղահրապարակների համար լեռնալանջերից նոր հողերի գրավման աշխատանքներ։

Ճանապարհորդն ու էքսկուրսանտը ափսոսանքով են թողնում գեղատեսիլ Ջերմուկը, մանավանդ ամռան շոգ ամիսներին, երբ գործերի բերումով վերադառնում են Արաքսի ստթակեզ հովիտը։



## 9. ԵՐԵՎԱՆ—ԱՐՏԱՇԱՏ—ԲԱՇՆՈՐԱՇԵՆ—ԵՂԵԳՆԱՁՈՐ—ԲԱԶԱՐՉԱՅ—ՍԻՍԻԱՆ—ԳՈՐԻՍ—ՂԱՓԱՆ—ՔԱՋԱՐԱՆ—ՄԵՂՐԻ

Մեղրին Հայկական ՍՍՌ հարավային ծայրակետերից մեկն է, տեղադրված Արաքս գետի նեղ կիրճում, նրա ձախ կողմում։ Մեղրի կարելի է գնալ Երևան—Բաքու երկաթգծով և խճուղային ճանապարհներով, որոնցից էքսկուրսիայի համար նախընտրելի համարելով Երևան—Արտաշատ—Արարատ—Սադարակ— Բաշնորաշեն—Արենի—Եղեգնաձոր—Որոտանի լեռնանցք—Բազարչայ—Սիսիան—Գորիս—Ղափան— Քաջարան—Մեղրի խճուղին, նկարագրենք այն՝ բաժանելով հետևյալ հատվածների՝ ա) Երևան—Արտաշատ—Բաշնորաշեն, բ) Բաշնորաշեն—Եղեգնաձոր, գ) Եղեգնաձոր—Սիսիան, դ) Սիսիան—Գորիս, ե) Գորիս—Ղափան, զ) Ղափան—Քաջարան—Մեղրի։

ա) **Երևան—Արտաշատ—Բաշնորաշեն.**—Դեպի Արտաշատ տանող այս խճուղին դուրս է գալիս Երևան քաղաքի հարավային մասից, կազմելով երկաթուղային կայարանի հրապարակում վերջացող Հոկտեմբերյան պողոտայի շարունակությունը։ Սկզբում ճանապարհն ունի հարավային ուղղություն և անցնում է Շահումյանի շրջանի տերիտորիայով, ապա այն թեքվում է դեպի հարավ-արևելք՝ մտնելով նախ Արտաշատի ու Վեդու շրջանները, ապա՝ Նախիջևանի ԱՍՍՌ-ն։ Երևանից մինչև Արարատ գյուղն ու երկաթուղային կայարանն ընկած հատվածում խճուղին անցնում է Սովետական Հա-

յաստանի ամենախիտ բնակեցված շրջաններով: Այստեղ գյուղերը սովորաբար տեղադրված են իրարից 2—3 կմ հեռավորության վրա, իսկ երբեմն նրանք այնքան են մոտիկ, որ միացած են իրար: Մի քանի տասնյակի հասնող այդ գյուղերի մի զգալի մասը գտնվում է գլխավոր խճուղու վրա: Խճուղուց դուրս գտնվող բոլոր գյուղերը նույնպես ավտոճանապարհներով կապված են ինչպես իրար, նույնպես և գլխավոր ճանապարհի հետ:

Տարվա տարբեր եղանակներին խճուղու այդ հատվածով կատարվող ճանապարհորդությունը տարբեր հաճույք է պատճառում ուղևորին, որովհետև ամեն մի եղանակին՝ նշված շրջանների դեմքը փոխվում է: Ամենից հաճելի է Շահումյանի, Արտաշատի ու Վեդու շրջաններն էքսկուրսիա կատարել աշնանը, երբ հասունանում են մրգերն ու խաղողը, երբ բանջարանոցներում ու բոստաններում հավաքում են փարթամորեն աճած բերքը: Այդ եղանակին Շահումյանի, Արտաշատի և Վեդու շրջաններում ուղևորներին ամենուրեք ժպտում են ոսկեգույն դեղձն ու սերկևիլը, կարմրաթուշ խնձորն ու դեղին տանձը, և մրգերի թագուհին՝ Արարատյան արգավանդ դաշտի աննման խաղողը, որի ամեն մի հատիկը կարծես մի-մի լուսատու լինի: Երևանից մինչև Արարատ կայարան հասնելը մեքենան անցնում է Թազագյուղով, Ահմադլուով, Մխչյանով, Մասիսով, Բաղրամյանով, Շահումյանով, Շիրազլուով և այլ գյուղերով: Դրանք, ինչպես և ուրիշ շատ գյուղեր, որոնք հարակցում են խճուղուն կամ նրանից գտնվում որոշ հեռավորության վրա (Զովաշեն, Գետաշեն, Դվին, Նորաշեն, Վերին Արտաշատ, Քաղցրաշեն, Աննատասավան և այլն), հիմնականում զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և բամբակագործությամբ: Նրանք ունեն նաև իրենց անասնապահական ֆերմաներն ու թռչնաբուծությունը: Նրանց մեծագույն մասը միլիոնատեր կոլտնտեսություններ են: Կոլտնտեսականների հեկտարները հասնում են մեծ չափերի, նրանցից շատերն ունեն իրենց սեփական ավտոմեքենանոցը: Տները բարեկարգ են, թաղված տնամերձ հողամասի այգիներում և բանջարանոցներում: Յուրաքանչյուր կոլտնտեսություն իր աշխատանքային առօրյայով, բազմաճյուղ տնտեսությամբ, հասարակական վայրերով, կոլտնտեսականների անձնական տնտեսություններով և տնտեսական օբյեկտներով կարող է լինել գոհացուցիչ էքսկուրսիայի վայր:

Երևան—Բաշնորաշեն ճանապարհահատվածում ուղևորությունը կատարելն էլ ունի իր հմայքը: Այդ ճանապարհի վրա քնկած շրջանները տարվա տաք ամիսներին, 5—6 ամիս շարունակ, չնչին բացառություններով, լինում են անտանելի շոգեր: Սակայն այգիների առատությունը, խմելու համար պիտանի լավորակ ջրի առկայությունը, ոռոգման առուների խիտ ցանցը, կեսօրից հետո Արաքսի հովտով դեպի վար փչող լեռնահովտային զով քամին հնարավորություն են տալիս ճանապարհորդությունը դարձնում հաճելի: Ճանապարհի մեծ մասում, նրա երկու կողմերում անընդմեջ շարքեր են կազմում երկնասլաց բարդիները, լայնական ուռենիները և բուրավետ փշատենիները: Ճանապարհի աջ կողմում նրան ուղեկցում է մայր Արաքսը, որից և նրա վտակներից հոսող առուները եղրավորում են խճուղին աջից ու ձախից: Հարավում Մեծ ու Փոքր Մասիսներն են սեպացած դեպի վեր, իսկ հյուսիսում՝ Գեղամա լեռների հարավային բազուկները, որոնք աստիճանաբար իջնելով, ձուլվում են Արարատյան դաշտի հետ:

Երևան—Բաշնորաշեն ճանապարհահատվածում էքսկուրսանտի առանձնահատուկ ուշադրությանը պետք է արժանանան Արտաշատ շրջկենտրոնն՝ իր շրջակայքի հնություններով հանդերձ և Արարատի արդյունաբերական օբյեկտներն ու հանքային ջրերը:

Հայկական ՍՍՌ Արտաշատ վարչական շրջանի կենտրոն Արտաշատ քաղաքատիպ ավանը Երևանից հեռու է 30 կմ և գտնվում է խճուղու ու Երևան—Բաքու երկաթգծի վրա: Նրա հիմնական ձեռնարկությունները կազմում են այգեգործությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բամբակագործությունը: Արտաշատն ունի ակումբ, հյուրանոց, դպրոցներ: Բնակելի տները, գրեթե առանց բացառության, բակի կողմից ունեն այգիներ և բանջարանոցներ: Եթե նախասովետական շրջանում Արտաշատը (Ղամարլու) իրենից ներկայացնում էր կավակերտ տներից ու կիսագետնափոր հյուղերից բաղկացած մի անշուք գյուղ, ապա այժմ նա հիմնովին վերափոխվել և դարձել է ժամանակակից բարեկարգ քաղաքային տիպի ավան: Այստեղ թե՛ կոլտնտեսականների անհատական տների մեծագույն մասը և թե՛ հասարակական շենքերը հարմար են ու կառուցված են ճաշակով:

Արտաշատ շրջկենտրոնի մոտ, նրանից 2—3 կմ հեռավորության վրա էր գտնվում Հայաստանի վաղեմի մայրաքաղաք Արտաշատը: Նա տեղադրված էր Շահումյան (Յուվա) գյուղի շրջակայքում: Հայոց հռչակավոր մայրաքաղաքի տեղադրությանը և խորվիրապի հայտնի վանքին ծանոթանալու համար ճանապարհորդը

պետք է կանգ առնի Արտաշատ շրջկենտրոնում և ավտոմեքենայով կամ ոտքով կատարի տեղական էքսկուրսիա:

Արտաշատ մայրաքաղաքը, որը փոխարինել է Արմավիրին և Երվանդաշատին, կառուցվել է Արտաշեսյան դինաստիայի և հայկական պետականության հիմնադիր Արտաշես I-ի օրոք (189—161 թթ. մ. թ. ա.)՝ 170—160-ական թվականներին: Նրա վերաբերյալ բազմաթիվ վկայություններ ունեն հունական, հռոմեական և մեր պատմագիրները: Սակայն, չնայած այդ ամենին, Արտաշատի պատմության մի շարք հարցերը մինչև օրս էլ մնում են չլուսաբանված, նույնիսկ վերջնականապես չի ճշտված նրա աշխարհագրական դիրքը: Գրավոր վկայություններից երևում է, որ նա գտնվում էր Արաքս և Ազատ գետերի խառնարանում՝ այժմյան Խորվիրապի շրջակայքում: Նրա միջնաբերդը տեղադրված էր մի բլրի վրա, որի երեք կողմից ծունկ կազմելով հոսում էր Ազատը: Յամաքի կողմից բերդի պաշտպանությունն ուժեղացնելու համար փորված է եղել խրամ, որն արտաքին հարձակումների դեպքում լցրել են ջրով: Հավանաբար նրա միջնաբերդը կոչվել է Խորվիրապ: Քաղաքի առջև, Արտաքս գետի վրա կառուցված է եղել մի մեծ կամուրջ, որը շատ հայտնի էր և որով քաղաքը կապվել է Արաքսի ոչ ափի հետ. այդ կամրջով է անցել Արտաշատ—Տիգրանակերտ հայկական արքունական հանդապարհը, որը սկսվել է գոնե I դարից (մ. թ. ա.), երբ Հայկական Տավրոսի հարավային լանջերին կառուցվեց Տիգրանակերտ մայրաքաղաքը: Դեպի Տիգրանակերտ տանող այդ ճանապարհից բացի՝ Արտաշատով էր անցնում նաև Արևելքն Արևմուտքի հետ կապող քարավանային կարևորագույն ճանապարհներից մեկը, որը անցնում էր Արաքսի հովտով: Արտաշատը ելման կետ էր նաև մի քանի այլ ճանապարհների, որոնք նրան կապում էին հայկական պետության տարբեր մասերի, ինչպես և հարևան երկրների հետ: Չնայած որ հիմնադրման ժամանակվանից մինչև I դարի սկզբները (մ. թ. ա.)՝ Հռոմի, իսկ երբեմն էլ պարթևական Պարսկաստանի կողմից մի շարք արշավանքներ ու հարձակումներ են կատարվում Հայաստանի և նրա մայրաքաղաք Արտաշատի վրա, այնուամենայնիվ վերջինս այդ ժամանակներում զարգանում և փարթամանում էր: Նա եղել է հելլենիստական տիպի քաղաք: Նրա բնակչության մեծամասնությունը զբաղվում էր արհեստներով և առևտրով: Ծաղկման շրջանում Արտաշատի բնակչության թիվը հասել է մի քանի հարյուր հազարի: Այստեղ բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող



հայերից բացի բնակություն էին հաստատել նաև բազմաթիվ հրեաներ, ասորիներ և այլ ժողովուրդներին պատկանող առևտրականներ ու արհեստավորներ: Հրեաներն ու ասորիները I դարում (մ. թ. ա.)՝ Տիգրան II-ի և, մասամբ, Արտավազդ II-ի օրոք Արտաշատ էին բերված մեծ մասամբ իբրև ռազմագերիներ:

Արտաշատում անտիկ շրջանում կար թատրոն՝ դերասանների մշտական խմբով: Հայկական մշտական թատրոնի մասին եղած առաջին գրավոր հիշատակությունը, որ հասել է մեզ, հենց վերաբերում է սրանից ավելի քան 2000 տարի առաջ գործող Արտաշատի թատրոնին: Արտաշատի թատրոնում ներկայացնում էին և՛ հին հունական, և՛ հայ հեղինակների գրած ողբերգություններ:

Ենթադրվում է, որ Արտաշատի կառուցմանը իր խորհուրդներով գործոն մասնակցություն է ունեցել կարթագենացի հայտնի զորավար, Հռոմի երդվյալ թշնամի Հաննիբալը, որը այդ ժամանակներում հալածվելով լինելով, տեղափոխվել էր Մերձավոր Արևելք և բարեկամական հարաբերություններ ուներ հայոց թագավոր Արտաշես I-ի հետ: Արտաշատը հին աշխարհի հռչակված քաղաքներից մեկն էր: Նա հանդիսանում էր ամրացված բերդ և երկրի կուլտուրական, տնտեսական ու քաղաքական կյանքի կենտրոնը: Հռոմեացիներն այն սովորաբար կոչում էին «Հայկական Կարթագեն»:

58 թ. (մ. թ.) Հայաստան արշաված հռոմեական զորավար Կորբուլոնը գրավում ու կրակի է մատնում Հայաստանի հռչակավոր մայրաքաղաքը, իր այդ բարբարոսական քայլը փորձելով արդարացնել նրանով, որ ինքը իբր չունի բավականաչափ զորք Արտաշատի պես խոշոր քաղաքում համապատասխան կայազոր թողնելու:

Սակայն Արտաշատը ավերված վիճակում երկար չի մնում: Հայ Արշակունյաց թագավորության հիմնադիր Տրդատ I-ի օրոք (66—100 թթ.) այն նորից վերականգնվում է: Արտաշատը նորից է բուռն զարգացման ուղին: II—IV դդ. ևս Արտաշատը մի քանում իր զարգացման ուղին: II—IV դդ. ևս Արտաշատը մի քանում է հռոմեացիների և պարսիկների հարձակումների անգամ ենթարկվում է հռոմեացիների և պարսիկների հարձակումներին, այնուամենայնիվ մինչև V դարի երկրորդ կեսը մնում է որպես Հայաստանի խոշորագույն քաղաք և, որոշ ընդհատումներով, որպես մայրաքաղաք:

V դարի կեսերից նա իր դերքն աստիճանաբար զիջում է նրան, որը նից ոչ հեռու գտնվող Հայաստանի նոր մայրաքաղաք Դվինին, որը Արտաշատի նկատմամբ ուներ դիրքային առավելություն: Ար-

շատ շրջանում առաջացել էին ճահճային տարածություններ, որոնք նրա օդը դարձնում էին վատառողջ։ Նրա բնակչությունը աստիճանաբար տեղափոխվում է Դվին, և նա վեր է ածվում հասարակ բնակավայրի։

Եթե ավելի ուշ շրջանում հանդես եկած Դվին քաղաքի ավերակները պահպանվել են և օբյեկտ են հանդիսանում էքսկուրսիաների ու մշտական կատարվող պեղումների համար, ապա նրան նախորդած հայոց վաղեմի մայրաքաղաք Արտաշատից գրեթե ոչինչ չի հասել մեր օրերը։ Նրա կառուցվածքների հետքերն անգամ չեն մնացել, ո՞ր պետք է բացատրել այդ շրջանում մի քանի անգամ տեղի ունեցած ուժեղ երկրաշարժներով։ Երկրի երեսից վերացված Արտաշատ քաղաքի դիրքը որոշվում է Խորվիրապի վանքով, որը գտնվում էր նրանից ոչ հեռու, և գրավոր հիշատակությունների, ամենից առաջ հայոց պատմահայր Մովսես Խորենացու մի կարևոր վկայության շնորհիվ։

Էքսկուրսանտի վրա մեծ տպավորություն է թողնում Խորվիրապի (կամ ուղղակի Վիրապ) վանքը։ Նա գտնվում է Հայկական ՍՍՌ Արտաշատի շրջանի Շահումյան գյուղից մոտ 5 կմ հեռավորության վրա, Արաքսի ձախ կողմում վեր բարձրացած մի բլուրի հարավ-արևելյան լանջին, ճակատով ուղղված դեպի Մեծ ու Փոքր Մասիսները։ Արտաշատ քաղաքից նրա ունեցած հեռավորության մասին ոչինչ հայտնի չէ, սակայն հիշատակություններից ստույգ գիտենք, որ այդտեղ սկզբում գտնվում էր «Վիրապ Արտաշատու» քրեակալանատունը և ծառայում էր որպես արքունի արգելարան՝ քրեական հանցագործների համար։ Նա կանգուն է։ Պատերին, որոնք շարված են սրբատաշ քարերով, կան տարբեր ժամանակներին վերաբերող մի քանի արձանագրություններ։ Այդ հոյակապ եկեղեցու կառուցման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ։ Գրավոր աղբյուրները հաղորդում են, որ այստեղի եկեղեցին կառուցել է Ներսես Գ կաթողիկոսը, սակայն հետագա դարերում այն մի քանի անգամ ենթարկվել է արմատական վերակառուցման ու վերանորոգման։ Վանքը պարսպապատված է չորս կողմից։ Կենտրոնում գտնվում է վանքի քառաշեն ու կենտրոնագմբեթ մեծ եկեղեցին, որն ունի ժամատուն ու կողմնակի մատուռներ։ Եկեղեցու պատի վրա, արտաքին կողմում կան մի քանի քանդակապատկերներ, որոնցից վար գտնվում է երկու տողից բաղկացած, 872 թ. վերաբերող մի անընթեռնելի արձանագրություն։ Վանքի չորս կողմում պահպանվել են տարբեր ժամանակներում և տարբեր նպատակների համար





Խորվիրապի վանքը

կառուցված շենքերի ավերակներ։ Խորվիրապի վանքը գործել է ընդհուպ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։ Նա ուներ մի շարք այգիներ և առանձին կալվածքներ, որոնք հսկայական եկամուտներ էին տալիս։ Ճանաչված ուխտատեղի է եղել ամբողջ Հայաստանում, և այստեղ ուխտի էին գալիս ու զոհեր մատուցում ոչ միայն հայեր, այլ նաև քրդեր ու ադրբեջանցիներ։ Այժմ Խորվիրապի վանքը պատկանում է Սովետական Հայաստանի այն հնություններին թվին, որոնք պետության կողմից խնամքով պահպանվում են իբրև անցյալի թողած կուլտուրական արժեքավոր ժառանգություն։

Պատմական Արտաշատ քաղաքի տեղադրությանն ու Խորվիրապի վանքին ծանոթանալուց հետո, պետք է վերադառնալ շրջկենտրոն՝ Արտաշատ կամ Շահումյան գյուղը և գլխավոր խճուղով շարունակել ճանապարհը դեպի Վեդու շրջանում գտնվող Արարատ քաղաքատիպ ավանը։ Արտաշատից մինչև Արարատ մեքենան գնում է մոտ կես ժամվա ընթացքում։ Արարատը որպես քաղաքատիպ ավան կառուցվել է մեր օրերում, 30-ական թվականների վերջերին։ Նրա գոյությունն ամբողջապես կապված է այդտեղի ցեմենտի խոշոր գործարանի առկայության հետ, գործարան, որը ամբողջ Միության տարածքում այդ տիպի օբյեկտների մեջ գրավում է առաջնակարգ տեղերից մեկը։ Ցեմենտի գործարանից բացի, Արարատում էքսկուրսանտին կարող են հետաքրքրել հանքային ջրերը և մարմարի հանքավայրերը, որոնք հանդիսանում են Սովետական Հայաստանի նշանավոր հանքավայրերից։ Արարատ ավանը կառուցված է կանոնավոր պլանով, տները բարեկարգ են ու հարմարավոր։ Այստեղ կան հյուրանոց, դպրոց, հիվանդանոց, ղրոսայգի և այլն։

Արարատից մինչև Բաշնորաշեն մոտ 52 կմ է, որից մոտ 24 կմ ձգվում է Հայկական ՍՍՌ տերիտորիայով, իսկ մնացածը՝ Ադրբեջանական ՍՍՌ-ի կազմին պատկանող Նախիջևանի ԱՍՍՌ-ով։ Ճանապարհը շարունակ ձգվում է Արաքսի հովտով, գետին զուգահեռ դեպի հարավ-արևելք՝ մինչև Բաշնորաշեն, որը գտնվում է Երևան—Բաքու երկաթգծի Նորաշեն կայարանից հյուսիս-արևելք, նրանից 4 կմ հեռավորության վրա։

*բ)* **Բաշնորաշեն—Եղեգնաձոր.**— Նախիջևանի ԱՍՍՌ-ի Նորաշենի շրջանի Բաշնորաշեն գյուղի մոտից դեպի Նախիջևան տանող խճուղուց բաժանվում և Արփա գետի հովտով դեպի հյուսիս-արևելք է ձգվում Եղեգնաձոր տանող ճանապարհը։ Սկզբում այդ ճանապարհն անցնում է Արփա գետի ստորին հոսանքում փռված փոքրիկ

հարթավայրով, որը Նախիջևանի ԱՍՍՌ-ի ամենաուժեղ բամբակագործական շրջանն է, ապա մոտում է Արփա գետի նեղ ու խոր ձորը, որը սեղմված է հյուսիսից հարավ ուղղություն ունեցող անտառազուրկ լեռնաճյուղերի միջև։ Խճուղու վիրելքը բավական մեծ է։ Ապահով ճանապարհորդություն կատարելու համար ավտովարորդից պահանջվում է հմտություն և զգուշություն։ 2—3 կմ չհասած Արենի գյուղը՝ ավտոմեքենան արդեն կտրում անցնում է Նախիջևանի ԱՍՍՌ-ի և Հայկական ՍՍՌ-ի սահմանը ու մտնում վերջինիս կազմի մեջ մտնող Եղեգնաձորի շրջանը։ Եղեգնաձորի շրջանում ձգվող ճանապարհահատվածում, մինչև Եղեգնաձորի շրջկենտրոն հասնելը, էքսկուրսանտին խորհուրդ է տրվում ծանոթանալու Արենի գյուղին և Նորավանքին։

Արենի գյուղը գտնվում է խճուղու վրա, Արփա գետի ձախ ափին, այնտեղ, որտեղ նրան է միանում ձախակողմյա էլփին վտակը։ Արենին հնում կոչվում էր Արփա, որն ունի բազմադարյան պատմություն։ Ագիան Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառի ամենանշանավոր գյուղերից մեկն էր համարվում։ Հիշատակությունների համաձայն XIII դարում նա նույնիսկ որոշ ժամանակ Օրբելյան իշխանների համար ծառայել է իբրև աթոռանիստ, ոստան։ Օրբելյան Տարսայիճ իշխանը XIII դարում այդտեղ կառուցել է իր իշխանական պալատը, որից սակայն ոչ մի հետք չի մնացել մինչև մեր օրերը։ Արփան ավելի կարևոր նշանակություն ուներ իբրև տարանցիկ ճանապարհի վրա գտնվող կայան։ Այդ է եղել պատճառը, որ XIII դարում այստեղ, Արփա գետի վրա, Նորավանքի եպիսկոպոս Սարգիսը կառուցել է տալիս քարակերտ մի հոյակապ կամուրջ, որի մասին մեծ գովեստով է խոսում Սյունիքի պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը։ Կամուրջը ամբողջապես կառուցված էր սրբատաշ քարերով և բաղկացած է եղել երեք կամարից։ Մինչև օրս էլ գոյություն ունեն նրա ավերակները և, որպես անցյալի կամրջաշինության անկենդան վկաներ, գրավում են մասնագետ-ճարտարապետների, պատմաբանների ու հետաքրքրասերների ուշադրությունը։ Արփայում պահպանված մյուս հնությունը, որը կարող է շատ թե քիչ հետաքրքրություն ներկայացնել, նրա կիսակործան եկեղեցին է, որը ամայացել է տակավին անցյալ դարում։ Այդ եկեղեցին կառուցված է XIV դարում, պատերը շարված են սրբատաշ քարերով, պատերի վրա ունի քանդակազարդեր և 1322 թ. վերաբերող՝ նրա կառուցողի թողած արձանագրությունը։



Գավթում կան բավական թվով խաչքարեր և քանդակազարդ տապաններ՝ արձանագրություններով հանդերձ։

Հին Արփա գյուղը, որն այժմ ամայի է, գտնվում էր այժմյան Արենի գյուղից մի փոքր արևելք, ոչ մեծ բլրի վրա։ Նրա բնակիչները, սրանից ավելի քան երկու հարյուր տարի առաջ, նեղվելով Արփայի հեղեղումներից, տեղափոխվել են դեպի արևմուտք և նույն անվամբ հիմնել մի նոր գյուղ։ Հենց այդ գյուղն է, որ այժմ կոչվում է Արենի։

Արենին Հայկական ՍՍՌ-ի ամենանշանավոր գյուղերից մեկն է։ Նա հայտնի է հատկապես իր այգեգործությամբ ու խաղողագործությամբ։ «Արենի» է կոչվում ռեսպուբլիկայում արտադրվող գինիներից մեկը։ Արենիի կոլտնտեսությունը ամենահարուստ և մեծ եկամուտներ ունեցող կոլտնտեսություններից մեկն է ամբողջ ռեսպուբլիկայում։

Արենի (Արփա) գյուղից էքսկուրսիա պետք է կատարել դեպի Նրանից հարավ-արևելք 5—6 կմ հեռավորության վրա գտնվող Ամաղու գյուղը և սրա մոտ գտնվող Նորավանքի ավերակների շրջանը։ Ամաղուի Նորավանքը միջնադարյան Հայաստանի ճարտապետական հայտնի կոթողներից մեկն է, հայկական կուլտուրայի և գրչության կարևոր կենտրոններից մեկը։ Այստեղ է XIII դարի երկրորդ կեսին Սյունիքի իշխանական տան նշանավոր պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը գրել իր «Պատմութիւն նահանգին Սիսական» նշանավոր աշխատությունը, որի համար հայտնի աղբյուրներից բացի նյութ են ծառայել նաև արխիվային զանազան փաստաթղթեր և որն իր մեջ կարևոր տեղեկություններ է պարունակում ոչ միայն Սյունիքի, այլև ամբողջ միջնադարյան Հայաստանի պատմության ամենաբազմազան հարցերի՝ հատկապես գյուղատնտեսական շարժումների վերաբերյալ։

Նորավանքը բարձրացել է ոչ միանգամից։ Մատենագրական աղբյուրների վկայությունների համաձայն՝ Ամաղուի անձուկ ու այգեշատ ձորի մեջ, մի սառնորակ աղբյուրի մոտ ուխտատեղի է կառուցվել տակավին հնագույն ժամանակներում։ Սակայն նա նշանավոր է դառնում XIII դարից, երբ 1205 թ. այստեղ բնակություն է հաստատում վահանավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը։ Վերջինս սելջուկյան իշխողների օգնությամբ վանքի շրջակայքի գյուղերից բնակիչներին հեռացնել է տալիս և նրանց հողերը սեփականացնում։ Նա վանքի սեփականությունն է դարձնում մի քանի գյուղեր ու բերդեր։ Շատ չանցած, դարձյալ նույն

Հովհաննես եպիսկոպոսի օրոք, Օրբելյան իշխանները դառնալով Վայոց ձոր գավառի տերեր, Նորավանքը դարձնում են ամբողջ Սյունիքի հոգևոր թեմի կենտրոն, որից հետո արագ կերպով նա տնտեսապես հզորանում է և կարճ ժամանակամիջոցում դառնում Սյունիքի խոշոր ֆեոդալներից մեկը: Օրբելյան իշխանները որպես սեփականություն Նորավանքին տալիս են մի շարք գյուղեր, ագարակներ, այգիներ, բերդեր և այլն: Նորավանքը միաժամանակ դառնում է Օրբելյան իշխանների տոհմական պանթեոնը: Այստեղ մեկը մյուսի հետևից կառուցվում են եկեղեցական և օժանդակ շենքեր, որոնք կազմում են ճարտարապետական մի բարդ և բարձրարվեստ կոմպլեքս: Ամաղուի Նորավանքի հուշարձանները ունեն վիմագիր բազմաթիվ ու բազմաբովանդակ արձանագրություններ, որոնք հիմնականում վերաբերում են XIII—XIV դարերին: Վանքը գործել է ըստ երևույթին ընդհուպ մինչև 1840 թ. մեծ երկրաշարժը: 1840 թ. երկրաշարժից վանքի շինությունները մեծապես վնասվում են, որից հետո վանքը ամայանում է և լքվում հոգևորականների կողմից:

Նորավանքի կոմպլեքսի մեջ մտնում են՝ չորս եկեղեցի, մեկ ժամատուն, վանքը պատող պարիսպը, հյուրատունը, ձիթհանը և հին գյուղատեղին, որը գտնվում է այժմյան Հայկական ՍՍՌ Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղից մոտավորապես 3 կմ դեպի հարավ-արևելք, Ամաղուի ձորի ձախ ափին: Գյուղատեղում նկատվում են փոքրիկ շենքերի հետքեր և գերեզմանոց:

Նորավանքի եկեղեցիներից երկուսը կրում են ս. Կարապետ անունը: Դրանցից մեկը կառուցվել է հին ժամանակներում և հիմնական վերակառուցման է ենթարկվել IX—X դարերում: Այդ եկեղեցին վանքի սահմնահին կառուցվածքն է: Ս. Կարապետի անունը կրող մյուս եկեղեցին կառուցվել է 1216—1223 թթ. Լիպարիտ Օրբելյան իշխանի օրոք: Սա գմբեթավոր կառուցվածք է, արտաքինից քառանկյունի, իսկ ներսից խաչաձև հատակագծով: Հատակը սալահատակված է, տանիքը ևս պատած է սալաքարերով, պատերը շարված են սրբատաշ ավազաքարերով: 1840 թ. երկրաշարժից նրա գմբեթը քանդվել է, իսկ պատերը ստացել են ճեղքվածքներ: Երրորդ եկեղեցին կոչվում է ս. Գրիգոր: Այս եկեղեցին ավելի փոքր է, կառուցվել է 1275 թ., իշխանաց իշխան Տարսաիճ Օրբելյանի կարգադրությամբ, շարված է վարդագույն սրբատաշ ավազաքարերով, հատակը պատած է գերեզմաններով, որոնց քարերը մշակված են գեղեցիկ ձևով և որոնց մեծ մասն ունի տապանագրություն: Այստեղ են թաղված Սմբատ իշխանաց իշխանը (1273 թ.), նրա



եղբայր Տաշտաիճը (1290 թ.) և ուրիշներ: Վերջին, չորրորդ եկեղեցին, որ կոչվում է Աստվածածին, կառուցվել է 1339 թ., Բուրթել Օրբելյան իշխանի կողմից: Այս եկեղեցին երկհարկանի է, ստորին հարկը իրենից ներկայացնում է դամբանատուն, իսկ վերինը՝ եկեղեցի-աղոթարան: Թե՛ ստորին և թե՛ վերին հարկերն ունեն և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ բնույթի տարբեր բովանդակությամբ մի շարք բարձրաքանդակներ: Աստվածածնից, Հիսուսից, Գաբրիել, Միքայել, Պողոս և Պետրոս առաքյալներից բացի, հուշարձանի վրա կան մարդկանց, կենդանիների, թռչունների, բույսերի և երկրաչափական մոտիվներով նուրբ մշակված բարձրաքանդակներ, որոնք ավելի են մեծացնում նրա ճարտարապետական արվեստը: Եկեղեցին կառուցված է կարմիր գույնի սրբատաշ ավազաքարերից: Իր տեսակի մեջ Նորավանքի այս եկեղեցին լավագույնն է համարվում բովանդակ Հայաստանում: 1840 թ. երկրաշարժից քանդվել են նրա գմբեթը, պատերի վերին մասերն ու ծածկը: 1948—1949 թթ. Հայկական ՍՍՌ ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեն այդ արժեքավոր կոթողը պահպանելու համար կատարել է վերականգնման և վերանորոգման զգալի աշխատանքներ:

Նորավանքի մյուս կառուցվածքներից ուշադրության արժանի են երկու մատուռները, որոնք կառուցվել են XIII—XIV դարերում, ունեն խաչքարեր, նուրբ բարձրաքանդակներ, վիմագիր արձանագրություններ, թաղակապ ծածկեր և օժանդակ կառուցվածքներ: Նորավանքն ունեցել է իր հյուրատունը, ձիթհանը, օժանդակ զանազան շենքեր (խուցեր, պահեստներ և այլն): Այդ հոյակապ ու բարդ ճարտարապետական կոմպլեքսին շատ թե քիչ չափով ծանոթանալու համար պահանջվում է բավական ժամանակ: Հուշարձանի հմայքն ավելի է զգացվում նրա գեղատեսիլ դիրքի շնորհիվ:

Նորավանք կատարած տեղական էքսկուրսիայից պետք է վերադառնալ Արենի և խճուղով շարունակել ճանապարհը դեպի Եղեգնաձոր:

գ) Եղեգնաձոր—Սիսիան.—Այս ճանապարհի արևմտյան մի զգալի մեծություն ունեցող հատվածը, որը ձգվում է Եղեգնաձորից մինչև Արփա ու Թերփչայ գետերի խառնարանը, նկարագրված է Երևան—Սևան—Մարտունի—Հայոց ձորի լեռնանցք—Եղեգնաձոր—Ջերմուկ երթուղու մասին խոսելիս, ուստի հարկ չկա այստեղ նույնը կրկնելու:

Արփա և նրա ձախակողմյան վտակ Թերփչայ գետի խառնարանից Սիսիան տանող խճուղին նախ ուղղվում է դեպի հյուսիս-

արևելք, ապա աստիճանաբար փոխելով իր ուղղությունը, դիմում է դեպի հարավ-արևելք՝ կազմելով մի աղեղ, որի արևելյան ծայրը հանգում է Որոտանի (Քոչբեկի) լեռնանցքին։ Վերջինս գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսային հատվածում, ծովի մակերևույթից 2344 մ բարձրության վրա և ծառայում է որպես մի բարձրադիր դարպաս Արփա ու Որոտան գետերի ավազանների միջև։ Որոտանի լեռնանցքի վերելքի ու վայրէջքի ոլորանները ետ թողնելուց հետո՝ ուղևորն անցնում է Որոտան գետը և մտնում նրա ձախ ափին գտնվող Բազարչայ հայտնի գյուղը։ Այս գյուղով սկսվում է Սիսիանի շրջանը։ Նա ոչ միայն Սիսիանի, այլև ամբողջ Հայկական ՍՍՌ-ի ամենանշանավոր գյուղերից մեկն է, հայտնի գլխավորապես իր անասնաբուծությամբ։ Նրա շուրջը փռված են ընտիր խոտհարքներ և ճոխ արոտավայրեր, որոնցով հոսում են Որոտանի և նրա մի շարք վտակների պարզկա ու փրփրալից ջրերը։

Բազարչայից մինչև Սիսիան խճուղին անընդհատ անցնում է Որոտան գետի ձախ կողմով՝ մերթ մոտենալով նրան և մերթ էլ նրանից բավական հեռանալով։ Ճանապարհի այդ ոչ մեծ հատվածում (37—39 կմ) մեքենան անցնում է մի շարք գյուղերով (Սառնակունք, Սպանդարյան, Անգեղակոթ և այլն), որոնցից յուրաքանչյուրն ունի իր հետաքրքրությունը։ Սակայն դրանցից առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանան Անգեղակոթն ու նրանից ոչ հեռու գտնվող Տաղատը և Շաքին։

Անգեղակոթը Սիսիանի շրջանի մեծ գյուղերից մեկն է։ Նա գտնվում է Որոտանի ձախ կողմում, Սիսիանի շրջկենտրոնից մոտ 15 կմ հեռավորության վրա։ Անգեղակոթը հին գյուղ է, սակայն նա նշանավոր է դարձել համեմատաբար ուշ՝ XVII—XVIII դարերում, երբ դարձել էր համանուն փոքրիկ իշխանության կենտրոն։ Այստեղ իրար են միանում Եղեգնաձորից և Նախիջևանից եկող խճուղիները ու մի ուղիով ձգվում դեպի Սիսիան, Գորիս և Ստեփանակերտ։

Հայ ժողովրդի պատմության մեջ նշանավոր իրադարձություններից մեկն է համարվում այդ գյուղում՝ Մելիք-Սաֆրազի և հայկական ազատագրական շարժման փայլուն ներկայացուցիչ Իսրայել Օրու ջանքերով 1699 թ. գումարված գաղտնի ժողովը, որին մասնակցում էին 11 մելիքներ։ Անգեղակոթի ժողովի որոշմամբ Իսրայել Օրին և Մինաս վարդապետը գործուղվում են Եվրոպա և Ռուսաստան՝ Հայաստանի ազատագրման համար բանակցություններ վարելու։ Անգեղակոթում դադար առնելուց և գյուղին ու նրա



շրջակայքին ծանոթանալուց հետո, անհրաժեշտ է էքսկուրսիա կատարել դեպի Տաղատ գյուղը, որը նրանից հեռու է մոտ 6 կմ։ Տաղատ կարելի է գնալ երկու ճանապարհով՝ Նախիջևան տանող խճուղով (մոտ $3\frac{1}{2}$ կմ)՝ ապա թեքվել դեպի ձախ, և կարճ, ընդամենը $3\frac{1}{2}$ կմ ճանապարհով՝ ոտով։ Հասնելով տեղ, պետք է ծանոթանալ և՛ այժմյան, և՛ պատմական Տաղատին։ Այժմյան Սիսիանի շրջանի Տաղատ գյուղը գտնվում է Անգեղակոթի դիմաց, Որոտան գետի աջ կողմում մի թերակղզաձև հարթության վրա և պատմական Տաղատից տեղադրված է մի փոքր հյուսիս։

Պատմական Տաղատը հիշատակվում է որպես գյուղաքաղաք։ Նա IV դարից մինչև IX դարի սկզբները եղել է Սյունյաց իշխանների աթոռանիստը։ Այդ ժամանակներում նա իշխանական ոստան լինելու հետ միասին՝ հանդիսանում էր Սյունիքի եպիսկոպոսանիստը։ Տաղատի վարդապետարանից էին դուրս եկել կուլտուրայի մի շարք նշանավոր գործիչներ, որոնց թվում Սյունյաց Պետրոս եպիսկոպոսը՝ Քերթող մականունով (V դարի վերջին), Ստեփանոս Իմաստասերը և ուրիշներ։ Տաղատն ունեցել է իր բերդը, որի մնացորդներն այժմ էլ նշմարվում են այժմյան Տաղատ գյուղի արևելյան մասում բարձրացող երկու բլուրների շրջանում։ Տաղատից ոչ հեռու, նրա հյուսիսային կողմում նկատելի են մի ուրիշ հին բերդի ավերակներ։ Տաղատ գյուղաքաղաքի, նրա բերդի և այլ կառուցվածքների ավերակները վատ են պահպանվել, դրանք հազիվ են նշմարվում։ Մեր օրերում կատարված պեղումների և պատահական որոնումների ու դաշտային աշխատանքների ժամանակ՝ պատմական Տաղատի տեղում հայտնաբերված են նյութական կուլտուրայի զանազան մնացորդներ, հատկապես՝ դրամներ, որոնք ցուցադրված են Երևանի Պետական պատմական թանգարանում։

Անգեղակոթից Շաքի ընդամենը 5 կմ է։ Շաքին գտնվում է խճուղու աջ կողմում, նրանից 100—150 մետր հեռավորության վրա։ Այստեղ, խճուղու ցածրադիր աջ կողմում դուրս են բխում մի շարք հորդաբուխ ու սառնորակ աղբյուրներ, որոնք սկիզբ են տալիս Որոտանի ձախակողմյա վտակ Շաքի գետակին։ Վերջինս, նախքան մայր գետ հասնելը, կազմում է մի գեղատեսիլ ջրվեժ, որի տակ կառուցված է Շաքիի հիդրոկայանը։ Պետք է նկատել, որ առհասարակ Որոտան գետի ու նրա բազմաթիվ վտակների անկումը շատ մեծ է։ Նախագծվում է դրանց վրա մի քանի հիդրոէլեկտրակայաններ կառուցել։ Ներկայումս Որոտանի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու աշխատանքներն ընթանում են բուռն թա-

փով: Նա պետք է էլեկտրաէներգիա մատակարարի ոչ միայն Դաստակերտի մոլիբդենային հանքավայրերին, այլև մի շարք այլ օբյեկտների:

Սիսիանի վարչական շրջանի կենտրոն Սիսիան գյուղը Շաքիից գտնվում է ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա, գլխավոր խճուղուց 3 կմ աջ, Որոտան գետի ձախ ափին (Երևանից 267 կմ հեռավորության վրա): Գեղեցիկ է Սիսիանի շրջապատը: Նա գտնվում է մի հացառատ տափարակի կենտրոնում, որի միջով հոսում է վճիտ ու աղմկարար Որոտանը: Հյուսիս-արևելյան կողմում վեր են խոյացել Մեծ ու Փոքր Իշխանասարերը, իսկ հեռու հարավում Զանգեզուրի լեռներից անջատվող և դեպի արևելք ձգվող Բարգուշատի լեռնաշղթան է, որի հյուսիսային ճյուղերը ձգվում են երկար տարածության վրա և աստիճանաբար ձուլվում Որոտանի հովտի հետ: Ամռանը Սիսիանի սարահարթում դիտողին մեծ հաճույք են պատճառում փարթամորեն աճած ցորենի դաշտերը, որոնք լեռնային զով ու անուշաբույր քամուց ալեկոծվում են ծովի պես: Սարահարթի անմշակ մասերը իրենցից ներկայացնում են խոտհարքներ ու արոտավայրեր, որոնք կանաչին են տալիս վաղ գարնանից մինչև ուշ աշուն: Ջրերը Սիսիանում խիստ է լինում: Ամբողջ սարահարթը ծածկվում է ձյան հաստ շերտի տակ, հաճախակի լինում են բուք ու բորան: Նախկինում, երբ Գորիս տանող ճանապարհը եղել է անբարեկարգ և հոգ չի տարվել ձմռանը այն մաքրելու համար, ճանապարհորդները հաճախ մոլորվել են և ենթարկվել վթարի: Անցանկալի դեպքերից խուսափելու համար, որպես ուղենիշեր ճանապարհի երկու կողմերին, իրարից որոշակի հեռավորության վրա պատրաստել են բարձր քարակույտեր, որոնցից մի քանիսը պահպանվել են նույնիսկ մինչև մեր օրերը:

Սիսիան գյուղը, լինելով շրջկենտրոն, բարեկարգվել և մեծացել է սովետական ժամանակաշրջանում: Նա ադամաքինից թողնում է քաղաքի տպավորություն: Փողոցներն ուղիղ են, տները՝ կառուցված կանոնավոր պլանով: Շենքերը քաղաքատիպ են, երկու և երեք հարկանի, ծածկված տանիքով: Գյուղի փողոցներն ու զբոսայգին ծառապատված և կանաչապատված են, ջուրը՝ սառնորակ ու լավորակ, ունի հարմարավոր հյուրանոց, դպրոց, խաղադաշտ, զբոսայգի, խանութներ և այլն: Առանձնահատուկ ուշադրության է արժանի գյուղի ծայրին գտնվող եկեղեցին, որը կառուցվել է VI դարում: Նա կանգուն է, շարված է սրբատաշ և լավ մշակված սև տուֆով,



ունի արևի ժամացույց, նուրբ քանդակներ, այունակներ: Եկեղեցու շուրջ կողմում տարածվում է մի ընդարձակ գերեզմանոց, որտեղ կան տարբեր ժամանակներին վերաբերող քանդակազարդ շատ գերեզմանաքարեր: Հնում այս եկեղեցին կոչվել է Այունիքի վանք, հետագայում օտարներն այն կոչել են «Ղարաքիլիսա» (սև եկեղեցի), որից էլ Սիսիան շրջկենտրոնը նախկինում կոչվել է Ղարաքիլիսա: Հայկական ՍՍՌ ճարտարապետական հնությունների պահպանման կոմիտեն այդ եկեղեցին կանգուն և անփոփոխ պահելու համար՝ այստեղ տարել է որոշ կառուցողական և վերանորոգման աշխատանքներ:

դ) Սիսիան—Գորիս.—Ճանապարհի այս հատվածը շարունակ է Եռակատար բարձրադիր սարահարթով, որը դեպի արևանցնում ելք ու հարավ-արևելք աստիճանաբար իջնում է: Այստեղ ճանապարհի վրա ոչ մի բնակավայր չկա: Խիտ բնակեցված այդ շրջանում գյուղերը տեղադրված են ոչ թե խճուղու վրա, որն անցնում է սարահարթի համեմատաբար ավելի անբերրի մասերով, այլ Որոտան գետի արգավանդ հովտում: Խճուղին անցնում է Որոտան գետի հյուսիսով, նրան գրեթե զուգահեռ:

Սիսիան—Գորիս խճուղու արևելյան հատվածն անցնում է Իշխանասար հրաբխային սիստեմին պատկանող լեռնաբազուկների վրայով, հռակատար լեռնագագաթներից ոչ հեռու: Գորիսը հեռվից երկու կողմերում ձգված են բարձր լեռներ:

Ուղևորի առջև նա հրևում է անսպասելի կերպով, երբ մեքենան հասնում է նրա արևմտյան և հյուսիսային կողմերում վեր խոյացած լեռան բարձրադիր լանջը, որով խճուղին ոլորապտույտ տալով իջնում է քաղաք: Օրվա ո՛ր պահին էլ ուզում է լինի, վերեվից, սարի լանջից՝ Գորիսը անջնջելի տպավորություն է թողնում ուղևորի վրա: Գորիս գետի նեղ հովտով երկարավուն ձգված այդ քաղաքը, որ փռված է վերևից նայողի ոտքերի տակ, Սովետական Հայաստանի փոքր, բայց գեղեցիկ քաղաքներից է, Գորիսի շրջանի վարչական կենտրոնը:

Մեծ չէ Գորիսը և ոչ էլ կարող է պարծենալ իր հնությամբ: Նրա պատմությունը նույնիսկ չի հասնում 100 տարվա: Կառուցվել է անցյալ դարի 70-ական թվականներին և մինչև սովետական կարգերի հաստատումը հանդիսանում էր Ելիզավետապոլի նահանգի կազմի մեջ մտնող Զանգեզուրի գավառի կենտրոնը: Իսկ այս վերջինս կազմված էր այժմյան Հայկական ՍՍՌ Սիսիանի, Գորիսի,

Ղափանի և Մեղրու շրջանների տերիտորիաներից։ Իբրև ցարական ծայրամասային հետամնաց գավառական կենտրոն՝ Գորիսը զարգացման ոչ մի հեռանկար չուներ, նա պարզապես կառուցվել էր վարչական-ոստիկանական նպատակներով և մինչև Զանգեզուրում սովետական կարգերի հաստատումը մնում էր խղճուկ վիճակում։ Նրա տնտեսական կյանքի մասնակի աշխուժացումը գրեթե բացառապես կապված էր Ղափանի և Սիսիանի կողմերից դեպի Շուշի ու Եվլախ տանող ճանապարհի հետ։ Ամռանը Գորիսում, կիրակի օրերը մեծ շուկա էր լինում, որտեղ առ ու վաճառքի էին հանվում հարյուրավոր մանր ու խոշոր եղջերավոր անասուններ։ Նա չուներ արդյունաբերական որևէ ձեռնարկություն, իսկ արհեստավորներն էլ այնքան փոքրաթիվ էին, որ կարելի էր մատների վրա հաշվել։

Գորիսն իր կլիմայական պայմաններով, գեղատեսիլ բնությամբ և կոմունալ հարմարություններով կարող է համարվել ռեսպուբլիկայի լավագույն ամառանոցներից մեկը։ Նա մոտակա երկաթուղային կայարանից (Ղափանից) հեռու է 65 կմ, իսկ ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանից՝ 290 կմ։ Կառուցված է օրինակելի պլանով. քաղաքի փողոցները, չնայած տեղանքի խիստ թեքվածությանը և ձորակներով կտրտված լինելուն, ուղիղ են և իրար հատում են ուղղանկյան տակ՝ քաղաքը վերածելով մի մեծ, շախմատաձև դաշտի։ Բոլոր տները, գրեթե առանց բացառության, բակի կողմում, կամ երբեմն առջևի մասում, ունեն իրենց այգիներն ու բանջարանոցները։ Քաղաքն ամբողջապես թաղված է սովերախիտ այգիների մեջ։ Հարավային կողմում Գորիսի այգիների անմիջական շարունակությունն են կազմում Քարահունջ գյուղի թթաստանները։ Գորիսը հայտնի է հատկապես իր ընտիր խնձորով։ Քաղաքն ունի երկարավուն հատակագիծ և ընկած է գերազանցապես Գորիս գետի աջ ափին։ Գետի ձախափնյա մասում մեծ մասամբ հին տներ են։ Այստեղ վեր են խոյանում մի շարք բնական քարե բուրգեր, որոնք առաջացել են հողմահարման հետևանքով, և որոնցից մի քանիսն իրենց կատարին ունեն քարե «թագեր»։ Գորիսում ամեն մի քայլափոխում զգացվում է մեր օրերի շունչը, և աչքի են զարնվում նոր կառուցումները։ Սովետական ժամանակաշրջանում այստեղ կառուցվել են ավելի քան 1400 հասարակական և բնակելի շենքեր, բարեկարգվել են հին փողոցները, ծառազարդվել և ասֆալտապատվել կամ սալահատակվել գրեթե բոլոր հին ու նոր փողոցները։ Գորիսը ոչ միայն աճել, մեծացել ու գեղեցկացել է արտաքնապես, այլ հզորացել է տնտեսապես և մեծ առաջադիմություն կատարել



կուլտուրայի բնագավառում։ Նա ունի տրիկոտաժի ֆաբրիկա, մեքանիկական, կղմինդրի, պանրի և այլ գործարաններ, գյուղատնտեսական տեխնիկում, մանկավարժական ուսումնարան, բժշկական-քույրական դպրոց, միջնակարգ և յոթնամյա դպրոցներ, պատմական թանգարան, որտեղ ցուցադրված են նաև ազգագրական կարևոր էքսպոնատներ, պրոֆեսիոնալ մշտական թատրոն, կինոթատրոն, կուլտուրայի տուն, 8 գրադարաններ, աքանչելի զբոսայգի, որի մոտ, քաղաքի կենտրոնում, գտնվում է Հայրենական պատերազմում զոհվածներին նվիրված նշանավոր աղբյուրհուշարձանը, որն իր ճարտարապետությամբ Հայկական ՍՍՌ բազմաթիվ տեղերում կառուցված նույնատիպ կառուցվածքների մեջ գրավում է եզակի տեղերից մեկը։ Սովետական ժամանակաշրջանում նրա բնակչությունը քառապատկվել է։ Ամռանն այստեղ հնում գալիս բազմաթիվ ամառանոցարնակներ։

Գորիսն ամբողջությամբ վերցրած, և նշված օբյեկտներն առանձին-առանձին կարող են դառնալ հաճելի էքսկուրսիայի վայրեր։ Ուստի, բավարարվենք միայն դրանց թվարկմամբ, ծանոթանալը թողնելով իրեն՝ այցելուին։

Գորիսից, ըստ ցանկության, կարելի է կատարել տեղական մի քանի եքսկուրսիաներ դեպի Գորիսի շրջանի տարբեր գյուղեր և պատմական վայրեր։ Մենք խորհուրդ կտանք առաջին հերթին այդպիսի էքսկուրսիա կատարել դեպի քաղաքից հարավ-արևմուտք, մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող Տաթևի նշանավոր վանքը։

Տաթևի վանքը տանող սովորական ճանապարհը անջատվում է Գորիս—Ղափան խճուղու վրա գտնվող Շուռնուխի ավանից և թեքվում դեպի աջ՝ անցնելով խիտ անտառների միջով։ Սակայն կարելի է Տաթև գնալ և այլ ճանապարհով։ Վերջինս, որ ավելի գերադասելի պետք է համարել, դուրս է գալիս Գորիս քաղաքից և մինչև Քարահունջ գյուղի տակը համընկնում է Գորիս—Ղափան խճուղու հետ, ապա բաժանվում է նրանից և թեքվելով դեպի աջ՝ Քարահունջ գյուղով, հնադարյան խոտ գյուղի մոտով, Շինուհայրով և Հալիձորով դիմում դեպի հարավ-արևմուտք, անցնում Որոտան գետով և հասնում այն բարձրավանդակի ստորոտը, որի վրա կառուցված է Տաթևը։ Գորիս—Տաթև այդ ճանապարհն անցնում է խիստ լեռնային և գեղատեսիլ վայրերով։ Չնայած վտանգավորությանը, սովորաբար նրա մեծագույն մասը անցնում են ավտոմեքենայով։ Ճանապարհին ուշադրությունը կարող է ծանոթանալ նշված գյուղերի հնություններին ու այժմյան առօրյային։

ուշադրության արժանի է Հալիձոր գյուղն իր պատմական բերդի և վանքի ավերակներով: Սակայն ճանապարհի և՛ բնական գեղեկություննները, և՛ նրա վրա ընկած պատմական ու ժամանակակից վայրերի թողած տպավորությունը արագ կերպով անհետանում են, երբ էքսկուրսանտը հասնում է Տաթևի հազվագյուտ գեղատեսիլ շրջանը:

Տաթևի փոքրիկ շրջանը լեռնային Զանգեզուրի ամենագեղեցիկ անկյուններից մեկն է: Նա ամբողջապես մտնում է Գորիսի վարչական շրջանի մեջ և գրավում է վերջինիս հարավային մասը: Մեծ մասամբ ծածկված է թանձրախիտ անտառներով, օդը առողջարար է, ջրերը՝ պաղ ու վճիտ: Նրա սահմանները կազմում են՝ արևմուտքում Տաթևի գետի արևմտյան ջրբաժան լեռները, հյուսիսում՝ Որոտան գետի ձախ կողմում, Եռագագաթ բարձրավանդակի՝ դեպի գետն իջնող նախավերջին դարավանդը, արևելքում՝ Խոտ գյուղն Արամազդ լեռան արևելյան լանջերին միացնող գիծը, իսկ հարավում՝ Արամազդ լեռները, որոնք մտնում են Բարգուշատի լեռնային սիստեմի մեջ: Նրա միջով հոսում է Տաթևի (Հնում Գինական) գետը, որը Որոտանի մեջ է թափվում «Սատանի կամուրջի» մոտ: Այդ փոքրիկ շրջանը իրենից ներկայացնում է հնությունների մի կարևոր հանգույց, այստեղ են գտնվում Տաթևի, Մեծ կամ Արանց անապատի և Թանահատի վանքերի, Հալիձոր բերդի և այլ պատմական օբյեկտների ավերակները: Հնում այդ ամբողջ շրջանը իր բոլոր գյուղերով հանդերձ պատկանում էր Տաթևի վանքին, որն այդ լայնածավալ կալվածքին տեր էր դարձել ոչ միանգամից: Տաթևի շուրջը տարածվող շրջանից բացի, վանքը բազմաթիվ սեփական գյուղեր ուներ նաև Սյունիքի զանազան մասերում: Տարբեր ժամանակներում Տաթևի վանքին նվիրված գյուղերի և կալվածքների թիվը հասնում էր 47-ի, որոնցից 25-ը գյուղեր էին, իսկ մնացածները առանձին կալվածքներ: Վանքը հարկերի ձևով հսկայական եկամուտներ էր ստանում Սյունիքի բոլոր գավառներից: Այսպիսով, Տաթևի եպիսկոպոսական թեմն ավելի հարուստ էր, քան Հայաստանի մյուս բազմաթիվ եպիսկոպոսությունները: Նա միջնադարյան Հայաստանի ամենախոշոր ֆեոդալներից մեկն էր: Այդ էր պատճառը, որ X դարի սկզբներին Սյունիքում ծագած գյուղացիական ապստամբությունը, որ երկար ժամանակ կրկնվում էր պարբերաբար, ուղղված էր առաջին հերթին Տաթևի վանքի դեմ:

Տաթևի վանքը գտնվում է համանուն գետակի աջ ափին, մի ոչ մեծ բարձրավանդակի վրա: Նա բարձրացել է ոչ միանգամից:



Տակավին IV—V դարերում Տաթևի տեղում եղել է մի անշուք եկեղեցի: Ենթադրվում է, որ մինչև քրիստոնեությունը նրանց տեղում եղել են հեթանոսական մեհյաններ: Տաթևի եպիսկոպոսարանի հաստատության և իշխանության հայտնագույն ժամանակը համարվում է IX դարի առաջին կեսը, երբ Սյունիքի եպիսկոպոս Դավիթը 839 թ. 10 000 դրամով գնում է Տաթևի վանքի սահմանակից տաներն ի օգնությամբ՝ Հովհաննես եպիսկոպոսը դնում է կաթուղիկե մեծ եկեղեցու հիմքը, որը կրում է Պետրոսի և Պողոսի անունը: Այս եկեղեցու կառուցումը տևում է 11 տարի (895—906 թթ.) և մինչև օրս էլ կանգուն է: Սակայն տարբեր ժամանակներում այն մի քանի անգամ ենթարկվել է վերանորոգման, որովհետև Սյունիքում հաճախակի կրկնվող երկրաշարժերից նա մի քանի անգամ ստացել է լուրջ վնասվածքներ: Կաթուղիկեն կառուցելուց հետո նրա հարավային կողմում կանգնեցնում են 30 կանգուն բարձրություն ունեցող, ութանիստ քարե մի սյուն, որն իր գլխի մասում ունի քանդակված խաչ: Նույն Հովհաննես եպիսկոպոսի օրոք կառուցվում են նաև պահեստներ, արհեստանոցներ, գրատներ, սրբատներ, Սյունիքի իշխանների ու եպիսկոպոսների համար դամբարաններ և այլն: Հովհաննեսից հետո Սյունիքում եպիսկոպոս կարգված Հակոբ Դվինեցին Սյունյաց իշխան Փիլիպպեից գնելով Վարարակի ջուրը՝ բերում է վանքի դիմաց՝ ձաքուտ կոչված վայրը և այդ դարձնում վանքապատկան այգի:

Պետրոս-Պողոսի կաթուղիկե եկեղեցուց բացի, նրա մոտ կառուցված է նաև մի ավելի փոքր եկեղեցի՝ Գրիգոր Լուսավորչի անունով: Այս եկեղեցին երկու անգամ կործանվել է, երկրորդ անգամ վերակառուցել է Ստեփանոս Օրբելյան պատմիչը, որն այդ մասին եկեղեցու պատի վրա թողել է մի համառոտ արձանագրություն: Վանքը պատած է աշտարակավոր բարձր պարիսպներով:

Տաթևը միջնադարյան Հայաստանի խոշոր դպրոցներից և կուտուրայի կենտրոններից մեկն էր: Նրա դպրոցը բարձր տիպի էր և տալիս էր գիտուն մարդիկ: Տաթևի գրադարանում կային բազմահազար ձեռագրեր, որոնց մեծ մասը, սակայն, ոչնչացվել է արտաքին նվաճողների կողմից: Սոսկ վանք լինելուց բացի, Տաթևը իր ամուր դիրքի շնորհիվ ծառայում էր նաև որպես բերդ:

Ահա թե ինչպես է նկարագրում նրա դիրքն ու ամրությունը հայ մեծանուն վիպասան Րաֆֆին.

«Վանքը շինված էր լեռնային դժվար մատչելի բարձրավան-

պակի վրա, շրջապատված աշտարակներով և ամուր պարիսպներով, որոնք դրսից նրան ավելի մի անառիկ բերդի նմանություն էին տալիս։ Նրա առջևից ընկած էին անդունդի նման խոր և մթին ձորեր, որոնց միջով գոռալով, որոտալով անցնում էր Որոտան գետը։ Շրջակա բոլոր լեռները, որոնց սուր գագաթները կորչում էին ամպերի մեջ, պատած էին խուլ, անանցանելի անտառներով։ Դեպի վանքը տանող ճանապարհներն ընկած էին նեղ փապարների, սարափելի կիրճերի միջով, որտեղից մի մարդ միայն կարող էր անց կենալ... Գուցե վանքի այդ անառիկ դրությունը, որ պաշտպանված էր բնական ամրություններով, պատճառ տվեց տեղափոխել այնտեղ Սյունյաց աշխարհի արքեպիսկոպոսության մայր աթոռը, ժամանակի փոթորիկներից անվտանգ պահելու համար («Դավիթ Բեկ», էջ 219)։

Տաթևի վանքն իր տաճարներով, պարիսպներով, օժանդակ շենքերով ճարտարապետական մի բարդ կոմպլեքս է ներկայացնում։ Նրա կառուցման վրա ծախսվել են հսկայական միջոցներ և տասնյակ տարիների աշխատանք։ Իբրև միջնադարյան Հայաստանի ճարտարապետական ամենակարևոր կոթողներից մեկը՝ այն խնամքով պահպանվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հնությունների պահպանության կոմիտեի կողմից։ Նրա ավերակները դիտողին մեծ զարմանք ու հիացմունք են պատճառում իրենց մասշտաբներով, ճարտարապետական նրբությամբ, կառուցման հնարանքներով ու մտահղացմամբ։ Առանձնապես անջնջելի տպավորություն է թողնում վանքի գլխավոր եկեղեցին՝ Պետրոսի և Պողոսի տաճարը, որի մասին այնքան մեծ հիացմունքով է խոսում Սյունիքի մեծանուն պատմագիր Ստեփանոս Օրբելյանը։ Էքսկուրսանտը Տաթևի վանքը թողնում է կրկին այցի գալու այրող ցանկությամբ։

Տաթևից ոչ հեռու են գտնվում երկու այլ նշանավոր վանքերի ավերակներ։ Այդ վանքերն են Մեծ անապատը և Թանահատը։

Մեծ կամ Արանց անապատը գոյություն ուներ XI—XII դարերից, նրա տեղը ավելի ուշ ժամանակներում՝ XVII դարում, կառուցվում է նորը։ Այս վանքը գտնվում էր Տաթևի ձորի և Որոտան գետի խառնարանում, Տաթևի ձորի ձախ ափին, «Սատանի կամուրջի» մոտ, հիշյալ գետի շնորհիվ առաջացած մի լճակի վրա։ Նա կառուցված է եղել սրբատաշ քարերով և առջևում ունեցել է գավիթ, իսկ շուրջը պատած է կրաշաղախ ու լայնանիստ պարիսպով, որն ունեցել է մի քանի աշտարակներ։ Արանց անապատի տեղն



ավելի դեղեցիկ է, քան Տաթևինը։ Մինչև օրս էլ պահպանվել են նրա ավերակները և հնագիտական-ճարտարապետական ու պատմական առումով արժանի են հատուկ ուշադրության։

Թանահատի վանքի ավերակները գտնվում են Տաթևի վանքից հյուսիս-արևելք, Որոտան գետի մոտ, մի ոչ մեծ լեռան վրա։ Այս վանքը հավանաբար կառուցվել է IV դարի վերջերին, նրա տեղում ավելի հնում եղել է հեթանոսական մեհյան։ Սակայն Թանահատի վանքը նշանավոր է դառնում ավելի ուշ՝ VIII դարի առաջին կեսին, Թանահատը Սյունիքի նշանավոր մյուս վանքերի՝ Տաթևի, Մեծ անապատի, Նորավանքի և մյուսների պես, հանդիսացել է մատենագրության և կուլտուրայի կարևորագույն օջախներից մեկը։

Տաթևի շրջանի ժամանակակից և պատմական տեսարժան վայրերին ծանոթանալուց հետո պետք է վերադառնալ Գորիս և շարունակել ճանապարհորդությունը դեպի հարավ՝ դեպի Ղափան։

ե) Գորիս—Ղափան.—Գորիսից Ղափան տանող ճանապարհը ընդամենը 65 կմ է, սակայն ով չի անցել այդ ճանապարհով, նա լրիվ գաղափար չի կարող կազմել Զանգեզուրի բնության խիստ կոնտրաստների և բանաստեղծական գեղեցկության մասին։ Իր ամբողջ ընթացքով այն անցնում է խիստ լեռնային շրջաններով՝ մերթ իջնելով անդնդախոր ձորերի ու գետերի ափերը, մերթ բարձրանալով Բարգուշատի սիստեմին պատկանող լեռնաճյուղերի բարձրադիր շրջանները։ Մինչև Ղափան քաղաքի մոտերքը խճուղին շարունակ ունի հարավային ուղղություն և մեծ մասամբ անցնում է անտառապատ շրջաններով։ Գորիս քաղաքից խճուղին համանուն գետի բարձրադիր աջ ափով, որտեղ տարածվում են Քարահունջ գյուղի թթաստանները, ուղղվում է դեպի հարավ, գետի հետ միասին շրջելով իջնելով դեպի Որոտան։ Ընդամենը 30—35 րոպե հետո ուղևորի առջև բացվում է Որոտան գետի ձորը, որի ձախ (հյուսիսային) և աջ (հարավային) կողմերը իրենցից ներկայացնում են հակապատկեր. ձախ մասը, որը ուղղված է դեպի հարավ, անտառազուրկ է, բուսականությամբ ու ջրերով աղքատ, իսկ հյուսիսահայաց աջ կողմը ջրառատ է ու անտառածածկ։ Դրանց սահմանագծում է Որոտան գետը, որն այդ մասում հոսում է դեպի արևելք։ Դեպի Զանգեզուր կատարած ճանապարհորդության ընթացքում ուղևորը երրորդ անգամ այստեղ հանդիպում է աղմկարար Որոտանին։ Առաջին անգամ նա նրան հանդիպել էր Սիսիանի շրջանը մտնելիս և բավական երկար ժամանակ ուղեկցել նրա փրփրալից ջրերին, իսկ երկրորդ հանդիպումն

մը տեղի էր ունեցել Գորիսից Տաթև կատարած էքսկուրսիայի ժամանակ։ Սակայն ճանապարհորդը ամեն մի նոր հանդիպումով՝ նրան տեսնում է փոխակերպված տեսքով, եթե Սիսիանի շրջանում նա տեսել էր սարահարթի վրայով ազատ հոսող պարզկա ու համեմատաբար սակավաջուր Որոտանը, ապա երկրորդ և երրորդ հանդիպումների ժամանակ նա տեսնում է ավելի մուգ գույնի ջուր ունեցող ու ավելի հորդառատ Որոտանը։ Որոտանի բնորոշ կողմը, որը բոլոր հանդիպումների ժամանակ էլ ցցուն կերպով զգացնել է տալիս իրեն, դա նրա՝ մարդու հայացք քաշող տանող արագահոսությունն է և ականջ խլացնող գոռում-գոչումը։

Որոտանի աջ կողմում բարձրանում են Բարգուշատի անտառապատ լեռները, որոնք դեպի գետը իջնում են խիստ զառիթափ լանջերով։ Գետի կամուրջն անցնելուց հետո անմիջապես սկսում է շեշտակի վերելքը դեպի այդ լեռների բարձրադիր շրջանները։ Այստեղ խճուղին տալիս է մի քանի տասնյակի հասնող և մեծ թեքություն ունեցող ոլորաններ, որոնց շրջադարձերն այնքան խիստ են, որ մեծ մեքենաները շատ հաճախ մեկ անգամից չեն կարողանում անցնել։ Վարորդը մեքենան այդ ոլորապտույտներով անց է կացնում մեծ դժվարությամբ։ Մինչև Բարգուշատի լեռնակատարները բարձրանալը առաջին անգամ այդ ճանապարհահատվածում եղող ուղևորը ընկնում է ահ ու սարսափի մեջ, նրան թվում է, թե ուր որ է՝ մեքենան կգլորվի մութ ու անտառախիտ ձորը։ Սակայն խճուղին, չնայած գրունտային է, բարեկարգ է և լայն։ Հմուտ ու փորձված վարորդը մեքենան վարպետությամբ վարում է լեռնալանջն ի վեր։ Էքսկուրսանտին մնում է իր կյանքի անվտանգությունը վստահել բարեխիղճ վարորդին և ինքը հիանալ շրջապատով ու էսթետիկական բավականություն զգալ նրա անդնդախոր ու մթին ձորերից, դարավոր ու խուլ կաղնուտներից, երկնասլաց կատարներից, պաղ աղբյուրներից և անտառով մեկ իրենց դայլայլը տարածող թռչունների մեղեդուց։

Վերելքը վերջանալուց հետո՝ խճուղին բավական երկար տարածությամբ անցնում է բարձր լեռնային շրջաններով, որոնք նույնպես պատած են կաղնիների անտառներով։ Անտառի խորքում, խճուղու եզրերին անտառանյութի բազայի վրա մեր օրերում առաջացել է մի փոքրիկ, բայց գեղեցիկ ավան՝ Շառնուխին, որի սղոցարանների ու փայտամշակման արհեստանոցների աշխատանքային ձայնը տարածվում է ամբողջ անտառով մեկ և արձագանք գտնում նրա խոր ձորերում։ Մինչև Որոտի գետի ավազանն իջնող



վայրէջքի սկիզբը՝ ուղևորը այդ մութ անտառում հանդիպում է ևս մի աշխույժ, բայց սեզոնային բնակավայրի, դա նշանավոր Կարմրաքարն է, Զանգեզուրի լեռնական զվարթ պիոներների ճամբարը և հանքագործների սիրած հանգստի տունը։ Կարմրաքարը, որը գտնվում է խճուղու մոտ, նրա ձախ կողմում, ունի առողջարար ու մաքուր օդ, ճոխ բուսականություն, զով կլիմայական պայմաններ։ Անտառն ու նրա կանաչապատ բացատները, սառը ջուրը և զով օդը, բարձր դիրքը և պարզկա ու արևոտ եղանակներն այստեղ հարմոնիկ կերպով զուգորդված են իրար հետ և Կարմրաքարը դարձնում են ոչ միայն Զանգեզուրի, այլ ամբողջ հանրապետության ամենահարմար հանգստի տներից մեկը։ Ձմռանը Կարմրաքարը մարդաթափ է լինում և թաղվում է ձյան հաստ շերտերի տակ։ Կյանքն այնտեղ նորից է հարություն առնում գարնանը՝ մայիսի երկրորդ կեսից։

Հրաժեշտ տալով գեղատեսիլ Կարմրաքարին՝ ուղևորը Բարգուշատ լեռնաշղթայի հարավհայաց լանջերով իջնում է դեպի Որոտի գետի հովիտը։ Այստեղ խճուղին անցնում է Ղափանի շրջանի Արծվանիկ հինավուրց մեծ գյուղով, որն իր պատմական անցյալով և ժամանակակից դրությամբ կարող է արժանանալ հետաքրքրասերի ուշադրությանը։ Նրան առանձնապես կհետաքրքրեն գյուղի հինավուրց եկեղեցին, գյուղից ոչ հեռու գտնվող այն փոքրիկ դաշտը, որը տեղացիները կոչում են Նարգիզների դաշտ և որը եղել է XVIII դարի առաջին քառորդում Զանգեզուրում ծավալված ազատագրական պատերազմի ճակատամարտերից մեկի վայրը։

Արծվանիկից խճուղին շարունակում է ձգվել դեպի հարավ և Որոշի ու նրա ձախակողմյան խալաջ գետերի միախառնման տեղում հասնում է Որոշի գետի ափը, որտեղ նա թեքվում է դեպի արևմուտք և գետի այգեշատ ափով ձգվում մինչև Ղափան։

Ղափանը Հայկական ՍՍՌ Ղափանի վարչական շրջանի կենտրոնն է, Հարավային Հայաստանի պղնձագործների քաղաքը։ Նա գտնվում է Որոշի գետի միջին հոսանքում, այնտեղ՝ որտեղ այդ գետին են միանում Կավարտի ձորը և Վաշագանի գետակը։ Երկաթգծով նա կապված է Երևան—Բաքու երկաթգծի Մինջևան կայարանին։ Ղափանի կլիման տաք է, բավարար խոնավությամբ և ջերմաստիճանների ոչ սուր տատանումներով։ Ձմեռն այստեղ սառնամանիքներ քիչ են լինում, իսկ ամառը հաճախ լինում են տոթեր։ Քաղաքը շրջապատող լեռները բուսածածկ են, ընդ որում հարավային կողմի լեռնալանջերի մեծ մասը պատած է անտառներով,

որոնց հիմնական ճառագայթները կազմում են բոխին, հացենին, թխկենին, հոնին և վայրի տանձենին, խնձորենին, սալորենին և այլն: Քաղաքում և նրա շրջակայքում կան բազմաթիվ բանջարանոցներ, այգիներ ու մոշուտներ:

Իր բնա-կլիմայական պայմաններով Ղափանը շատ է հիշեցնում Իջևանը, սակայն ի տարբերություն վերջինի, նրա օդի ջերմաստիճանների տարբերությունները արտահայտվում են ավելի մեծ թվերով: Ամառանը այստեղ ավելի շոգ է, և կլիման՝ համեմատաբար ավելի չորային: Ղափանում հաջողությամբ աճում են խնձորը, կեռասը, սալորներ, տանձը, ընկույզը, նույնիսկ խաղողը և դեղձը: Ղափան քաղաքի և նրա մոտակայքի բանավանների հիմնական զբաղմունքն ու գոյության պայմանը պղնձարդյունաբերությունն է և դրա հետ կապված ճյուղերը:

Ղափանի պղնձահանքերը հայտնի են տակավին խոր միջնադարից, և այստեղ պրիմիտիվ եղանակով շահագործման են ենթարկվել նրա՝ գետնի երես դուրս եկող երակներն ու առանձին բուվերը: XIX դարի երկրորդ կեսի սկզբներից մուտք է գործում արտասահմանյան կապիտալը, որը տեղական կապիտալի հետ միասին գիշատչորեն շահագործման է ենթարկում Ղափանի հարուստագույն պղնձահանքերը: Ղափանի և Ալավերդու պղնձաձուլարանները, միասին վերցրած, նախասովետական շրջանում ցարական Ռուսաստանում իրենց արտադրանքով զբաղեցնում էին երկրորդ տեղը: Սակայն այստեղ աշխատանքն ամբողջապես կատարվում էր ձեռքով, արտադրողականությունը վերին աստիճանի ցածր էր, հանքախորշերը հաճախ լցվում էին ջրով և դուրս գալիս շարքից, տեխնիկայի անվտանգություն գոյություն չուներ, բանվորների աշխատանքային ու կենցաղային-կոմունալ պայմաններն անտանելի էին, իսկ աշխատավարձը՝ չնչին: Չհաշված հանքախորշերը, նախասովետական ժամանակաշրջանի Ղափանի շատ թե քիչ նշանակալի արտադրական օբյեկտը, որն այն ժամանակ կարող էր արժանանալ ուշադրության, նրա պղնձաձուլարանն էր, որը կառուցվել էր ֆրանսիացիների կողմից: Մեր օրերում այդ գործարանը, որպես իր դարն ապրած ցածր տեխնիկայի նմուշ, լքվել է և անցել հնությունների շարքը: Այժմ Ղափանի պղնձի կոնցենտրատը ուղարկվում է Ձուլման Ալավերդու պղնձաձուլարանը: Սովետական ժամանակաշրջանում Ղափանում հիմնվում է պղնձի կոմբինատ և նրա պղնձարդյունաբերությունը հիմնովին վերափոխվում է. այնտեղ ստեղծվում է սովետական առաջավոր լեռնա-արդյունաբե-



ռական տեխնիկան, Ղափանը դառնում է Սովետական Հայաստանի խոշորագույն հանգույցներից մեկը: Վերացվում է Ղափանի հին պղնձաձուլարանը, նրա փոխարեն կառուցվում է հարստացնող նոր ֆաբրիկան (ֆլոտացիոն ֆաբրիկան), բոլոր հիմնական հանքախորշերը միացվում են իրար, և դրանցում կատարված հանույթը մի ընդհանուր ելքով, էլեկտրաքարշի միջոցով, բերում հասցնում այդ ֆաբրիկան, հանքախորշերում և դրսում ամբողջ աշխատանքը հնթարկվում է մեքենայացման, բանվորների համար ստեղծվում են լավագույն պայմաններ: Այդ բոլորի հետևանքով Ղափանի պղնձարդյունաբերությունը դառնում է ՍՍՌՄ նույն տիպի արդյունաբերության ամենակարևոր օղակներից մեկը: Ղափանի արդյունաբերական մյուս օբյեկտներից նշանավոր են՝ մեխանիկական, աղյուսա-կղմինդրային, կոնսերվի, լիմոնադի գործարանները, մսի կոմբինատը, հացի գործարանը և այլն: 1952 թ. դրությամբ նա ուներ 5 միջնակարգ, 7 յոթնամյա, 2 տարրական և արհեստակցական դպրոցներ, 2 կուլտուրայի տուն, ուսուցչի տուն, 9 գրադարան, հյուրանոց, հիվանդանոցներ, սպորտային խաղադաշտեր, զբոսայգիներ, բաղնիքներ, ճաշարաններ և այլն, և այլն:

Սովետական տարիներին Ղափանը և՛ իր գրաված տերիտորիայով, և՛ բնակչության թվով ավելի քան տասնապատկվել է: Նա միանգամայն նոր, վերածնված ու օրինակելի քաղաք է: Եթե նախկինում նա ամփոփված էր Ողչի գետի աջ ափի փոքրիկ հարթությունում և իր հողաշեն թզուկ ու խարխուլ տներով ոչնչով չէր տարբերվում քսենոֆոնյան գյուղերից, ապա մեր օրերում այն բոլոր կողմերով իր նախկին սահմաններից դուրս է եկել և փռվել մի քանի կմ հեռավորությունների վրա: Եթե նախկինում պղնձի հանքի կամ հեռավորությունների վրա: Եթե նախկինում պղնձի հանքավայրերը Ղափանից կտրված մանր-մունր բնակավայրեր էին՝ բաղկացած մի քանի հասարակ բարակներից, ապա այժմ դրանք վեր են ածվել գեղեցիկ և բարեկարգ ավաններդ և, մեծանալով, միացել են քաղաքին:

Ղափան քաղաքը բոլոր կողմերից շրջապատված է բարձր լեռներով, որոնցից հարավային կողմով ձգվողները պատած են թանձրախիտ անտառներով: Քաղաքի մեծացման համար չկան ընդարձակ հարթություններ, ուստի այն ձգված է Ողչի գետի երկու ափերի նեղ հարթություններում և կավարտի ձորի ու Վաշագանի գետակի ուղղություններով: Ողչի գետի ուղղությամբ նա ձգված է Գեղանուշ գետի գետաբերանից մինչև Բեխ գյուղի ջուրը, Կավարտի ձորի ուղղությամբ՝ մինչև կավարտ ու լեռնահանքեր բանավան-

ները ներառյալ, իսկ Վաչագանի գետակի ուղղությամբ՝ մինչև Վաչագան գյուղի մոտերքը։ Շենքերը տեղադրված են և՛ հարթություններում, և՛ զառիթափ սարալանջերին ու խոր ձորերում։ Կառուցված են բազմաթիվ բազմահարկ բնակելի ու հասարակական շենքեր։ Նորակառույց շենքերի մեծագույն մասը տուֆակերտ է, շարված սրբատաշ քարերով և մեծ վարպետությամբ։

Ղափանի բնակչությունը բազմալեզու է, նա ինտերնացիոնալ քաղաք է։ Բնակչության ճնշող մասը կազմող հայերից բացի՝ այստեղ ապրում են նաև ռուսներ, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ և այլք։ Հերթափոխային աշխատանքի շնորհիվ՝ գիշեր ու ցերեկ ամենևին չի ընդհատվում քաղաքի եռուզեռը, մարդկանց երթևեկությունը։ Օրվա բոլոր ժամերին նրա փողոցներում կարելի է հանդիպել աշխատանքային հագուստով, խոհուն դեմքերով բանվորների և արհեստավորների։ Ճաշից հետո նրա փողոցները և զբոսայգիները լեփ-լեցուն են լինում սովորող ու աշխատող երիտասարդներով, պղնձարդյունաբերության վետերաններով։

Ղափանի շրջակայքում կան հին ու նոր ժամանակներում նշանավորված պատմական մի քանի վայրեր։ Դրանցից առանձնապես հայտնի է Հալիձորի բերդը։ Այս բերդը նշանավոր է դարձել 1727 թ. այդտեղ տեղի ունեցած ճակատամարտով, որը մղվել է հայ ազատագրական փոքրաթիվ ջոկատի և թուրքական բազմամարդ բանակի միջև ու վերջացել է հայկական ջոկատի կատարյալ հաղթանակով և Ղափանի շրջանի սահմաններից թուրքական բանակի դուրս շպրտումով։ Հալիձորն այդ ժամանակներում պարսկա-թուրքական տիրապետության դեմ ծավալված Մեծ Ղափանի ազատագրական շարժման հիմնական հանգրվանն էր, շարժման քաջարի ղեկավար Դավիթ Բեկի աթոռանիստը (1722—1730 թթ.)։

Հալիձոր բերդի ավերակները գտնվում են Ղափան քաղաքից 5—6 կմ հեռավորության վրա, նրանից արևմուտք, Ղափան—Քաջարան խճուղու ձախ կողմում, Ոխչի գետի բարձրադիր աջ ափին, Բեխ գյուղից ոչ հեռու։ Այնտեղ կարելի է գնալ ավտոմեքենայով՝ Ղափան—Քաջարան խճուղով, ապա Ոխչի գետի աջ ափով շարունակելով ճանապարհը, գնալ դեպի արևմուտք՝ մ.ո.ա 3—4 կմ, հետո շրջվել դեպի ձախ և անտառի միջով անցկացրած ճանապարհով հասնել մինչև բերդը։ Բերդի ավերակները վատ են պահպանված։ Նրա պարիսպների մեծ մասը, աշտարակները, սուորերկրյա անցքերը գրեթե ամբողջապես կործանված են։ Համեմատաբար լավ



է պահպանված բերդի շրջանում եղած անշուք եկեղեցին, որի պատերը շարված են անմշակ քարերով՝ կրաշաղախի գործադրմամբ։ Բերդի ավերակների մեծ մասն արդեն թաղված է առաջ արշավող անտառի տակ։ Նրա բարձր դիրքը, թիկունքում վեր խոյացած անանցանելի լեռնաշղթան, առջևի մասում ընկած Ոխչի գետի զառիվեր ձորը, շրջակայքի անտառապատությունը, այդ բոլորը Հալիձոր բերդը դարձրել են անմատույց։ Տեղացիները Հալիձորի հետ կապված իրական պատմությունների հետ միահյուսել են և զանազան ավանդություններ, որպիսիք հաղորդվում են բերնե-բերան և մեծ մասամբ վերաբերում են մեծ հայրենասեր ու տաղանդավոր զորավար Դավիթ Բեկին ու նրա զինակիցներին։ Էքսկուրսանտին ուղեկցող տեղացին ավերակ բերդի ու վանքի ամեն մի քարի, քանդված աշտարակի, սուորերկրյա անցքի, գերեզմանաքարի մասին գոնում է հարմար նյութ և այն պատմում մեծ ոգևորությամբ։

Հալիձոր բերդից ներքև, անմիջապես նրան կից, պարիսպներից դուրս գտնվում են Հալիձոր գյուղի ավերակները, իսկ ավելի ներքև, Ոխչի գետի ափին՝ նոր Հալիձոր գյուղի ավերակները։ Վերջինս հայտնի է դարձել գլխավորապես պղնձի հանույթով և մշակմամբ։ Դրա մոտ Ոխչի գետին են միանում Հալիձորի սառնորակ ու հորդառատ աղբյուրի ջրերը, որ նախկինում տարված էին բերդ, իսկ այժմ խողովակներով տարվում են Ղափան քաղաք։

ղ) Ղափան—Քաջարան—Մեղրի.—Ընդամենը 35 կմ է այն տարածությունը, որը պղնձի քաղաք Ղափանը բաժանում է պղնձամոլիբդենային հայտնի հանքավայր Քաջարանից։ Սակայն բնակլիմայական պայմանների ինչպիսի՜ մեծ տարբերություն այդ երկու ծայրակետերի միջև։ Ղափանում կլիման շոգ է, մինչդեռ Քաջարանը գտնվում է մերձալպյան զով գոտում։ Կլիմայական պայմանների այդպիսի սուր տարբերությունը հետևանք է ծովի մակերևույթից նրանց ունեցած բարձրությունների մեծ տարբերության։

Ղափան—Քաջարան խճուղին անց է կացված մեր օրերում։ Հայրենական պատերազմին նախորդած տարիներին արդեն գործող այդ խճուղին, Ղափանից սկսած, 17—18 կմ ձգվում էր Ոխչի գետի աջ ափի երկայնքով, ապա անցնում գետի ձախ կողմը և այդ մասով գնում մինչև Քաջարան։ Հայրենական պատերազմի տարիներին և նրանից հետո՝ Ոխչի գետի աջ կողմով ձգվող ճանապարհի մի զգալի հատվածը (մոտ 12—13 կմ երկարությամբ) լքվեց, այդ մասում նոր ճանապարհ կառուցեցին գետի ձախ կողմով, որի թեքությունն

ավելի մեղմ է, շոմի ելևէջներ, և ջուրն ու հեղեղներն այս մասում ճանապարհին ավելի քիչ վտանգ են սպառնում։ Այնպես որ այժմյան գործող խճուղին, Ղափան քաղաքից դուրս գալով ընդամենը մի քանի կիլոմետր, ձգվում է Ոխչի գետի աջ ափով, ապա անցնում է նրա ձախ կողմը և գնում մինչև վերջ։

Ղափան—Քաջարան ճանապարհը ոլորաններ քիչ ունի, նա անընդհատ բարձրանում է, առանց շեղվելու Ոխչի գետի ձորից։ Տեղ-տեղ ճանապարհն իջնում է ընդհուպ մինչև գետափ, իսկ տեղ-տեղ էլ՝ այն բարձրանում է զառիթափ լեռների կուրծքը։ Ճանապարհի աջ կողմում Զանգեզուրի և Բարգուշատի երկնասլաց լեռնասիստեմներին պատկանող լեռնաճյուղերն են՝ կտրտված անտառաշատ խոր ձորերով ու վիհերով, իսկ ձախ կողմում Ոխչի գետի՝ տեղ-տեղ մի քանի հարյուր մետրի հասնող անդնդախոր ձորն է, դրանից այն կողմ գետահովիտը հարավից պատնեշող Մեղրու լեռնաշղթան է, որի հյուսիսային լանջերն ամբողջությամբ ծածկված են սաղարթախիտ ու անձուկ անտառներով։ Ուժեղ վերելքը դժվարացնում է ավտոմեքենայի «շնչառությունը» և հարկադրում դանդաղեցնել իր ընթացքը։ Ամենուրեք լսելի են անտառաբնակ թռչունների դայլայլն ու Ոխչի գետի աղմուկ-աղաղակը։ Առաջին պահից թվում է, թե այդ լեռնային ջրերը պետք է լինեն պարզկա ու սպիտակափրփուր։ Իրոք որ զուլալ են հղել Արաքսի ձախակողմյան վտակ լեռնային Ոխչիի ջրերը և նրանում անհոգորեն իր դուրթող խաղն էր խաղում կարմրախայտը։ Այժմ Ոխչին, Քաջարան ավանից սկսած, պղտոր է, որովհետև Քաջարանի ֆլոտացիոն ֆաբրիկայում նրա ջրերով են լվանում ու մաքրում պղնձա-մոլիբդենային հանքաքարը։

Ղափան—Քաջարան ճանապարհի վրա կան բնակելի բազմաթիվ կետեր։ Գիշերվա պահին այդ ճանապարհով անցնելիս անծանոթ ուղևորը երբեմն չի կարողանում իրարից բաժանել խճուղու վրա գտնվող և էլեկտրական լույսերով ողողված ավաններն ու գյուղերը։ Երբեմնի անձուկ, ամայի ու հետամնաց այդ ձորն այժմ դարձել է լուսավոր և մարդաշատ։ Այդտեղ, Ոխչի գետի աջ ափին տեղադրված են երկու հիդրոկայաններ, իսկ խճուղու վրա եղած գյուղերի ու ավանների թիվը 7-ից անցնում է, չհաշված նրա ծայրաշրջաններում եղածները։ Խճուղու ամբողջ երկայնքով ծավալված են շինարարական լայն թափի աշխատանքներ. կառուցվում են էլեկտրահիդրոկայաններ, ավաններ, կամուրջներ։ Օր ու գիշեր



չի դադարում աշխույժ երթևեկությունը։ Աշխատանքային եռուզեռը, խիստ կոնտրաստներով լի լեռնային բնությունը և միջնադարյան Սյունիքի մի փոքրիկ մասը կազմող այդ փոքրիկ ձորի անցած-գնացած օրերի փառքի ու հերոսական անցյալի անկենդան վկաները՝ բերդերի, վանքերի ու վաղեմի կապան քաղաքի ավերակները, ուղևորին հմայում և տրամադրում են բանաստեղծորեն։

Արտակարգ մեծ տպավորություն է թողնում ճանապարհի՝ Աչխլու—Դավիթ Բեկ հատվածը, որն անցնում է մի քանի հարյուր մետր բարձրություն ունեցող ժայռոտ լեռան վրայով։ Այստեղ, ճանապարհի տակ Ոխչի գետի խոր անդունդն է, իսկ վերևը՝ սեպացած լեռը, որը կարծես միշտ սպառնում է փլվել ու վերացնել իր կրծքին խրված խճուղին։

Ղափան—Քաջարան խճուղու ուղղությամբ եղած պատմական հիշարժան վայրերից ուշադրության արժանի են՝ Վահանա վանքի, Կապան քաղաքի և Բաղաբերդ ու Զևա բերդերի ավերակները։ Դրանցից առաջին երկուսը գտնվում են Ոխչի գետի աջ կողմում, նախկին խճուղու վրա, իսկ վերջին երկուսը՝ ընկած են այժմյան ճանապարհի վրա։ Կապան քաղաքի և Վահանավանքի ավերակների շրջանները կարելի է գնալ Դավիթ Բեկ ավանից, որը գտնվում է Ղափան—Քաջարան ճանապարհի կենտրոնում և հանդիսանում է հին ու նոր խճուղիների հատման կետը։

Դավիթ Բեկ նորակերտ ավանը, որը, ինչպես ասվեց, գտնվում է Ղափան—Քաջարան ճանապարհի մեջտեղում, Ոխչի գետի ձախ ափին, գրավում է մի փոքրիկ հարթություն։ Ավանի մոտ, նրա արևելյան կողմում՝ զառիթափ լանջերով վեր բարձրացած լեռան վրա են գտնվում Սյունիքի և հին Հայաստանի ամենանշանավոր բերդերից մեկի՝ Բաղաբերդի ավերակները։ Բաղաբերդն իբրև անմատույց բերդ հռչակված է եղել դեռևս IV դարից։ Արտաքին վտանգների ժամանակ նա հաճախակի ապաստան էր դառնում շրջակայքի բնակիչների համար։ Բաղաբերդի նշանակությունն ավելի է մեծանում հատկապես X—XII դարերում, երբ երկրի քաղաքական աննպաստ պայմանների պատճառով այստեղ էին կենտրոնացվել Տաթևի և երկրում եղած մյուս վանքերի հսկայական հարստությունները և բազմահազար ձեռագրերը։ Կապան քաղաքի ավերումից հետո (1103 թ.) Բաղաբերդը դառնում է Սյունիքի թագավորության մայրաքաղաքը։ 1170 թ. սելջուկները գրավում են Սյունիքի թագավորության վերջին պատվարը՝ նրա մայրաքաղաք Բաղաբերդ բերդը և ավարի ենթարկում այդտեղ ամբարված հսկա-

յական հարստությունները, իսկ ավելի քան 10 000 ձեռագրեր՝ ոչընչացնում։ Դրանից հետո Բաղաբերդն այլևս չի վերականգնվում։

Բաղաբերդի ավերակները բավական լավ են պահպանված։ Դրանք գտնվում են Ոխչի գետի և նրա ձախակողմյան Գիլրաթաղ վտակի կազմած անկյունում, որտեղ հարավից Մեղրու, իսկ հյուսիսից Բարգուշատի լեռնասիստեմներն իրար մոտենալով, առաջացնում են ընդամենը 20—25 մ լայնություն ունեցող մի քանի հարյուր մետր բարձրությամբ նեղ կիրճ, որով կոհակներ կազմելով, վազում է Ոխչի գետը։ Պահպանվել են նրա աշտարակների մեծ մասը, պարսպի որոշ հատվածները, նկատելի են ատրերկրյա անցքերի հետքեր։ Ավերակներից պարզ երևում է, որ Բաղաբերդն ունեցել է կրկնակի պարիսպներ՝ բազմաթիվ աշտարակներով։ Աշտարակների առաջին խումբը, որ կազմում էր բերդի արտաքին կամ մեծ պարսպի բաղկացուցիչ մասը, տեղադրված է լեռան ստորոտին՝ Ոխչի և Գիլրաթաղ գետերի ափերի ուղղությամբ, իսկ երկրորդ խումբը աղեղնաձև դասավորված է լեռան գագաթային մասում և դարձյալ իրար են միացած բարձր պարիսպներով։ Ընդհանուր առմամբ ներքին պարիսպն ու նրա աշտարակներն ավելի լավ են պահպանված, քան արտաքին պարիսպը և նրա ուղղությամբ կառուցված աշտարակները։ Աշտարակների բարձրությունը հասել է ավելի քան 8 մետրի։ Բաղաբերդի ավերակների տեղում պեղումներ գրեթե չեն կատարվել, չհաշված պատահական որոնումները և դիպվածով հայտնաբերված նյութական կուլտուրայի մի քանի մնացորդներ։ Այժմ էլ վեհաշուք են Բաղաբերդի ավերակները և մեծ տպավորություն են թողնում դիտողի վրա։ Նա դարեր շարունակ իր ազատության համար մարտնչող հայ ժողովրդի հերոսական պայքարի անկենդան վկաներից մեկն է, քաջարի սյունեցիների հուսալի ֆորպոստը։ Տեղացիների մոտ մինչև օրս պահպանվել են Բաղաբերդի հետ կապված մի քանի ավանդություններ և զրույցներ։ Նրանք սովորաբար Բաղաբերդը կոչում են «Դավիթ Բեկի բերդ», դրանով ցանկանալով հինավուրց այդ բերդը կապել XVIII դարի առաջին քառորդի՝ Ղափանի ազատագրական պատերազմի ղեկավար, ժողովրդի կողմից սիրված Դավիթ Բեկի անվան հետ։

Բաղաբերդի մոտ, Ոխչի գետի աջ կողմում, այժմյան Վերին Ջրախոր գյուղատեղում գտնվում են Բաղակու քար կոչված բերդի և վանքի ավերակները, իսկ դրանցից էլ 2—3 կմ դեպի արևելք Կապան քաղաքի ավերակներն են. թե՛ Բաղակա քար վանքի ու



բերդի և թե՛ Կապան քաղաքի ավերակները շատ վատ են պահպանված, դրանք հազիվ են նշմարվում։

Եթե չհաշվենք Նախիջևանը, որը երբեմն կարճ ժամանակով մտել է Սյունիքի մեջ, ապա միջնադարյան ամբողջ Սյունիքում Կապանը միակ քաղաքն էր։ Նա գտնվում էր Ղափան—Քաջարան հին ճանապարհի վրա, այժմյան Աչղու գյուղի դիմաց, Ոխչի գետի բարձրադիր աջ ափին, այն վայրում, որը տեղացիներն անվանում են «Տանձուվենջ»։ Կապանի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է V դարին, X դարից սկսած նա արդեն հիշատակվում է որպես քաղաք, իսկ նույն դարի վերջերին (հավանաբար 998—1001 թթ. սահմաններում) դարձել է Սյունիքի ֆեոդալական թագավորության մայրաքաղաքը։

Կապանը եղել է ֆեոդալական տիպի քաղաք, գրավելով եռանկյունաձև ոչ մեծ տարածություն։

Նրա բնակչությունը ըստ երևույթին միատարր չի եղել։ Ըստ հիշատակությունների, նա ուներ հրեական հատուկ թաղ։ Քաղաքի բնակչության մի զգալի մասը զբաղվել է արհեստագործությամբ (հատկապես պղնձագործությամբ) և առևտրով։ Նա ունեցել է ուժեղ կայազոր։

Կապանը 1103 թ. ավերման է ենթարկվում սելջուկների կողմից։ Այնուհետև նա մի քանի դար շարունակում է իր գոյությունը, սակայն արդեն ոչ իբրև քաղաք, այլ սովորական բնակավայր։ Կապան անունը հետագայում պահպանվել է Ղափան ձևով, որն արդեն շրջանի, երկրի անունն է և տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր մեծություն։ Տեղացիները վերջին տարիներին Ղափան են կոչել նաև այդ շրջանում (երկրում) համեմատաբար նոր առաջացած այն բնակավայրը, որը սովետական ժամանակաշրջանում վեր է ածվել քաղաքի։ Հետևապես էքսկուրսանտը պետք է իրարից տարբերի միջնադարյան Կապանն ու այժմյան Հայկական ՍՍՌ Ղափանի վարչական շրջանի կենտրոն Ղափանը, որը նրա ավերակների վայրից հեռու է գտնվում 17—18 կիլոմետրով։

Վաղեմի Կապանից շատ քիչ բան է պահպանված։ Նրա արևելյան կողմի պարսպի հետքերը հազիվ են նշմարվում, իսկ աշտարակներից նկատելի են չորսը, որոնցից մնացել են միայն հիմքերը՝ 1—2 մետր բարձրությամբ։ Աշտարակների մնացորդներ կան նաև քաղաքի արևմտյան կողմում։ Նկատի ունենալով վայրի գեղատեսիլ բնությունը, մաքուր ու առողջարար օդը, ինչպես և սառնորակ աղբյուրի առկայությունը և Քաջարան ավանի ու Ղափանի հետ հար-

մար ճանապարհով կապված լինելը՝ այդ վայրում ամռանը կազմակերպում են պիոներական ճամբար։

Կապան քաղաքի ավերակներից 3,5—4 կմ՝ արևելք, դարձյալ Ոխչի գետի աջ կողմում, Շիհարջիկ գյուղի դիմաց, մի անտառապատ ձորում են գտնվում Վահանա վանքի ավերակները։ Այդ վայրը կարելի է գնալ կամ Ղափան քաղաքից կամ Ղափան—Քաջարան ճանապարհի մեջտեղում գտնվող Դավիթ Բեկ ավանից։

Վահանա վանքը կառուցվել է X դարում, Վահան իշխանի օրոք (911 թ.) և նրա անունով էլ կոչվել։

Վահանա վանքը բաղկացած է երկու եկեղեցիներից և օժանդակ շենքերից, որոնք կառուցվել են եկեղեցիներին կից։ Եկեղեցիներից մեկը կառուցվել է 991 թ.։ Այժմ կանգուն են նրա երեք կամարները և գմբեթի մի մասը։ Ամբողջովին շարված է եղել սրբատաշ քարերով՝ կրաշաղախի գործադրմամբ։ Հատակագիծը քառանկյունի է, երկարավուն։ Պատերը քայքայվել են, պատել մամուռներով, մնացել են միայն դրանց հիմքի մասերը, որոնց միջից աճել են հսկա ծառեր։

Փոքր եկեղեցին գտնվում է մեծից 20—30 մետր հեռավորության վրա։ Նա կառուցվել է XI դարի երկրորդ կեսին։ Պատերը կիսականգուն են և շարված են մեկ մետր ու ավելի երկարություն ունեցող հսկա սրբատաշ քարերից։ Իր գեղեցկությամբ այս եկեղեցին գերազանցել է մեծին։ Նրա արևելյան պատի ներսի կողմում, հիմքին մոտ գտնվող քարերից մեկի վրա մինչև օրս էլ պահպանվել է 1086 թ. վերաբերող մի արձանագրություն, որում հիշատակված է եկեղեցու կառուցման մասին։

Շատ ավելի վատ են պահպանված վանքի օժանդակ շենքերը՝ վանականների խուցերը, արհեստանոցները, դպրատունը և այլն։ Դրանց ավերակները հազիվ են նշմարվում և ճարտարապետական առումով որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում, հակառակ եկեղեցիների, որոնք կառուցված են եղել ճարտարապետական բարձր արվեստով։

Դավիթ Բեկ ավանից դեպի Բաղաբերդ, Բաղակու քար, Կապան և Վահանա վանք կատարած էքսկուրսիայից հետո՝ պետք է շարունակել ճանապարհը դեպի Քաջարան։

Դավիթ Բեկից ընդհուպ մինչև Քաջարան՝ ճանապարհի ձախ կողմից լեռնալանջերը ծածկված են խիտ անտառներով։ Աջակողմյան լեռների լանջերին անտառները հանդես են գալիս միայն խոր ձորերում՝ երկարավուն կղզիների ձևով։ Ճանապարհի մոտ, նրա



երկու կողմերում ընդհատվող շարքերով տարածվում են ընկուզենիներ, ուռենիներ, սալորենիներ, հոնի, մասրենիներ և այլն։

Դավիթ Բեկից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, Ոխչի և Գեղի գետերի խառնարանում, Ոխչի գետի ձախ ափին գտնվում են Ջևա բերդի հազիվ նշմարվող ավերակները։ Այստեղից գլխավոր ճանապարհից անջատվում է մի այլ ուղի և Գեղի գետի ձորով դիմում դեպի նրա վերնադավառը։ Ջևա բերդը XVIII դարի առաջին քառորդին գտնվում էր Ասլամազ Ղուլիխանի ձեռքին, որը պատրաստ էր զարձել զավառիս բնակիչների համար։ Սակայն այն զրավվում և ավերվում է Դավիթ Բեկի ազատագրական ջոկատի կողմից, բնակիչներին ազատելով արյունարբու օտար տիրակալից։ Այդ ժամանակներում Ղափանում կային նաև մի շարք այլ բերդեր։ Այդ էր պատճառը, որ նա Դավիթ Բեկի պատմության մեջ հաճախ կոչված է «Յոթնաբերդ գավառ»։ Սասունցիների նման քաջ զափանցիները ևս իրենց լեռները, անտառները, բերդերը, կապանները զարձնելով պատվար, բազմադարյան հերոսական պայքար են մղել օտար նվաճողների դեմ՝ հանուն իրենց գոյության և ազատության։

Ոխչի և Գեղի գետերի խառնարանից մինչև Քաջարան ավանը 13—15 կմ է։ Սակայն Քաջարան չհասած, նրանից 3—4 կմ հեռավորության վրա արդեն զգացվում է նրա շինարարական և արդյունաբերական աշխատանքների եռուզեռը։

Քաջարան բանավանը երեք կողմից շրջապատված է Մեղրու և Զանգեզուրի լեռնաշղթաներով, բաց է միայն դեպի արևելք, դեպի ուր կոհակներ կազմելով վազում է Ոխչի գետը։ Բանավանը գրկող լեռնալանջերի՝ ցանքսերից և թփուտներից ազատ տարածությունները ամռան կեսին մշտապես պատած են լինում փարթամորեն աճող ծաղկավոր խոտերի թավիշով։ Կլիմայական պայմանները խիստ են։ Ձմռանն այստեղ հաճախ լինում է բուք ու բորան, մըշտապես փչում է սառը քամին, իսկ ձյունառատ տարիներին, գարնանը լինում են ձյան հոսքեր, որոնք երբեմն վնասներ են հասցնում։ Տարվա ամեն եղանակ այստեղ ունի իր հմայքը։ Սակայն, որպես բարձր լեռնային շրջան, գերազանցելի են գարունը և ամառը։ Գարնանը հաճախ ամբողջ ձորը պատած է լինում մութ ու արճճագույն ամպով, լինում է կայծակ, որոտ, որն իր խուլ արձագանքն է գտնում խոր ձորերում։

Քաջարանի գրաված շրջանը արտակարգ հարուստ է ջրերով։ Նրա միջով, երկայնակի ուղղությամբ հոսում է Ոխչի գետը, որը մինչև Քլոտացիոն ֆաբրիկա մտնելը, բյուրեղապակու պես պարզ է

ու փրփրալից։ Աջ ու ձախ կողմից Ոխչիի հետ են միանում Հանքավանի ջրերը և մի քանի ձորեր ու աղբյուրներ։ Բանավանի բոլոր կետերում լսելի են Ոխչիի և նրա օժանդակների, ֆլոտացիոն ֆաբրիկայի, հանքավայրերում կատարվող պայթեցումների և շինարարական աշխատանքի ձայնը։

Հանքավանի արևմտյան ծայրաշրջանում, Ոխչի գետի աջ ափին բխում է ածխաթթվային-երկաթային բաղադրությամբ մի հանքային սառն աղբյուր՝ «Թթուջուր», որը լայն չափով օգտագործվում է բնակիչների կողմից։ Այդ աղբյուրի մոտ բնկած կանաչ, փոքրիկ հարթությունը Քաջարանի աշխատավորների ամենասիրած վայրերից մեկն է։ Այստեղ, մանավանդ կիրակի օրերին, հավաքվում և հաճելի հանգիստ են անցկացնում բազմաթիվ բանվորներ՝ իրենց ընտանիքների հետ միասին։ Այդպիսի օրերին աղբյուրի շրջակայքում ամենուրեք լսվում է երգի ու նվագի ձայնը, իսկ խորովածի՝ ախորժակ գրգռող ծուխը ամպ է կապում ամբողջ դեպահովտում։

Քաջարանը Սովետական Միության նորաստեղծ, երիտասարդ մոլիբդենային հանքավայրերից մեկն է։ Նա մոլիբդենից բացի ունի նաև պղնձի հսկայական պաշարներ։ Նախկինում հայտնի են եղել նրա պղնձահանքերի մի քանի բուվերը, և դրանք որոշ ժամանակ պրիմիտիվ եղանակով են շահագործման։ Սակայն Քաջարանի պղնձա-մոլիբդենային հանքավայրերի հետազոտումն ու շահագործումը կատարվել է մեր օրերում՝ հատկապես Հայրենական պատերազմին հաջորդած տարիներին։

Քաջարան բանավանը պղնձա-մոլիբդենային հանքավայրի ծնունդն է։ Նա տարիքով շատ փոքր է, 12—13 տարեկան մի «մանուկ»։ Սակայն նրա աճի տեմպերը արտակարգ մեծ են՝ ռեակտիվ դարին համապատասխանող։ Ծնունդ առնելով Քաջարան և Օխջի գյուղերի միջև ընկած լեռնալանջի ու Ոխչի գետի գետահովտի փոքրիկ հատվածում, Քաջարան ավանը մի քանի տարվա ընթացքում աճելով, ձգվել է ավելի քան երկու կիլոմետր երկարություն և նույնքան էլ լայնություն ունեցող մի տերիտորիայի վրա՝ գրավելով գլխավորապես գետահովիտներն ու լեռնալանջների ստորին մասերը։ Այժմ հանքավանը իր մեջ է ձուլել նախկին Օխջի և Քաջարանց գյուղերը։ Քաջարանը քաղաքատիպ ավան է, կառուցված շախմատաձև հատակագծով։ Շենքերը երկու-երեք հարկանի են, մի զգալի մասը՝ շարված սրբատաշ վարդագույն տուֆով։ Իրրև վերապրուկ դեռևս մնում է Օխջի և Քաջարանց գյուղերի հին տների մի



մասը, սակայն արագ կերպով դրանք իրենց տեղը զիջում են նոր ու բարեկարգ շենքերին։ Քաջարանում շինարարությունն ունի արտակարգ բարձր թափ։ Այստեղ ամեն քայլափոխում շինարարական աշխատանքներ են կատարվում, շենքերը «աճում» ու «բազմանում» են, ինչպես սունկն անձրևից հետո։ Հսկայական տարածություն է գրավում հարստացուցիչ (ֆլոտացիոն) ֆաբրիկան։ Նա կառուցված է վարդագույն տուֆով և գրավում է մի զառիվեր մեծ սարալանջ։ Դեպի ֆաբրիկա, դիմացի սարի գագաթից, որտեղ գտնվում են ղեխավոր հանքավայրերը, Ոխչի գետի վրայով, մեծ բարձրությամբ ձգված են ճոպանուղիները, որոնցով՝ մեկը մյուսի հետևից՝ բեռնավորված վագոնիկներ են գալիս ֆաբրիկա և դատարկելով իրենց թանկագին բեռը, նույն արագությամբ վերադառնում ելակետ։

Քաջարանն ունի մի քանի միջնակարգ դպրոցներ, տեխնիկում, արհեստակցական ուսումնարան, հիվանդանոց, մանկապարտեզներ ու մանկամսուրներ, բանվորական ակումբներ, կինոթատրոններ, գրադարաններ, հյուրանոց, սպորտային հրապարակ, բաղներ, գրադարաններ, հյուրանոց, սպորտային հրապարակ, բաղնիքներ։ Ավանն ունի իր կոյուղին, ջրմուղը։ Նեղկայումս մեծ սրագությամբ կանաչապատվում են նրա մայթերը, ասֆալտապատվում են փողոցները։ Նախագծվում է առաջիկայում գցել գրոսայգի և ծառազարդել փողոցները։

Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատը կարիերից, հանքախորշերից և հարստացուցիչ ֆաբրիկայից բացի՝ ունի մեխանիկական ցեխ, շինարարական-մոնտաժային հիմնարկներ, բազմաթիվ միավորներից բաղկացած ավտոպարկ և այլ օբյեկտներ։ Կոմբինատի բոլոր ճյուղերը զինված են ժամանակակից հզոր տեխնիկայով։ Հանքի շահագործումը հիմնականում բացօթյա է, հսկայական էքսկավատորների գործադրմամբ։

Քաջարան բանավանի բնակչությունը բազմազգ է։ Այստեղ իրար կողքի համերաշխ ապրում և աշխատում են հայեր, ռուսներ, ուկրաինացիներ, ադրբեջանցիներ, հրեաներ։ Քաջարանի կոմբինատն ունի ամբողջ ռեսպուբլիկայով մեկ հռչակված առաջավոր շատ հորատողներ, էքսկավատորավարներ, խառատներ, փականագործներ, որմնադիրներ։ Քաջարանցիներն աշխատանքի մարդիկ են, գործիմաց, հայրենասեր, կենսախինդ և օժտված են լեռնականի խիզախությամբ ու արիությամբ։

Մեծ բավականության կզգա ուղևորը, երբ Քաջարանից էքսկուրսիա կատարի դեպի Կապուտջուղ, որը բարձրանում է ավանի

արևմտյան կողմում և պատկանում է Զանգեզուրի գլխավոր լեռնասիստեմին։ Քաջարանից 6—8 կմ-ի վրա գտնվող այդ լեռնագագաթը կարելի է բարձրանալ գրաստով կամ հետիոտն։ Կապուտջուղը լեռնային Զանգեզուրի լեռների արքան է, Հայկական ՍՍՌ երկրորդ բարձր սարը (3906 մ)։ Բնույթով նա նման է իր մեծ եղբորը՝ Արագածին։ Քաջարանի համար Կապուտջուղը մի մեծ փարոս է, որն իր ձյունե թագով կարծես լուսավորում է Ոխչի գետի սիստեմին պատկանող մութ ու մռայլ ձորերը։ Նա ջրառատ է. ամեն քայլափոխում նրա լանջերին բխում են սառնորակ աղբյուրներ, որոնք միանալով, սկիզբ են տալիս Ոխչի գետին։ Կապուտջուղում կան հորդաբուխ հանքային ջրեր։ Դրանք իրենց բաղադրությամբ նման են Քաջարանի մոտի աղբյուրին։ Կապուտջուղի զարդը սակայն նրա մերձգագաթային շրջանում տեղադրված լիճն է, Կապուտակ լիճը (Гёйгёл), որը կարծես Սևանա լճի մի մասնիկը լինի, միայն ավելի սառնորակ ջրերով և ավելի բարձր դիրքով։ Այդ հսկայական լեռնազանգվածի բոլոր լանջերը ծածկված են ալպյան ճոխ արոտավայրերով և գորգերով, որոնց նուրբ՝ ձեռագործի դասավորություն ունեցող, մեծ ու վառ ծաղիկները իրենց բուրմունքով արբեցնում են ամբողջ շրջապատը։ Ամռանը, հունիսի սկզբներից կյանքը Կապուտջուղում մտնում է իր իրավունքների մեջ։ Նրա վայրի ձորերին ու թավշապատ լեռնալանջերին կենդանություն են տալիս Լեռնաձոր գյուղի անասնապահներն իրենց ոչխարի հոտերով, տավարի նախիրներով և ձիերի երամակներով։ Երեք և ավելի ամիս շարունակ Կապուտջուղի զանգակ աղբյուրների և փրփրալից գետակների մեղմ ձայնին ընկերակցում են հովիվների և անասնապահների նվագն ու կանչը, ձագուկին կարոտած ոչխարների մայունը, կովի բառաչն ու ձիերի խրխինջը։ Գիշերվա պահին բոլորը հանգիստ են առնում։ Միայն լսելի են լինում քուն մտած անասունների ընդհատվող շնչառությունը և աղբյուրների ու գետակների մրմունջը։

Կապուտջուղի ամբողջ գեղեցկությունն զգալու համար պետք է այնտեղ մնալ գոնե մեկ, երկու օր։

Քաջարան—Մեղրի ավտոճանապարհը գցվել է 30-ական թվականների վերջերին և ունի 40—41 կմ երկարություն։ Դուրս գալով Քաջարանից (ավելի ճիշտ, նախկին Օխջի գյուղից)՝ նա Հանքավան գետի հովտով ուղղվում է դեպի հարավ և, մի քանի ոլորաններ տալով, բարձրանում է Զանգեզուրի ու Մեղրու լեռնաշղթաների հատման կետում գտնվող Տաշտունի լեռնանցքը (նախկինում Դիբաքլու), որը Սովետական Հայաստանի ամենաբարձր լեռնանցքերից մեկն է (2479 մ)։ Այդ լեռնանցքը գտնվում է մերձալպյան գոտում։ Նա շրջադարձային այն կետն է, որտեղ ուղևորը հրաժեշտ է տալիս Ոխչի գետի վերնագավառին և մտնում մի նոր շրջան՝ Մեղրու լեռնաշղթայի, Զանգեզուրի լեռների և Արաքս գետի միջև ամփոփված Հայկական ՍՍՌ Մեղրու վարչական շրջանը։ Մեղրին հանրապետության ամենափոքր շրջաններից մեկն է։ Նրա զբաղած տերիտորիան մի եռանկյունի է, որն իր գագաթով ուղղված է դեպի արևելք։ Չնայած անմիջական հարևան լինելուն՝ իր բնա-կլիմայական պայմաններով Մեղրին Ղափանից մեծ չափով տարբերվում է։ Նրա կլիման Ղափանի կլիմայի նկատմամբ ավելի չոր ու շոգ է, արևոտ օրերով հարուստ։ Շրջանի հյուսիսային ու արևմտյան կողմով ձգվում են Մեղրու և Զանգեզուրի լեռները, որոնց բարձրադիր լանջերը ծածկված են մերձալպյան ու ալպյան արոտավայրերով։ Դեպի հարավ աստիճանաբար փոխվում է նրա բնությունը, Արաքսի հովտում վերածվելով կիսաանապատի։ Շրջանի մի զգալի մասը ծածկված է անտառներով։ Դրանցում առանձնապես մեծ տարածում ունի արաքսյան կաղնին, որը չորասեր է և հողի նկատմամբ քիչ պահանջկոտ։

Շրջանի բնա-կլիմայական պայմաններին համապատասխան՝ Մեղրու կոլտնտեսությունները մասնագիտացել են երկու գծով. լեռնային և նախալեռնային վայրերի կոլտնտեսությունների հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հացահատիկային տնտեսությունն են, իսկ ցածրադիր վայրերի ու գետահովիտների կոլտնտեսությունները զբաղվում են այգեգործությամբ, մերձարևադարձային չորասեր կուլտուրաների մշակմամբ և շերամապահությամբ։

Նախնական ընդհանուր տեղեկություններ ունենալուց հետո՝ ուղևորը Տաշտունի լեռնանցքից իջնում է Մեղրագետի հովիտը և նրա ընթացքով շարժվելով դեպի հարավ՝ մոտիկից ու մանրամասն ծանոթանում այդ փոքրիկ, բայց բազմաբովանդակ շրջանի լուսավոր ներկային և հերոսական անցյալին։ Լեռնանցքն անցնելուց հետո շատ շուտով ավտոմեքենան ոլորապտույտ տալով իջնում է իրար դեմ առ դեմ գտնվող Տաշտուն և Լիճք գյուղերը, ապա շարունակում ճանապարհը դեպի հարավ։ Գետի երկու ափերին լեռնալանջերը ծածկված են անտառներով, որոնք երբեմն ընդհատված են թփուտներով և բացատներով։ Վարդանաձոր գյուղից սկսվում են այգիները և ընկուզենիների պուրակները։ Հրաժեշտ

տալով Վարդանաձորին՝ մի քանի րոպեից հետո ուղևորը հասնում է իր այգեգործությամբ հայտնի Լեհվազ, որից արևմուտք, խճուղուց 3—4 կմ հեռավորության վրա իրար կողք-կողքի տեղադրված են Վահրավար և Գուդեմնիս գյուղերը՝ ծածկված մրգատու ծառերով և խաղողի այգիներով։ Վերջապես՝ մեքենան շուտով մտնում է Մեղրի գյուղը, Մեղրու շրջանի կենտրոնը։ Մեղրին գտնվում է Արաքսի ձախակողմյա վտակ Մեղրագետի ստորին հոսանքի շրջանում, Երևան—Բաքու երկաթգծից 5 կմ հեռավորության վրա, իսկ Երևանից հեռու է 257 կմ։ Մեղրին տեղադրված է Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերին, նախալեռնային գոտում։ Ունի չոր և շոգ կլիմա։

Հինավուրց է Մեղրին։ Այստեղ նշմարվում են հին Մեղրու վանքի ու բերդի ավերակները։ Մեղրու կոլտնտեսությունը շրջանի ամենաառաջավոր կոլտնտեսություններից մեկն է։ Նրա հիմնական զբաղմունքն են կազմում այգեգործությունն ու խաղողագործությունը։ Նա ունի մրգի կոնսերվի, գինու և գրեն գործարաններ։ Դրանց արտադրանքները, մանավանդ ընտիր մուրաբաներն ու գինիները, հայտնի են և մեծ համբավ ունեն ոչ միայն ռեսպուբլիկայում, այլև նրա սահմաններից շատ հեռու՝ Միության բազմաթիվ շրջաններում, մարզերում և քաղաքներում։ Մեղրին ունի հյուրանոց, գրադարաններ, միջնակարգ դպրոց, կուլտուրայի տուն, կինոթատրոն։ Մեղրուց կարելի է էքսկուրսիա կատարել Արաքսի ձախ հովտով դեպի արևելք՝ իրար մոտ գտնվող Ալդարա, Շվանիձոր և Նյուվադի գյուղերը, և դեպի արևմուտք՝ Ագարակ ու Կարճևան։ Ագարակը՝ Դաստակերտի և Քաջարանի նման, հարուստ է մոլիբդենով։ Այստեղ կատարվում են երկրաբանական-հետախուզական աշխատանքներ, որոնք մեծ հեռանկարներ են խոստանում։ Էքսկուրսանտն այդ բոլոր գյուղերում կարող է ծանոթանալ մերձարևադարձային կուլտուրաների մշակման եղանակներին, կոլտնտեսականների կյանքին, նրանց պարծանքը կազմող հարուստ մառաններին, որտեղ հյուրասեր տերը մեծ հաճույք է զգում անծանոթին մատուցելու ընտիր մրգեր և իր ձեռքով պատրաստած անմահական գինին։

Երթուղին ավարտված է։ Մեղրուց Երևան կարելի է վերադառնալ կամ գնացքով, կամ երկաթգծին զուգահեռ անցնող խճուղով, որը Մեղրուց մինչև Նախիջևանի ԱՍՍՌ-ի Օրդուբադ քաղաքը դեռևս կանոնավոր չէ, բայց կարելի է անցնել ավտոմեքենայով։

Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясн...
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ



Արագածը Արարատյան դաշտից



Երևանի կայարանի նորակառույց շենքը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Լենինի Հրապարակը Երևանում

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZSUR—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Խաչատուր Աբովյանի արձանը Երևանի Աբովյանի պուրակում

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека



Երևանի ծածկած շուկան Ստալինի պողոտայում



Երևանի ծածկած շուկայի ներսը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Մոսկովյան փողոցը Երևանում



№ 76 դպրոցի շենքը Երևանի Բարեկամության փողոցում



Երևանի Լենինի անվան էլեկտրատեխնիկական գործարանի
էլեկտրակայանների ցեխը

ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՅ—Арм.ССР
им. А. МЯСНИКЯНА
Г. ЕРЕВАНЪ ИМЕНИ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна



*Կոնյակի գործարանը Երևանում*



*Հրազդանի մեծ կամուրջը Երևանում*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



Երևանի Բժշկական ինստիտուտի շենքը



Երևանի Մատենադարանի նորակառույց շենքը



*Ա. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի Պետական Ակադեմիական թատրոնի շենքը Երևանում*



*Կինո «Նաիրի»-ի շենքը Երևանում*

Կիևի փողոց Օրհնեմ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Կարմիր բլուր, գինիների պահեստը



Կարմիր բլուր, գինիների պահեստը (ռեկոնստրուկցիա Կ. Հովհաննիսյանի)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Կարմիր բլուրի ընդհանուր տեսարանը



Երևան—Էջմիածին խճուղու սկիզբը Երևանից



Երևան—Սևան ճանապարհը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Гос. Библиотека



Լենինի պողոտան Երևանում



Զվարթնոց տաճարի ավերակները

Гос. Библиотека
им. А. Мясникяна

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Զվարթնոց տաճարը (ռեկոնստրուկցիա Թ. Թորամանյանի)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Էջմիածնի Մայր տաճարը



Հռիփսիմեի եկեղեցին Էջմիածնում

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZSSR—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Էջմիածնի Կաթուղիկոսի պալատը



Այգեկութը Արարատյան դաշտում

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



*Մեծամորի լիճը Լեմիածին—Հոկտեմբերյան ճանապարհի վրա*

Гос. Библиотека
А. Мясникяна



Փողոց Հոկտեմբերյանում



Գարնանացանը Արարատյան դաշտում



*1827 թ. Օշականի ճակատամարտում զոհված ռուս զինվորների հիշատակի ուրիվ կանգնեցված հուշարձանը էջմիածին—Օշական ճանապարհի մոտ*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Բերքահավաքը Օշականի դաշտերում



Աշտարակի Կարմրավոր եկեղեցին

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Ամբերդ ամրոցի ավերակները



Հովհաննավանքի եկեղեցին

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



*Արզնի առողջարանի ընդհանուր տեսարանը*



*Լողարանի շենքը Արզնի առողջարանում*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



*Մոր և մանկան հանգստյան տունը Մաղկաձորում*



Գառնիի հեթանոսական տաճարի քանդակազարդ բևեռները



Գառնիի հեթանոսական տաճարի ռեկոնստրուկցիան



Դվինի միջնաբերդը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



Գեղարդա վանքը



Գեղարդա վանքի վիմափոր տաճարներից մեկը

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
Гос. Библиотека
ГССР—Арм.ССР
им. А. Мясникяна

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Լենինի պողոտան Լենինականում



Արթիկի Լմբատավանքը



Լենինականի անքսոիլ կոմբինատի գործվածքային ցեխը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZCUR–Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна



Սանահնի վանքը



Հաղպատի աղբյուր-հուշարձանը

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна



Սանահնի կամուրջը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Ձկան որսը Սևանում



Դիլիջանի ընդհանուր տեսարանը



Իջևանի հյուրանոցի շենքը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм.ССР
Է. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Е. им. А. Мясникяна



Հաղարծնի վանքը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Մխիթար Գոշի խաչքարը

Гос. Библиотека
...ССР



Վարչական շենք Կիրովականում



«Գուգարք» ռեստորանի շենքը Պուշկինի լեռնանցքում

Цементный завод в Ереване

Гос. Библиотека
ZUSR—Арм. ССР

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Շահումյանի փողոցը Ստեփանավանում



Նոր Բայազետ քաղաքը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Ամաղուի Նորավանքը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Կամուրջ Ագարակաձորում (13-րդ դար), Եղեգնաձորի շրջան



Ղափան քաղաքը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



*Սելիմի քարավանատունը*



*Գոշավանք*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека



Ջերմուկի ջրվեժը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Տեսարան Ջերմուկից



Քաջարան քաղաքը



Կիրճ Ձափան—Քաջարան ճանապարհի վրա

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ս. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Շաթիի ջրվեժը

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна



Տաթևի վանքը



Կեչառուքի վանքը Մաղկաձորում



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ–Арм.ССР
им. А. Мясникяна

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ–Арм.ССР
им. А. Мясникяна


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻ
ՔԱՐՏԵԶ
ՄԱՍՇՏԱԲ
20 0 20 40կմ
Դայմանական նշաններ
Պետական սահմաններ
Միութենական ռեսպուբլիկաների սահմաններ
Ավտոնոմ մարզերի սահմաններ
Երկաթուղիներ
Անուղի ճանապարհներ
Ոռոգողական առուներ
Լճեր և գետեր
Ցամաքող գետեր
Բարձրությունները մետրերով
Լեռնանցքներ
ՍՍՌ մայրաքաղաք
ԱՍՍՌ մայրաքաղաք
Քաղաքներ
Քաղաքատիպ ավաններ
Այլ բնակավայրեր
Հին բերդերի ավերակներ
Հին քաղաքների ավերակներ
Վանքեր և տաճարներ
ԵՐԵՎԱՆ
ԳՅՈՒՄՐԻ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ԷՋՄԻԱԾԻՆ
ՍԵՎԱՆ
ԱՐԱՐԱՏ
ՆԱԽԻՋԵՎԱՆ
ԱԶԴԱՀԱԿ
ՋԱՆԳԵԶՈՒՐ
ՎԱՐԴԵՆԻՍ
ՄԵԾ ՄԱՐՐԱՆ
ԱՐԱՔՍ
ՀՐԱԶԴԱՆ
ԱԲՈՎՅԱՆ
ԱՐՏԱՇԱՏ
ԱՐՄԱՎԻՐ
ՍԱՐԱՅ
ՏԱՐԱՆԱԼԻ
ՍԱՐԱՇԵՆ
ՍԻՍԻԱՆ
ԳՈՐԻՍ
ՏԱՏԵՎ
ՔԱՋԱՐԱՆ
ԿԱՊՈՒՏՋԻՂ
ՂԱՓԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՎԱՅՔ
ՋԵՐՄՈՒԿ
ԳԱՎԱՌ
ՍԵՎԱՆԻ ՎԱՆՔ
ՍՈՒՐԱՄԱՅԻ ԼԵՌՆԱՆՑՔ
ԱՐՏԱՆԻՇ
ՄԱՍՏԱՐԱ
ԱՐԹԻԿ
ԳՅՈՒՄՐԻ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ԱՐԱՔՍ
ՀՐԱԶԴԱՆ
ԱԲՈՎՅԱՆ
ԱՐՏԱՇԱՏ
ԱՐՄԱՎԻՐ
ՍԱՐԱՅ
ՏԱՐԱՆԱԼԻ
ՍԱՐԱՇԵՆ
ՍԻՍԻԱՆ
ԳՈՐԻՍ
ՏԱՏԵՎ
ՔԱՋԱՐԱՆ
ԿԱՊՈՒՏՋԻՂ
ՂԱՓԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՎԱՅՔ
ՋԵՐՄՈՒԿ
ԳԱՎԱՌ
ՍԵՎԱՆԻ ՎԱՆՔ
ՍՈՒՐԱՄԱՅԻ ԼԵՌՆԱՆՑՔ
ԱՐՏԱՆԻՇ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Առաջաբան էջ
Ընդհանուր տեղեկություններ 3
Բարձրաբերձ լեռներէ և արևի երկիրը (Թ. Խ. Հակոբյան) . . . . . 7
Դարերի խորքից (Ստ. Տ. Մելիք-Բախշյան) . . . . . 14
Սովետական Հայաստանի անտեսական քարտեզի առաջ (Թ. Խ. Հակոբյան) 33
Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը
Բնությունը (Թ. Խ. Հակոբյան) . . . . . 45
Հինավուրց, բայց միաժամանակ էլ երևանը (Թ. Խ. Հակոբյան) . . . . 48
Երևանն այժմ (Ա. Հ. Սեկոյան) . . . . . 54
1. Ընդհանուր տեղեկություններ . . . . . 54
2. Փողոցները, հրապարակները, հուշարձանները, զբոսայգինե-
րը, խաղաղաշտերը . . . . . 59
3. Գիտահետազոտական հիմնարկներ, թանգարաններ, թատ-
րոններ, կինո . . . . . 67
4. Երևանի շրջակայքը . . . . . 77
Սովետական Հայաստանի ճանապարհներով
1. Երևան—Ջվարթնոց—Էջմիածին (Ա. Հ. Սեկոյան) . . . . . 83
ա. Էջմիածին—Մեծամորի լիճ—Հոկտեմբերյան . . . . . 86
բ. Էջմիածին—Օշական—Աշտարակ . . . . . 87
գ. Աշտարակ—Բյուրական—Արագած . . . . . 89
2. Երևան—Արզնի (Ա. Հ. Սեկոյան) . . . . . 91
3. Երևան—Ծաղկաձոր (Ա. Հ. Սեկոյան) . . . . . 95
4. Երևան—Գառնի Գեղարդ (Ստ. Տ. Մելիք-Բախշյան) . . . . . 97
5. Երևան—Դվին (Ստ. Տ. Մելիք-Բախշյան) . . . . . 107
6. Երևան—Լենինական (Ստ. Տ. Մելիք-Բախշյան) . . . . . 113
ա. Լենինական—Արթիկ . . . . . 118
բ. Լենինական—Ալավերդի . . . . . 119
գ. Ալավերդի—Ոսկանահին—Հաղպատ—Ախթալա . . . . . 121
7. Երևան—Սևան—Դիլիջան—Իջևան—Բերդ (Թ. Խ. Հակոբյան) . . . 128
ա. Դիլիջան—Կիրովական—Մտեփանավան (Ա. Հ. Սեկոյան) . . 145
բ. Մտեփանավան—Գյուլագարակ—Թումանյան (Ա. Հ. Սեկոյան) 153
8. Երևան—Սևան—Մարտունի—Եղեգնաձոր—Ջերմուկ (Թ. Խ. Հակոբյան) 156
9. Երևան—Արտաշատ—Բաշնորաշեն—Եղեգնաձոր—Բազարչայ—Մի-
սխան—Գորիս—Ղափան—Քաջարան—Մեղրի (Թ. Խ. Հակոբյան) 171
ա. Երևան—Արտաշատ—Բաշնորաշեն . . . . . 171
բ. Բաշնորաշեն—Եղեգնաձոր . . . . . 177
գ. Եղեգնաձոր—Մխսխան . . . . . 181
դ. Մխսխան—Գորիս . . . . . 185
ե. Գորիս—Ղափան . . . . . 191
զ. Ղափան—Քաջարան—Մեղրի . . . . . 197
Հավելված

2013

ԹԱԴԵՎՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ՏԻԳՐԱՆԻ ՄԵԼԻՔ-ԲԱԼՇՅԱՆ
ՄԱՐԱ ՀԱԿՈԲՋԱՆԻ ՍԵԿՈՅԱՆ

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Հրատ. խմբագիր՝ Առs. Հ. Պապոյան
Նկարիչներ՝ Գ. Ա. Խուդիկյան, Վ. Ն. Սկոբելկին
Լուսանկարները՝ Զ. Հ. Բօսիկյանի, Հ. Բ. Նեմրութի,
Ա. Ն. Շահինյանի
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ե. Հ. Բասմաջյան

ՎՏ 03815 Պատվեր 131 Տիրաժ 5000

Համ.-հրատ. խորհրդի որոշում № 5, 21/XI-1958 թ.: Հանձնված է արտադրության 17/II 1959 թ.: Ստորագրված է տպագրության 20 II 1959 թ.: Թուղթ 60×92 1/16: Տպագր. 16,25 մամուլ+6 ներդիր: Հաշվ. հրատ. 13,1 մամուլ: Գինը 7 ռ. 50 կոպ.

Երևանի Պետական համալսարանի հրատարակչության տպարան, Երևան, Կիրովի փող. № 12

## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 62 | վ. 2—3 | ամենահիանալի անսամբլներից մեկը: Այստեղ հենց, կուլտուրայի տան շենքի հետ՝ կազմելով հայկական ճարտարապետության | տան շենքի հետ՝ կազմելով հայկական ճարտարապետության ամենահիանալի անսամբլներից մեկը: Այստեղ հենց, կուլտուրայի |
| 111 | ն. 11 | երկրագործությունը | երկաթագործությունը |
| 133 | վ. 1 | 9 | 8 |
| 145 | ն. 11 | Իջևանի | Դիլիջանի |
| 152 | վ. 3 | ձիթապտղային | ձիթատու |
| 152 | վ. 11—12 | չվեդական | չվից |
| 163 | ն. 17 | 1932 | 1332 |



54 р.ск. Аванс

2001





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՊՈՒԲԼԻԿԱ





ՀՀ Ազգային գրադարան
NL0500215